www.prosecutor.am

Հաղորդում՝ Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդումը համապարփակ զեկույց է Դատախազության վերջին մեկ տարվա գործունեության, մարտահրավերների և նվաճումների մասին:

Հաղորդման մեջ ներառված թեմաների շրջանակն ընդգրկում է Հայաստանում հանցավորության վիճակի, կոռուպցիայի դեմ պայքարի, պետական շահերի պաշտպանության, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման, վարույթների (գործերի) քննության և մի շարք այլ ուղղություններով կատարված աշխատանքները:

Դատախազությունը 2023 թվականը սկսել է նշված ոլորտներում արդյունավետ գործելու հանձնառությամբ, պրոֆեսիոնալ, հաշվետու և իրավապահ համակարգի գործընկերների հետ համագործակցված աշխատանքի նպատակադրմամբ, Հայաստանում հանցավորության դեմ արդյունավետ պայքարի և հանրային անվտանգ միջավայր ձևավորելու տեսլականով:

Հաղորդման մեջ ներառված վիճակագրությունը, արձանագրված խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ կատարված աշխատանքը, վերլուծությունն ու եզրահանգումները կարծում ենք՝ օգտակար կլինեն

ինչպես Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու, այնպես էլ ոլորտում մասնագիտական գործունեություն իրականացնող տեսաբանների, պրակտիկների, լրագրողների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և Հայաստանի Հանրապետության քրեական քաղաքականության նկատմամբ հետաքրքրություն ունեցող անձանց համար:

Մարտահրավերները բազմաթիվ են. դրանք հաղթահարելու կամքը՝ ամուր:

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազ՝ **Աննա Վարդապետյան**

Բովանդակություն

- Նախաբան 2
- Բովանդակություն 3
- Հանցավորության կառուցվածք, շարժընթաց. հանցագործությունների դեմ պայքար, հանցավորության հակազդում 4 41
- Կոռուպցիայի դեմ պայքար 61
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձում 69
- Պետական շահերի պաշտպանություն 76
- Զինվորական հանցագործությունների քննություն
- Մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն 87 110
- Մեղադրանքի պաշտպանություն և դատական ակտերի բողոքարկում 118
- Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն 131
- Քրեական գործերի քննության ժամկետների ձգձգում («ուշացած արդարադատություն») 141
- Միջազգային - իրավական համագործակցություն և իրավական ապահովում 161
- Քաղաքացիների ընդունելություն, դիմումների ընթացք և հանրային կապեր



1

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ՇԱՐԺԸՆԹԱՑ.

հանցագործությունների դեմ պայքար, հանցավորության հակազդում

ՀՀ դատախազության
տարեկան հաղորդում 2022

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 37.612 դեպք (2021 թվականին՝ 30.245), որոնցից 21.604-ը՝ Երևան քաղաքում (2021 թվականին՝ 16.438): Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 7367-ով կամ 24.4%-ով:

2022 թվականին արձանագրվել է ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների աճ:

2021 թվականի համեմատությամբ ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքերն աճել են 2831-ով կամ 19.3%-ով (2021 թվականին՝ 14.629, 2022 թվականին՝ 17.460), միջին ծանրության հանցագործությունների դեպքերը՝ 2383-ով կամ 29.8%-ով (2021 թվականին՝ 7988, 2022 թվականին՝ 10.371), ծանր հանցագործությունների դեպքերը՝ 633-ով կամ 14.2%-ով (2021 թվականին՝ 4447-5080), իսկ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերը՝ 530-ով կամ 151.4%-ով (2021 թվականին՝ 350-880):

Առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերի 530-ով աճը պայմանավորված է 482 սպանության դեպքերով, որոնցից 484-ը հանկարծամահության դեպքերն են, որոնք նախկինում որպես հանցագործություն չէին հաշվառվում: Հետևաբար, 2022 թվականին կատարվել է 396 առանձնապես ծանր հանցագործություն, որը 46-ով կամ 13%-ով ավել է նախորդ տարվա ցուցանիշից:

Տարեթիվը	Հանցագործության դեպքեր	Ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքեր	Միջին ծանրության հանցագործության դեպքեր	Ծանր հանցագործության դեպքեր	Առանձնապես ծանր հանցագործության դեպքեր
2021 թ.	30.245	17.460	7988	4447	350
2022 թ.	37.612	21.281	10.371	5080	880
Աճ/ Նվազում	+7367	+3821	+2383	+633	+530
	+24.4%	+21.9%	+29.8%	+14.2%	+151.4%

Հանցագործության 37.612 դեպքի բացարձակ մեծամասնությունը՝ 84.1%-ը, ոչ մեծ (21.281 դեպք կամ 56.6%) և միջին ծանրության (10.371 դեպք կամ 27.6%-ը) հանցագործություններն են: Առանձնապես ծանր հանցագործություններն ընդհանուր հանցագործությունների զանգվածում կազմում են 2.3% (2021 թվականին՝ 1.2%), իսկ ծանր հանցագործությունները՝ 13.5% (2021 թվականին՝ 14.7%):





2012-2022 թվականների հանցավորության կառուցվածքը վկայում է, որ ընդհանուր հանցագործությունների կազմում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների տեսակարար կշիռն արտահայտող միջին տարեկան տոկոսային ցուցանիշը կազմել է 17.2%: Մինչդեռ, 2022 թվականին ծանր և առանձնապես ծանր հանցագործությունները կազմել են ընդհանուր հանցագործությունների 15.8%-ը: 2012-2022 թվականների ընթացքում նշված ցուցանիշից ավելի ցածր ցուցանիշ արձանագրվել է միայն 2017 թվականին՝ 14.3%:

Ստորև ներկայացվում է 2012-2022 թվականներին հանցավորության կառուցվածքը՝ ըստ հանցագործությունների վտանգավորության աստիճանի.

Տարեթիվը	Հանցագործության դեպքեր	Ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքեր		Միջին ծանրության հանցագործության դեպքեր		Ծանր հանցագործության դեպքեր		Առանձնապես ծանր հանցագործության դեպքեր		Ծանր և առանձնապես ծանր հանցագործության դեպքեր	
2012 թ.	15.776	9420	59.7%	3656	23.2%	2544	16.1%	156	1.0%	2700	17.1%
2013 թ.	18.333	11372	62.0%	3743	20.4%	3088	16.9%	130	0.7%	3218	17.5%
2014 թ.	17.546	9981	56.9%	4073	23.2%	3319	18.9%	173	1.0%	3492	19.9%
2015 թ.	17.043	9185	53.9%	4455	26.1%	3238	19.0%	165	1.0%	3403	20.0%
2016 թ.	18.764	10757	57.3%	4728	25.2%	3081	16.4%	198	1.1%	3279	17.5%
2017 թ.	20.285	12380	61.0%	5012	24.7%	2729	13.4%	164	0.8%	2893	14.3%
2018 թ.	22.551	11989	53.2%	6700	29.7%	3638	16.1%	224	1.0%	3862	17.1%
2019 թ.	26.850	14613	54.4%	7463	27.8%	4490	16.7%	284	1.1%	4774	17.8%
2020 թ.	26.468	14629	55.3%	7466	28.2%	4077	15.4%	296	1.1%	4373	16.5%
2021 թ.	30.245	17460	57.7%	7988	26.4%	4447	14.7%	350	1.2%	4797	15.9%
2022 թ.	37.612	21281	56.6%	10371	29.8%	5080	14.2%	880	2.3%	5960	15.8%

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2022 թվականին աճել են հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության (2021 թվականին՝ 6356, 2022 թվականին՝ 11.861 կամ 86.6%-ով), մարդու (2021 թվականին՝ 4375, 2022 թվականին՝ 6565 կամ 50.1%-ով), տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունները:

Մասնավորապես՝ աճել են թմրամիջոցների շրջանառության դեպքերը (2021 թվականին՝ 974, 2022 թվականին՝ 1717 կամ 76.3%-ով). դրանցից՝ իրացնելու նպատակով (2021 թվականին՝ 529, 2022 թվականին՝ 1031 կամ 94.9%-ով), ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության (2021 թվականին՝ 58, 2022 թվականին՝ 89 կամ 53.4%-ով), հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու (2021 թվականին՝ 265, 2022 թվականին՝ 564 կամ 112.8%-ով), ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության (2021 թվականին՝ 1, 2022 թվականին՝ 10 կամ 900%-ով) դեպքերը:

2022 թվականին նվազել են սեփականության դեմ ուղղված հանցագործությունները (2021 թվականին՝ 15.149-13.902 կամ 8.2%-ով):

Մասնավորապես, նվազել են գողության (2021 թվականին՝ 11.218, 2022 թվականին՝ 9854 կամ 12.2%-ով), այդ թվում՝ բնակարանային գողության (2021 թվականին՝ 1192, 2022 թվականին՝ 1151 կամ 3.4%-ով), յուրացման և վատնման (2021 թվականին՝ 473, 2022 թվականին՝ 417 կամ 11.8%-ով), տրանսպորտային միջոցներ փախցնելու (2021 թվականին՝ 54, 2022 թվականին՝ 32 կամ 40.7%-ով) և սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների (2021 թվականին՝ 1193, 2022 թվականին՝ 956 կամ 19.9%-ով) դեպքերը:

10 դեպքով կամ 17.5%-ով ավելացել են հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունները: 2012-2022 թվականների ընթացքում հրազենի գործադրմամբ կատարված հանցագործությունների դեպքերի թիվը ներկայացվում է ստորև.

Տարեթիվը	Հրազենի գործադրմամբ հանցագործություններ
2012 թ.	63
2013 թ.	66
2014 թ.	68
2015 թ.	69
2016 թ.	62
2017 թ.	52
2018 թ.	60
2019 թ.	74
2020 թ.	83
2021 թ.	57
2022 թ.	67

2023 թվականի մարտի 21-ի դրությամբ worldpopulationreview.com կայքում հրապարակված տվյալների համաձայն՝ հանցավորության մակարդակի 2022 թվականի ցուցիչով (ցուցիչը հաշվարկվում է 0-ից 100 ինդեքսով՝ հանցավորության ցածր մակարդակից դեպի բարձր մակարդակ կարգով) Հայաստանը զբաղեցնում է 10-րդ տեղը՝ 22.79 ինդեքսով՝ առաջ անցնելով ինչպես ԱՊՀ բոլոր երկրներից, այնպես էլ եվրոպական երկրների մեծ մասից[1]:

Համեմատության համար նշենք, որ Վրաստանը զբաղեցնում է 11-րդ տեղը՝ 23.38 ինդեքսով, Ադրբեջանը՝ 34-րդ տեղը՝ 32.02 ինդեքսով, Գերմանիան՝ 41-րդ տեղը՝ 35.79 ինդեքսով, Ռուսաստանը՝ 51-րդ տեղը՝ 39.99 ինդեքսով, Մոլդովան՝ 75-րդ տեղը՝ 46.35 ինդեքսով, Բելառուսը՝ 113-րդ տեղը՝ 59.58 ինդեքսով:

Ընդհանուր հանցավորության քանակական ցուցանիշի աճին զուգահեռ՝ աճ է արձանագրվել նաև մարդու դեմ ուղղված հանցավորության ցուցանիշում:

1 Տե՛ս հետևյալ հղումով՝ https://worldpopulationreview.com/country-rankings/crime-rate-by-country

2022 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 6565 դեպք՝ նախորդ տարվա 4375-ի դիմաց. աճը՝ 2190-ով կամ 50.1 %-ով, վարույթ է իրականացվել 7508 դեպքի առթիվ՝ նախորդ տարվա 5425-ի դիմաց: Մարդու դեմ ուղղված հանցագործությունների 6565 դեպքից 2833-ը կամ 43%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 3732-ը կամ 57%-ը՝ ՀՀ մարզերում (նախորդ տարվա նույն ցուցանիշների հարաբերակցությունը կազմել է 38/62):

Ընդհանուր հանցագործությունների կազմում մարդու դեմ ուղղված հանցագործությունների հարաբերակցությունն արտահայտող գծապատկերը՝ ստորև.





2022 թվականի ընթացքում աճ է արձանագրվել մարդու դեմ ուղղված 38 հանցատեսակով:

Քանակական առումով ամենաբարձր աճ արձանագրած հանցատեսակը ծանր վիրավորանքն է. աճը՝ 888-ով կամ 76.8%-ով: Հիշյալ հանցատեսակի աճն ավելացած 2190 դեպքի 41%-ն է կազմում:

Ծանր վիրավորանքը քրեականացվել է 2021 թվականի օգոստոսի 30-ից, իսկ արդեն 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ ՀՀ քրեական օրենսգրքով նշված հանցատեսակն ապաքրեականացվել է: Փաստորեն՝ հիշյալ արարքը քրեականացված է եղել և հաշվառվել է 2021 թվականի 4, իսկ 2022 թվականի՝ 6 ամիսներին: Բացի այդ, նշված հանցատեսակի առկայության վերաբերյալ բարձրացել է նաև քաղաքացիների իրազեկվածությունը, որի արդյունքում քանակական աճ է արձանագրվել:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների՝ ավելացած 2190 դեպքից 484-ը կամ 22%-ը, հանկարծամահության դեպքերն են, որոնցով 2022 թվականի հուլիսի 1-ից առաջ քրեական գործ (վարույթ) չէր հարուցվում:

ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի կարգավորումներին համապատասխան՝ նախապատրաստվում էին նյութեր, որոնց արդյունքում, որպես կանոն, մերժվում էր քրեական գործի (վարույթ) հարուցումը՝ արդարացնող հիմքով և դրանք Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից որպես հանցագործության դեպք չէին հաշվառվում: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի համաձայն՝ նշված բոլոր դեպքերով նախաձեռնվում է քրեական վարույթ և հիշյալ դեպքերը հաշվառվում են որպես սպանություն:

Գլխավոր դատախազությունում քրեական վարույթների օրինականության նկատմամբ վերահսկողական գործառույթի իրացման ընթացքում պարզվել է, որ գերակշիռ դեպքերում «հանկարծամահ» եղած անձինք կենդանության օրոք տառապել են որոշակի հիվանդություններով: Գործնականում կիրառվող «հանկարծամահություն» եզրույթը ենթադրում է մարդու՝ որոշակի առողջական խնդրի հետևանքով առաջացած՝ ոչ բռնի մահ:

Փաստորեն՝ հիշյալ դեպքերին, թեև նախաքննական մարմնի կողմից տրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածով նախատեսված արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, սակայն օբյեկտիվ իրականության մեջ գոյություն ունեցող առերևույթ դեպքը, ինչպես քրեական վարույթի արդյունքներով է փաստվում, սպանություն չէ:

Վերոշարադրյալի արդյունքում սպանության արձանագրված դեպքերը կազմել են 542՝ նախորդ տարվա 60-ի դիմաց. աճը կազմել է 482 կամ 803.3%:

Սպանության դեպքերի թիվը, առանց հանկարծամահության դեպքերի թվի, 2022 թվականին կազմել է 58՝ նախորդ տարվա 60-ի դիմաց, այսինքն՝ 2-ով կամ 3.4%-ով պակաս:

Երևան քաղաքում սպանության դեպքերի թիվը նվազել է 8-ով կամ 30.8%-ով (2021 թվականին՝ 26, 2022 թվականին՝ 18), իսկ մարզերում՝ աճել 6-ով կամ 17.6%-ով (2021 թվականին՝ 34, 2022 թվականին՝ 40):

Սպանության դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց զգալի մասը կատարվել են կենցաղային կամ միջանձնային հարաբերությունների հողի վրա:

Սպանությունների մի մասն արդյունք են տուժողի և հանցանք կատարած անձի միջև տևական անհաշտ, իսկ երբեմն՝ թշնամական հարաբերությունների, որոնց վերաբերյալ տեղեկացված լինելով իրավապահ մարմինները հաճախ արդյունավետ միջոցառումներ չեն իրականացրել՝ ուղղված մահվան ելքը կանխելուն:

2022 թվականին Հայաստանի Հանրապետությունում արձանագրված սպանության 58 դեպքից 45-ը բացահայտվել է, չի բացահայտվել 13-ը, որոնցից 4-ը վերաբերում է անձի անհետ կորելու փաստին:

Անհետ կորածների 2016-2022 թվականների ցուցանիշները ներկայացվում են ստորև.

Տարեթիվը	2016-2022 թվականներին ՀՀ-ում գրանցված սպանությունների թիվը՝ ըստ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների	Որից անհետ կորածների թիվը
2016 թվական	66	10
2017 թվական	49	6
2018 թվական	35	3
2019 թվական	47	1
2020թվական	50	9
2021թվական	60	2
2022թվական	58	4

Հաշվետու ժամանակահատվածի և նախորդող 10 տարիներին ՀՀ-ում արձանագրված սպանությունների տվյալները ներկայացվում են ստորև.

Տարեթիվը	Արձանագրված սպանությունների թիվը	Մշտական բնակչության թիվը[2]	Գործակիցը 100 հազար մարդու հաշվով
2013թվական	48	3.022.000	0.63
2014թվական	53	3.013.800	0.57
2015թվական	52	3.004.600	0.58
2016թվական	66	2.992.300	0.45
2017թվական	49	2.979.400	0.61
2018թվական	35	2.969.000	0.85
2019թվական	47	2.962.500	0.63
2020թվական	50	2.961.500	0.59
2021թվական	60	2.961.400	0.49
2022թվական	58	2.976.800	0.51
Տարեկան միջին	52	2.984.330	0.59

2 Մշտական բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքից՝ https://armstat.am/file/article/sv_12_22a_510.pdf:

Վերջին 10 տարիներին ՀՀ-ում արձանագրված սպանության դեպքերի դինամիկան



2013-2022 թվականներին տարեկան կատարված սպանությունների միջին թիվը կազմել է 52:

2022 թվականին 100.000 բնակչին բաժին է ընկել սպանության 0.51 դեպք: Այս ցուցանիշը վերջին 10 տարվա տարեկան միջին ցուցանիշից (0.59) ցածր է 0.08-ով:

Հաշվետու ժամանակահատվածում չավարտված սպանության դեպքերի թիվը նվազել է 1-ով կամ 2.1%-ով (2021 թվականին՝ 47, 2022 թվականին՝ 46): Ընդ որում՝ Երևան քաղաքում այդ դեպքերի թիվն աճել է 4-ով կամ 22.2%-ով (2021 թվականին՝ 18, 2022 թվականին՝ 22), իսկ մարզերում՝ նվազել 5-ով կամ 17.2%-ով (2021 թվականին՝ 29, 2022 թվականին՝ 24):

Սպանության փորձի դեպքերը նվազել են 5-ով կամ 11.1%-ով (2021 թվականին՝ 45, 2022 թվականին՝ 40), իսկ սպանության նախապատրաստության դեպքերն աճել են 4-ով կամ 200%-ով (2021 թվականին՝ 2, 2022 թվականին՝ 6):

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների շարժընթացն առավել մանրամասն վերլուծելու նպատակով ստորև ներկայացվում է առանձնապես ծանր հանցատեսակների թվում մարդու դեմ ուղղված հանցագործությունների հարաբերակցությունն արտահայտող աղյուսակը.

Տարեթիվ	Հանկարծամահության դեպքերի հաշվառմամբ		Առանց հանկարծամահության դեպքերի հաշվառման	
	2021	2022	2021	2022
Առանձնապես ծանր բոլոր հանցագործությունները	350	880	350	776
Սպանություն, այդ թվում՝ փորձ	107	588	107	104
Թրաֆիքինգ	7	2	7	2
Սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ	9	22	9	22
Ընդհանուր թիվը	123	612	123	128
Առանձնապես ծանր հանցագործությունների թվում մարդու դեմ ուղղված հանցատեսակների տոկոսային ցուցանիշը	35	70	35	16

2022 թվականին՝ առանց հանկարծամահության դեպքերի հաշվառման, մարդու դեմ ուղղված առանձնապես ծանր հանցագործությունները կազմում են առանձնապես ծանր բոլոր հանցագործությունների 16%-ը՝ նախորդ տարվա 35%-ի դիմաց:

Թեև 2022 թվականին առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերն ընդհանուր առմամբ նվազել են 43-ով կամ 4.4 %-ով՝ կազմելով 933 նախորդ տարվա 976-ի դիմաց, սակայն դրանց կազմում առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերն աճել են 47-ով կամ 21.6%-ով՝ կազմելով 265 դեպք նախորդ տարվա 218-ի դիմաց: Աճել են նաև ծեծի կամ բռնի այլ գործողությունների դեպքերը 253-ով կամ 11.2%-ով, իսկ առողջությանը թեթև վնաս պատճառելու դեպքերը 97-ով կամ 21.9% նվազել են:

2022 թվականին արձանագրվել է ծեծի կամ բռնի այլ գործողությունների դեպքերի աճ՝ 253-ով կամ 11.2%-ով, իսկ առողջությանը դիտավորությամբ թեթև վնաս պատճառելու դեպքերը նվազել են 97-ով կամ 21.9%-ով:

Հաշվետու տարում ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելու դեպքերն աճել են 175-ով կամ շուրջ 60.3%-ով (2021 թվականին՝ 118, 2022 թվականին՝ 293): Նշված ցուցանիշը շարունակաբար վատթարացման միտում ունի. նախորդ տարի նույնպես արձանագրվել էր այդ ցուցանիշի աճ 36-ով կամ 44 %-ով:

Հաշվետու ժամանակահատվածում ինքնասպանությունների թիվն առանձին կազմել է 188՝ նախորդ տարվա 191-ի դիմաց.[3] **հաշվետու տարում ինքնասպանությունների թիվը նվազել է 3-ով կամ 1.6%-ով**: 100.000 բնակչի հաշվով ինքնասպանության գործակիցը 2022 թվականին կազմում է 0.158, որը վերջին 10 տարվա տարեկան միջին ցուցանիշից 0.007-ով պակաս է, սակայն նախորդ տարվանից ավել է 0.003-ով:

3 Ինքնասպանության և ինքնասպանության փորձի դեպքերի վերաբերյալ ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված առանձին հաշվետվության և ընդհանուր հանցավորության վերաբերյալ հաշվետվության մեջ նույն դեպքերի թվի տարբերություն կա: Նշված տարբերությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ հանցատեսակի վերաբերյալ առանձին հաշվետվության մեջ ներկայացված են ինքնասպանության և ինքնասպանության փորձի բոլոր դեպքերը, իսկ ընդհանուր հանցավորության վերաբերյալ հաշվետվություններում հաշվառված չեն այն դեպքերը, որոնց կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթներն արդարացնող հիմքերով կարճման հետևանքով հաշվառումից հանվել են: Ինքնասպանության դեպքերի վերաբերյալ վերլուծությունը կատարվել է նշված դեպքերի վերաբերյալ հաշվետվության հիման վրա:

Վերջին 10 տարվա ինքնասպանության դեպքերի թիվը և 100 հազար բնակչի հաշվով գործակիցները ներկայացվում են ստորև.

Տարեթիվը	Մշտական բնակչության թիվը ՀՀ-ում	Ինքնասպանությունների թիվը	100.000 բնակչի հաշվով Ինքնասպանությունների գործակիցը
2013 թվական	3.022.000	203	0.149
2014 թվական	3.013.800	168	0.179
2015 թվական	3.004.600	208	0.144
2016 թվական	2.992.300	195	0.153
2017 թվական	2.979.400	157	0.190
2018 թվական	2.969.000	179	0.166
2019 թվական	2.962.500	153	0.194
2020 թվական	2.961.500	183	0.162
2021 թվական	2.962.100	191	0.155
2022 թվական	2.976.800	188	0.158
Տարեկան միջին	2.984.400	182.5	0.165

Ինքնասպանության դեպքերի դինամիկան վերջին 10 տարիներին



Ստորև ներկայացվում է 2022 թվականին ինքնասպանություն կատարած անձանց տարիքային և սոցիալական կազմը՝

2022 թվականին ինքնասպանություն կատարած անձանց կազմը



2022 թվականին ինքնասպանություն կատարած անձանց սոցիալական կազմը



2022 թվականին ինքնասպանություն կատարած անձանց կազմում 14-ից ցածր տարիքի 1 անձ է, նախորդ տարի նշված ցուցանիշը՝ 0: 2022 թվականին ինքնասպանություն կատարած 14-17 տարեկանների թիվը կազմել է 9, 2021 թվականին՝ 7, 2020 թվականին՝ 4 անձ:

Ինքնասպանություն կատարած անձանց 188 անձից 129-ը կամ 69%-ը գործազուրկներ և թոշակառուներն են. 75-ը՝ գործազուրկ, 54-ը՝ թոշակառու:

Նախորդ տարի ինքնասպանություն կատարած 191 անձից գործազուրկ է եղել 67-ը, թոշակառու՝ 51-ը: Գործազուրկ կամ թոշակառու են եղել ինքնասպանություն կատարած դիմաց անձանցից 118-ը կամ 62%-ը:

Սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունները 2022 թվականին աճել են 16-ով կամ 172%-ով՝ կազմելով 109-ը՝ նախորդ տարվա 93-ի փոխարեն, սակայն բռնաբարության և դրա փորձի դեպքերը նվազել են 1-ով և կազմել 13:

Մարդկանց թրաֆիքինգի դեպքերը նվազել են 2-ով կամ 20.0%-ով /1-80/: Այս ցուցանիշը պետք է գնահատել բացասական՝ հաշվի առնելով տվյալ հանցագործության լատենտայնության բարձր մակարդակը:

2022 թվականին մարդու դեմ ուղղված հանցավորության մակարդակի աճ է արձանագրվել, սակայն մարդու դեմ ուղղված առավել վտանգավոր հանցատեսակի՝ սպանության, այդ թվում՝ սպանության փորձի դեպքերը նվազել են:

Ստորև ներկայացված են 2017-2022 թվականներին արձանագրված՝ մարդու դեմ ուղղված հանցագործությունների թվերը, աճի և նվազման ցուցանիշները.

Տարեթիվը	Մարդու դեմ ուղղված հանցագործությունների թիվը		Նվազման կամ աճի քանակային ցուցանիշը	Նվազման կամ աճի տոկոսային ցուցանիշը
2017 թվական	4868		-27	-0.6
2018 թվական	4799		-69	-1.4
2019 թվական	4293		-506	-10.5
2020 թվական	4410		+117	+2.7
2021 թվական	4375		-35	-0.8
2022 թվական	Հանկարծամահության դեպքերի հաշվառմամբ	6565	+2190	+50.1
	Առանց հանկարծամահության դեպքերի	6081	1706	+39

2022 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանցագործությունների 1246 դեպքով կամ 8.2%-ով նվազում (2021 թվականին՝ 15.149, 2022 թվականին՝ 13.903), իսկ Երևան քաղաքում՝ 723-ով կամ 7.5%-ով (2021 թվականին՝ 9636, 2022 թվականին՝ 8913):

Հաշվետու տարում սեփականության դեմ ուղղված հանցագործությունները կազմել են հանրապետությունում արձանագրված հանցագործությունների դեպքերի ավելի քան 38.1%-ը (2021 թվականին՝ 36.528, 2022 թվականին՝ 13.903):

Չնայած սեփականության դեմ ուղղված հանցագործությունները, ընդհանուր առմամբ, ունեցել են նվազման միտում, այնուամենայնիվ, արձանագրվել է սեփականության դեմ ուղղված որոշ հանցատեսակների աճ, իսկ առանձին դեպքերում նաև էական աճ, մասնավորապես՝ ավազակության դեպքերն աճել են 11-ով կամ 26.8%-ով (2021 թվականին՝ 41, 2022 թվականին՝ 52), կողոպուտի դեպքերը՝ 5-ով կամ 3.4%-ով (2021 թվականին՝ 146, 2022 թվականին՝ 151), խարդախության դեպքերը՝ 136-ով կամ 7.4%-ով (2021 թվականին՝ 1.843, 2022 թվականին՝ 1.979), համակարգչային հափշտակության դեպքերը՝ 280-ով կամ 154.7%-ով (2021 թվականին՝ 181, 2022 թվականին՝ 461: Հաշվետու ժամանակահատվածում գողության դեպքերը նվազել են 1364-ով կամ 12.2%-ով (2021 թվականին՝ 11.218, 2022 թվականին՝ 9854), ընդ որում, բնակարանային գողությունների դեպքերը՝ 41-ով կամ 3.4%-ով (2021 թվականին՝ 1192, 2022 թվականին՝ 1151), վստահված գույքի հափշտակության դեպքերը՝ 55-ով կամ 11.6%-ով (2021 թվականին՝ 473, 2022 թվականին՝ 418), սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը՝ 237-ով կամ 19.9%-ով (2021 թվականին՝ 1193, 2022 թվականին՝ 956):

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների թվի նվազմանը զուգահեռ հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է դրանց բացահայտման ցուցանիշի մտահոգիչ նվազում, մասնավորապես՝ 2022 թվականին նշված ցուցանիշը կազմել է 27.6%՝ ի տարբերություն 2021 թվականի 47. 5%-ի:

Արձանագրվել է սեփականության դեմ ուղղված գրեթե բոլոր հանցատեսակների բացահայտման ցուցանիշի նվազում. բացահայտվել է կողոպուտի դեպքերի 46.4%-ը՝ նախորդ տարվա 54.1%-ի, գողությունների 28.7%-ը՝ 48.5%-ի, խարդախությունների 22.5%-ը՝ 46.1%-ի, վստահված գույքի հափշտակության դեպքերի 31.1%-ը՝ 54.8%-ի, համակարգչային հափշտակությունների 5.5%-ը՝ 16.3%-ի, ուրիշի գույքն ապօրինի օգտագործելու դեպքերի 84%-ը՝ 86%-ի համեմատ:

Արձանագրվել է չնչին դրական տեղաշարժ սեփականության դեմ ուղղված մյուս հանցատեսակների բացահայտման ցուցանիշներում: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում ավազակության դեպքերի բացահայտումը կազմել է 84.6%՝ 2021 թվականի 73.2%-ի համեմատ, բնակարանային գողության դեպքերինը՝ 24.3%՝ 2021 թվականի 23.1%-ի համեմատ:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ վերջին տարիներին Դատախազության նախաձեռնությամբ և Ոստիկանության ակտիվ մասնակցությամբ՝ աշխատանքներ են կատարվել բնակարանային գողությունների նախականխման ուղղությամբ: Մասնավորապես՝ դատախազներին հանձնարարություններ են տրվել՝ ներկայացնելու միջնորդագրեր տեղական ինքնակառավարման մարմիններին՝ բազմաբնակարան շենքերի շքամուտքերի դռները կոդավորված փականներով, իսկ որոշ բնակավայրերի մուտքերը տեսանկարահանող սարքերով կահավորելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար: Արդյունքում, հատկապես Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի մուտքերի կահավորման ցուցանիշների աճին զուգահեռ, դրանցից կատարվող գողությունների թիվը տարբեր ժամանակներում տարբեր համամասնություններով նվազել է:

Այդուհանդերձ, հափշտակությունների առանձին տեսակների, այդ թվում՝ բնակարանային գողությունների դեպքերի շարժընթացում արձանագրված դրական, սակայն, ընդհանուր առմամբ, չգոհացնող ցուցանիշները (այդ թվում՝ բացահայտման ցուցանիշները) առանձին դեպքերում պայմանավորված են վարույթն իրականացնող մարմինների աշխատանքի ցածր արդյունավետությամբ:

Արձանագրվել են դեպքեր, երբ, ի հակառակ Դատախազության կոլեգիայի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի նիստի որոշման պահանջների՝ դեպքի վայրի զննությունը կատարվել է խիստ մակերեսային, բավարար տվյալներ չեն արձանագրվել պատկերացում կազմելու համար, թե տուժողի բնակարանը շենքի որ հարկում է գտնվում և որոնք են տվյալ բնակարանին մոտենալու ուղիները, մասնավորապես՝ բազմաբնակարան շենքերում պատշգամբից բնակարան մուտք գործելու, ինչպես նաև բազմաբնակարան և բազմամուտք շենքերի չկոդավորված դռներով տվյալ շենքի տանիքից կոդավորված մուտքի դուռ ունեցող շքամուտք իջնելու և նշված շքամուտքի բնակարաններից գողություն կատարելու հնարավորությունները: Բացի այդ, արձանագրվել են նաև դեպքեր, երբ, թեև դեպքի վայրի զննությամբ արձանագրվել են տեսանկարահանող սարքեր, սակայն վարույթն իրականացնող մարմնի կողմից անհետաձգելի քննչական գործողությունները՝ առգրավումները, կատարվել են ձգձգումներով՝ դեպքից տևական ժամանակ անց, և այդ գործողությունը ժամանակին չկատարելու արդյունքում տեսաերիզները չեն պահպանվել, ինչը բացասաբար է անդրադարձել հանցագործության բացահայտման գործընթացի վրա:

Առանձին դեպքերում վարույթն իրականացնող մարմինները դեպքի վայրի զննությունները կատարել են առանց մասնագետների, փորձագետների մասնակցության՝ այդպիսով նվազեցնելով պիտանի հետքեր հայտնաբերելու հնարավորությունը:

Քրեական գործերի (վարույթների) ուսումնասիրությունից պարզվել է, որ հիմնականում վարույթն իրականացնող մարմինների կողմից դեպքի վայրի զննությունները՝ հետքերի հայտնաբերման, ֆիքսման և ձեռքբերման առումով, կատարվում են թերություններով: Մասնավորապես, փաստական տվյալներ ունենալով, որ դեպքի վայրում հանցավորը կամ հանցավոր(ներ)ը հպվել են ինչ-որ առարկաների ու այս դեպքում ողջամտորեն ենթադրելի լինելով, որ դրանց վրա թողել են գենետիկ հետքեր, առարկաները չեն վերցվում, իսկ կասկածելի անձանց հայտնաբերման դեպքում՝ նշված հետքերով դատագենետիկական փորձաքննություններ նշանակելու մասին որոշումներ չեն կայացվում: Բացի այդ, դեպքի վայրի զննությամբ պատշաճ չեն հետազոտվում դեպքի վայրին կից գտնվող շինությունները, պարզելու՝ դրանց վրա առկա՞ են տեսախցիկներ, թե՞ ոչ, որպեսզի առկայության դեպքում հնարավորինս շուտ վերցվեն տեսանյութերը և, ապացույցներ ձեռք բերելու նպատակով, զննվեն:

Որոշ քրեական գործերով (վարույթներով) քննիչներն օպերատիվ չեն գործել, տուժողին և վերջինիս հետ բնակվող անձանց հարցաքննել են դեպքից տևական ժամանակ անց, բջջային հեռախոսների մուտքային և ելքային զանգերի վերծանումները ստանալու նպատակով միջնորդությունները դատարան ներկայացրել են անհարկի ձգձգումներով:

Գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաև, որ որոշ դեպքերում, հափշտակությունների առարկա հանդիսացող իրերի առանձնահատկություններով պայմանավորված, առաջանում է օպերատիվ գործելու անհրաժեշտություն: Մինչդեռ հանցագործության դեպքն անմիջապես արձանագրվելուց անմիջապես հետո, գողոնը հայտնաբերելու նպատակով միջոցներ չեն ձեռնարկվել: Օրինակ՝ հափշտակված ոսկյա զարդերն իրացվում են շատ կարճ ժամանակահատվածում, ընդ որում, դրանց իրացումը մեծապես իրականացվում է ոսկյա զարդերի առուվաճառքով զբաղվող առևտրի կենտրոններում: Ոսկյա զարդերը ձևափոխվում ու ձուլվում են նույն կենտրոններում, համապատասխան մասնագետների կողմից: Նման պայմաններում համապատասխան օպերատիվ միջոցառումներն անհրաժեշտ է ձեռնարկել և իրականացնել առավելագույն սեղմ ժամկետներում:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է ավազակության դեպքերի աճ՝ 11-ով կամ 26.8%-ով (2021 թվականին՝ 41, 2022 թվականին՝ 52):

Աճը պայմանավորված է ՀՀ քրեական օրենսգրքում ավազակության հանցակազմի ավելի լայն ձևակերպմամբ: Մասնավորապես, եթե 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգիրքը (այսուհետ նաև՝ ՀՀ նախկին քրեական օրենգիրք) **կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով զուգորդված հափշտակությունը որակում էր որպես կողոպուտ, ապա 2022 թվականին հուլիսի 1-ից հետո նման դեպքերը որակվում են որպես ավազակություն:**

2022 թվականի ընթացքում որոշակի փոփոխություններ են տեղի ունեցել կողոպուտի դեպքերի շարժընթացում. արձանագրվել է կողոպուտի դեպքերի աճ՝ 5-ով կամ 3. 4%-ով (2021 թվականին՝ 146, 2022 թվականին՝ 151): Նվազել է տվյալ հանցատեսակի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 46.4%, նախորդ տարվա 54.1%-ի համեմատ:

Հաշվետու ժամանակահատվածում Երևան քաղաքում Ոստիկանության պարեկային ծառայության գործելու պայմաններում, գրանցվել է նշված հանցատեսակի աճ՝ 3-ով կամ 2.8%-ով (2021 թվականին՝ 107, 2022 թվականին՝ 110), իսկ բացահայտման ցուցանիշը նվազել է՝ կազմելով 38.2%՝ նախորդ տարվա 48.6%-ի համեմատ:

2022 թվականի ընթացքում էական բացասական փոփոխություններ են տեղի ունեցել խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերի շարժընթացում. արձանագրվել է խարդախության դեպքերի աճ՝ 136-ով կամ 7.4%-ով (2021 թվականին՝ 1843, 2022 թվականին՝ 1979), որին զուգահեռ էականորեն նվազել է բացահայտման ցուցանիշը:

Հաշվետու ժամանակաշրջանում խարդախությամբ անձնական գույքի հափշտակության 1979 դեպքից բացահայտվել է 414-ը, բացահայտումը կազմել է 22.5%՝ նախորդ տարվա 46.1%-ի համեմատ:

Հանրապետության տարածքում գրանցված խարդախությամբ անձնական գույքի հափշտակության դեպքերի մեծ մասը՝ 1.369-ը գրանցվել է Երևան քաղաքում, դեպքերի մեծ մասը (ընդհանուր խարդախության դեպքերի 69.1%-ը) գրանցվել է մայրաքաղաքում:

2022 թվականի ընթացքում էական փոփոխություն է տեղի ունեցել համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունների դեպքերի շարժընթացում՝ նախորդ տարվա համեմատությամբ դեպքերն աճել են 280-ով կամ 154.7%-ով: Մտահոգիչ կերպով նվազել է նշված հանցատեսակի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 5.5% նախորդ տարվա 16. 3%-ի համեմատ: Հանրապետությունում գրանցվել է համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունների 461 դեպք՝ նախորդ տարվա 181-ի համեմատ: Նշված դեպքերի կեսից ավելին՝ 300-ը, կատարվել է Երևան քաղաքում, որտեղ դեպքերն աճել են 186-ով կամ 163.2%-ով:

Անդրադառնալով խարդախությունների, ինչպես նաև համակարգչային հափշտակությունների դեպքերի աճին՝ պետք է փաստել, որ դրանց պատճառների շարքում է տուժողի վարքագիծը. նշված հանցագործությունների զգալի մասը կատարվում է այնպիսի մեխանիզմներով, որն առանց տուժողի որոշակի վարքագծի, հնարավոր չէ: Օրինակ՝ հանցավոր մտադրություն ունեցող անձինք շահավետ պայմաններով և անկախ վարկունակությունից վարկեր տրամադրելու, ապրանքի դիմաց անկանխիկ վճարում կատարելու, էլեկտրոնային դրամապանակ գրանցելու, դրանք նույնականացնելուն աջակցելու, բոնուսներ տրամադրելու կամ նմանատիպ այլ պատրվակներով տուժողներից պահանջում և ստանում են բանկային քարտերի տվյալներ, բջջային հեռախոսահամարներ, հեռախոսահամարներին ստացված ծածկագրեր և դրանց միջոցով, օրինակ՝ փոխելով հաշվին կցված հեռախոսահամարն ու ազատորեն կառավարելով հաշիվը, կամ մուտքագրելով տուժողի հեռախոսահամարին ուղարկված ծածկագիրը, հափշտակում են տուժողի հաշվին առկա գումարը:

Բացի այդ, տարածված են դեպքեր, երբ համացանցային էջերում գույքի վաճառքի հայտարարություն տված անձինք դրանք իրացնելիս՝ չեն ցուցաբերում զգոնություն, ինչի արդյունքում հանցավոր մեխանիզմի զոհ են դառնում: Օրինակ՝ քիչ անց վճարելու մասին խոստման դիմաց գույքը հանձնում են իբր գնորդի առաքիչին կամ նրա աշխատակցին, ով քննությամբ պարզվում է՝ տաքսի ծառայության աշխատակից է, ում հանձնարարվել է առարկան մի տեղից տեղափոխել այլ տեղ: Նման արարքները շատ են կատարվում այնպիսի եղանակով, որոնք ի սկզբանե պետք է կասկած հարուցեին գույքի սեփականատիրոջ մոտ, օրինակ՝ հանցավորն ամեն գնով ցանկանում է գնել գույքը առանց այն տեսնելու, կամ դրա վիճակի մասին մանրամասներ ճշտելու, երբեք չի սակարկում գինը, երկար չի քննարկում գնման հանգամանքները և այլն:

Առանձին դեպքերում հանցանք կատարած անձինք օգտագործում են ավելի բարդ մեխանիզմներ, օգտվում անկանխիկ դրամաշրջանառություն ապահովող համակարգերի թերություններից, ծրագրային սխալներից կամ բացերից, օրինակ՝ համապատասխան սարքի կողմից գումարի մուտքագրման, ելքագրման կամ գործարքն ընդհատելու հանգամանքը վայրկյաններ ավելի ուշ ֆիքսելու հանգամանքից: Նշված դեպքերում ծրագրային թերությունները շտկելու, ինչպես նաև հանցանքը ծնող այլ պատճառներն ու պայմանները վերացնելու նպատակով՝ Դատախազությունը միջնորդագրեր է ներկայացրել Կենտրոնական բանկ, ֆինանսական և այլ կազմակերպությունների ղեկավարներին:

Միջնորդությունների քննարկման արդյունքում արձանագրված թերությունները շտկվել են, բարդացվել են որոշ անկանխիկ գործառնությունների իրականացման հնարավորությունները:

Համակարգչային տեխնիկայի գործադրմամբ կատարվող հափշտակությունների քննության մեթոդիկան ունի որոշակի բարդություններ. անհրաժեշտ տեղեկությունը, որպես կանոն, գտնվում է ՀՀ տարածքից դուրս գործող տարբեր միջազգային կազմակերպություններում՝ «Facebook», «Viber», «Mail.ru» և այլն, ու գործնականում, թեև վարույթն իրականացնող մարմինների կողմից հասցեագրվում են համապատասխան հարցումներ, սակայն դրանց պատասխանները կամ չեն ստացվում կամ ստացվում են թերի և ուշացումով, ինչն էլ բացասաբար է անդրադառնում նշված դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների արդյունավետության վրա:

2022 թվականի ընթացքում արձանագրված սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի վերաբերյալ Գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ աճել են համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված այն հափշտակության դեպքերը, որոնք դրսևորվում են հետևյալ կերպ. առերևույթ հանցավոր արարք կատարող անձինք «WhatsApp» կամ այլ կապի միջոցներով կապ են հաստատում համացանցային առուվաճառքի հարթակներում (օրինակ՝ « List.am») տարատեսակ ապրանքներ վաճառողների հետ և, հայտարարությամբ տեղադրված ապրանքները գնելու դիմաց էլեկտրոնային եղանակով վճարում կատարելու պատրվակով, նրանցից պահանջում ու ստանում են վերջինների բանկային քարտերի տվյալները, որից հետո, այդ տվյալներն օգտագործելով, հափշտակում են դրանց հաշվին առկա գումարը:

Դեպքերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է նաև, որ **հիշյալ հանցավոր արարքները կատարողները գործում են նախօրոք մտածված սցենարով ու սխեմայով, շատ դեպքերում գործի դնելով՝ «հոգեբանական թակարդներ զոհերի համար» և առաջացնում շահագրգռվածություն անձի մոտ, որ վերջինս որպե շուտ նրան տրամադրի բանկոմատային քարտի պահպանվող տվյալները:** Այլ կերպ ասած՝ վաճառվող ապրանքը գտնվելով վաճառողի մոտ՝ գնորդն առաջարկում է վճարել դրա դիմաց, չսակարկելով վաճառվող առարկայի գինը, ինչը գայթակղում է վաճառողին՝ հանցավորի «թակարդն ընկնել» ու նրա առաջարկը չմերժել՝ տրամադրելով իր կամ այլ ծանոթի կամ բարեկամի բանկոմատային քարտի պահպանվող տվյալները, որից հետո հանցավորը, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, այդպիսի տվյալները ներբեռնելով, կարողանում է ազատ օգտվել բանկոմատային քարտում եղած գումարից և դրանց առկայության դեպքում, փոխանցելով այլ խաղային և անձնական հաշիվների, հափշտակում է:

Արդյունքում՝ բանկային քարտի սեփականատերը կամ վերջինիս հարազատը կամ մտերիմն ինքնակամ հանցավորին է տրամադրում՝ իհարկե խաբեության արդյունքում, բանկային քարտի պահպանվող տվյալները, որից էլ օգտվում են հանցավորները՝ հնարավորություն ստանալով իրագործելու իրենց հանցավոր դիտավորությունը:

2022 թվականի ընթացքում գրանցվել է նշված եղանակով կատարված հանցագործությունների 244 դեպք, որոնցից 212-ով հանցավոր արարքներն ավարտվել են, 32-ով հանցավոր արարքներն ավարտին չեն հասցվել հանցավորի կամքից անկախ պատճառներով՝ տվյալ բանկային քարտի հաշվին գումար չլինելու պատճառով, 82-ով կայացվել են քրեական գործ (վարույթ) հարուցելու մասին որոշումներ, իսկ 99-ով նախաձեռնվել են քրեական վարույթներ, 63-ով կայացվել են քրեական գործ (վարույթ) հարուցելը մերժելու մասին որոշումներ, 181 քրեական վարույթից բացահայտվել է 2-ը, որոնցից 1-ը կարճվել է տուժողի հետ կասկածյալի հաշտվելու հիմքով, իսկ մյուսն ընթացքի մեջ է, 2 քրեական գործով վարույթները կարճվել են տուժողի բողոքի բացակայության հիմքով: Ընդհանուր վնասը կազմել է շուրջ 30 մլն դրամ:

Հանցավորը կամ հանցավորները, որպես կանոն, գործում են մեկ միասնական դիտավորությամբ և օգտագործում են բազմաթիվ անձանց տվյալները, այսինքն՝ հանցավոր արարքն ընդգրկում է մեկից ավելի դրվագներ:

Նշված եղանակով հափշտակությունների աճը պայմանավորված է հիմնականում տուժողների իրազեկված չլինելու, բանկոմատային դրամաշրջանառության համակարգերին, բանկոմատային քարտերի կիրառման, օգտագործման կանոներին բավարար չափով չտիրապետելու, դրանց վավերապայմանները հանցավորներին անհիմն վստահելու հանգամանքներով, ինչպես նաև հանցավորների սուբյեկտիվ ընկալմամբ, որ նման եղանակների կիրառմամբ՝ չվերահսկվող հաղորդակցման կապի միջոցներից օգտվելով, հափշտակված գումարները մի քանի հաշիվներ փոխանցելով, իրենց կողմից կատարված հափշտակությունները չեն բացահայտվի:

Նշված հանցատեսակների աճը պայմանավորված է նաև նրանով, որ վերջին ժամանակներում բանկային գործառնությունների կատարման գործընթացներում ներառվել է առցանց եղանակով դրանք իրականացնելու (տարատեսակ գործարքների դեպքում գումարներ փոխանցելու) հնարավորությունը:

Բանկային գործառնությունների կատարման գործընթացներում ներառվել է առցանց եղանակով դրանք իրականացնելու (վարկեր ձևակերպելու, գումարներ փոխանցելու և այլն) հնարավորությունը, ինչին զուգահեռ բավարար չափով չեն կատարելագործվել բանկային վերահսկողական մեխանիզմները: Արդյունքում՝ էլեկտրոնային վճարահաշվարկային համակարգերի ոչ բավարար պաշտպանվածությունը, ինչպես նաև բանկային վերահսկողական բավարար և անհրաժեշտ մեխանիզմերի բացակայությունը հանգեցնում է լրացուցիչ ռեսուրսներ օգտագործելուն, որպիսի միջոցների գործադրումը նշված եղանակով կատարվող հանցագործությունները կանխելու, նախականխելու համար այնքան արդյունավետ չէ, որքան պաշտպանվածության և վերահսկողական կատարելագործված համակարգերի ներդրումը:

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է փաստել, որ համակարգչային տեխնիկայի գործադրմամբ կատարված հափշտակությունների դեմ պայքարի շրջանակներում անհրաժեշտ է հանցավոր մեխանիզմների մասին պարբերաբար իրազեկել քաղաքացիներին, ինչպես նաև բարելավել բանկային վերահսկողական մեխանիզմներն ու վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգերը:

Հաշվետու տարում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների նվազում՝ 237 դեպքով կամ 19.9%-ով՝ 956 դեպք՝ նախորդ տարվա 1193-ի համեմատ:

Նշված նվազումը պայմանավորված է նոր Քրեական օրենսգրքի գործողության մեջ դնելու հանգամանքով, մասնավորապես, որոշ հանցատեսակներ, ինչպիսիք են օրինակ՝ գույքն անզգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը, ապաքրեականացվել են, իսկ գույքը ոչնչացնելը կամ վնասելու դեպքում ներկայումս պատասխանատվություն է նախատեսվում խոշոր չափերի վնաս պատճառելու դեպքում, մինչդեռ նախկինում պատասխանատվության ենթարկելու համար բավարար էր զգալի չափի վնաս պատճառելը:

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների 11.861 դեպք՝ նախորդ տարվա 6356-ի դիմաց:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործությունների դեպքերն աճել են 5505-ով կամ 86.6%-ով: 2022 թվականին արձանագրված խուլիգանության դեպքերն աճել են 130-ով կամ 40.4%-ով (2021 թվականին՝ 322, 2022 թվականին՝ 452): Նշված դեպքերից Երևան քաղաքում արձանագրվել է 300-ը, մարզերում՝ 152-ը, նախորդ տարի՝ Երևանում՝ 231-ը, մարզերում՝ 91-ը:

Խիստ մտահոգիչ է վերջին 7 տարիներին՝ 2016-2022 թվականներին, զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանության դեպքերի անընդմեջ աճը՝ կայուն աճի միտումը:

Նշված դեպքերի քանակական ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 32-41-53-75-86-95-97. աճը հաջորդաբար կազմել է 9-12-22-11-9-2 կամ 28,1%-29,3%-41,5%-14.7%-10.5%-2%:

Նշենք, որ 2022 թվականին զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանության դեպքերն աճել են ընդամենը 2-ով: Եթե 2021 թվականին դրանք եղել են 95-ը, ապա 2022 թվականին՝ 97-ը: Ընդ որում, Երևան քաղաքում նշված դեպքերը նվազել են 2-ով (2021 թվականին՝ 57, 2022 թվականին՝ 55). աճն արձանագրվել է մարզերի հաշվին:

Չհերքելով, որ խուլիգանության, այդ թվում զենքով խուլիգանության դեպքերի իրական աճ կա, պետք է փաստել, որ ներկայացված դինամիկ աճի ցուցանիշները մեծապես պայմանավորված են նաև խուլիգանությունների որակման հարցում քրեական հետապնդման մարմինների դիրքորոշումների փոփոխությամբ: Բանն այն է, որ խուլիգանության հանցակազմի մասին Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև խուլիգանական շարժառիթը նեղ մեկնաբանության են ենթարկել:

Խուլիգանությանդեմ պայքարը, իր բնույթով ու հատկապես շարժառիթներով պայմանավորված, յուրաքանչյուր դեպքի կանխմամբ իրականացվել չի կարող: Այն ենթադրում է հասարակության, համակեցության կանոնների, իրավական և բարոյական նորմերի նկատմամբ հարգալից, այլոց հանդեպ հանդուրժողական վերաբերմունքի ձևավորում հասարակության անդամների մոտ:

Որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանության դեպքերի կայուն աճի միտումը խիստ բացասական է: Այդ իսկ պատճառով, չնայած նախորդիվ կատարվել են խուլիգանության դեպքերի մի շարք ուսումնասիրություններ և ամփոփումներ, այդուհանդերձ, հաշվի առնելով որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ խուլիգանության դեպքերի կայուն աճի միտումը՝ անընդմեջ 7 տարի, 2023 թվականի Դատախազության տարեկան աշխատանքի ծրագրի կետերի ցանկում ներառվել է այդ դեպքերով նախաձեռնված քրեական վարույթներով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և մեղադրանքի պաշտպանության վիճակը:

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում աճել են ճանապարհային երթևեկության կանոնները (այսուհետ նաև՝ ՃԵԿ) խախտելու դեպքերը:

2021 թվականին արձանագրվել է 1548 դեպք, 2022 թվականին՝ 1983 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 435-ով կամ 28.1%-ով: Բացահայտումը կազմել է 51,7%-ը՝ նախորդ տարվա 83.4%-ի դիմաց, այսինքն նախորդ տարվա համեմատությամբ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու վերաբերյալ վարույթներով բացահայտման տոկոսային ցուցանիշը նվազել է 31.7%-ով:

Նվազել են մահվան ելքով ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերը:

2021 թվականին արձանագրվել է մահվան 239 դեպք, 2022 թվականին՝ 193 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 46-ով կամ 19.2%-ով: Բացահայտումը կազմել է 49.7%՝ նախորդ տարվա 60.8%-ի դիմաց:

Ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերն աճել են հիմնականում Երևան քաղաքում: Մասնավորապես՝ ՀՀ-ում 2022 թվականի ընթացքում դեպքերն ավելացել են 378-ով, իսկ միայն Երևան քաղաքում դրանց թիվն ավելացել է 359-ով կամ 50 %-ով: Երևան քաղաքում, սակայն, 21,1 %-ով նվազել են մահվան դեպքերը, մասնավորապես, արձանագրվել է 90 դեպք՝ նախորդ տարվա 114-ի դիմաց:

Արձանագրված դեպքերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2022 թվականի ընթացքում արձանագրվել է ընդհանուր 4308 ճանապարհատրանսպորտային պատահար, որի արդյունքում մահացել է 321 անձ, իսկ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 6153-ը: Ընդհանուր պատահարների թիվը 2022 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է 296-ով կամ 6,4 %-ով, մահացած անձանց թիվը՝ 47-ով կամ 12,8%-ով, իսկ դրանց արդյունքում վնասվածքներ ստացած անձանց թիվը՝ 546-ով կամ 8,2%-ով:

Ստորև ներկայացնում ենք 2012-2022 թվականներին ՀՀ-ում պետական վիճակագրական հաշվառման վերցված ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ տվյալները.

Տարեթիվը	Քանակ			Աճ/Նվազում		
	ՃՏՊ	Ձոհ	Վիրավոր	ՃՏՊ	Ձոհ	Վիրավոր
2012 թվական	2602	311	3739	+ 283	- 16	+ 385
2013 թվական	2824	316	3994	+ 222	+ 5	+ 255
2014 թվական	3156	297	4479	+ 332	- 19	+ 485
2015 թվական	3399	346	4738	+ 243	+ 49	+ 259
2016 թվական	3203	267	4451	- 196	- 79	- 287
2017 թվական	3535	279	5179	+ 332	+ 12	+ 728
2018 թվական	4111	343	5950	+ 576	+ 64	+ 771
2019 թվական	4799	341	6801	+ 688	- 2	+ 851
2020 թվական	4016	348	5846	- 783	+ 7	- 955
2021 թվական	4604	368	6699	+ 588	+ 20	+ 853
2022 թվական	4308	321	6153	- 296	-47	-546

Վերոգրյալ վիճակագրական թվերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ **ճանապարհատրանսպորտային հանցագործությունների հետևանքով մահացության թվի՝ նման էական նվազում վերջին անգամ եղել է 2016 թվականին:**

ՃԵԿ կանոնները խախտելու դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց շարունակական աճը պայմանավորված է փոխկապակցված մի շարք հանգամանքներով, ինչպիսիք են տրանսպորտային միջոցների թվաքանակի շարունակվող աճը, ճանապարհների սխալ կամ ոչ բավարար կահավորումը, կամ կահավորման բացակայությունը և այլն: Անդրադառնալով ճանապարհների կահավորմանը՝ հարկ է ընդգծել, որ **հատկապես վերակառուցման փուլում գտնվող ճանապարհները կամ կահավորված չեն կամ վատ են կահավորված, ինչն այլ հանգամանքների հետ զուգորդման դեպքում վթարների պատճառ է դառնում:** Դատախազությունը շարունակում է հանցագործություններին նպաստող այս հանգամանքները վերացնելուն ուղղված միջոցներ ձեռնարկել՝ կոնկրետ գործերով միջնորդագրեր ներկայացնելով իրավասու մարմիններին: Մահվան, ինչպես նաև մարմնական վնասվածքների ելքով ճանապարահատրանսպորտային պատահարների կանխարգելման նպատակով Դատախազությունում պարբերաբար իրականացվում են ուսումնասիրություններ՝ դրանց ծնող պատճառները հայտնաբերելու նպատակով և ձեռնարկվում են միջոցառումներ՝ դրանք հնարավորինս կանխելու ուղղությամբ:

2022 թվականին կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Դատախազության տարածքային ստորաբաժանումների կողմից նախորդող 2 տարվա ընթացքում իրավասու մարմիններին ներկայացվել է շուրջ 35 միջնորդագիր ու հաղորդում՝ ճանապարհատրանսպորտային պատահարների ծնող պատճառներն ու նպաստող պայմանները վերացնելու, այդ թվում՝ նոր կառուցվող ճանապարհներին պատշաճ նախազգուշացնող նշանների տեղադրման նպատակով:

2022 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում իրականացվել է 2020-2021 թվականների ընթացքում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածով (ՀՀ քրեական օրենսգրի 342-րդ հոդվածով) նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված քրեական գործերով (վարույթ) մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության և դատարանում մեղադրանքի պաշտպանության վիճակի վերաբերյալ ուսումնասիրություն և ամփոփում:

Դատախազության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու և անզգուշությամբ անձանց մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքերը պայմանավորված են երթևեկության մասնակիցների կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջը կամ ճանապարհային երթևեկության կանոնները չպահպանելու հանգամանքով: Շատ են դեպքերը, երբ ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառ են հանդիսանում հետիոտների կողմից համապատասխան կանոնների խախտումները, որոնք ոչ սահմանված վայրում են հատում ճանապարհները, ինչի հետևանքով ստեղծված իրավիճակում վարորդները տեխնիկական տեսակետից վրաերթը կանխելու հնարավորություն չեն ունենում:

Ճանապարհատրանսպորտային պատահարները երբեմն տեղի են ունենում հետիոտնային անցումների գծանշումների անտեսանելիության, հետիոտնային կարգավորվող անցումների լուսացույցները վարորդների տեսադաշտից դուրս գտնվելու, տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերի բացակայության պատճառով:

ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի հատկանիշներով քննված մի շարք քրեական գործերի (վարույթ) ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ, ինչպես նախորդ, այնպես էլ՝ հաշվետու ժամանակահատվածում երբեմն ճանապարհատրանսպորտային պատահարները տեղի են ունենում ճանապարհի այն հատվածներում, որտեղ իրականացվում են շինարարական կամ այլ աշխատանքներ, ինչպես նաև շատ են դեպքերը, երբ առերևույթ պատահարի պատճառ է հանդիսանում ճանապարհի տվյալ հատվածում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման ուղղությամբ բավարար միջոցներ ձեռնարկված չլինելը:

Հարկ է արձանագրել նաև, որ ՀՀ-ում յուրաքանչյուր տարի ավելանում են ինչպես շահագործվող տրանսպորտային միջոցների, այնպես էլ՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձանց քանակը, ինչը չի կարող իր ազդեցությունը չունենալ ճանապարհատրանսպորտային պատահարների թվի վրա:

Պետք է արձանագրել ճանապարհատրանսպորտային պատահարների հետ կապված մեկ մտահոգիչ հանգամանք ևս: Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնից ստացված տվյալների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ի տարբերություն ՀՀ մյուս տարածքների, մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարների թիվն աճել է Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում: Մասնավորապես, եթե Սյունիքի, Շիրակի և Լոռու մարզերում դրանց թիվը նվազել է մոտ 50 %-ով, ապա Վայոց ձորի մարզում և Արագածոտնի մարզերում դրանց թիվն ավելացել է: Մասնավորապես՝ Վայոց ձորի մարզի տարածքում հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է մահվան ելքով ճանապարհատրանսպորտային պատահարի 9 դեպք՝ նախորդ տարվա 6-ի դիմաց, իսկ Արագածոտնի մարզում՝ 29 դեպք՝ նախորդ տարվա 21-ի դիմաց: Դեպքերի աճը հիմնականում արձանագրվել է Աշտարակի բաժնի սպասարկման տարածքում, որտեղով անցնում է հյուսիս-հարավ մայրուղին:

Այս դեպքերի կապակցությամբ միայն Արագածոտնի մարզի դատախազության կողմից 2022 թվականի ընթացքում ներկայացվել է 6 միջնորդագիր: Ներկայացված միջնորդագրերից 4-ը հասցեագրվել է «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի տնօրենին՝ մարզի տարածքում ՀՀ միջպետական նշանակության ավտոճանապարհը սպասարկող ճանապարհաշինարարական ընկերության աշխատանքներում արձանագրված թերությունների, դրանց պատճառների և նպաստող պայմանների վերացման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու նպատակով: Ստացվել են միջնորդագրերի պատասխաններ այն մասին, որ ձեռնարկվում են միջոցառումներ միջնորդագրում նշված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Միջնորդագրերից 2-ը հասցեագրվել է Ոստիկանության Ճանապարհային ոստիկանության ծառայության պետին՝ մարզի տարածքում արձանագրված ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ, առավել վտանգավոր հատվածներում ծառայությունն ուժեղացնելու նպատակով: Ստացվել են միջնորդագրերի պատասխաններ այն մասին, որ Ճանապարհային ոստիկանության օրվա գրաֆիկով նախատեսված երթուղիները հնարավորինս մոտեցվել են մարզի տարածքում արձանագրված ճանապարհատրանսպորտային պատահարների առավել վտանգավոր հատվածներին:

Հարկ է արձանագրել նաև, որ մարմնական վնասվածքներով ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը, Ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների համաձայն, ավելացել է, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո վարույթ է նախաձեռնվում բոլոր այն դեպքերում, երբ պատահարի հետևանքով անձը մարմնական վնասվածքով դիմում է հիվանդանոց, մինչդեռ նախկինում բոլոր այն դեպքերով, երբ անձին պատճառվում էր թեթև կամ թեթև մարմնական վնասվածքի հատկանիշներ չպարունակող վնասվածք, նյութերով քրեական գործ (վարույթ) հարուցելը մերժվում էր հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ և դեպքը հաշվառման չէր վերցվում: Սրա մասին է վկայում նաև այն, որ 2022 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում հաշվառման է վերցվել ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 1-ին մասով՝ 646 դեպք, իսկ 2-րդ կիսամյակի ընթացքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով՝ 1144 դեպք:

Հաշվետու ժամանակահատվածում որոշակի նվազում է արձանագրվել անտառային ֆոնդի կամ դրանից դուրս գտնվող տարածքներում ապօրինի ծառահատման դեպքերով:

Այսպես, եթե 2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի տարբեր մասերով արձանագրվել է 425 դեպք, ապա 2022 թվականին՝ 404 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 21-ով կամ մոտ 5%-ով:

Այս ցուցանիշը բավականին դրական է, եթե, իհարկե, դրանում արտացոլված է օբյեկտիվ իրականությունը, քանի որ 2019 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններից հետո նշված դեպքերի քանակը շարունակաբար աճում էր:

Ինչպես Գլխավոր դատախազությունում, այնպես էլ մարզերի դատախազություններում պարբերաբար ուսումնասիրվել են ապօրինի ծառահատումների դեպքերի կապակցությամբ հարուցված քրեական գործերի (վարույթների) նախաքննության ընթացքում ծագած հիմնախնդիրները, որոնք առավելապես վերաբերել են այս բնույթի հանցագործությունների նախականխման, կանխման, խափանման և բացահայտման աշխատանքներին:

Դատախազության մի շարք տարածքային ստորաբաժանումների կողմից պատկան մարմիններին, ի թիվս այլնի, հանձնարարվել է պահանջել և զննել փայտանյութով բարձված յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի՝ փայտանյութի ձեռքբերման կամ իրացման համար նախատեսված համապատասխան փաստաթղթերի առկայությունն ու իսկությունը, իսկ փաստաթղթերի զննության արդյունքում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում՝ կապված փաստաթղթերում լրացված տվյալների և փայտանյութի փաստացի քանակի, փաստաթղթերից որևէ մեկի բացակայության, փայտանյութի դուրսգրման օրվանից որոշակի ժամանակահատված անց այն տեղափոխելու հետ, տրանսպորտային միջոցներն անհապաղ տեղափոխել տուգանային հրապարակ, կազմել զեկուցագիր և այն անմիջապես ուղարկել մարզի դատախազություն:

Ապօրինի ծառահատումների դեմ տարվող պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով տարածքային ստորաբաժանումների կողմից կոնկրետ առաջարկություններով գրություններ են հասցեագրվել Շրջակա միջավայրի նախարարություն, Ոստիկանություն, ինչպես նաև միջնորդագրեր են հղվել «Հայանտառ» ՊՈԱԿ և Ոստիկանություն:

Ապօրինի ծառահատումների դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու, փայտանյութի տեղափոխումը հայտնաբերելու և կանխելու նպատակով՝ համապատասխան առաջարկություններով գրություններ են ուղարկվել նաև Ոստիկանություն, որոնցով, ի թիվս այլնի, նշվել են ճանապարհահատվածների այն տեղամասերը, որոնցում առկա է Ոստիկանության անշարժ հենակետերի տեղակայման անհրաժեշտություն:

2022 թվականի ընթացքում նվազում է արձանագրվել համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով. 2021 թվականին արձանագրվել է 96 դեպք, 2022 թվականին՝ 59 դեպք, այսինքն՝ դեպքերը նվազել են 37-ով կամ 38.5%-ով: Դեպքերի նվազմանը զուգահեռ, 2022 թվականի ընթացքում նվազել է նաև դրանց բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 2.8%՝ 2021 թվականի 4.1%-ի դիմաց:

Ինչպես սույն, այնպես էլ նախորդ տարիների բացահայտման ցուցանիշը մտահոգիչ է, սակայն ունի իր օբյեկտիվ պատճառները: Մասնավորապես՝ քննության համար կարևորություն ունեցող մի շարք հարցերի պարզաբանման նպատակով նախաքննության ընթացքում այլ պետություններ ուղարկվում են իրավական օգնության վերաբերյալ հարցումներ, որոնց պատասխանների ստացումը որոշակի ժամանակ է պահանջում:

Ընթացիկ տարում զգալիորեն աճել են ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության դեպքերը:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ այս հանցագործությունների թիվը գրեթե ուղիղ համեմատական է դրանց բացահայտման թվին և վկայում է զենքն ու ռազմամթերքն ապօրինի շրջանառությունից հանելու մասին: 2021 թվականին արձանագրվել է ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության 714 դեպք, 2022 թվականի ընթացքում՝ 887 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 173-ով կամ 24.2%-ով: Բացահայտումը կազմել է 64.1%՝ նախորդ տարվա 86.0%-ի դիմաց:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերոնշյալ հանցագործությունները սկսել են աճել 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո, որի ընթացքում, ինչպես նաև դրանից հետո, մի շարք անձանց կողմից ապօրինի կերպով ՀՀ է տեղափոխվել զենք-զինամթերք: Այդ մասին է վկայում նաև նախաձեռնված վարույթների ուսումնասիրությունը, որի արդյունքում պարզվել է, որ անձինք կամովին զենք-զինամթերք հանձնելուց հետո հայտնել են, որ դրանք իրենք կամ իրենց հարազատները Հայաստան են տեղափոխել 44-օրյա պատերազմի ընթացքում կամ դրանից անմիջապես հետո:

Ապօրինի շրջանառության մեջ գտնվող զենք-զինամթերքի հայտնաբերումն ու առգրավումը պետք է մշտապես գտնվի իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում, քանզի նման հանցագործության դեպքերի հայտնաբերումն ու ապօրինի շրջանառվող զենք-զինամթերքի առգրավումն անմիջական կապի մեջ է գտնվում դրանց գործադրմամբ կատարվող հանցագործությունների թվի նվազման հետ: Զենքի գործադրմամբ կատարվող հանցագործություններն ունեն հանրային բարձր վտանգավորություն, ուստի և դրանց դեմ պայքարի մեթոդներից մեկն այս առարկաներն ապօրինի շրջանառությունից հանելն է: Ներքին գործերի նախարարության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների համաձայն՝ 2022 թվականի ընթացքում արձանագրված խուլիգանության 672 դեպքից 179-ը կամ 26,6%-ը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ:

2022 թվականի ընթացքում արձանագրվել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցագործությունների 25 դեպք՝ նախորդ տարվա 14-ի դիմաց, այսինքն՝ դեպքերն աճել են 11-ով կամ 78.6 %-ով:

Քրեական ենթամշակույթի դեմ պայքարը միտված է նպաստելու միջանձնային հարաբերությունների, մարդկանց արժեհամակարգի բարելավմանը, անօրինական առավելությունների բացառմանը, ինչպես նաև պետության կողմից սահմանված վարքագծի համապարտադիր կանոնների պահպանմանն ու օրինապահ վարքագծի խթանմանը:

Հաշվի առնելով այս արարքների բարձր հանրային վտանգավորությունը՝ դատախազների կողմից մշտապես ձեռնարկվում են միջոցներ այս հանցագործության դեպքերի հայտնաբերման ու բացահայտման ուղղությամբ, առավել բարդություն ունեցող վարույթներով դատավարական ղեկավարումն իրականացվում է Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանման դատախազների անմիջական հսկողությամբ, իսկ տարածքային ստորաբաժանումներում քննվող քրեական վարույթները մշտապես գտնվում են Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ուշադրության կենտրոնում:

Ներկա պահին դատարանում քննվող, քրեական ենթամշակույթին առնչվող հոդվածներով քրեական հետապնդման է ենթարկվում 6 «օրենքով գող», ևս 3 «օրենքով գողի» նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել նախաքննության փուլում գտնվող վարույթներով:

Քրեական ենթամշակույթին առնչվող գործերով գնահատելի են Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնց արդյունքում հնարավոր է եղել բացահայտել հանցագործությունները:

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դեպքերի զգալի աճ է արձանագրվել ընդերքի պահպանման կամ օգտագործման կանոնները (պահանջները) խախտելու դեպքերով:

2021 թվականին արձանագրվել է 17 դեպք, 2022 թվականին արձանագրվել է 32 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 15-ով կամ 88,2%-ով: Քննվող վարույթների ուսումնասիրությունից հետևում է, որ իրականում աճել են ոչ թե այս հանցատեսակով արձանագրված դեպքերը, այլ՝ դրանց հայտնաբերումը, քանի որ բազմաթիվ վարույթներով քննարկվող հանցագործության դեպքերը կատարվել են ոչ թե 2022 թվականի ընթացքում, այլ նաև՝ նախորդող ժամանակահատվածում, մինչդեռ ենթադրյալ հանցագործության դեպքերը բացահայտվել են միայն հաշվետու ժամանակահատվածում:

Այս համատեքստում կարևոր է արձանագրել, որ բնապահպանական իրավախախտումների հայտնաբերման համար պատասխանատու անձանց վարքագծում արձանագրվել են թերացումներ, որոնք խնդիրներ են առաջացնում ընդերքի պահպանման կամ օգտագործման կանոնները խախտելու կապակցությամբ քննվող քրեական վարույթներով:

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում դեպքերի զգալի աճ է արձանագրվել նաև հասարակական անվտանգության, կարգի, բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործություններով: 2021 թվականին արձանագրվել է 2132 դեպք, 2022 թվականին արձանագրվել է 6214 դեպք, այսինքն՝ դեպքերն աճել են 4082-ով կամ 191.5%-ով: Բացահայտումը կազմել է 53.7%՝ նախորդ տարվա 77.0%-ի դիմաց:

Հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործությունների աճը, ինչպես նախորդող տարի, այնպես էլ՝ հաշվետու տարում, հիմնականում պայմանավորված է **տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու կամ սթափության վիճակի զննություն անցնելուց հրաժարվելու կամ խուսափելու դեպքերով**: 2022 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 344-րդ հոդվածով (համապատասխանում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածին) արձանագրվել է 5396 դեպք:

Հաշվետու ժամանակահատվածում թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների արձանագրված դեպքերի թիվը կազմել է 2266՝ նախորդ տարվա 1544-ի դիմաց:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության արձանագրված դեպքերի թիվն աճել է 743-ով կամ 76.3%-ով՝ կազմելով 1717՝ նախորդ տարվա 974-ի դիմաց: Ընդ որում, իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը աճել են 502-ով կամ 94.9%-ով՝ կազմելով 1031՝ նախորդ տարվա 529-ի դիմաց:

2022 թվականի ընթացքում թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ ըստ անձի ինքնության պարզաբանման տվյալների, կազմել է 37.9 %՝ նախորդ տարվա 59,1%-ի դիմաց, իսկ նախաքննության արդյունքների մասին տվյալների համաձայն՝ 26.2%՝ նախորդ տարվա 37,8%-ի դիմաց: Նույն ժամանակահատվածում իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ ըստ անձի ինքնության պարզաբանման տվյալների, կազմել է 17,6%՝ նախորդ տարվա 32,5%-ի դիմաց, իսկ նախաքննության արդյունքների մասին տվյալներով կազմել է 9,1%-ով՝ նախորդ տարվա 15,3%-ի դիմաց:

Թեև բարձր լատենտայնությամբ օժտված նշված հանցագործությունների արձանագրված դեպքերի աճը դրական ցուցանիշ է, սակայն, հարկ է ընդգծել, որ այն վկայում է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) և ածանցյալների աճող տարածվածության մասին և արտացոլում է հասարակական կյանքում առկա խիստ բացասական իրողությունները՝ զարգացման նույնպիսի միտումներով:

Հիշատակված ցուցանիշները կարող են մասամբ պատճառաբանվել քրեադատավարական օրենսդրության փոփոխությամբ կամ իրավակիրառ պրակտիկայում, նույնիսկ բուսական ծագման մանր չափի թմրամիջոցի հայտնաբերման դեպքում, դրանք իրացնելու փաստով քրեական վարույթներ նախաձեռնելու մոտեցմամբ, սակայն **նշված վիճակագրական տվյալներն առավելապես վկայությունն են թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության տարածվածության, նշված հակասոցիալական և հակահիրավական երևույթներում մեծ թվով անձանց ներգրավվածության:** Ավելին, նույնիսկ արձանագրված դեպքերի նման աճի պայմաններում, թմրամիջոցների ապօրինի շրջանառության գրանցված դեպքերի քանակը չի արտացոլում իրական կյանքում առկա պատկերը:

Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության աճող տարածվածության մասին են վկայում Առողջապահության նախարարության «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ից ստացված տվյալները, որոնց համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ «թմրամոլ» ախտորոշմամբ հաշվառման մեջ է գտնվել 7570 անձ, 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ նշված անձանց թիվը կազմել է 7392, 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 7209, 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 6951, 2018 թվականի 1-ի դրությամբ՝ 6572:

Հաշվի առնելով բուժում ստացած անձանց հաշվառումից հանելու հանգամանքը՝ կարելի է արձանագրել, որ նշված տվյալները վկայում են վերջին 5 տարվա ընթացքում թմրամոլությամբ տառապող անձանց թվի կայուն աճի մասին:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների 2022 թվականի շարժընթացի վերաբերյալ տվյալների սխեմատիկ պատկերը՝ ըստ տարածքների հետևյալն է.

Տարածք	2022թ. ապօրինի շրջանառություն դեպքերի թիվը	Աճ/նվազում	2022թ. իրացման նպատակով շրջանառություն	Աճ/նվազում
ՀՀ	1717	+743 /76,3%/	1031	+502 /94,9%/
Երևան	985	+498 /102,3%/	708	+391 /123,3%/
Էրեբունի և Նուբարաշեն	155	+108 /229,8%/	120	+84 /233,3%/
Քանաքեռ-Զեյթուն	80	+49 /158,1%/	70	+49 /233,3%/
Արաբկիր	141	+70 /98,6%/	95	+53 /126,2%/
Մալաթիա-Սեբաստիա	153	+92 /150,8%/	113	+78 /229,9%/
Կենտրոն և Նորք-Մարաշ	159	+68 /74,7%/	134	+67 /100%/
Ավան և Նոր Նորք	100	+41 /69,5%/	67	+26 /63,4%/
Աջափնյակ և Դավիթաշեն	84	+41 /95,3%/	48	+23 /92%/
Շենգավիթ	106	+29 /37,7%/	58	+12 /26,1%/

Տարածք	2022թ. ապօրինի շրջանառություն դեպքերի թիվը	Աճ/նվազում	2022թ. իրացման նպատակով շրջանառություն	Աճ/նվազում
Մարզեր	732	+245 /50,3/	323	+111
Շիրակ	124	+71 /134%/	75	+53 /240,9%/
Արմավիր	208	+94 /82,5%/	90	+31 /52,5%/
Տավուշ	20	+7 /53,8%/	7	+2 /40%/
Արագածոտն	69	+41 /146,4%/	20	+3 /17,6%/
Լոռի	87	+23 /35,9%/	41	+10 /32,3%/
Վայոց ձոր	14	+3 /27,3%/	4	+1 /33,3%/
Կոտայք	60	+7 /13,2%/	31	-1 /-3,1%/
Արարատ	83	+6 /7,8%/	28	+15 /115,4%/
Գեղարքունիք	43	+1 /2,4%/	17	+8 /88,9%/
Սյունիք	24	-8 /-25%/	10	-11 /-52,4%/

*Հանրապետական տվյալների շարքում առանձին չեն ներկայացվել ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ տվյալները, իսկ մայրաքաղաքի տվյալներում Մետրոպոլիտոնի և «Զվարթնոց» օդանավակայանի ստորաբաժանումների տվյալները:

Նշված վիճակագրական տվյալներից ակնհայտ է, որ ՀՀ գրեթե ողջ տարածքում արձանագրվել է ինչպես թմրամիջոցների ապօրինի շրջանառության, այնպես էլ իրացման նպատակով շրջանառության դեպքերի աճ, որն առանձին տարածքներում գերազանցում է 100 կամ նույնիսկ 200 տոկոսը:

Բացառություն են կազմում միայն Կոտայքի և Սյունիքի մարզերը: Կոտայքի մարզում թեև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերն ավելացել են 13,2%-ով, սակայն իրացման նպատակով շրջանառության դեպքերը նվազել են 3,1%-ով, իսկ Սյունիքի մարզում արձանագրվել է թե՛ ապօրինի շրջանառության, թե՛ իրացման նպատակով շրջանառության դեպքերի նվազում՝ համապատասխանաբար՝ 25%-ով և 52,4%-ով:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի թվի աճի համատեքստում խիստ մտահոգիչ է նշված հանցատեսակների՝ առավելապես իրացման նպատակով ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշների նվազումը:

Իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման տոկոսային ցուցանիշների՝ 2021 և 2022 թվականների համեմատական սխեմատիկ պատկերը՝ ըստ տարածքների հետևյալն է.

Տարածք	Իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման ցուցանիշ՝ ըստ անձի ինքնության պարզաբանման տվյալների	
	2022	2021
ՀՀ	17,6%	32,5%
Երևան	13,3%	30,3%
Էրեբունի և Նուբարաշեն	22,5%	22,2%
Քանաքեռ-Զեյթուն	11,4%	33,3%
Արաբկիր	7,4%	26,2%
Մալաթիա-Սեբաստիա	10,6%	34,3%
Կենտրոն և Նորք-Մարաշ	13,4%	31,3%
Ավան և Նոր Նորք	10,4%	23,9%
Աջափնյակ և Դավիթաշեն	12,5%	12%
Շենգավիթ	12,1%	39,1%
Շիրակ	10,7%	22,7%
Արմավիր	18,9%	25,4%
Տավուշ	100%	60%
Արագածոտն	25%	52,9%
Լոռի	14,6%	29%
Վայոց ձոր	75%	100%
Կոտայք	45,2%	18,8%
Արարատ	32,1%	46,2%
Գեղարքունիք	88,2%	100%
Սյունիք	30%	52,4%

Նշված վիճակագրական տվյալները վկայում են, որ **իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի աճին զուգահեռ, այդ հանցատեսակի բացահայտման ցուցանիշի նվազումը դրսևորվել է ՀՀ գրեթե ողջ տարածքում:** Այս առումով բացառություն են կազմում Կոտայքի և Տավուշի մարզերը, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավիթաշեն, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանները:

Ստորև ներկայացվում են 2021 և 2022 թվականների ընթացքում ապօրինի շրջանառությունից հանված թմրամիջոցների և հոգեմետ նյութերի՝ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված վիճակագրական համեմատական տվյալները.

Թմրամիջոցների տեսակներ	2021 թվականին	2022 թվականին	+/-
Մեթամֆետամին	11 կգ 847.632 գր	13 կգ 9.931 գր	+ 1 կգ 162.299 գր
Ամֆետամին	5.53 գր	6.103 գր	+ 0.573 գր
Ափիոն	5 կգ 262 գր	12 կգ 707.444 գր	+ 7 կգ 445.444 գր
Հերոին	447 կգ 74.299 գր	2 կգ 59.578 գր	- 445 կգ 14.721 գր
Կոկաին	973.28 գր	102.644 գր	- 870.636 գր
α-PVP	1 կգ 165.5725 գր	4 կգ 140.015 գր	+ 2 կգ 974.4425 գր
ՄԴՄԱ	21.67 գր	1 կգ 239.249 գր	+ 1 կգ 217.579 գր
ԼՍԴ	0.473 գր	3.410581 գր	+ 2.937581 գր
Մեֆեդրոն	354.175 գր	909.774 գր	+ 555.599 գր
Հաշիշ	838.271 գր	633.3803 գր	- 204.8907 գր
Հաշիշի յուղ	346.9561 գր	342.62005 գր	- 4.33605 գր
Ացետիլացված ափիոն	12.236 գր	451.248 գր	+ 439.012 գր
Ծխախոտային կրիչ /սպայս/	1.7 գր	748.059 գր	+ 746.359 գր
Մարիխուանա	18 կգ 354.046 գր	31 կգ 206.46398 գր	+12 կգ 852.41798 գր
Կանեփ	107 կգ 341.2953 գր	51 կգ 826.3789 գր	- 55 կգ 514.9164 գր
Կանեփի բույս	12922 հատ	6604 հատ	- 6318 հատ
Կակաչի ծղոտ	102.62 գր	8.36 գր	- 94.26 գր
Տետրահիդրոկանաբինոլ	11.48545 գր	1.3765 գր	- 10.10895 գր
ՏՀԿ պարուն. բուս. խառն.	621.3268 գր	296.75528 գր	- 324.57152 գր
Բուպրենորֆին	0.636788 գր	1.207138 գր	+ 0.57035 գր
Կոդեին	51.55925 գր	54.5451 գր	+ 2.98585 գր
Մորֆին	0.0195 գր	2.2412 գր	+ 2.2217 գր
Մեթադոն	32.500263 գր	13.030527 գր	- 19.469736 գր
Պսիլոցին	20.09 գր	25.672 գր	+ 5.582 գր
Էթիլմորֆին	-	0.15 գր	+ 0.15 գր
Դիհիդրոկոդոն	1 գր	-	- 1 գր
Օքսիկոդոն	0.275 գր	0.115 գր	- 0.16 գր
Հիդրոկոդոն	0.85 գր	0.96 գր	+ 0.11 գր
Հիդրոմորֆոն	-	11.187 գր	+ 11.187 գր
2C-B	0.369 գր	17.9 գր	+ 17.531 գր
Ֆենտանիլ	0.26475 գր	-	- 0.26475 գր
Տիլիդին	2.5 գր	12.5 գր	+ 10 գր
դիմեթիլտրիպտամին	0.89 գր	-	- 0.89 գր
Մզվածքային ափիոն	12 կգ 15 գր	-	- 12 կգ 15 գր
Ընդհանուր	**606 կգ 460.258 գր**	**119 կգ 832.292556գր**	**-486 կգ 627.965444 գր**

Անդրադառնալով առգրավված թմրամիջոցների քանակի նվազմանը՝ հարկ է նշել, որ 2021 թվականի ընթացքում արձանագրված ցուցանիշները մեծապես պայմանավորված են ԻԻՀ-ից ներմուծված ավելի քան 440 կգ «հերոին» տեսակի թմրամիջոցի 2 խմբաքանակի հայտնաբերմամբ, որոնց վերաբերյալ վարույթները քննվել են Պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում:

Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նախորդ տարվա համեմատությամբ աճել է ապօրինի շրջանառությունից հանված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող սինթետիկ այնպիսի թմրամիջոցների քանակը, ինչպիսիք են՝ «մեթամֆետամին», «α-PVP», «ՄԴՄԱ», «ԼՍԴ», «մեֆեդրոն» տեսակի թմրամիջոցները, թմրամիջոցներ կրող զանգվածներն ու այլ կրիչները («սպայս»):

Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) և ածանցյալների ապօրինի շրջանառության ու մաքսանենգության դեպքերի բացահայտմանը խոչընդոտող հանգամանքների շարքում առանձնակի նշանակություն ունի նշված հանցագործությունների կատարման ընթացքում համակարգչային տեխնիկայի, համացանցի, վճարային գործիքների լայն կիրառումը:

Վերջին տարիներին հատկապես մեծ ծավալներ են ստացել սոցիալական կայքերի, համացանցային հեռահաղորդակցության համակարգերի, առավելապես, «Telegram»-ի օգտագործմամբ թմրամիջոցների ապօրինի իրացման դեպքերը, որոնց պարագայում, որպես կանոն, իրացման ենթակա թմրամիջոցը նախապես տեղադրվում է որևէ վայրում, դրա դիմաց վճարումը կատարվում է անկանխիկ (էլեկտրոնային դրամապանակներ, կրիպտոարժույթ, բանկային հաշվեհամարներ և այլն), որից հետո գնորդին փոխանցվում են ապօրինի շրջանառության առարկայի տեղադրման վայրերի վերաբերյալ տվյալները:

Թեև առանձին քրեական վարույթներով իրականացված դատավարական և օպերատիվ-հետախուզական համագործակցված միջոցառումների արդյունքում 2021-2022 թվականների ընթացքում հնարավոր է եղել բացահայտել տևական բնույթ կրող առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացման դեպքեր, սակայն նախաքննության մարմինների վարույթում առկա քրեական գործերով (վարույթ) ձեռք բերված տվյալները վկայում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար բացված և շահագործվող բազմաթիվ համացանցային ռեսուրսների առկայության մասին, որոնցում իրականացվում է թմրամիջոցների բացահայտ գովազդ, տեղադրված են տեղեկություններ առաջարկվող թմրամիջոցների տեսակների, չափաբաժինների և դրանց արժեքի վերաբերյալ:

Բացի այդ, քրեական վարույթներով ձեռք բերված տվյալները վկայում են, որ սոցիալական կայքերում, հեռահաղորդակցման հավելվածներում գործում են թմրամիջոցների վաճառքով զբաղվող էջեր և դրանցով առաջարկվող թմրամիջոցները գովազդող հատուկ օգտահաշիվներ, ավելին՝ զանգվածային լրատվության միջոցներում առկա են հրապարակումներ հանրային վայրերում թմրամիջոցների վաճառքով զբաղվող էջերի հղումներ պարունակող գրառումներով գովազդային նյութեր փակցված լինելու վերաբերյալ:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսված նաև իրացնելու նպատակով թմրամիջոց, հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, դրանց պատրաստուկ կամ դրանց համարժեք նյութ (անալոգ) կամ դրանց ածանցյալ ապօրինի գովազդելու

համար, որպիսի պայմաններում իրավապահ մարմինների կողմից առանձնակի կարևորություն պետք է տրվի նշված հանցավոր դրսևորումների դեմ պայքարին:

Սոցիալական կայքերի, հեռահաղորդակցման հավելվածների, վճարային գործիքների և կրիպտոարժույթի օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխման ու խափանման առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ էլեկտրոնային հեռահաղորդակցության ոլորտում հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխման, խափանման, բացահայտման, վճարային գործիքների և կրիպտոարժույթի շրջանառության վերահսկման նպատակով համարժեք կառուցակարգերի մշակումն ու ներդրումը, ցանցային և այլ էլեկտրոնային կրիչներից, այդ թվում՝ բջջային հեռախոսներից, առավել ամբողջական տեղեկություն ստանալու՝ իրավապահ մարմինների կարողությունների շարունակական կատարելագործումը:

Վերոնշյալ խնդիրների քննարկման նպատակով 2021 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2 գրություն է հասցեագրվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին, 2021-2022 թվականների ընթացքում մի շարք գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ անվտանգության խորհրդի գրասենյակում:

Սոցիալական կայքերի, համացանցային հեռահաղորդակցության համակարգերի օգտագործմամբ թմրամիջոցների ապօրինի իրացման, դրա դիմաց վճարումը զանազան վճարային գործիքների օգտագործմամբ ընդունելը, մի կողմից, միջոց է հանցավոր գործունեությունը քողարկելու համար, սակայն, մյուս կողմից, հանցագործությունը նշված եղանակով կատարելու դեպքում, որպես կանոն, օգտագործված էլեկտրոնային կրիչներում, վճարահաշվարկային գործունեություն ծավալող կազմակերպություններում, կրիպտոարժույթի հարթակներում պահպանվում է հանցավոր գործունեության հանգամանքների, ներգրավված անձանց, հանցավոր ճանապարհով ստացված ֆինանսական միջոցների վերաբերյալ մեծ ծավալի տեղեկություն, ինչը քրեադատավարական գործիքակազմի պատշաճ կիրառման, այդ թվում՝ զուգահեռ ֆինանսական պատշաճ և հետևողական քննության դեպքում, հնարավորություն է ընձեռում համակողմանիորեն բացահայտելու հանցավոր գործունեության հանգամանքները: Ավելին, հիշյալ փաստական հանգամանքների պատշաճ բացահայտումը և վերլուծությունը հնարավորություն են տալիս, նախորդող հանցագործությունից զատ, տվյալներ ձեռք բերել նաև դրա արդյունքում ձեռք բերված գույքի և դրա օրինականացման վերաբերյալ՝ համապատասխան անձանց արարքները որակելով նաև նշված արարքի համար պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմով:

Նշված դեպքերի բացահայտման առումով մեծ կարևորություն ունի կիբեռհանցագործությունների դեմ պայքարի համար իրականացվող օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական միջոցառումների կիրառումը, որոնք պետք է միտված լինեն սոցիալական կայքի, հեռահաղորդակցման համացանցային հավելվածի օգտատիրոջ անձնական տվյալների, գրանցման ընթացքում մուտքագրված անհատական տվյալների, շահագործված հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների, համացանցի հասանելիության IP հասցեների, թմրամիջոցի դիմաց վճարման եղանակների, էլեկտրոնային դրամապանակների, կրիպտոարժույթի հաշիվների օգտագործման դեպքում՝ դրանց բացման, շահագործման հանգամանքների, կատարված ֆինանսական գործարքների վերաբերյալ ամբողջական տեղեկություն ձեռք բերելուն:

Քննության նշված մեթոդիկայի գործնական կիրառմամբ՝ ընդամենը մեկ քրեական վարույթով իրականացված դատավարական և օպերատիվ-հետախուզական համագործակցված միջոցառումների արդյունքում բացահայտվել են տևական բնույթ կրող՝ առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրա արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով գույքի օրինականացման մի շարք դեպքեր, քրեական հետապնդում է հարուցվել և իրականացվում շուրջ 2 տասնյակ անձանց նկատմամբ: Հայտնաբերվել և վերցվել են առանձնապես խոշոր չափերի «Մեթամֆետամին», «ԼՍԴ», «ՄԴՄԱ», «α-PVP», «Մեֆեդրոն», «Մարիխուանա», «Հաշիշի յուղ», «Հաշիշ» և այլ տեսակի թմրամիջոցներ:

Նշված քրեական վարույթի նախաքննության ընթացքում, ի թիվս այլ դատավարական գործողությունների, կատարվել է շուրջ 50 խուզարկություն, համացանցային հասանելիության և բաժանորդային տվյալներ ստանալու 100-ից ավելի միջնորդություններ են ներկայացվել դատարան, 10-ից ավելի իրավական օգնության միջնորդություններ են ուղարկվել օտարերկրյա իրավասու մարմիններին, որոնցից մեկի հիման վրա քրեական գործ է հարուցվել նաև ՌԴ-ում:

Քրեական վարույթով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի կողմից մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր, որով վերջինս տեղեկություններ է հայտնել համացանցային հեռահաղորդակցության հավելվածների միջոցով, իրացման նպատակով, թմրամիջոցների ապօրինի շրջանառության մի շարք դեպքերի և նշված գործունեությանը ներգրավված անձանց վերաբերյալ:

Կատարված նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ որպես մեղադրյալ ներգրավված անձանց կողմից փաստացի տնօրինված, այդ թվում՝ օտարերկրյա վճարահաշվարկային կազմակերպություններում գրանցված վճարային գործիքներով շրջանառվել է ավելի քան 325 մլն դրամ, իսկ կատարված խուզարկություններով հայտնաբերվել է 70 հազար ԱՄՆ դոլարը գերազանցող կանխիկ գումար:

Մեկ այլ քրեական վարույթի նախաքննությամբ պարզվել է, որ Վ.Գ.-ն, առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց ապօրինի իրացնելու դիտավորությամբ իր հետ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող Կ.Գ.-ի հետ, 2020 թվականի ապրիլի 24-ին «Տելեգրամ» հեռահաղորդակցման հավելվածում ստեղծել է թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվող՝ «Ivery Organics» անվամբ էջը, այնուհետև նույն թվականի մայիսի 2-ից սկսել է դրա միջոցով իրականացնել թմրամիջոցների ապօրինի վաճառք՝ էջում տեղադրելով թմրամիջոցների տեսակների, որակական հատկանիշների և դրանց ձեռքբերման պայմանների վերաբերյալ տեղեկություններ պարունակող գովազդային լուսանկարներ: Այնուհետև, թմրամիջոցները առանձնացրել է ըստ տեսակի և քաշի, ապա դրանք փաթեթավորել և տեղադրել է Երևան քաղաքի և ՀՀ տարբեր մարզերի տարածքներում գտնվող թաքստոցներում, լուսանկարահանել թմրամիջոցների գտնվելու վայրը, նշել աշխարհագրական կոորդինատները և դրանք ուղարկել իրենց կողմից բացված և կառավարվող «Ivery Organics» անվամբ առցանց խանութի էջին՝ գումարի դիմաց հիշյալ տվյալները փոխանցելով թմրամիջոց ձեռք բերելու ցանկություն հայտնած անձանց: Տելեգրամյան ալիքի աշխատանքի և հաճախորդների քանակի ավելացմանը զուգահեռ, հանցավոր գործունեության է ներգրավվել ևս 7 հանցակցի, որոնց միջև կատարել է հստակ դերաբաշխում, նրանց վճարվել է աշխատավարձ:

Կատարված նախաքննության արդյունքում պարզվել է, որ Կ.Գ.-ն և Վ.Գ.-ն, նպատակ ունենալով թաքցնել հանցավոր ճանապարհով՝ թմրամիջոցի ապօրինի շրջանառության արդյունքում ձեռք բերված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, իրական բնույթը, իրենց պատկանող և իրենց կողմից կառավարվող՝ «Telegram» հեռահաղորդակցման հավելվածի՝ «Ivery Organics» խանութ-հարթակի միջոցով վաճառվող թմրամիջոցը գնելու ցանկություն հայտնած անձանց առաջարկել են վճարումը կատարել «Dashcoin» տեսակի կրիպտոարժույթով, վերջիններիս տրամադրել են հիմնականում մեկանգամյա օգտագործման «Dashcoin» հաշվեհամարներ, ուղղորդել նշված հաշվեհամարին գումար փոխանցելու նպատակով նամակագրության միջոցով կապ հաստատել «Telegram» հեռահաղորդակցման հավելվածում կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող «CryptocellerArmenia», «Armbitcoinbot», ինչպես նաև այլ նմանատիպ հարթակների հետ, վերջիններիս ուղարկել թմրամիջոցի արժեքին համապատասխան գումարը: Այնուհետև ստացված կրիպտոարժույթն իրենց կողմից բացված մեկանգամյա օգտագործման դրամապանակներից կրկին փոխանցել են իրենց պատկանող և իրենց կողմից շահագործվող՝ «Dashcoin» տեսակի կրիպտոարժույթի այլ դրամապանակներին, ինչի արդյունքում 2021 թվականի ընթացքում Կ.Գ.-ն և Վ.Գ.-ն տարբեր ժամանակահատվածներում իրենց պատկանած և իրենց կողմից շահագործված հիշյալ կրիպտոարժույթի XmxB52JmhST8H3xx5ZwPeRJH4LgzMguXtq_համարի դրամապանակին 546 փոխանցումով ստացել են 18.083.753,88 դրամին համարժեք 209.58046883 «Dashcoin» տեսակի կրիպտոարժույթ, մեկ այլ՝ XdbdYy8j85v6ypnKjEHDWFie3jcrQKBEYE համարի դրամապանակին՝ 328 փոխանցումով ստացել են 6.584.516.4567451 ՀՀ դրամին համարժեք 90.49015951 «Dashcoin» տեսակի կրիպտոարժույթ, իսկ XpkRpjNLgQ4ZxHVDdb6LiAjZEmpaLeniNZ համարի դրամապանակին 291 փոխանցումով ստացել են 5.867.396,3912256 ՀՀ դրամին համարժեք՝ 80.63487104 «Dashcoin» տեսակի կրիպտոարժույթ: Այնուհետև, Կ. Գ.-ն և Վ.Գ.-ն, կամ վերջիններիս ցուցումով, «Ivery Organics» խանութ-հարթակում որպես օպերատոր աշխատած անձինք, նշված 3 դրամապանակից վճարել են հանցակիցների աշխատավարձերը՝ կատարված աշխատանքին համարժեք կրիպտոարժույթը փոխանցելով վերջիններիս կողմից ստեղծված և նրանց պատկանող դրամապանակներին: Բացի այդ՝ հանցավոր կազմակերպության ղեկավարները «Telegram» հեռահաղորդակցման հավելվածում կրիպտոարժույթի փոխանակմամբ զբաղվող «CryptocellerArmenia», «Armbitcoinbot» և նմանատիպ այլ էջերին են վաճառել վերը նշված հաշիվներին ստացված՝ ընդհանուր 380.70549938 «Dashcoin» կրիպտոարժույթը, ապա ստացել են դրան համարժեք, իրենց կողմից տնօրինվող բանկային քարտերին կամ վճարահաշվարկային համակարգերում բացված էլեկտրոնային դրամապանակներին փոխանցված 30.535.666,72797 դրամ գումարը և տնօրինել այն:

Կատարված նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ ծանրացուցիչ հանգամանքներում իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար բոլոր հանցակիցների նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուց բացի, Վ.Գ.-ի և Կ.Գ.-ի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել նաև առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման համար:

2022 թվականի օգոստոսի 23-ին 9 մեղադրյալի վերաբերյալ քրեական գործը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է դատարան:

Մեկ այլ քրեական քրեական վարույթով նախաքննության ընթացքում պարզվել է, որ բազմաթիվ անձանց, այդ թվում՝ օտարերկրյա պետության տարածքում գործող և առանձնակի ակտիվ դերակատարում ունեցող անձի մասնակցությամբ, թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու նպատակով «Տելեգրամ» սոցիալական ցանցում ստեղծվել և 2019-2022 թվականներին ընթացքում կառավարվել են ավելի քան 20.000 հետևորդ ունեցող և թմրամիջոցների վաճառքով զբաղվող 50-ից ավելի խանութից բաղկացած «Կանաչու շուկա» և «Դավիթ Վան Հոկտեմբերյան» ալիքները, իսկ թմրամիջոցների վաճառքի արդյունքում ստացված գումարները կրիպտոարժույթի փոխարկելու, շրջանառելու, հետագայում կրիպտոարժույթը կանխիկ դրամական միջոցների փոխարկելու և տնօրինելու նպատակով հանցավոր գործունեությանը ներգրավված, կրիպտոարժույթների փոխանակման գործունեություն ծավալող հանցակցի էլեկտրոնային դրամապանակների շրջանառությունը գերազանցել է 1 միլիարդ դրամը:

Քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա, իրացման նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության և հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու համար, 6 անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում:

ՀՀ կառավարության 2003 թվականին նոյեմբերի 27-ի N 1714-Ն և 2004 թվականին մայիսի 13-ի N 725-Ն որոշումներով ստեղծվել ու գործում է Հայաստանի Հանրապետությունում թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի շրջանառության կանոնակարգման ու ապօրինի շրջանառության կանխարգելման հանձնաժողովը՝ ՀՀ ոստիկանության պետի ղեկավարմամբ, որի կազմում ընդգրկված են մի շարք շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչներ:

Հաշվի առնելով հանձնաժողովի արդյունավետ գործունեության կարևորությունը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից 2022 թվականի հունիսի 20-ին գրություն է հասցեագրվել ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալին, որին ի պատասխան տրամադրվել է տեղեկություն՝ Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով համապատասխան նորմատիվ իրավական ակտի նախագծի մշակման աշխատանքներ իրականացնելու մասին, իսկ 2022 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ ոստիկանությունից ստացվել է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ:

2022 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների 354 դեպքով կամ 34.2%-ով աճ (2021 թվականին՝ 1034, 2022 թվականին՝ 1388):

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճին զուգահեռ նվազել է այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 12.5%՝ նախորդ տարվա 23%-ի դիմաց: 2022 թվականի ընթացքում դեպքերի բացահայտման տոկոսային ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 10.5%-ով:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճն արձանագրվել է հիմնականում ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման, հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերի, ակցիզային դրոշմանիշների ապօրինի շրջանառության և տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերի աճի հաշվին: Այսպես, 31-ով կամ 53.4%-ով աճել են ապօրինի կամ կեղծ ձեռնարկատիրության դեպքերը՝ (2021 թվականին՝ 58, 2022 թվականին՝ 89), 11-ով կամ 61.1%-ով՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեպքերը՝ (2021 թվականին՝ 18, 2022 թվականին՝ 29), 265-ով կամ 112.8.2%-ով՝ հարկերի, տուրքերի վճարումից խուսափելու դեպքերը՝ (2021 թվականին՝ 265, 2022 թվականին՝ 564), իսկ տնտեսական գործունեության դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերն աճել են 158-ով կամ 65.6%-ով (2021 թվականին՝ 241, 2022 թվականին՝ 399):

Փողերի լվացման դեպքերի աճը, ի թիվս այլնի, պայմանավորված է նշված հանցակազմի մեկնաբանմամբ և կիրառմամբ՝ պայմանավորված Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով (տես օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/1194/06/21 գործով որոշումը):

2022 թվականի ընթացքում 154 դեպքով կամ 34.1%-ով նվազել են կեղծ փող, արժեթղթեր պատրաստելու, պահելու, իրացնելու դեպքերը: 2021 թվականին արձանագրվել է 451 դեպք, 2022 թվականին՝ 297 դեպք:

2022 թվականի ընթացքում, նախորդ տարվա համեմատությամբ, Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների 563 դեպքով կամ 20.2%-ով աճ (2021 թվականին՝ 2794, 2022 թվականին՝ 3357):

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի նվազմանը զուգահեռ նվազել է նաև այդ դեպքերի բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 51.5%՝ նախորդ տարվա 63.4%-ի դիմաց:

Պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի աճը արձանագրվել է հիմնականում պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու և պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերի աճի հաշվին: Այսպես, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու դեպքերն աճել են 119-ով կամ 34.4%-ով (2021 թվականին՝ 346, 2022 թվականին՝ 465), իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքերը նվազել են 44-ով կամ 84.6%-ով (2021 թվականին՝ 52, 2022 թվականին՝ 96), իսկ պետական իշխանության, ծառայության և կառավարման կարգի դեմ ուղղված այլ հանցագործությունների դեպքերը՝ 474-ով կամ 38.7%-ով (2021 թվականին՝ 1225, 2022 թվականին՝ 1699):



2

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է կոռուպցիոն հանցագործության 1858 դեպք (2021 թվականին՝ 1924): Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերը նվազել են 66-ով կամ 3.4%-ով:

Կոռուպցիոն հանցագործությունների նվազումը հիմնականում պայմանավորված է ընտրակաշառք տալու (2021 թվականին՝ 33, 2022 թվականին՝ 15) և ընտրակաշառք ստանալու (2021 թվականին՝ 34, 2022 թվականին՝ 18) դեպքերի նվազմամբ:

2022 թվականի ընթացքում աճել են կաշառք տալու (2021 թվականին՝ 108, 2022 թվականին՝ 157), փողերի լվացման (2021 թվականին՝49, 2022 թվականին՝ 65), պաշտոնեական լիազորությունները չարաշահելու և անցնելու (2021 թվականին՝ 757, 2022 թվականին՝ 794) դեպքերը:

2021 և 2022 թվականների վիճակագրական տվյալների համադրված վերլուծությունը վկայում է հաշվետու ժամանակաշրջանում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների աննշան նվազման մասին:

2018-2020 թվականներին արձանագրվել է կոռուպցիոն հանցագործությունների աճ. մասնավորապես՝ 2017 թվականին նախապատրաստվել է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ 767 նյութ (հարուցվել է 591 քրեական գործ), 2018 թվականին՝ 1988 նյութ (հարուցվել է 1469 քրեական գործ), 2019 թվականին՝ 2083 նյութ (հարուցվել է 1399 քրեական գործ), 2020 թվականին՝ 1810 նյութ (հարուցվել է 1232 քրեական գործ), 2021 թվականին՝ 1409 նյութ (հարուցվել է 798 քրեական գործ), իսկ 2022 թվականի ընթացքում հարուցվել և նախաձեռնվել է ընդհանուր 896 քրեական վարույթ (գործ):

2018 և 2019 թվականներին գրանցված կոռուպցիոն հանցագործությունների թվի աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ մինչև 2018 թվականը կատարված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներն առավելապես ստացվել են 2018 և 2019 թվականներին:

Հետագայում, թեև ստացվել են մինչ այդ տեղի ունեցած կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ տվյալներ, սակայն, դրանց թիվը համեմատաբար փոքր է եղել: 2022 թվականի ցուցանիշները քանակական առումով 96-ով գերազանցում են 2021 թվականի ցուցանիշներին: Այս հանգամանքը, ի թիվս այլնի, պայմանավորված է 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում ամրագրված կարգավորումներով: Նոր օրենսգրքով սահմանված չէ հանցագործության մասին հաղորդումների առթիվ նյութերի նախապատրաստման ընթացակարգ և առերևույթ հանցագործության մասին տվյալներ պարունակող բոլոր հաղորդումներով 2022 թվականի հուլիսի 1-ից հետո քրեական վարույթի նախաձեռնումը պարտադիր է: Այլ խոսքով, եթե նախկինում մի շարք հաղորդումների կապակցությամբ նախապատրաստվող նյութերի շրջանակներում հերքվում էր հանցագործություն կատարված լինելու հանգամանքը և քրեական գործ չէր հարուցվում, ապա ներկայում հանցագործության մասին յուրաքանչյուր հաղորդման առթիվ նախաձեռնվում է քրեական վարույթ:

Կոռուպցիոն հանցագործությունները լատենտային (քողարկված) են, դրանց բացահայտումը բարդ է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ դրանք, որպես կանոն, ունեն երկկողմանի «փոխշահավետ գործարքի» տեսք:

«Կողմերը» շահագրգռված չեն համագործակցել իրավապահ մարմինների հետ: Հետևաբար, 2020-2022 թվականներին կոռուպցիոն հանցագործությունների թվի նվազումը գնահատվում է բացասական:

2022 թվականի ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 719 նյութ, որոնցից 378-ով հարուցվել են քրեական գործեր, 278-ով՝ քրեական գործ հարուցելը մերժվել է, իսկ 63 նյութ ուղարկվել է ըստ ենթակայության:

2022 թվականի ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում նախապատրաստված և քրեական գործ հարուցելը մերժված 278 նյութից 252-ը մերժվել է արդարացման, իսկ 26-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է ենթադրյալ կոռուպցիոն հանցավոր դեպքերի վերաբերյալ 560 հաղորդման արձանագրման մասին օրենսդրության պահանջների կատարումը: 560 հաղորդումից 518-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, իսկ 42-ով՝ քրեական վարույթ չի նախաձեռնվել:

2022 թվականի ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների դեպքերով հարուցվել (նախաձեռնվել) է 896 գործ (վարույթ)՝ նախորդ տարվա 798-ի դիմաց:

2022 թվականի ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 2718 քրեական գործից (վարույթից) ավարտվել է 567-ը, որոնցից 388-ը կարճվել է, այդ թվում՝ 286-ը՝ արդարացման, իսկ 102-ը՝ ոչ արդարացման հիմքերով: **178 քրեական գործ (վարույթ)՝ 397 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան**, իսկ 1 քրեական գործ ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ:

2022 թվականի ընթացքում **կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով, քրեական գործերով և քրեական վարույթներով պատճառված ընդհանուր գույքային վնասը կազմել է 2 մլրդ 221 մլն 849 հազար 983 դրամ (2021 թվականին՝ 4 մլրդ 548 մլն 233 հազար 348 դրամ):**

Ընդ որում, վերը նշված ընդհանուր վնասից 1 մլրդ 298 մլն 688 հազար 676 դրամը պատճառվել է պետությանը (2021 թվականին՝ 4 մլրդ 417 մլն 939 հազար 348 դրամ), 858 մլն 49 հազար 307 դրամը՝ համայնքներին (2021 թվականին՝ 124 մլն 657 հազար 263 դրամ), իսկ 65 մլն 112 հազար դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց (2021 թվականին՝ 5 մլն 636 հազար 737 դրամ):

Բացի այդ, 2022 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով, քրեական գործերով և քրեական վարույթներով պատճառված ընդհանուր **գույքային վնասից վերականգնվել է 873 մլն 265 հազար 480 դրամը (2021 թվականին՝ 400 մլն 51 հազար 30 դրամ)՝ 473 մլն 214 հազար 450 դրամով ավելի, քան 2021 թվականին արձանագրված՝ նույն ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասից վերականգնված չափը:**

Ընդ որում, վերականգնված 873 մլն 265 հազար 480 դրամից 43 մլն 690 հազար 130 դրամը կազմել է պետությանը պատճառված վնասի վերականգնումը, իսկ 808 մլն 888 հազար 807 դրամը՝ համայնքներին պատճառված վնասը:

2022 թվականի ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 99 քրեական գործ (2021 թվականին՝ 83)՝ 197 անձի վերաբերյալ (2021 թվականին՝ 150):

Նշված քրեական գործերից 67-ով (2021 թվականին՝ 53) 132 անձ դատապարտվել է (2021 թվականին՝ 97 անձ), որոնցից 30 անձ ՝ ազատազրկման (2021 թվականին՝ 30), 63 անձ՝ տուգանքի (2021 թվականին՝ 46), հիմնական այլ պատժի որևէ անձ չի դատապարտվել (2021 թվականին՝ 1), 39 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել (2021 թվականին՝ 20), 8 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ (2021 թվականին՝ 18):

7 գործով (2021 թվականին՝ 6) 18 անձ արդարացվել է (2021 թվականին՝ 11): Կարճվել է 24 գործ (2021 թվականին՝ 24)՝ 46 անձի վերաբերյալ (2021թվականին՝ 42):

2022 թվականին կարճված 24 գործով անցնող 46 անձից 2-ի վերաբերյալ գործը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով (2021 թվականին՝ 13), 35-ի վերաբերյալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով (2021 թվականին՝ 20), 4-ի վերաբերյալ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածով (2021 թվականին՝ 5) և 5-ի վերաբերյալ՝ այլ հիմքերով (2021 թվականին՝ 4):

Դատարան ուղարկված կոռուպցիոն հանցագործություններից, ի թիվս այլնի, զգալի մաս են կազմել ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցներին կաշառք առաջարկելու դեպքերը:

Դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր վնասը կազմել է 228 մլն 294 հազար 243 դրամ (2021 թվականին՝ 551 մլն 44 հազար 294 դրամ), որից վերականգնվել է 217 մլն 751 հազար 457 դրամը (2021 թվականին՝ 43 մլն 712 հազար 747 դրամ): Ընդ որում, վերը նշված ընդհանուր վնասից 210 մլն 703 հազար 347 դրամը եղել է պետությանը պատճառված վնաս, իսկ 17 մլն 590 հազար 896 դրամը՝ համայնքներին:

Պետությանը պատճառված 210 մլն 703 հազար 347 դրամ վնասից վերականգնվել է 200 մլն 160 հազար 557 դրամը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթներով կոռուպցիոն հանցագործություններ կատարելու համար դատի է տրվել 63 պաշտոնատար անձ (2021 թվականին՝ 44), որոնք ըստ բնագավառների և զբաղեցրած պաշտոնների հանդիսացել են՝

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 7 պաշտոնատար անձ, որոնցից՝
   - ՀՀ արտակարգ իրավիճակների 1 գործող նախարար,
   - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 1 խորհրդական,
   - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության տեխնիկայի և սարքավորումների վերանորոգման բազայի 1 պետ,
   - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գրասենյակի 1 ղեկավար,
   - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ Արարատի մարզային վարչության Արարատի հրշեջ-փրկարար ջոկատի 1 հրամանատար,
   - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ ՀԱԷԿ-ի պահպանության հատուկ հրշեջ ջոկատի օղակի 1 հրամանատար,
   - ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչության Չարենցավանի հրշեջ փրկարարական ջոկատի 1 հրամանատարի տեղակալ,

2. նախկին ՀՀ գլխավոր դատախազ, ապա նաև՝ ՀՀ քննչական կոմիտեի 1 նախագահ,

3. Երևան քաղաքի դատախազության Շենգավիթ վարչական շրջանի 1 դատախազի տեղակալ,

4. Տեղական ինքնակառավարման մարմնի 12 պաշտոնատար անձ, այդ թվում՝
   - նախկին 1 մարզպետ,
   - գործող մարզպետի 1 տեղակալ,
   - գործող և նախկին համայնքի 4 ղեկավար,
   - համայնքի ղեկավարի 2 տեղակալ,
   - համայնքի աշխատակազմի 1 քարտուղար,
   - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության տարածքային երրորդ բաժնի 1 պետ,
   - նույն բաժնի 1 գլխավոր մասնագետ,
   - Երևան քաղաքի Կենտրոն թաղապետարանի գովազդի և սպասարկումների բաժնի 1 առաջատար մասնագետ,

5 ՀՀ ՊԵԿ 5 պաշտոնատար անձ, որոնցից՝

- ՀՀ ՊԵԿ հարկային ստուգումների վարչության 1 պետի տեղակալ,
- ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 1 բաժնի պետ,
- նույն բաժնի 1 գլխավոր օպերլիազոր,
- նույն բաժնի 1 ավագ օպերլիազոր,
- ՀՀ ՊԵԿ հարկային ստուգումների 1 գլխավոր հարկային տեսուչ,

6 ՀՀ քննչական կոմիտեի 3 պաշտոնատար անձ, որոնցից՝

- ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության 1 ՀԿԳ քննիչ,
- ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի 1 նախկին քննիչ,
- ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի 1 քննիչ,

7 ՀՀ ոստիկանության 11 աշխատակից, այդ թվում՝

- ճանապարհային ոստիկանության 6 ծառայող,
- պարեկային ծառայության 4 ծառայող,
- 1 զենքի տեսուչ,

8 ՔԿՀ 3 ծառայող,

9 1 դատավորի օգնական,

10 «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Կապանի անտառտնտեսության մասնաճյուղի Կապանի անտառպետության 1 անտառապետ,

11 Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 1 դեկանի տեղակալ,

12 Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հիմնադրված Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի 2 աշխատակից, որոնցից՝

- նշված հիմնադրամի ծրագրերի իրականացման 1 բաժնի պետ,
- նույն հիմնադրամի ծրագրերի իրականացման բաժնի վերահսկման խմբի 1 ղեկավար,

13 ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 3 աշխատակից, որոնցից՝

- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի պետի տեղակալի 1 պաշտոնակատար,
- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Լոռու տարածքային բաժնի 1 ավագ մասնագետ,
- ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի Կոտայքի տարածքային բաժնի 1 գլխավոր մասնագետի պաշտոնակատար,

14 Ուսումնական հաստատության 3 աշխատակից, որոնցից՝

- 1 քոլեջի տնօրեն,
- 1 դպրոցի տնօրեն,
- 1 դպրոցի հաշվապահ,

15 ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հրազդան» սպասարկման գրասենյակի 1 պետ,

16 ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության 2 աշխատակից, որոնցից՝

- նշված ծառայության Աշտարակի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագրերի բաժնի 1 ավագ աշխատող,
- նշված ծառայության Տաշիրի տարածքային բաժնի 1 ավագ սոցիալական աշխատող,

17 Շիրակի մարզպետարանի աշխատակազմի Ախուրյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության 2 մասնագետ,

18 Համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2 աշխատակից, որոնցից՝

- Երևան քաղաքի «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի «Արին-Բերդ» գերեզմանատան 1 վարիչ,
- «Վանաձոր սպասարկում» ՀՈԱԿ-ի 1 տնօրեն,

19 «Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կազմակերպության 1 նախկին հաշվապահ,

20 «Ալաշկերտի բժշկական ամբուլատորիա համայնքային» ՊՈԱԿ-ի 1 տնօրեն:

Ստորև ներկայացնենք հանրային հետաքրքրություն ունեցող կոռուպցիոն մի քանի հանցագործությունների վերաբերյալ տվյալներ: Գործերը վերաբերում են ՀՀ բարձրաստիճան նախկին և գործող պաշտոնյաների:

1 ՀՀ ԱԱԾ-ում նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ստացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնատար անձանց կողմից խոշոր ու առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, դրանք ստանալուն օժանդակելու, խոշոր ու առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու, ինչպես նաև քաղաքացու կողմից իրական ազդեցությունն օգտագործելու եղանակով խոշոր և առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձատրություն ստանալու, դրանք ստանալուն օժանդակելու, խոշոր և առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձատրություն տալու, հիշյալ նախարարության պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական դիրքը չարաշահելու, նախնական համաձայնությամբ խմբի կազմում յուրացման եղանակով խոշոր չափերով հափշտակություն կատարելու վերաբերյալ:

Դեպքերի առթիվ 2022 թվականի մարտի 11-ին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 38-311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 38-311-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 312-րդ հոդվածի 2-րդ մասով, 308-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 38-179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, 311.2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-311.2-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 311.2-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312.2-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 312.2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Ըստ գործում առկա տվյալների՝ հայտնաբերվել են ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնատար անձանց կողմից 2021 թվականից մինչև 2022 թվականի փետրվարի 28-ն ընկած ժամանակահատվածում ապօրինի հարստացման, խոշոր ու առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, դրանք ստանալուն օժանդակելու, խոշոր ու առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու, ինչպես նաև քաղաքացու կողմից իրական ազդեցությունն օգտագործելու եղանակով խոշոր և առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձատրություն ստանալու, դրանք ստանալուն օժանդակելու, խոշոր և առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձատրություն տալու, հիշյալ նախարարության պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական դիրքը չարաշահելու, նախնական համաձայնությամբ խմբի կազմում յուրացման եղանակով խոշոր չափերով հափշտակության փորձ և հափշտակություն կատարելու, պաշտոնեական դիրքն օգտագործելով տարբեր տնտեսվարող սուբյեկտների ներգրավմամբ հակամրցակցային գործունեության, պաշտոնեական դիրքն օգտագործելով հակամրցակցային գործունեության փորձի, հրապարակային սակարկությունների անցկացման կարգը չարամտորեն խախտելու մասին տվյալներ: Նշված քրեական վարույթի նախաքննության ընթացքում, ի թիվս այլոց, ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 435-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարին:

2022 թվականի մարտի 28-ին քննիչը որոշում է կայացրել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա. Փ.-ի նկատմամբ՝ չհեռանալու մասին ստորագրությունը որպես խափանման միջոց կիրառելու մասին:

2022 թվականի մարտի 29-ին քննիչի՝ խափանման միջոց կիրառելու մասին որոշումը ստացվել է ՀՀ գլխավոր դատախազությունում:

Նույն օրը հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել խափանման միջոց կիրառելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ, որից հետո քննիչին հանձնարարություն է տրվել Ա. Փ.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն հարուցել դատարան: Արդյունքում՝ 2022 թվականի մարտի 30-ին մեղադրյալ Ա. Փ.-ի նկատմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից խափանման միջոց է ընտրվել կալանքը:

2022 թվականի սեպտեմբերի 28-ին հսկող դատախազի կողմից որոշում է կայացվել քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը հաստատելու և մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ ՀՀ հակակոռուպցիոն դատարան հանձնելու մասին:

2 2021 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստուգման նպատակով ստացվել էր ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող՝ ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու, առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու, փողերի լվացման և այլ չարաշահումների դեպքերի առթիվ քրեական գործը, որով քննիչի դեկտեմբերի 6-ի որոշմամբ ՀՀ նախկին գլխավոր դատախազ, ապա՝ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահին վերջնական մեղադրանք էր առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 310-րդ հոդվածով (3 դրվագ) և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (հինգ դրվագ): Ստուգման արդյունքում, նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն և դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի կողմից քննիչին տրվել էր քրեական գործի լրիվությունը, օբյեկտիվությունը և բազմակողմանիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ քննչական ու դատավարական գործողություններ կատարելու վերաբերյալ գրավոր ցուցում:Ցուցումի կատարման արդյունքում վարույթն իրականացնող քննիչի 2022 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ, ՀՀ նախկին գլխավոր դատախազ, ապա՝ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահին նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով, 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ) և 190-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու համար:

Նախաքննության ընթացքում կալանք է դրվել մեղադրյալի և նրա հետ փոխկապակցված անձանց՝ կնոջ ու որդիների անվամբ գրանցված 6 տասնյակից ավելի անշարժ, շարժական գույքերի, դրամական միջոցների, ինչպես նաև մեղադրյալի հետ փոխկապակցված 15 ՍՊ ընկերությունների շարժական և անշարժ գույքերի, դրամական միջոցների և կանոնադրական կապիտալում առկա բաժնեմասերի վրա:

2022 թվականի ապրիլի 15-ին հսկող դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատվել է և ըստ էության քննելու համար գործն ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Վերոնշյալ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից 2022 թվականի ապրիլի 1-ին որոշում է կայացվել Արագածոտնի մարզի Բյուրական համայնքի նախկին ղեկավարի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ համայնքապետարանի երկու աշխատակցի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով:

Վերոնշյալ որոշմամբ հաստատվել է, որ Բյուրական համայնքի ընդհանուր՝ 27.796 հա մակերեսով 10 հողատարածքները ձևական աճուրդի միջոցով 2010 թվականի հոկտեմբերի 25-ին օտարվել են ՀՀ նախկին գլխավոր դատախազ, ապա՝ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահի որդուն: Նշված հողամասերի հետ կապված, ի թիվս այլնի, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով որպես մեղադրյալ ներգրավվել է նաև ՀՀ նախկին գլխավոր դատախազ, ապա՝ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահը:

Նկատի ունենալով, որ Արագածոտնի մարզի Բյուրական համայնքին պատկանող հիշյալ հողատարածքները օտարվել են օրենքով սահմանված կարգի խախտմամբ, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետը գրություն է ուղարկել Արագածոտնի մարզի Աշտարակ խոշորացված համայնքի ղեկավարին՝ իր իրավասության սահմաններում ձեռնարկելու գործող օրենսդրությամբ նախատեսված միջոցառումները՝նշված հողատարածքները համայնքին վերադարձնելու նպատակով:

3 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից, ՀՀ դատախազության հետ համագործակցությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալը, հանդիսանալով պաշտոնատար անձ, Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող քրեական գործով ամբաստանյալի նկատմամբ մեղմ պատիժ նշանակելուն պաշտոնեական դիրքն օգտագործելով նպաստելու համար երկու անձանցօժանդակությամբ և միջնորդությամբ ամբաստանյալիցստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 2. 500. 000 ՀՀ դրամ կաշառք:

ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի 2022 թվականի հունիսի 8-ի որոշմամբ դեպքի առթիվ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 313-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

2022 թվականի հունիսի 9-ին ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատարի կողմից որոշում է կայացվել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և որոշումն ուղարկվել է վարույթն իրականացնող քննիչին՝ մեղադրանք առաջադրելու համար:

Ձերբակալման մասին քննիչի որոշումների հիման վրա մեղադրյալը և առերևույթ հանցանք կատարած մյուս անձինք բերման են ենթարկվել ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից:

Նախաքննության ընթացքում Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազի տեղակալին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 1-ին մասով:

2022 թվականի հունիսի 11-ի որոշմամբ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2022 թվականի հոկտեմբերի 22-ին որոշում է կայացվել քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը հաստատելու և վարույթի նյութերի հետ ՀՀ հակակոռուպցիոն դատարան հանձնելու մասին:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում քննված քրեական վարույթներով կոռուպցիոն հանցագործություններ կատարելու համար քրեական հետապնդման է ենթարկվել 44 պաշտոնատար անձ, այդ թվում՝ ՀՀ սնանկության դատարանի 2 դատավոր, ՀՀ վարչական դատարանի դատավոր, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, մասնավորապես՝

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող քրեական վարույթով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ա. Ա.-ն, Հայաստանի Հանրապետության Նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 20-ի ՆՀ-328-Ա հրամանագրով նշանակվելով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնում՝ մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության մասնագիտացմամբ, ՀՀ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով արդարադատություն իրականացնելիս պարտավոր լինելով գործել անկախ, անաչառ և միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի հիմքով արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս գործելով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական ու իրավաբանական անձանցից անկախ և հաշվետու չլինելով որևէ մեկին, այդպիսով դատական իշխանության ոլորտում իրականացնելով իշխանական լիազորություններ, տեղեկացված լինելով եղբոր՝ Ռ. Ա.-ի ընկերոջ և իր մտերիմ, ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Է. Ա.-ի պաշտպանյալ Ս. Գ.-ի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նույն դատարանի որոշման առկայության մասին, նպատակադրվել է ապօրինի գործողություններ կատարել Ս. Գ.-ի օգտին, այն է՝ ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու միջոցով վերջինին կալանքից ազատել, որպիսի հանցավոր նպատակին հասնելու դիտավորությամբ նախնական համաձայնության է եկել պաշտոնատար անձ հանդիսացող իր օգնական Թ. Պ.-ի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի գրասենյակի՝ ինքնությունը դեռևս չպարզված պաշտոնատար անձի հետ, ապա այլ պաշտոնատար անձանց հետ խմբի կազմում, ինչպես նաև Է. Ա.-ի օժանդակությամբ, ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածով սահմանված՝ օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի և «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածով սահմանված օրենքի և դատարանի առջև բոլորի հավասարության սկզբունքի խախտմամբ՝ պայմանավորված մեղադրյալի հետ անձնական բնույթի միջնորդավորված կապերի առկայությամբ, դուրս է եկել իր՝ արդարադատության իրականացման իշխանական բացառիկ լիազորությունների շրջանակից, որն անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք, ինչպես նաև Թ. Պ.-ի օժանդակությամբ կայացրել է ակնհայտ անարդար դատական ակտ՝ Ս. Գ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոփոխելով գրավով:

Օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ՝ Ա.Ա.-ին անձեռնմխելիությունից և ազատությունից զրկելու միջնորդություններ են ներկայացվել ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ, որոնք բավարարվել են:

Քրեական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի որոշմամբ Ա.Ա.-ի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 482-րդ հոդվածի 1-ին մասով, Է. Ա.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով, Թ. Պ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 46-482-րդ հոդվածի 1-ին մասով:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի որոշմամբ Ա. Ա.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը ներկայացվել են վարույթի մասնավոր մասնակիցների ծանոթացմանը, իսկ վարույթն իրականացնող քննիչը ձեռնամուխ է եղել մեղադրական եզրակացության կազմանը:

Մեկ այլ քրեական գործով, ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի վարույթում քննված քրեական գործով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Գ. Ն.-ն, հանդիսանալով դատական իշխանության մարմնի ղեկավար աշխատող՝ ՀՀ սնանկության դատարանի դատավոր, մշտապես իրականացնելով իշխանության ներկայացուցչի գործառույթներ, ինչպես նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ որպես ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ ունենալով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն, 2019 թվականի ընթացքում 12.382.580 ՀՀ դրամի չափով ավելացրել է իր գույքը, որն էականորեն գերազանցել է իր օրինական եկամուտները և ողջամտորեն չի հիմնավորվել դրանցով, ապա ձեռնամուխ է եղել անօրինական եկամուտները օրինական քաղաքացիական շրջանառության մեջ դնելու միջոցով՝ դրանց օրինական տեսք հաղորդելուն:

Մասնավորապես, Գ.Ն.-ն, մտերիմ հարաբերություններ ունենալով նույն դատարանի դատավոր Ա.Կ.-ի և, զբաղեցրած պաշտոնեական դիրքով պայմանավորված, իրենից որոշակի կախվածության մեջ գտնվող սնանկության գործերով կառավարիչ Ա.Խ.-ի հետ, վերջիններիցս տեղեկացել է 2015 թվականի նոյեմբերի 9-ին թիվ ԵԿԴ/0119/04/15 քաղաքացիական գործով Ա/Ձ Ս. Ա.-ին սնանկ ճանաչելու և սնանկության վարույթի շրջանակներում՝ վերջինիս ու նրա ընտանիքի անդամներին պատկանող անշարժ գույքի իրացման գործընթացի մասին: Նշված անշարժ գույքը՝ Երևան քաղաքի Վարդանանց փողոցի 28-րդ շենքի 93-րդ բնակարանը, հնարավորինս էժան գնով ձեռք բերելու նպատակով, խնդրելու և համոզելու եղանակով դրդել է Ա/Ձ Ս. Ա.-ի սնանկության գործով կառավարիչ Ա. Խ.-ին՝ խախտել հրապարակային սակարկությունների անցկացման կարգը և խոչընդոտել հրապարակային սակարկությունների միջոցով նշված բնակարանի իրացման բնականոն գործընթացին, ինչն իրագործելու նպատակով 2018-2019 թվականների ընթացքում Ա.Խ.-ն, չարամտորեն խախտելով հրապարակային սակարկությունների անցկացման կարգը, ապակողմնորոշել է անշարժ գույքի ձեռքբերմամբ հետաքրքրված տարբեր անձանց, հայտնելով, որ գույքը ձեռք է բերվելու համասեփականատերերի կողմից, հնարավոր գնորդներին զերծ է պահել օրինական կարգով աճուրդներին մասնակցելուց, այդ կերպ ապահովելով աճուրդների չկայանալը և, դրանով պայմանավորված, բնակարանի իրացման աճուրդի մեկնարկային գնի արհեստական նվազումը՝ 26.400.000 ՀՀ դրամից հասցնելով 12.382.000 ՀՀ դրամի, ինչի հետևանքով գույքի սեփականատիրոջը պատճառվել է խոշոր վնաս:

Հիշյալ քրեական վարույթով ձեռք բերված փաստական բավարար տվյալների համակցությամբ՝ Գ.Ն.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի 1-ին մասով, 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 310.1-րդ հոդվածի 1-ին մասով, 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով, 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-196-րդ հոդվածով, Ա.Կ.-ին՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, Ա. Խ.-ին՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածով և 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, Տ.Մ.-ին՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 11.04.2022 թվականին ուղարկվել է դատարան, որի դատաքննությունն ընթացիկ տարում չի ավարտվել:

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտի վարույթում քննված քրեական գործով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ա.Հ.-ն, հանդիսանալով դատական իշխանության մարմնի ղեկավար աշխատող՝ ՀՀ վարչական դատարանի դատավոր, տեղյակ լինելով այն մասին, որ ՀՀ սնանկության դատարանի դատավոր Գ.Ն.-ն, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն հանդիսանում է ինքնավար պաշտոն զբաղեցնող և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ և 2017-2020 թվականների ընթացքում օրինական եկամուտներն էականորեն գերազանցող, դրանցով ողջամտորեն չհիմնավորվող չափով՝ 47.581.000 ՀՀ դրամին համարժեք 100.000 ԱՄՆ դոլարով ավելացրել է իր գույքը ու թաքցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի վերաբերյալ հայտարարագրման ենթակա նշված տվյալը, նախնական համաձայնություն է ձեռք բերել Գ.Ն.-ի հետ՝ օժանդակելու վերջինիս հանցավոր ճանապարհով ստացված՝ ապօրինի հարստացման արդյունքում առաջացած, հայտարարագրման ենթակա առանձնապես խոշոր չափերի դրամական միջոցների իրական ծագումը թաքցնելու հարցում:

Ա.Հ.-ն, որպես վարչական դատարանի դատավոր, օրենքով սահմանված կարգով արդեն իսկ հայտարարագրած լինելով Գ.Ն.-ի կողմից հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցները գերազանցող չափի գումար, նշված անօրինական եկամուտներն օրինական քաղաքացիական շրջանառության մեջ դնելու միջոցով դրանց օրինական տեսք հաղորդելու հետ կապված առկա խոչընդոտները վերացնելու միջոցով, օժանդակել է Գ.Ն.-ին քողարկելու ինչպես դրամական միջոցների, այնպես էլ դրանց տնօրինման արդյունքում ձեռք բերվելիք գույքի նկատմամբ իրավունքի հանցավոր ծագումը:

Մասնավորապես, նշված դրամական միջոցներին օրինական տեսք հաղորդելու նպատակով, Ա.Հ.-ն, Գ.Ն-ի հետ կազմել է 2020 թվականի հունիսի 4-ի թվագրմամբ 100.000 ԱՄՆ դոլար վերջինիս փոխառությամբ տրամադրելու վերաբերյալ ձևական պայմանագիր: Այնուհետև, նույն օրը՝ 2020 թվականի հունիսի 4-ին ժամը՝ 11-ի սահմաններում, Ա.Հ.-ն Գ.Ն.-ի հետ այցելել է Երևան քաղաքի Սայաթ-Նովայի թիվ 8 շենք, 47 տարածք հասցեում տեղակայված՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության Սայաթ- Նովայի մասնաճյուղ, որտեղ գործող իր հաշվեհամարին մուտքագրել է Գ.Ն.-ի կողմից տրամադրած, վերջինիս պատկանող, հանցավոր ճանապարհով ձեռք բերված վերը նշված 100.000 ԱՄՆ դոլարը, ապա, հաշվեհամարին մուտքագրելուց հետո, այն միջբանկային գործարքով իր հաշվեհամարից փոխանցել է Գ.Ն.-ի՝ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲ ընկերությունում գործող հաշվեհամարին՝ այդպիսով օժանդակելով Գ.Ն.-ի կողմից առանձնապես խոշոր չափերով հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացմանը:

Բացի այդ, Ա.Հ.-ն, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն հանդիսանալով ինքնավար պաշտոն զբաղեցնող և հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ, պարտավոր լինելով օրենքով սահմանված կարգով հաշվետու ժամանակահատվածում ներկայացնել ճշգրիտ հաշվետվություն, նպատակ ունենալով թաքցնել իր կողմից ՀՀ սնանկության դատարանի դատավոր Գ.Ն.-ին հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերի դրամական միջոցները՝ 100.000 ԱՄՆ դոլարն օրինականացնելուն օժանդակելու վերը նկարագրված հանգամանքները և իրական երաշխիքներ ստեղծել նշված գործընթացի հետ կապված, 2021 թվականի հունիսի 3-ին ՀՀ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին ներկայացրած իր՝ 2020 թվականի տարեկան հայտարարագրի «հանձնված և վերադարձված փոխառություններ, բանկային ավանդներ» բաժնում ներառել է Գ.Ն.-ի հետ փոխառության ձևական պայմանագրի հիմքով նրան 52.022.000 ՀՀ դրամին համարժեք 100.000 ԱՄՆ դոլար տրամադրելու վերաբերյալ կեղծ տվյալներ, միևնույն ժամանակ՝ նույն հայտարարագրի «դրամական միջոցներ» բաժնում նախկինում հայտարարագրած 265.000 ԱՄՆ դոլար կանխիկ դրամական միջոցները պակասեցնելով իբրև Գ.Ն.-ին փոխառությամբ ձևական պայմանագրով հանձնված 100.000 ԱՄՆ դոլարի չափով:

Հիշյալ քրեական վարույթով ձեռք բերված փաստական բավարար տվյալների համակցությամբ՝ Ա.Հ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 314.3-րդ հոդվածի 2-րդ մասով:

Քրեական գործը մեղադրական եզրակացությամբ 10.11.2022 թվականին ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան, որի դատաքննությունն ընթացիկ տարում չի ավարտվել:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է ՀՀ դատախազության արդյունավետ համագործակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, Պետական վերահսկողական ծառայության, Հաշվեքննիչ պալատի, Կադաստրի կոմիտեի և այլ պետական մարմինների հետ. արդյունքում բացահայտվել են մի շարք կոռուպցիոն հանցագործություններ:

Մասնավորապես.

1 2022 թվականի ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ (հայտարարագիր դիտավորությամբ չներկայացնելը) և 314.3-րդ հոդվածների (հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը) հատկանիշներով քննվել է **31** քրեական վարույթ, որոնցից **7**-ի նախաձեռնման առիթ են հանդիսացել ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված տվյալները:

Հիշյալ քրեական վարույթներից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել **7** քրեական գործ՝ **10** անձի վերաբերյալ, **3** քրեական վարույթ կարճվել է, որոնցից 1-ը՝ գործուն զղջալու հիմքով, **1** քրեական վարույթ կասեցվել է՝ անձը հայտնի չլինելու հիմքով, **5**-ը՝ միացվել, իսկ **15**-ի նախաքննությունը շարունակվում է:

2 2022 թվականի փետրվարի 25-ին ՀՀ գլխավոր դատախազությունում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացվել են Արարատի մարզի Մրգավան համայնքի ղեկավարի նախկին տեղակալ Ա. Մ.-ի կողմից «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով վարչական տույժ կիրառելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, 2020 թվականի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և շահերի, ինչպես նաև նույն տարեթվի գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագիրը հիշյալ հանձնաժողով դիտավորությամբ չներկայացնելու վերաբերյալ փաստաթղթերը: Որպես քրեական գործ հարուցելու առիթ՝ սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու և ընթացքը լուծելու հանձնարարությամբ դրանք ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախապատրաստված նյութերով, 2022 թվականի մարտի 9-ին, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ, Ա. Մ.-ն 2022 թվականի մարտի 22-ին ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի 1-ին մասով: Նա իրեն լիովին մեղավոր է ճանաչել և տվել է խոստովանական ցուցմունքներ: Ա. Մ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է չհեռանալու մասին ստորագրությունը:

2022 թվականի մարտի 24-ին քրեական գործով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն և դատավարական ղեկավարում իրականացնող դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը, և քրեական գործն ուղարկվել է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Դատարանի՝ 2022 թվականի հունիսի 21-ի դատավճռով, համաձայնեցման վարույթի կիրառմամբ, Ա. Մ-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտվել 1 (մեկ) տարի ժամկետով ազատազրկման՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկվելով մեկ տարի ժամկետով:

Ա. Մ.-ի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը չի կիրառվել՝ սահմանվել է փորձաշրջան՝ 2 տարի ժամկետով:

Պետք է նշել, որ վերոնշյալը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 314.2-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված և քննված առաջին քրեական գործն է այս արարքի քրեականացումից (09.06.2017թվական) ի վեր, որով Առաջին ատյանի դատարանի կողմից կայացվում է մեղադրական դատավճիռ:

3 Հակակոռուպցիոն կոմիտեում քննված մեկ այլ քրեական վարույթի շրջանակում հիմնավորվել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի նախկին քննիչ Վ.Գ.-ն, նշված պաշտոնում աշխատելու ժամանակահատվածում, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հանդիսացել է հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

Ի թիվս այլնի՝ նա պարտականություն է ունեցել նաև ներկայացնելու պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիր: Մինչդեռ, 2020 թվականի հուլիսի 29-ին, ազատվելով պաշտոնից, Վ.Գ.-ն սահմանված ժամկետում՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չի ներկայացրել 2020 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը:

Վերջինս հայտարարագիրը չի ներկայացրել նաև հետագայում՝ Հանձնաժողովի կողմից համապատասխան ծանուցում ստանալուց հետո, ինչի արդյունքում 2021 թվականի սեպտեմբերի 2-ին Հանձնաժողովը որոշել է Վ.Գ.-ի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Սակայն նախկին քննիչը, պատշաճ ծանուցված լինելով վարչական տույժի կիրառման մասին, դրանից հետո ևս սահմանված 30 օրվա ընթացքում դիտավորությամբ չի ներկայացրել հայտարարագիրը:

Ելնելով քրեական վարույթի շրջանակներում ձեռք բերված ապացույցներից՝ վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի որոշմամբ, Վ.Գ.-ի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում և 2022 թվականի սեպտեմբերի 5-ին հաստատված մեղադրական եզրակացությամբ վարույթի նյութերը հանձնվել են Հակակոռուպցիոն դատարան:

2022 թվականի դեկտեմբերի 30-ին Հակակոռուպցիոն դատարանը կայացրել է մեղադրական դատավճիռ և մեղավոր ճանաչել Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի նախկին քննիչ Վ.Գ.-ին՝ գույքի և եկամուտների հայտարարագիրը դիտավորությամբ չներկայացնելու համար: Վերջինիս նկատմամբ որպես պատիժ նշանակվել է տուգանք՝ հանցանք կատարելու պահին նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկի չափով՝ (մեկ միլիոն քսան հազար դրամ):

2022 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում ստացվել են Պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքներով կազմված մի շարք հաղորդումներ, որոնցով հարուցվել (նախաձեռնվել) է շուրջ 60 քրեական գործ (վարույթ), որոնցից 22-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեում:

Հատկանշական է, որ Հակակոռուպցիոն կոմիտում հարուցված (նախաձեռնված) և քննվող 22 քրեական գործերի (վարույթների) զգալի մասը վերաբերում է Երևանի քաղաքապետարանում կատարված ուսումնասիրության ընթացքում հայտնաբերված առերևույթ հանցագործությունների հատկանիշներ պարունակող խախտումներին, որոնք դրսևորվել են նրանում, որ Երևանի քաղաքապետարանը մի շարք հողամասեր, որոնք ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և ՀՀ կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի 550-Ն որոշման համաձայն հնարավոր էր վաճառել միայն հրապարակային սակարկությունների միջոցով՝ աճուրդի եղանակով, օտարել է ուղղակի վաճառքով, ինչի հետևանքով էական վնաս է պատճառվել անձանց իրավունքներին, ինչպես նաև պետության օրինական շահերին:

Հաշվեքննիչ պալատի կողմից ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող հաղորդումներով, ինչպես նաև Գլխավոր դատախազության պահանջով Հաշվեքննիչ պալատի կողմից տրամադրված նյութերով 2022 թվականի ընթացքում հարուցվել (նախաձեռնվել) է 20 քրեական գործ (վարույթ), որոնցից 11-ը վերաբերում են Պաշտպանության նախարարությունում գնումների գործընթացի նկատմամբ իրականացված հաշվեքննությանը:

2022 թվականի հունիսի 28-ին ստացվել է ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի՝ հանցագործության մասին հաղորդումը, ըստ որի ՀՀ կադաստրի կոմիտեի մասնագետների կողմից ուսումնասիրվել են ք.Երևան, Նորք-Մարաշ, Գ.Հովսեփյան փողոց, հեռուստաաշտարակին հարող տարածքի հասցեում գտնվող 0,942 հա մակերեսով հողամասի կադաստրային փաստաթղթերը, որի արդյունքում պարզվել է, որ անշարժ գույքի գրանցումն իրականացվել է ՀՀ կադաստրի կոմիտեի նախկին «Մարաշ» տարածքային ստորաբաժանման կողմից, մինչդեռ գրանցումից հետո տրամադրված անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2312239 համարի վկայական նշված տարածքային ստորաբաժանումը չի ստացել: Պարզվել է նաև, որ կադաստրային գործում առկա փաստաթղթերի վրա դրված կոմիտեի դրոշմակնիքը չի համապատասխանում գրանցման ժամանակահատվածում ստորաբաժանման կողմից օգտագործվող դրոշմակնիքին, մասնավորապես՝ բացակայում է դրոշմակնիքի վրա նշված ստորաբաժանման ՀՎՀՀ-ն:

Հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ ք.Երևան, Գ.Հովսեփյան փողոց, հեռուստաաշտարակին հարող տարածքի հասցեում գտնվող անշարժ գույքի կադաստրային գործում առկա փաստաթղթերի համաձայն՝ 2005 թվականի մայիսի 2-ին, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի և Երևան քաղաքի բնակչուհի Բ.Գ-ի միջև կնքված հողամասի առուվաճառքի թիվ 465/5-ԱԳ պայմանագրով, վերջինս 148.365.000 ՀՀ դրամով գնել է նշված հողամասը: Այնուհետև պայմանագրի՝ սահմանված կարգով վավերացված չլինելու պայմաններում, անշարժ գույքը գրանցվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական Մ4-4 մատյանի 000043 համարի տակ, մինչդեռ նույն համարով կադաստրի կոմիտեի հիշյալ ստորաբաժանումը գրանցել է նաև այլ անշարժ գույք:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ 2022 թվականի հունիսի 29-ին վարույթն իրականացնող մարմինը ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցել է քրեական գործ:

Նախաքննության ընթացքում Գ.Մ.-ի նկատմամբ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է հանրային քրեական հետապնդում, այն բանի համար, որ նա, մեկ միասնական դիտավորությամբ, Ա. Ն.-ի, Բ.Գ.-ի, Կ. Ի.-ի, Ա. Հ.-ի, Ա. Ս.-ի, Լ. Դ.-ի, Ա. Մ.-ի օժանդակությամբ, ինչպես նաև գործով դեռևս չպարզված պաշտոնատար անձանց կողմից ծառայողական լիազորությունները չարաշահելու և պաշտոնեական կեղծիքներ կատարելու արդյունքում, երեք դեպքով, խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝

ընդհանուր 554.778.000 ՀՀ դրամի կադաստրային արժեքով գույքեր, չորս դեպքով՝ Ա. Մ.-ի հետ նախնական համաձայնությամբ, խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 270.213.300 ՀՀ դրամի կադաստրային արժեքով գույքեր և մեկ դեպքով՝ Գ. Գ.-ի հետ նախնական համաձայնությամբ, խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 14.700.000 ՀՀ դրամի կադաստրային արժեքով գույքը:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում քրեական հետապնդումներ են հարուցվել նաև Ա.Ս.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ա. Հ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ա. Մ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ա. Մ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ա. Ն.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ա. Ա.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ա. Ն.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Գ. Գ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Դ. Մ.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Կ. Ի.-ի նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Հ. Ա.-ի նկատմամբ՝ 308-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագ):

Գ. Մ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, իսկ մյուս մեղադրյալների նկատմամբ կիրառվել են այլընտրանքային խափանման միջոցներ:

Քրեական վարույթով հաստատվել է, որ խարդախության եղանակով հափշտակվել է շուրջ 839.691.300 ՀՀ դրամի կադաստրային արժեքով անշարժ գույք:

2022 թվականի ընթացքում դատարան է ուղարկվել հանրային հետաքրքրություն ունեցող կոռուպցիոն քրեական գործ՝ օտարերկրացիների կողմից ապօրինի որդեգրված հայ երեխաների վերաբերյալ:

Մասնավորապես՝

ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ պետական իշխանության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի հսկողության և դատավարական ղեկավարման ներքո ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննված քրեական գործով ապացույցներ են ձեռք բերվել այն մասին, որ իտալական 3 ընկերությունների հայաստանյան ներկայացուցիչը 2005 թվականից սկսած, օտարերկրյա քաղաքացիների խնամքին հանձնելու նպատակով ՀՀ քաղաքացի հանդիսացող՝ առանց ծնողական խնամքի մնացած և ՀՀ տարածքում գործող մանկատներում գտնվող երեխաների վաճառքն իրականացնելու համար, ստեղծել և ղեկավարել է կազմակերպված խումբ: Կազմակերպված խմբի ղեկավարումը ստանձնել է օտարերկրյա որդեգրումների բնագավառում ՀՀ-ում գործունեություն ծավալող, Իտալիայի Հանրապետությունում հավատարմագրված վերոնշյալ 3 կազմակերպությունների ներկայացուցիչը, ով մշակել է կազմակերպված խմբի գործունեության ծրագիրը, անդամների միջև կատարել դերաբաշխում, իրականացրել ֆինանսական հոսքերի նկատմամբ հսկողության գործառույթ:

Վերջինիս կազմում ընդգրկվել են ՀՀ ծննդօգնության բնագավառում գործունեություն իրականացնող հիմնարկի աշխատակիցներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ի տնօրենը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետը, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետը, նույն գործակալության ապոստիլի և միջազգային պայմանագրերի բաժնի պետը, ինչպես նաև հիշյալ ընկերությունների ներկայացուցչի մտերիմ, թարգմանչական ծառայություններ մատուցող անձը: Կազմակերպված խմբի նպատակին հասնելու համար նրանք օգտվել են ինչպես իրենց, այնպես էլ ՀՀ պետական մարմինների իրավասու պաշտոնատար աշխատակիցների ընձեռած հնարավորություններից:

Բացի այդ, վերջինս առանձնապես խոշոր չափերով դրամական միջոցներն օրինականացնելու՝ դրա հանցավոր ծագումն ու տեղաշարժը թաքցնելու նպատակով, որպես փոխառություն է հանձնել իր հետ փոխկապակցված ՍՊ ընկերություններին, իսկ գումարի մի մասի հանցավոր ծագումն ու տեղաշարժը թաքցնելու նպատակով այն ձևակերպել է որպես համապատասխան ՍՊ ընկերությանը՝ որդեգրումների գործընթացի բնագավառում գործունեություն ծավալող, իր մտերիմներից մեկի կողմից տրամադրված փոխառություն:

Քրեական գործով նախաքննության ընթացքում հիշյալ անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտ» ՓԲ ընկերության տնօրենին, փոխտնօրենին, նույն ընկերության ցերեկային ստացիոնարի վարիչին, «Երևանի «Մանկան տուն»» ՊՈԱԿ-ի նախկին տնօրենին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի նախկին պետին, ինչպես նաև կազմակերպությունների ներկայացուցչի մտերիմներից մեկին մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության նախկին պետին, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության միջազգային պայմանագրերի և ապոստիլի բաժնի պետին մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ նույն նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետին՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով:

2022 թվականի հունիսի 6-ին 11 անձի վերաբերյալ հաստատված մեղադրական եզրակացությամբ քրեական գործն ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան՝ ըստ էության քննելու համար:

Ամփոփելով՝ հարկ է ընդգծել, որ Քրեական դատավարության նոր օրենսգրքով ՀՀ իրավական համակարգ քրեական վարույթ նախաձեռնելու փուլի ներմուծմամբ էլ ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվել կոռուպցիոն հանցագործությունների քննության և բացահայտման համար. հանցագործության մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում քննիչը նախաձեռնում է քրեական վարույթ և ձեռնամուխ լինում նախաքննության կատարմանը, ինչը հնարավորություն է ընձեռում քրեադատավարական ողջ գործիքակազմի կիրառմամբ իրականացնելու համակողմանի նախաքննություն՝ հանցագործությունը բացահայտելու համար:

Ժողովրդավարական ինստիտուտների, քաղաքացիական հասարակության և իրավական պետության հիմնավոր հաստատման և նշվածի համատեքստում կոռուպցիայի հաղթահարման, այն ծնող և դրա տարածմանը խթանող պատճառների ու պայմանների վերացման ուղղությամբ հետևողական պայքարը՝ դատախազության օրենքով սահմանված լիազորությունների ամբողջ ծավալով իրացմամբ, շարունակվելու է նաև 2023 թվականի ընթացքում:

3

ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը 2022 թվականի ընթացքում (այսուհետ՝ Վարչություն) Գլխավոր դատախազության այլ ստորաբաժանումներից, ինչպես նաև Ոստիկանությունից և Ազգային անվտանգության ծառայությունից ստացել է տվյալներ՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության վերաբերյալ ուսումնասիրություն սկսելու հիմքերը ստուգելու և ստուգման արդյունքներով համապատասխան որոշումներ կայացնելու նպատակով:

Մասնավորապես՝ 2022 թվականի ընթացքում Վարչությունը ստացել է 50 քրեական գործով նյութ (2021 թվականին՝ 55 նյութ) և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 25 նյութ՝ 84 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելության վերաբերյալ (2021 թվականին՝ 23 նյութ՝ 105 անձի վերաբերյալ):

2022 թվականի ընթացքում ուսումնասիրություն սկսելու հիմքերի ստուգման արդյունքներով՝ կայացվել է ուսումնասիրություն սկսելու մասին 77 որոշում (2021 թվականին՝ 65 որոշում), որոնցից 9-ը սկսվել է 2021 թվականից փոխանցված նյութերի հիման վրա: Ուսումնասիրություն չնախաձեռնելու մասին կայացվել է 18 որոշում (2021 թվականին՝ 21 որոշում):

Այդ որոշումներից 10-ը կայացվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ 5 մլն դրամը գերազանցող՝ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տվյալների բացակայությամբ պայմանավորված, 1 դեպքում ուսումնասիրություն չի նախաձեռնվել անձին Օրենքով նախատեսված հանցագործությունների ցանկում չներառված՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածով մեղադրանք առաջադրված լինելու պատճառով, 6 գործով ստացված օպերատիվ տվյալների հիման վրա կայացվել է ուսումնասիրություն չնախաձեռնելու որոշում՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձ չհանդիսանալու հանգամանքով պայմանավորված, իսկ 1 գործով՝ ոչ պատշաճ սուբյեկտի կողմից ուղարկված լինելու հիմքով և հանրային պաշտոն զբաղեցնող անձ չհանդիսանալու հանգամանքով պայմանավորված:

2022 թվականի ընթացքում ուսումնասիրության նախնական արդյունքներով՝ կազմվել է ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ 109 նախնական ամփոփագիր: 51 ուսումնասիրությամբ հայտնաբերվել է Օրենքով նախատեսված 50 մլն դրամը գերազանցող՝ ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույք՝ 65 շարժական և ավելի քան 460 անշարժ գույք, շուրջ 100 իրավաբանական անձանցում մասնակցություն և ավելի քան 92 մլրդ դրամ:

2022 թվականի ընթացքում կազմվել է շուրջ 1500 հարցում՝ ուղղված համապատասխան մարմիններին: Միաժամանակ, ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի իրական շահառուների, նրանց փոխկապակցված անձանց շրջանակը, գույքի ծավալը, ինչպես նաև ուսումնասիրության համար անհրաժեշտ այլ հանգամանքներ պարզելու նպատակով՝ 2022 թվականի ընթացքում համապատասխան միջոցառումներ իրականացնող մարմին են ներկայացվել 37 օպերատիվ հետախուզական միջոցառում ձեռնարկելու մասին հանձնարարականներ: 2020-2022 թվականների հանձնարարականներով ստացվել է 129 պատասխան:

Ուսումնասիրությամբ բացահայտված ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույքի շուկայական արժեքը պարզելու նպատակով նշանակվել և Գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» է ուղարկվել դատաապրանքագիտական փորձաքննություն նշանակելու մասին 79 վարույթի վերաբերյալ 107 որոշում, որոնցից 72 վարույթի ստացվել է 97 եզրակացություն: Կայացվել է դատաապրանքագիտական բնագավառի մասնագետ ներգրավելու մասին 6 վարույթի վերաբերյալ 6 որոշում. դրանց արդյունքները ստացվել են:

2022 թվականի ընթացքում իրականացված մի շարք ուսումնասիրությունների շրջանակներում 134 դիմում է ներկայացվել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ բանկային, վարկային, ապահովագրական, առևտրային և/կամ նոտարական գաղտնիք կազմող տեղեկություններ ստանալու նպատակով, որոնցից 127-ը՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան և 7-ը՝ Հակակոռուպցիոն դատարան: Ներկայացված դիմումներից չի բարարարվել 19-ը, որոնցից 4-ը բողոքարկվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարան: Բողոքներից 3-ի վերաբերյալ կայացվել է ամբողջությամբ բավարարելու, իսկ 1-ով՝ մասնակի բավարարելու որոշում:

2022 թվականին հայցադիմումներ են ներկայացվել նաև ուսումնասիրվող անձանց և նրանց ներկայացուցիչների կողմից: Մասնավորապես՝ 2 գործով Վարչական դատարան ներկայացված 2 հայցադիմումից 1-ը վերահասցեագրվել է Հակակոռուպցիոն դատարան: Հակակոռուպցիոն դատարանը կայացրել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում: Որոշումը բողոքարկվել է Վճռաբեկ դատարան, որն էլ կայացրել է բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում, իսկ մյուս հայցադիմումի վարույթ ընդունելը մերժվել է, որի բողոքարկման արդյունքում Վերաքննիչ վարչական դատարանը վերացրել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը, այն պատճառաբանությամբ, որ հայցադիմումի քննությունը պետք է վերահասցեագրվեր Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել 2 հայցադիմում, որոնք մերժվել են դատարանի կողմից: Այնուհետև, նշված երկու որոշումը բողոքարկվել է վերաքննության կարգով (բողոքներն ամբողջությամբ մերժվել են Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից): Եվս 2 հայցադիմում է ներկայացվել Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որոնք մերժվել են դատարանի կողմից, այնուհետև նշված երկու որոշումը բողոքարկվել է վերաքննության կարգով: Բողոքներից մեկն ամբողջությամբ մերժվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից, իսկ մյուսի վերաբերյալ դեռևս որոշում առկա չէ:

Վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել 8 բողոք, որոնք ընդունվել են վարույթ: Բողոքներից 7-ի քննության արդյունքներով կայացվել է բողոքը մերժելու մասին որոշում: Նշված 7 որոշումներից 5-ը բողոքարկվել են վճռաբեկության կարգով, որոնցից 4-ի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը կայացրել է բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում, իսկ 1 բողոքի առնչությամբ դեռևս առկա չէ վերջնական դատական ակտ:

Բողոքարկվող դատական ակտերը հիմնականում վերաբերել

- բանկային, ապահովագրական գաղտնիքի, վարկային տեղեկատվության ստացման իրավաչափությանը.
- հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու իրավաչափությանը.
- իրավասու մարմնի կողմից իրականացվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթը վարչական վարույթի տեսակ լինելուն և, հետևաբար, ձեռնարկվող գործողությունները վարչարարություն համարվելուն.
- «Ուսումնասիրություն սկսելու մասին» որոշման, «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշման ուժով ուսումնասիրվող անձի և Գլխավոր դատախազության միջև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքից ծագող իրավահարաբերությունների չառաջանալը ճանաչելուն.
- «Ուսումնասիրություն սկսելու մասին», «Ուսումնասիրվող նոր ժամանակահատված սահմանելու վերաբերյալ» որոշումներն անվավեր ճանաչելուն.
- ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազի համապատասխան գրությունն անվավեր ճանաչելուն և դատախազի կողմից հայցվորին գույքերի ձեռքբերման պահի շուկայական արժեքների վերաբերյալ տեղեկություններ տրամադրելը պարտավորեցնելուն:

2022 թվականին իրականացված ուսումնասիրություններից 43-ի շրջանակում դատարան է ներկայացվել հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու մասին 52 դիմում, որոնք բավարարվել են դատարանի կողմից և որոշումներն ուղարկվել են հարկադիր կատարման: Շուրջ 600 գույքի վրա դրվել է արգելանք:

Վերոնշյալ ուսումնասիրությունների նյութերով հայտնի բոլոր շահագրգիռ անձինք, պաշտոնական հայտարարությունների «Ազդարար» առցանց հարթակի միջոցով, Վարչության կողմից ծանուցվել են հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության ուսումնասիրությունների արդյունքում հավաքված նյութերին ծանոթանալու և ստացված տվյալների առնչությամբ իրենց դիրքորոշումը ներկայացնելու նպատակով: Այդ անձանց մի մասն արդեն իսկ ներկայացել է Վարչություն և ստացել ուսումնասիրությունների նյութերը, ինչպես նաև որոշ գործերով շահագրգիռ անձանց կողմից ներկայացվել են դիրքորոշումներ:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով 2022 թվականին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 11 հայցադիմում, իսկ Հակակոռուպցիոն դատարան՝ ևս 10 հայցադիմում, որոնք ընդունվել են վարույթ:

Նշված 21 հայցադիմումներով՝ պահանջվում է հօգուտ պետության բռնագանձել ավելի քան 200 անշարժ և շուրջ 45 շարժական գույք, ինչպես նաև 45 իրավաբանական անձանցում մասնակցություն: Բռնագանձման ենթակա գումարի չափը կազմում է շուրջ 51 մլրդ 360 մլն դրամ: 2022 թվականին ներկայացված հայցադիմումների հայցագների հանրագումարը կազմում է շուրջ 100 միլիարդ ՀՀ դրամ:

Մասնավորապես՝ 2022 թվականի մայիսի 26-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայցադիմում, որի համաձայն՝ **Վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին Երևանի նախկին քաղաքապետ, ԱԺ նախկին պատգամավոր, Տրանսպորտի և կապի նախկին նախարար Գ.Բ.-ից, նրա հետ փոխկապակցված 3 անձից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝**

- Երևան քաղաքում գտնվող 33 բնակարանները, տարածքները, շինությունները, ավտոհանգրվանները, որոնցից 11-ը գտնվում է Հյուսիսային պողոտայում, 7-ը՝ Խորենացի փողոցում, 3-ը՝ Արշակունյաց պողոտայում, 2 առանձնատունը՝ Ազատության պողոտայում, 2 տարածքը՝ Թամանյան փողոցում, 2-ը (շինություն և ավտոկայանատեղի)՝ Տերյան փողոցում, ինչպես նաև Երևան քաղաքի այլ վարչական շրջաններում գտնվող անշարժ գույքերը, Կոտայքի մարզում (Ծաղկաձոր համայնք) գտնվող 2 հողամասը և Արարատի (Սիս համայնք) մարզում գտնվող 1 հողամասը, 1 տրանսպորտային միջոցը (MERSEDES-BENZ S600L մակնիշի ավտոմեքենա), իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է 10 մլրդ 704 մլն 483 հազար 825 դրամ.
- 10 իրավաբանական անձանցում մասնակցության իրավունքը.
- 8 հանձնված փոխառության չվերադարձված մասի պահանջի իրավունքը՝ 1 մլրդ 879 մլն 759 հազար 719 դրամի չափով.
- 882 մլն 745 հազար 274,9 դրամ՝ որպես ապօրինի ծագում ունեցող գույքի օգտագործումից ստացված եկամտի, ինչպես նաև գույքերի վաճառքից գոյացած միջոցների մնացորդ.
- 3 մլրդ 317 մլն8 հազար 604 դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում և հնարավոր չէ բռնագանձել՝ հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից հայցն ընդունվել է վարույթ:

2022 թվականի սեպտեմբերի 30-ին Հակակոռուպցիոն դատարան ներկայացված հերթական հայցադիմումով՝ **Վարչությունը պահանջ է ներկայացրել ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նախկին պետ Մ.Պ.-ից և նրան փոխկապակցված յոթ անձից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝**

- Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող 15 անշարժ գույք, որոնցից 2-ը՝ անհատական բնակելի տուն Երևան քաղաքում, 1 ավտոտնակ, 12 հասարակական նշանակության տարածք, 3 տրանսպորտային միջոց, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է ավելի քան 3 մլրդ 502 մլն 570 հազար դրամ, մասնակցություններ 6 իրավաբանական անձանցում.
- Ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված ընդհանուր 710 մլն 839 հազար 400 դրամ փոխառությունների և այլ դեբիտորական պարտքերի պահանջի իրավունքը.
- 456 մլն 628 հազար 637 դրամ՝ որպես ապօրինի ծագում ունեցող դրամական միջոցների մնացորդ, ինչպես նաև 6 մլրդ 141 մլն 24 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում և հնարավոր չէ բռնագանձել՝ հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը:

2022 թվականի մայիսի 31-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը, որն ընդունվել է վարույթ:

Հայցադիմումի համաձայն՝ Վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին ՀՀ ԱԱԾ պետական պահպանության ծառայության պետի նախկին տեղակալ Վ.Ղ.-ից, նրա հետ փոխկապակցված 4 անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- Երևան քաղաքում գտնվող 17 բնակարանները, տարածքները, շինությունները, ավտոհանգրվանները, որոնցից 4–ը գտնվում են Ավան վարչական շրջանում, 5–ը Ծովակալ Իսակով պողոտայում, 5–ը Տերյան փողոցում, ինչպես նաև Այգեստան թաղամասում, Ամիրյան, Խորենացի փողոցներում, Կոտայքի մարզում (համայնք Ծաղկաձոր) գտնվող հանգստյան գոտին, Արմավիրի (համայնք Արտամետ) մարզում գտնվող 1 հողամասը, 6 տրանսպորտային միջոց, իսկ անհնարինության դեպքում՝ նշված անշարժ և շարժական գույքերի միջին շուկայական արժեքը, որն ընդհանուր կազմում է 6 մլրդ 7 մլն 193 հազար 880 դրամ,
- 8 իրավաբանական անձանցում մասնակցության իրավունք,
- Ստեփանակերտ քաղաքում գտնվող 6 անշարժ գույքի և 4 տրանսպորտային միջոցների միջին շուկայական արժեքները՝ 337 մլն 780 հազար դրամ,
- 137 մլն 216 հազար 729 դրամ՝ որպես բանկային հաշիվներին առկա դրամական միջոցներ և ավանդներ,
- 1 մլրդ 743 մլն 409 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում և հնարավոր չէ բռնագանձել՝ հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը: Ընդհանուր՝ 8 մլրդ 225 մլն 599 հազար 616 դրամ:

2022 թվականի հուլիսի 27-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացված հայցադիմումով՝ Վարչությունը պահանջ է ներկայացրել Սյունիքի նախկին մարզպետ Ս.Խ.-ից և նրան փոխկապակցված 5 անձանցից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել մասնավորապես՝

- 5 անշարժ գույքեր՝ Երևան քաղաքում գտնվող առանձնատուն (երկու հասցեով), բնակարան, հասարակական նշանակության օբյեկտ, Գորիս քաղաքում գտնվող շինություն, 3 տրանսպորտային միջոցներ, իսկ անհնարինության դեպքում՝ դրանց միջին շուկայական արժեքները, որն ընդհանուր կազմում է ավելի քան 1 մլրդ 530 մլն 135 հազար 900 դրամ,
- մասնակցություններ թվով 3 իրավաբանական անձերում,
- 614 մլն 544 հազար 139 դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ,
- 2 մլրդ 410 մլն 463 հազար 523 դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում և հնարավոր չէ բռնագանձել՝ հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասը,
- Ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրված ընդհանուր 4 մլրդ 450 մլն 350 հազար 364 դրամ փոխառությունների և այլ դեբիտորական պարտքերի պահանջի իրավունքը,
- օֆշորային կազմակերպությանը փոխանցված 10 մլրդ 98 մլն 300 հազար դրամ ներդրման գումարը:

Միջազգային իրավական ակտերի սահմանած դրույթների հիման վրա և ղեկավարվելով Օրենքի 5-րդ գլխում նախատեսված կարգավորումներով՝ դատախազների կողմից ուղարկվել է շուրջ 50 պաշտոնական միջազգային հարցում: Մասնավորապես՝ իրավական փոխօգնության հարցումներ են ուղարկվել Վրաստան, ԱՄԷ, Շվեյցարիա, Ավստրիա, Հունաստան, Կիպրոս, Լատվիա, Բելառուս, ՌԴ, ԱՄՆ, Միացյալ Թագավորություն, Ուկրաինա, Բուլղարիա, Չեխիա, Մալթա, Իրան, Լիխտենշտեյն, Ֆրանսիա և Գերմանիա: Ուղարկված հարցումների մեծ մասով Դատախազությունը դեռևս որևէ պատասխան չի ստացել գործընկեր պետություններից, իսկ արդեն ստացված պատասխաններից տասներկուսով տարատեսակ պատճառաբանություններով մերժվել է Դատախազությանը որևէ տեղեկության տրամադրումը, հիմնականում՝ պատճառաբանելով իրավական օգնության հիմքի բացակայությունը: Իրավական փոխօգնության տրամադրումը մերժվել է, մասնավորապես, ԱՄԷ-ի, Շվեյցարիայի, Ավստրիայի, ՌԴ-ի, Ուկրաինայի, Բելառուսի, Չեխիայի և Լիխտենշտեյնի կողմից:

Բացի այդ, ուսումնասիրությունների ընթացքում ձեռք բերված առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող տվյալների հիման վրա Վարչության կողմից կազմվել է 3 զեկուցագիր:

Հաշվետու ժամանակահատվածում քայլեր են ձեռնարկվել քննարկվող նոր գործիքի ինստիտուցիոնալ կայացման ուղղությամբ: Դատախազությունում մասնագիտացված ստորաբաժանման կազմավորումից ի վեր ի հայտ եկած գործնական որոշ խնդիրների վերլուծության արդյունքներով՝ կազմվել և շրջանառության մեջ է դրվել Օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթ, որը 2022 թվականի հունիսի 9-ին ընդունվել է Ազգային ժողովի կողմից:

Օրենքում կատարվել են որոշ լրացումներ, որոնք հնարավորություն կտան օպերատիվ ճանապարհով ստացված տվյալների հիման վրա ուսումնասիրություն սկսել «Հանրային ծառայության մասին» օրենքի գործող խմբագրության իմաստով հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կամ այն անձի նկատմամբ, որը զբաղեցրել է այդպիսի պաշտոն կամ այդպիսի պաշտոնին համարժեք պաշտոն, քանի որ նախկինում գործող կարգավորման պարագայում՝ նորմի գործողությունը տարածվում էր պաշտոնատար անձանց խիստ սահմանափակ շրջանակի վրա և հաշվի չէր առնվում կոռուպցիոն տեսանկյունից պաշտոնատար անձանց ռիսկայնությունը:

Նախատեսվել է նաև ուսումնասիրություն սկսելու նոր հիմք այն է՝ իրավասու մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություն սկսելու հնարավորությունը, որպեսզի իրավասու մարմինը հնարավորություն ունենա իր կողմից իրականացվող ուսումնասիրության շրջանակներում ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին տվյալներ ստանալու պարագայում ինքնուրույն նախաձեռնել գործընթացը:



4

ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետական շահերի պաշտպանության ոլորտում 2022 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով կատարվել է 212 ուսումնասիրություն (2021 թվականին՝ 885), հայտնաբերվել է 428 իրավախախտում (2021 թվականին՝ 379):

Ուսումնասիրություններն ընդգրկել են պետական և հանրային գույքի պահպանության, մասնավորեցման, սոցիալական ապահովության, բնապահպանության, ընդերքօգտագործման, առողջապահության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտները:

Պետությանը պատճառված վնասների վերականգնման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, պետական շահերի պաշտպանության հայցեր հարուցելու, ինչպես նաև պետական շահերի խախտումների պատճառների և նպաստող պայմանների վերացման նպատակով՝ պետական մարմիններին ներկայացվել է 27 հաղորդում և միջնորդագիր (2021 թվականին՝ 29):

Հաշվետու և նախորդ ժամանակաշրջաններում բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է 11 մլն 106 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում դատարաններ է ներկայացվել ընդհանուր 91 հայց՝ 27 մլրդ 124 մլն 116 հազար դրամի բռնագանձման պահանջով (2021 թվականի ընթացքում՝ 74 հայց՝ 624 մլն 461 հազար դրամի բռնագանձման պահանջով):

Դատարաններում բավարարվել է 70 մլն 389 հազար դրամ հայցապահանջով 27 հայց (2021 թվականին՝ 264 մլն 855 հազար դրամ հայցապահանջով 39 հայց), շուրջ 33 մլրդ 889 մլն 454 հազար դրամ հայցապահանջով 157 հայցի քննություն ընթացքի մեջ է:

Դատախազության ստորաբաժանումների կողմից պետական շահերի պաշտպանության գործառույթի շրջանակում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հարուցվել է 14 քրեական գործ (վարույթ) (2021 թվականին՝ 99), 27 դեպքով ուսումնասիրությունների արդյունքներն ուղարկվել են ըստ ենթակայության նյութեր նախապատրաստելու համար (2021 թվականին՝ 115), ներկայացվել է հանցանքի մասին 40 հաղորդում՝ քրեական վարույթ նախաձեռնելու համար:

Պետության շահերին հասցված վնասը վերականգնելու համար նախազգուշացվել է 10 անձ (2021 թվականին՝ 12):

Հաշվետու ժամանակահատվածում Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ձեռնարկված միջոցառումներով՝ հարուցված հայցերով (այդ թվում՝ քրեական դատավարության կարգով), հարուցված քրեական գործերով (վարույթներքվ), քննչական մարմիններ ուղարկված նյութերով և ներկայացված հանցանքի մասին հաղորդումներով արձանագրված ընդհանուր վնասը կազմել է շուրջ 39 մլրդ 945 մլն 824 հազար դրամ (2021 թվականին՝ 30 մլրդ 75 մլն 532 հազար դրամ):

2022 թվականի ընթացքում քրեական գործերի հարուցումների թվաքանակի զգալի նվազումը պայմանավորված է ՀՀ նոր քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելու և դատախազի կողմից քրեական գործ հարուցելու լիազորության դադարեցման հանգամանքով, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի 2021 թվականի դեկտեմբերի 2-ի հանձնարարականով, որի համաձայն, դատախազների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս, կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ տվյալներ, հանցագործության նյութական հետքեր և հետևանքներ հայտնաբերելիս, ստացված տվյալները, առանց քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու՝ անհապաղ փոխանցվում են Հակակոռուպցիոն կոմիտե՝ հետագա ընթացքը քրեադատավարական կարգով լուծելու համար: Պետական շահերի պաշտպանության ոլորտում հայտնաբերված խախտումների զգալի մասն առնչվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ տվյալներին, և դատախազները գործել են ՀՀ գլխավոր դատախազի վերոհիշյալ հանձնարարականի համաձայն:

2022 թվականի ընթացքում պետական կառավարման տարբեր ոլորտներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով մի շարք դեպքերում արձանագրվել են պետական շահերի խախտումների հետևանքով պետությանը և համայնքներին պատճառված առանձնապես խոշոր չափերի գույքային վնասներ:

Մասնավորապես՝

- Քննչական կոմիտե՝ Հյուսիսային պողոտայի և կասկադի կառուցապատման ծրագրերի իրականացման գոտում՝ ք. Երևան, Պուշկին փ. 14, Պուշկին փ. 15, Պուշկին փ. 11, Պուշկին փ. 28, Պուշկին փ. 23, Պուշկին փ. 34, Պուշկին փ. 19, Արամի փ. 38, Արամի փ. 36, Արամի փ. 34, Աբովյան փ. 1/4 , Թումանյան փ. 21/4, Թումանյան փ. 23/1, Տերյան փ. 35, Տերյան փ. 31, Տերյան փ. 29, Տերյան փ. 27, Տերյան փ. 23,25, Հին Երևանցու փ. 37 հասցեներում գտնվող պատմամշակութային հուշարձանների վնասման, քանդման վերաբերյալ 14.07.2022 թվականին ներկայացված հանցանքի մասին հաղորդման հիման վրա՝ ՀՀ քննչական կոմիտեում 26.07.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 446-րդ հոդվածի 1-ին մասով, 301-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

- **Տնտեսվարող սուբյեկտը 2004 թվականին համայնքից 125 մլն 963 հազար դրամով ձեռք է բերել պետական բաժնեմասով ընկերությանը պատկանած գույք՝ մարզահամալիր:** 2006 թվականին նշված գույքը գրավադրվել է բանկում 3 մլն 500 հազար ԱՄՆ դոլարի դիմաց, իսկ 2014 թվականին, Կառավարության որոշման հիման վրա, **պետական բյուջեի նկատմամբ ունեցած 9 մլրդ 45 մլն դրամ հարկային պարտավորությունների դիմաց հանձնել է պետությանը:** Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ վերոնշյալ գործողությունների արդյունքում պետությանը պատճառվել է շուրջ 6 մլրդ 628 մլն դրամի վնաս: Նկատի ունենալով, որ առերևույթ փաստվել են այնպիսի դեպքեր կամ գործողություններ կամ անգործություն, որոնց ողջամտորեն կարող է տրվել պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու կամ ծառայողական պարտականությունները չկատարելու, ծանր հետևանքներ առաջացնելու,

պաշտոնական կեղծիք կատարելու, փաստաթղթեր կեղծելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու արարքներին համապատասխանելու նախնական իրավական գնահատական՝ 08.11.2022 թվականին հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե՝ քրեական վարույթ նախաձեռնելու համար: **11.11.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ** ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 445-րդ հոդվածի 1-ին մասով, 447-րդ հոդվածի 1-ին մասով և 457-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

▪ Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ Կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի N 1880-Ա որոշմամբ, **պետական բաժնեմասով ԲԲ ընկերությանը թույլատրվել է Երևանի Շենգավիթ թաղային համայնքի բյուջեի նկատմամբ ունեցած պարտքի դիմաց ընկերության հաշվեկշռում հաշվառված մանկապարտեզը թաղային համայնքին որպես սեփականություն հանձնելու մասին**: Նշված որոշման հիմքում դրված, ՍՊ ընկերության կողմից կազմված գնահատման հաշվետվության տվյալներով՝ մանկապարտեզի շուկայական արժեքը գնահատվել է 17 մլն դրամ: **ԲԲ ընկերության և Շենգավիթի թաղապետարանի միջև 2003 թվականի սեպտեմբերի 2-ին կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով հիշյալ մանկապարտեզը ընկերության կողմից 29 մլն 24 հազար 800 դրամ արժեքով վաճառվել է թաղապետարանին**: Երևանի Շենգավիթ համայնքի ավագանու 16.04.2003 թվականի որոշմամբ՝ դեռևս նշված գույքի՝ մանկապարտեզի պետական գրանցումը համայնքի անվամբ կատարված չլինելու պայմաններում, ավագանու կողմից համաձայնություն է տրվել դասական աճուրդի եղանակով օտարելու վերոհիշյալ մանկապարտեզը:
Երևանի Շենգավիթի թաղապետի 25.11.2003 թվականի որոշման համաձայն՝ **մանկապարտեզը 30 մլն 512 հազար 827 դրամ գումարով օտարվել է թաղապետարանում կայացված աճուրդում հաղթող ճանաչված ֆիզիկական անձին**: Մինչդեռ, Կադաստրի կոմիտեի տվյալների համաձայն՝ Երևանի Շենգավիթ համայնքում գտնվող վերոնշյալ **մանկապարտեզի՝ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 274 մլն 484 հազար 220 դրամ**: Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում իրականացված ուսումնասիրության արդյունքներով առերևույթ փաստվել են այնպիսի դեպքեր կամ գործողություններ կամ անգործություն, որոնց ողջամտորեն կարող է տրվել պաշտոնատար անձանց կողմից պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելու կամ ծառայողական պարտականությունները չկատարելու, ծանր հետևանքներ առաջացնելու արարքներին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, 10.11.2022 թվականին հանցանքի մասին հաղորդում է ներկայացվել Հակակոռուպցիոն կոմիտե՝ քրեական վարույթ նախաձեռնելու համար: **17.11.2022 թվականին նախաձեռնվել է քրեական վարույթ՝** ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 457-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

▪ Երևանի քաղաքապետի 26.04.2006 թվականի թիվ 622-Ա որոշմամբ և 08.04.2008 թվականի թիվ 1619-Ա որոշմամբ՝ **«Գոլդեն Փելիս» հյուրանոց և «Գոլդեն Փելիս» ՍՊ ընկերություններին ուղղակի վաճառքի ձևով օտարվել է համապատասխանաբար՝ 17077.6 և 10000 քմ մակերեսով հողամաս, այն դեպքում, երբ նշված հողամասերը որպես «Հաղթանակ զբոսայգու» մաս ընդգրկված էին ՀՀ հողային օրենսգրքով սահմանված օտարման ոչ ենթակա հողամասերի ցանկում**, ուստի ենթակա չէին օտարման: ՀՀ գլխավոր դատախազության կողմից 25.04.2022 թվականին **2 հայց է հարուցվել դատարան**:

▪ Քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գործերի քննության վարչությունում քննվող թիվ 58221721 քրեական գործի շրջանակներում ստացված տեղեկատվության հիման վրա պարզվել է, որ **Արարատի մարզի Սուրենավան համայնքի ղեկավարը 2018-2019 թվականներին համայնքի վարչական սահմաններում գտնվող և պետական սեփականություն հանդիսացող 14 հողամասերը օտարել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ**: Արդյունքում համայնքի ղեկավարի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջով 29.08.2022 թվականին **հայց է հարուցվել Վարչական դատարան**:

▪ Թիվ 62231722 քրեական գործով տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ **Երևան քաղաքի տարբեր հատվածներում՝ Գ.Հովսեփյան, Լուկաշին փողոցներին, Ծիծեռնակաբերդի խճուղուն հարող տարածքներում և Աջափնյակ Գ-1 թաղամասում գտնվող 11 հողամասերի նկատմամբ գրանցվել են տարբեր անձանց սեփականության իրավունքներ, այն դեպքում, երբ իրավասու պետական մարմինը՝ Երևանի քաղաքապետը, նշված հողամասերը օտարելու վերաբերյալ որոշումներ չի կայացրել**, ինչը նշանակում է, որ Երևանի քաղաքապետի և նշված անձանց միջև օտարման իրավահարաբերություն չի ծագել, նշված հողամասերը որևէ մեկի չեն օտարվել: **Գլխավոր դատախազությունը 11.10.2022 թվականին հողամասերի վերաբերյալ 2 հայց է հարուցել ՀՀ վարչական դատարան՝** Երևանի քաղաքապետի որոշումներից ծագող իրավահարաբերությունների բացակայությունը ճանաչելու, և որպես հետևանք առուծախի պայմանագրերը, ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված իրավունքի պետական գրանցումները և սեղանամատյանի գրառումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին: Հարուցված հայցերից 1-ը՝ 4 հողամասերի վերաբերյալ, վերադարձվել է յուրաքանչյուր հողամասի մասով առանձին հայցեր ներկայացնելու հիմնավորմամբ (նշված որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազության կողմից բերված բողոքը մերժվել է, որի արդյունքում հարուցվել են 4 առանձին հայցեր):

▪ «$ 5655 սեփականաշնորհում «ջրի գնով»» վերտառությամբ հրապարակման առնչությամբ նախաձեռնված ուսումնասիրության արդյունքում 18.10.2022 թվականին **հայց է հարուցվել ՀՀ վարչական դատարան՝ Երքաղխորհրդի գործկոմի և «Աստղիկ-1» կոպերատիվի միջև Երևան քաղաքի Արամի փող. 3 և 5 հասցեների անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու և որպես հետևանք իրավունքի պետական գրանցումները և սեղանամատյանի գրառումներն անվավեր ճանաչելու պահանջներով**:

ՀՀ վարչական դատարանի 28.10.2022 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ բավարարվել է հայցի ապահովում կիրառելու մասին հայցվոր Գլխավոր դատախազության միջնորդությունը՝ ՀՀ կադաստրի կոմիտեին վիճելի հասցեների անշարժ գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելու վերաբերյալ: ԴԱՀԿ ծառայության Երևան քաղաքի Կենտրոն, Նորք-Մարաշ, Էրեբունի-Նուբարաշեն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարողը 28.10.2022 թվականին որոշում է կայացրել, որով **արգելվել է ՀՀ կադաստրի կոմիտեին Երևան քաղաքի Արամի 3 և 5 հասցեների անշարժ գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցում կատարելը:** Ուսումնասիրության արդյունքում տվյալներ են ձեռք բերվել, որ Արամի փողոց թիվ 3 և 5 շենքերը թեև գրանցվել են որպես «Աստղիկ-1» կոպերատիվի սեփականություն, սակայն դրանք Երքաղխորհրդի գործկոմի 1995թ. դեկտեմբերի 15-ի թիվ 47/34 որոշմամբ «Աստղիկ-1» կոպերատիվին սեփականության իրավունքով չեն տրամադրվել, ինչի արդյունքում 21.04.2022թ. ուսումնասիրության արդյունքները ուղարկվել են ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն՝ քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը ստուգելու, անհրաժեշտության դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ և 181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու և ընթացքը լուծելու հարցերը քննարկելու համար: **16.05.2022 թվականին հարուցվել է քրեական գործ՝** ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասով:

- Ազգային ժողովի պատգամավորի կողմից ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված գրության կապակցությամբ նախաձեռնված ուսումնասիրության արդյունքում 18.11.2022 թվականին **հայց է հարուցվել ՀՀ վարչական դատարան՝ Հայաստանի Հանրապետության և Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության միջև Երևան քաղաքի Աբովյան փողոց 3 հասցեի անշարժ գույքի օտարման իրավահարաբերության բացակայությունը ճանաչելու, և որպես հետևանք, ՀՀ կադաստրի կոմիտեում Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի և համագործակցության հայկական ընկերության 2001 թվականի հուլիսի 3-ին և «ԱՕԿՍ» ՍՊ ընկերության անվամբ 2011 թվականի նոյեմբերի 25-ին կատարված իրավունքի պետական գրանցումները և սեղանամատյանի գրառումներն անվավեր ճանաչելու պահանջներ մասին: Հայցադիմումը ՀՀ վարչական դատարան մուտքագրվել է 22.11.2022 թվականին:** Նույն ուսումնասիրության արդյունքում տվյալներ են ձեռք բերվել, որ պետության սեփականությունը հանդիսացող պատմամշակութային հուշարձանի՝ Երևան քաղաքի Աբովյան փողոց 3 հասցեում գտնվող 1056,19քմ տարածքով շենքի նկատմամբ, առանց որևէ իրավական հիմքի, գրանցվել է որպես սեփականություն Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության անվամբ, ինչի արդյունքում 07.11.2019 թվականին ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը ստուգելու, անհրաժեշտության դեպքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ և 181-րդ հոդվածների կարգով նյութեր նախապատրաստելու և ընթացքը լուծելու հարցերը քննարկելու համար:

2020 թվականի փետրվարի 26-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 314-րդ հոդվածով, 264-րդ հոդվածի 1-ին մասով: 14.12.2021 թվականին մաս է անջատվել ՀՀ քրեական օրենսգրքի 193-րդ 1-ին կետով. 20.12.2021 թվականին քրեական գործն ուղարկվել է դատարան:

- Թիվ 58223720 քրեական գործի շրջանակներում պարզվել է, որ **Երևանի քաղաքապետի 12.06.2003 թվականին թիվ 1284-Ա որոշմամբ, Փափազյան փողոցի վերջնամասում գտնվող «Արաբկիր» զբոսայգու 2,97 հա մակերեսով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացվել է 1500 քմ մակերեսով հողամաս և օտարվել, որի արդյունքում զբոսայգու տարածքը նույնքան չափով նվազել է:** Նկատի ունենալով, որ նշված գործընթացը կատարվել է նման իրավասություն չունեցող անձի կողմից՝ **Գլխավոր դատախազությունը 22.12.2022 թվականին հայց է հարուցել Վարչական դատարան**՝ Երևանի քաղաքապետի որոշումն առոչինչ ճանաչելու պահանջով:

- Թիվ 62212020 քրեական գործի նյութերով ձեռք բերված ապացույցների հիման վրա՝ 13.04.2022 և 01.11.2022 թվականներին հարուցվել է 2 հայց՝ ոչ օրինաչափ վարքագծի հետևանքով պետությանը պատճառված վնասը բռնագանձելու պահանջով, որից **Սամվել Մայրապետյանից պահանջվել է բռնագանձել 17 մլրդ 375 մլն 758 հազար 242 դրամ, իսկ Սամվել Մայրապետյանից և Գագիկ Հակոբջանյանից համապարտության՝ կարգով՝ 5 մլրդ 678 մլն 764 հազար 260 դրամ:**

Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու գործառույթի շրջանակներում, պետական շահերի պաշտպանության վարչությունում շարունակվել են պետական գերատեսչություններից ստացված՝ այդ թվում իրենց ներքին վերահսկողական գործիքակազմով իրականացվող ստուգումների արդյունքների համակողմանի ուսումնասիրությունները և, բավարար հիմքերի դեպքում, դրանց հիման վրա քրեական վարույթների նախաձեռնման գործընթացները:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում **Պետական գույքի կառավարման կոմիտեից ստացված տեղեկության և կից ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում 14 դեպքով կատարված ուսումնասիրությունների արդյունքներով (այդ թվում՝ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման գործընթացի կապակցությամբ) արձանագրված շուրջ 1 մլրդ 176 մլն 983 հազար դրամի գույքային վնասի վերաբերյալ՝ 1 դեպքում հարուցվել է քրեական գործ, 3 դեպքի ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են Հակակոռուպցիոն կոմիտե, 1 դեպքով ուսումնասիրության արդյունքներն ուղարկվել են Դատախազության տարածքային ստորաբաժանում՝ արդեն իսկ հարուցված քրեական գործին կցելու, 9 դեպքով հանցանքի մասին հաղորդումներ են ներկայացվել քննչական մարմիններին:** Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում համապատասխան միջոցներ են ձեռնարկվել նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պետության ոչ գույքային շահերի պաշտպանության լիազորության շրջանակներում:

5

ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ընթացքում ՀՀ Զինված ուժերի և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է 4570 դեպք՝ նախորդ տարվա 6195-ի դիմաց: Նվազում է արձանագրվել 1625 դեպքով կամ 26.2%-ով: Արձանագրված դեպքերից 2874-ը կամ 63%-ը եղել են պատահարներ (2021 թվականին՝ 4060), 1696-ը կամ 37%-ը՝ հանցագործություններ (2021 թվականին՝ 2072), այդ թվում՝ 1028-ը կամ 61%-ը՝ զինվորական (2021 թվականին՝1478), 668-ը կամ 39%-ը՝ այլ ընդհանուր բնույթի (2021 թվականին՝594):

Նախորդ տարվա համեմատ պատահարները նվազել են 1183 դեպքով կամ 29.1%-ով, հանցագործությունները նվազել են 376-ով կամ 18.3%-ով: Ընդ որում, զինվորական հանցագործությունները նվազել են 450-ով կամ 30.5%-ով, իսկ այլ՝ ընդհանուր բնույթի հանցագործություններն աճել են 74-ով կամ 12.1%-ով:

Եթե 2021 թվականի ընթացքում արձանագրված 2072 հանցագործությունից 678-ը կամ 32.7%-ը են եղել ծանր և առանձնապես ծանր, որոնցից 261-ը՝ ծանր, իսկ 417-ը՝ առանձնապես ծանր, ապա 2022 թվականին արձանագրված 1696 հանցագործությունից ծանր և առանձնապես ծանր եղել են 250-ը կամ 17.8%-ը, որոնցից 161-ը՝ ծանր, 89-ը՝ առանձնապես ծանր: Նախորդ տարվա համեմատ ծանր հանցագործությունները նվազել են 100 դեպքով կամ 38.3%-ով, իսկ առանձնապես ծանր հանցագործությունները՝ 328 դեպքով կամ 78.6%-ով: Անդրադառնալով 89 առանձնապես ծանր հանցագործություններին՝ պետք է նշել, որ դրանցից 7-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 30-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 7-ը՝ սպանության, 6-ը՝ սպանության փորձի, 1-ը՝ սպանության նախապատրաստության, 25-ը՝ ռազմական դրության ժամանակ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, 5-ը՝ ռազմական դրության ժամանակ դասալքության, 3-ը՝ ռազմական դրության ժամանակ պետի կողմից իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության, իշխանության անգործության, 1-ը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու, 3-ը՝ պատերազմ վարելու արգելված եղանակների կիրառմամբ պատերազմական հանցագործության և ագրեսիայի, 1-ը՝ խոշտանգման դեպքեր են:

2021 թվականին արձանագրված 417 առանձնապես ծանր հանցագործություններից 10-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության, 1-ը՝ սպայի կողմից կատարված սպանության, 3-ը՝ համածառայակցի կողմից կատարված սպանության, 40-ը՝ հակառակորդի կողմից կատարված սպանության փորձի, 11-ը՝ ռազմական դրության ժամանակ պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու, 10-ը՝ ռազմական դրության ժամանակ ստորադասի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու, 280-ը՝ ռազմական դրության ժամանակ զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու, 34-ը՝ ռազմական դրության ժամանակ դասալքության, 16-ը՝ ռազմական դրության ժամանակ պետի կողմից իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության, իշխանության անգործության, 11-ը՝ պետության տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողությունների, 1-ը՝ զինված ընդհարման ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումների դեպքեր են:

2022 թվականի ընթացքում ծառայության հետ կապված մահացել է 32 զինծառայող (2021 թվականին՝ 42), որոնցից՝ հակառակորդի կողմից սպանություն՝ 14, ավտովթարից՝ 2, անզգուշությամբ ինքնասպանության հասցնելու՝ 1, մարտական հերթապահություն կրելու կանոնները խախտելու հետևանքով՝ 3, հիվանդությունից՝ 4, զենքի հետ վարվելու կանոնները խախտելու՝ 2, ինքնասպանություն՝ 4, ականի պայթյունի՝ 1, սպանություն՝ 1:

Հաշվետու ժամանակաշրջանում ծանրության տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ է ստացել 959 զինծառայող՝ նախորդ տարվա 1088-ի դիմաց, այսինքն՝ նվազում է արձանագրվել 129-ով կամ 11.9%-ով: Այդ թվում՝ 71 զինծառայող ստացել է ծանր մարմնական վնասվածքներ (2021 թվականին՝ 47), 679-ը՝ միջին ծանրության և թեթև մարմնական վնասվածքներ (2021 թվականին՝ 799): 959 մարմնական վնասվածքներից 380-ը կամ 39.6%-ը պատճառվել են հանցագործությունների հետևանքով (2021 թվականին՝ 292-ը կամ 26,8%-ը):

ՀՀ ԶՈՒ և այլ զորքերի զորամասերում հաշվետու ժամանակաշրջանում արձանագրված 1696 հանցագործությունները, նախորդ տարվա ընթացքում արձանագրված 2072-ի համեմատ, ըստ հանցատեսակների, ունեն հետևյալ պատկերը.

- զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 356-360-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 516-524-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 348 (2021 թվականին՝ 270), աճ՝ 78-ով կամ 22,4-ով%,
- զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 361-364-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 525-531-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 423 (2021 թվականին՝ 965), նվազում՝ 542-ով կամ 56,1-ով%,
- հատուկ ծառայությունների կրման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 365-368-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 540-544-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 26 (2021 թվականին՝ 19), աճ՝ 7-ով կամ 27%-ով,
- ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու, զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու հետ կապված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 369-374-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 532-537-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 55 (2021 թվականին՝ 59), նվազում՝ 4-ով կամ 6,8%-ով,
- զինվորական պաշտոնեական հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 375-376-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 549-550-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 143 (2021 թվականին՝ 151), նվազում՝ 8-ով կամ 5,3%-ով,
- ռազմական տեխնիկայի օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 377-378-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 538-539-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 33 (2021 թվականին՝ 14), աճ՝ 19-ով կամ 57,6%-ով:

Այլ ընդհանուր բնույթի հանցագործությունների վիճակագրությունը, ըստ հանցատեսակների, 2021 թվականի համեմատությամբ հետևյալն է.

- կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 104-130-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 155-187-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 94 (2021 թվականին՝ 87), աճ՝ 7-ով կամ 7,4%-ով,
- անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 131-137-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 188-194-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 15 (2021 թվականին՝ 9), աճ՝ 6-ով կամ 40%-ով,
- սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 138-142-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 198-202-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 7 (2021 թվականին՝ 5), աճ՝ 2-ով կամ 28,6%-ով,
- սեփականության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 175-186-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 252-266-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 156 (2021 թվականին՝ 204), նվազում՝ 48-ով կամ 23,5%-ով,
- հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 217-250-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 308-392-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 185 (2021 թվականին՝ 160), աճ՝ 25-ով կամ 13,5%-ով,
- հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 258-280-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 297-406-րդ հոդվածներ)՝ 2022 թվականին՝ 51 (2021 թվականին՝ 26), աճ՝ 25-ով կամ 49%-ով,
- այլ հանցագործություններ՝ 2022 թվականին՝ 160 (2021 թվականին՝ 103), աճ՝ 57-ով կամ 35,6%-ով:

2022 թվականի ընթացքում արձանագրված 1696 հանցագործությունից 33-ով կամ 2%-ով հնարավոր չի եղել պարզել քրեական պատասխանատվության ենթակա անձանց ով լինելը: Այլ խոսքով՝ հանցագործությունների բացահայտումը կազմել է 98% (2021 թվականին՝ 99,3%):

2022 թվականի ընթացքում արձանագրված հանցագործությունների վիճակագրական վերլուծությունն ըստ ՀՀ ԶՈՒ և այլ զորքերի հետևյալն է.

1696 հանցագործությունից 1682-ն արձանագրվել է ՀՀ ԶՈՒ, իսկ 14-ը՝ ՀՀ ԱԱԾ Սահմանապահ զորքերի, Ոստիկանության զորքերի զորամասերում (2021 թվականին՝ 2072-ից՝ 2060-ը ՀՀ ԶՈՒ, իսկ 12-ը՝ ՀՀ ԱԱԾ ՍԶ, ՈԶ-ում):

2022 թվականի ընթացքում հանցագործություններ են արձանագրվել ներքոհիշյալ զորամիավորումներում և պաշտպանական շրջաններում. 1-ին բանակային կորպուսում՝ 81 (2021 թվականին՝ 86), 2-րդ ԲԿ-ում՝ 260 (2021 թվականին՝ 190), 3-րդ ԲԿ-ում՝ 225 (2021 թվականին՝ 159), 4-րդ ԲԿ-ում՝ 76 (2021 թվականին՝ 121), 5-րդ ԲԿ-ում՝ 159 (2021 թվականին՝ 159), ՀՀ ՊՆ այլ զորամասերում՝ 403 (2021 թվականին՝ 440), ԼՂՀ ՊԲ-ում՝ 478 (2021 թվականին՝ 359), ՀՀ ՈԶ-ում՝ 1 (2021 թվականին՝ 5), ԱԱԾ ՍԶ-ում՝ 13 (2021 թվականին՝ 7):

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ հաշվետու ժամանակաշրջանում, զինվորական հանցագործությունների մեջ առավել տարածված են մնում զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված, ինչպես նաև զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործությունները:

Այսպես՝ եթե 2021 թվականի ընթացքում արձանագրվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 356-360-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 516-524-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների 270 դեպք, ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 361-364-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 525-531-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների 965 դեպք, ապա 2022 թվականին դրանց թիվը համապատասխանաբար կազմել է 348 և 423: Այսինքն՝ թեև զինվորական ծառայություն կրելու կարգի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում էական նվազում է տեղի ունեցել, մասնավորապես՝ 542 դեպքով կամ 56,1-ով%, ապա միևնույն ժամանակ աճել են զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը:

Դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնությամբ զուգորդված հանցագործությունների պատճառների ու պայմանների թվում շարունակում է էական տեղ զբաղեցնել զինծառայողների վարքագիծն ու փոխհարաբերությունները կանոնակարգող նորմերի նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքը, որն անձանց մոտ ձևավորված լինելով դեռևս նախքան զորակոչվելը, զորակոչվելուց հետո նման վարքագծի նկատմամբ անհանդուրժողական մոտեցում չցուցաբերելու պայմաններում շարունակում է ամրապնդվել ու զարգանալ: Նման վարքագծի դրսևորումներ կան նաև սպաների շրջանում, ուստի դրանք վերացնելու ուղղությամբ գործադրվող ջանքերն անհրաժեշտ է ավելացնել՝ պատասխանատու բոլոր մարմինների և հաստատությունների ակտիվ ներգրավմամբ ու համագործակցության ապահովմամբ:

Ինչ վերաբերում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 361-364-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 525-531-րդ հոդվածներով նախատեսված հանցագործություններին՝ պետք է փաստել, որ դրանց՝ 2022 թվականին գրանցված բարձր ցուցանիշի պատճառ է հանդիսացել ինչպես հետպատերազմյան իրավիճակը, այնպես էլ կատարված օրենսդրական փոփոխություններով պայմանավորված, թմրամիջոց գործածած վիճակում ծառայության ներկայանալու արարքի քրեականացումը:

Սպանության, ինքնասպանության, սպանության փորձի, պետի կամ ստորադասի նկատմամբ բռնի գործողության կամ դրա սպառնալիքի ցանկացած դեպքով քննության առարկա է դարձել նաև համապատասխան պաշտոնատար անձանց կողմից դրանք կանխելու հնարավորության և, առհասարակ, կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու հանգամանքը:

Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների պահանջով հնարավորինս վեր են հանվել նշված բնույթի հանցագործություններ ծնող պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները, ձեռնարկվել և ձեռնարկվում են դատախազական ներգործության միջոցներ (ներկայացվել են միջնորդագրեր, հաղորդումներ, դատախազները մասնակցել են դրանց քննարկումներին, ներկայացրել են գործնական առաջարկություններ դրանց կանխարգելման ուղղությամբ և այլն):

Բացի այդ, որպես հանցագործությունների կանխարգելման արդյունավետ միջոց, զինվորական դատախազության դատախազների կողմից հաճախակի՝ զորամասերում, ինչպես սպայական անձնակազմի, այնպես էլ ժամկետային զինծառայողների շրջանում, անցկացվում են զրույց-զեկուցումներ, դասախոսություններ, տրվում են պարզաբանումներ, կատարվում են օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների, հրահանգների մեկնաբանություններ և վերլուծություններ:

Հաշվետու ժամանակահատվածում հանցավորության մակարդակը սպաների շրջանում որոշակի նվազում է գրանցել:

Մասնավորապես՝ 2021 թվականի ընթացքում արձանագրվել է սպաների կողմից կատարված հանցագործությունների 274 դեպք, 2022 թվականին դրանց թիվը կազմել է 246, այսինքն՝ նվազել է 28-ով կամ 10%-ով:

Անդրադառնալով հանցագործություն կատարած զինծառայողներին՝ պետք է նշել, որ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2022 թվականին, առավել շատ հանցագործությունները կատարվել են ժամկետային զինծառայողների կողմից՝ 979 (2021 թվականին՝ 974), սպաների կողմից՝ 246 (2021 թվականին՝ 274), պայմանագրային զինծառայողների կողմից՝ 350 (2021 թվականին՝ 205) և ենթասպաների կողմից՝ 39 (2021 թվականին՝ 51): Բացի այդ, հանցագործություններ են կատարվել նաև քաղաքացիական անձանց կողմից՝ 98 (2021 թվականին՝ 174), դեռևս չպարզված անձանց կողմից՝ 49 (2021 թվականին՝ 383):

Հանցագործություններ են կատարվել նաև վարժական հավաքներով զորակոչված 451 անձի և 35 կամավորականի կողմից:

2022 թվականին արձանագրված հանցագործություն կատարած զինծառայողների թվաքանակում սպաների տեսակարար կշիռը կազմել է 15,2% (2021 թվականին՝ 13%), ենթասպաներինը՝ 2,4% (2021 թվականին՝ 2%), պայմանագրային զինծառայողներինը՝ 22% (2021 թվականին՝ 9,7%), ժամկետային զինծառայողներինը՝ 60,6% (2021 թվականին՝ 46,2%):

2022 թվականի ընթացքում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը) և ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի հատկանիշներ պարունակող հանցագործություններ են կատարվել 927 անձի կողմից (2021 թվականին՝ 979): Նվազում է արձանագրվել 52-ով կամ 5%-ով:

2022 թվականի ընթացքում ՀՀ ԶՈՒ և այլ զորքերի զորամասերում արձանագրվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների 98 դեպք (2021 թվականին՝ 213):

Բոլոր դեպքերի վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազության դատախազների դատավարական ղեկավարմամբ և դատախազական հսկողությամբ նախապատրաստվել են նյութեր կամ նախաձեռնվել են քրեական վարույթներ: Նախորդ տարվա համեմատ նվազում է արձանագրվել 115 դեպքով կամ 54%-ով:

Նախապատրաստված նյութերից 1-ով մերժվել է քրեական գործի հարուցումը ոչ արդարացնող հիմքով (2021 թվականին՝ 21-ով մերժվել է քրեական գործի հարուցումը, որից 16-ը՝ արդարացնող, 5-ը՝ ոչ արդարացնող հիմքերով): 97-ով հարուցվել են քրեական գործեր կամ նախաձեռնվել են քրեական վարույթներ (2021 թվականին՝ 192):

2022 թվականի ընթացքում վարույթում քննվել է կոռուպցիոն բնույթի 334 քրեական վարույթ (2021 թվականին՝ 356):

Հաշվետու ժամանակաշրջանում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեպքերով 53 քրեական վարույթի նախաքննությունն ավարտվել է (2021 թվականին՝ 49): Դրանցից 40-ով վարույթները կարճվել են (2021 թվականին՝ 43): Այդ թվում՝ 30-ով վարույթները կարճվել են արդարացման (2021 թվականին՝ 31), 10-ով՝ ոչ արդարացման (2021 թվականին՝ 12) հիմքերով:

13 քրեական վարույթ 30 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարաններ (2021 թվականին՝ 6 գործ, 14 անձ):

Կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են այն մասին, որ կոռուպցիոն բնույթի հանցագործությունները նվազել են 115-ով կամ 54%-ով:

Դեպքերի նվազմանը զուգահեռ՝ կոռուպցիոն հանցագործությունների թվում գերակշռում են ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածով (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը) նախատեսված հանցագործությունները (41 դեպք), որոնք հիմնականում դրսևորվել են զինծառայողների կողմից ծառայության վայրն ինքնակամ թողնելու կամ առանց հարգելի պատճառների ծառայության չներկայանալու դեպքերի վերաբերյալ զորամասերի հրամանատարական կազմի (որոշ դեպքերում՝ զորամասերի հրամանատարների) կողմից սահմանված ժամկետներում և կարգով իրավապահ մարմիններին հաղորդումներ չներկայացնելով:

2022 թվականի ընթացքում քննչական մարմինների վարույթում քննված, ավարտված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ քրեական վարույթներով (գործերով) և նախապատրաստված նյութերով հիմնավորվել են 21 մլն 680 հազար 137 դրամի նյութական վնասի պատճառման փաստեր (2021 թվականին՝ 37 մլն 978 հազար 895 դրամ), որոնցից մինչդատական վարույթում վերականգնվել է 4 մլն 866 հազար դրամը (2021 թվականին՝ 9 մլն 394 հազար 896 դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում Զինվորական դատախազության մարմինների կողմից դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացվել ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության (այսուհետ նաև՝ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ) բաժինների վարույթում քննվող 6205 քրեական գործի նկատմամբ (2021 թվականին՝ 8364):

2006 քրեական վարույթների նախաքննությունն ավարտվել է (2021 թվականին՝ 3369): Ավարտված քրեական վարույթներից 485-ը՝ 571 անձի նկատմամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարաններ:

1521 քրեական վարույթ կարճվել է (2021 թվականին՝ 3073): Դրանցից 818-ը՝ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (2021 թվականին՝ 1014), 578-ը՝ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-13-րդ կետերով, կամ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով (2021 թվականին՝ 1809) և 125-ը՝ ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով (2021 թվականին՝ 250):

2022 թվականին՝ ընթացքում քրեական վարույթները կարճելու 59 (2021 թվականին՝ 26) որոշում է վերացվել, որոնցից 48-ը՝ հսկողություն իրականացնող դատախազների, իսկ 11-ը՝ վերադաս դատախազների կողմից: Կարճումը վերացված վարույթներից 2–ը ուղարկվել է դատարան:

2022 թվականի ընթացքում վերացվել է քրեական հետապնդում չիրականացնելու 10 (2021 թվականին՝ 1) և քրեական հետապնդումը դադարեցնելու 3 որոշում:

2022 թվականի ընթացքում ՀՀ ՔԿ ՁՔԳՎ քննչական մարմինների վարույթում քննվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով (ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդված) հարուցված 1117 քրեական վարույթ (2021 թվականին՝ 3179):

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով (ՀՀ քրեական օրենսգրքի 461-րդ հոդված) քննվող քրեական վարույթներից 560-ի նախաքննությունն ավարտվել է (2021 թվականին՝ 1988): Դրանցից 13-ը մեղադրական եզրակացություններով ուղարկվել է դատարաններ (2021 թվականին՝ 18), 547-ով՝ վարույթները կարճվել են (2021 թվականին՝ 1970): Ընդ որում՝ 291-ով վարույթները կարճվել են արդարացնող (2021 թվականին՝ 308), 256-ը՝ ոչ արդարացնող հիմքերով (2021 թվականին՝ 1662):

2022 թվականին՝ ընթացքում հսկող դատախազները ստացել են անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին քննիչների 753 միջնորդություն, քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 678 միջնորդություն, քրեական հետապնդում չհարուցելու 425 միջնորդություն՝ ընդհանուր 1856 միջնորդություն, որոնցից 1778-ը բավարարվել է, իսկ 78-ը՝ մերժվել:

Ներկայացված 78 միջնորդությունից 1-ը մերժվել է հանրորեն վտանգավոր արարքի կատարման համար քրեական հետապնդում հարուցելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ (անձը մեղսագրվող արարքի սուբյեկտ չի հանդիսացել), 2-ը՝ թերությունները շտկելու և նոր հանրային հետապնդում հարուցելու միջնորդություն ներկայացնելու նպատակով, 9-ը՝ թերի քննություն կատարված լինելու և անձի նկատմամբ քրեական հետապնում չհարուցելու կամ դադարեցնելու համար ձեռք բերված ապացույցների բավարար չլինելու պատճառաբանությամբ, 3-ը՝ արարքներին սխալ քրեաիրավական գնահատական տալու պատճառով, 63-ը՝ անհիմն և վաղաժամ լինելու հիմքերով:

Հաշվետու ժամանակահատվածում հսկող դատախազների նախաձեռնությամբ 330 անձի նկատմամբ կայացվել է քրեական հետապնդում հարուցելու մասին, 90 անձի նկատմամբ՝ քրեական հետապնդում չհարուցելու մասին և 100 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում:

Բոլոր քրեական գործերով (վարույթներով) մեղադրյալները (հետախուզվողները) հայտնաբերվելուց, ինքնակամ ներկայանալուց և բերման ենթարկվելուց հետո, որպես մեղադրյալ հարցաքննվելիս, իրենց մեղավոր են ճանաչել մեղսագրվող արարքում և պատրաստակամություն են հայտնել առաջնահերթության կարգով զորակոչվելու ՀՀ զինված ուժեր, կամ անցել է վերջիններիս քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, բացառությամբ 1 դեպքի՝ մեղադրյալի մահվան կապակցությամբ:

2022 թվականի ընթացքում հսկող դատախազները 225 դեպքում փոխել կամ վերացրել են դատարանների կողմից կիրառված խափանման միջոցները:

Այսպես.

- 127 մեղադրյալի վերաբերյալ որոշում է կայացվել որպես խափանման միջոց ընտրված կալանավորումը փոփոխելու,
- 98 մեղադրյալի նկատմամբ՝ կալանավորումը վերացնելու մասին: Հաշվետու ժամանակաշրջանում կալանավորումը, որպես խափանման միջոց կիրառելու 677 միջնորդություն է ներկայացվել դատարաններ (2021 թվականին՝ 740): Դրանցից 605-ը բավարարվել է (2021 թվականին՝ 707), որից 601-ը՝ լրիվ, 4-ը՝ մասնակի, իսկ 53-ը՝ մերժվել է (2021 թվականին՝ 20): Մերժման որոշումներից 24-ի դեմ դատախազների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ (2021 թվականին՝ 14), որոնցից 2-ը բավարարվել է:

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից 1271 քրեական վարույթով տրվել է 1288 գրավոր հանձնարարություն և ցուցում (2021 թվականին՝ 913 քրեական վարույթով՝ 973): Դրանցից 40-ի դեմ ներկայացվել են առարկություններ (2021 թվականին՝ 37), որոնք բոլորը մերժվել են:

Հաշվետու ժամանակաշրջանում դատախազական հսկողություն իրականացնող դատախազների կողմից 75 քրեական վարույթով (գործերով) որոշումներ են կայացվել մեղադրական եզրակացություններ չհաստատելու մասին և բոլոր քրեական վարույթները հետ են վերադարձվել՝ 39-ը ՀՀ նախկին քրեական դատավարության օրենսգրքի 274-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ նախաքննության լրիվությունը, օբյեկտիվությունն ու բազմակողմանիությունը ապահովված չլինելու հիմքով, 36-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով:

Նշված 75 քրեական գործից 33-ը՝ հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննելու համար, 16-ով վարույթը կարճվել է, 26-ով քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

Հաշվետու ժամանակահատվածում հսկող դատախազները վերացրել են հետաքննության մարմնի կողմից կայացված անօրինական կամ անհիմն 4, իսկ քննիչի կողմից կայացված՝ 96 որոշում:

Նույն ժամանակահատվածում վերադաս դատախազները վերացրել են հսկող դատախազի անօրինական կամ անհիմն 23 որոշում:

2022 թվականի ընթացքում հսկող դատախազների կողմից 300 որոշում է կայացվել օրենքի կոպիտ խախտում թույլ տված քննիչին վարույթից հեռացնելու վերաբերյալ (2021 թվականին՝ 130):

2022 թվականի ընթացքում քննչական մարմինների վարույթներում քննվող (քննված) քրեական գործերով և նախապատրաստված նյութերով հիմնավորվել է հանցագործությունների հետևանքով պետությանը պատճառված 195 մլն 94 հազար 664 դրամի նյութական վնաս (2021 թվականին՝ 9.122.719.612 դրամ), որից, ընդհանուր առմամբ, վերականգնվել է 31 մլն 689 հազար 165 դրամը, այդ թվում՝ նախապատրաստված նյութերով և ավարտված քրեական վարույթներով՝ 23 մլն 106 հազար 626 դրամը (2021 թվականին՝ 26 մլն 639 հազար 366 դրամ):

Հաշվետու ժամանակաշրջանում զինծառայողների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների վերաբերյալ, ՀՀ զինվորական դատախազության աշխատակիցների կողմից, մեղադրական եզրակացությամբ ընդհանուր իրավասության դատարաններ է ուղարկվել 485 քրեական գործ՝ 571 անձի վերաբերյալ (2021 թվականին՝ 293 գործ, 358 անձ):

Նախորդ տարվանից փոխանցված քրեական գործերի հետ մեկտեղ, ընդհանուր առմամբ, 320 քրեական գործ 407 անձի վերաբերյալ քննվել, ավարտվել է դատարանում /2021 թվականին՝ 284 գործ, 409 անձ/, որոնցից 247 քրեական գործի դատաքննությունն ավարտվել է դատավճռի կայացմամբ, դատապարտվել է 291 անձ (2021 թվականին՝ 201 գործ, 270 անձ):

Դատարանների որոշումներով 69 քրեական գործ 112 անձի վերաբերյալ կարճվել է (2021 թվականին՝ 83 գործ, 125 անձ):

4 քրեական գործով 4 անձի վերաբերյալ կայացվել է արդարացման դատավճիռ (2021 թվականին՝ 10 գործ, 13 անձ):

2022 թվականի ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացվել է 373 ուսումնասիրություն (2021 թվականին՝ 423), որոնց արդյունքում հայտնաբերվել է 236 խախտում (2021 թվականին՝ 308):

Պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով ներկայացվել է 47 միջնորդագիր (2021 թվականին՝ 26), պետությանը պատճառված վնասը կամովին վերականգնելու վերաբերյալ տրվել է 60 նախազգուշացում (2021 թվականին՝ 51):

2022 թվականի ընթացքում ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի և կայազորների զինվորական դատախազությունների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է պետությանը պատճառված 4 մլրդ 939 մլն 220 հազար 746 դրամի վնաս (2021 թվականին՝ 2 մլրդ 701 մլն 344 հազար 766 դրամ): Դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերականգնվել է 1 մլրդ 951 մլն 448 հազար 493 դրամի վնաս (2021 թվականին՝ 1 մլրդ 177 մլն 473 հազար 888 դրամ):

Նախորդ տարում կատարված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված վնասներից 2022 թվականի ընթացքում դատախազական ներգործության միջոցների կիրառմամբ վերականգնվել է 560 մլն 94 հազար 96 դրամ (2021 թվականին՝ 473 հազար 663 դրամ):

Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրված չվերականգնված 2 մլրդ 987 մլն 772 հազար 253 դրամ վնասի դեպքերով նախաձեռնվել են քրեական վարույթներ, որոնք նախաքննության փուլում են:

2022 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության հարցադրումներով իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով նախապատրաստվել է 88 նյութ (2021 թվականին՝ 168), նախաձեռնվել է (հարուցվել է) 72 քրեական վարույթ (գործ) (2021 թվականին՝ 164):

Հաշվետու ժամանակահատվածում կատարված ուսումնասիրությունների, ուղարկված միջնորդագրերի, նախապատրաստված նյութերի և նախաձեռնված քրեական վարույթների ընդհանուր թվային ցուցանիշների նվազումը 2021 թվականի համեմատ պայմանավորված է 2020 թվականի պատերազմական գործողություններով:

Մասնավորապես՝ 2021 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության բնագավառում կայազորների զինվորական դատախազությունների իրականացրած ուսումնասիրությունների, ներկայացրած միջնորդագրերի, նախապատրաստած նյութերի և հարուցված քրեական գործերի գերակշռող մասը վերաբերում են ռազմական գործողությունների հետևանքով պետությանը գույքային վնասների պատճառման դեպքերին:

2022 թվականի ընթացքում պետական շահերի պաշտպանության ոլորտում քրեական դատավարության կարգով հարուցվել է 4 հայց (2021 թվականին՝ 3), որոնցով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 68 մլն 460 հազար 756 դրամ (2021 թվականին՝ 2 մլն 6 հազար 387 դրամ):

2022 թվականին ներկայացված հայցադիմումներից 2-ը՝ համապատասխանաբար՝ 42 մլն 921 հազար 645 դրամ և 14 մլն դրամ բռնագանձման պահանջներով, դատաքննության փուլում են, 188 հազար 111 ՀՀ դրամ բռնագանձման պահանջով հայցն ամբողջությամբ բավարարվել է, հանցագործությամբ պետությանը պատճառված 188 հազար 111 դրամի վնասն ամբողջությամբ վերականգնվել է, իսկ 11 մլն 351 հազար դրամի բռնագանձման հայցի դեպքում քրեական գործը կարճվել է, հայցը թողնվել է առանց քննության:



6

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում նախապատրաստվել է 33.989 նյութ, որոնցից 17.609-ով կամ 51.8%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, այդ թվում՝ 13.378-ը կամ 76%-ը՝ արդարացման, 4231-ը կամ 24%-ը՝ ոչ արդարացման հիմքերով:

2022 թվականի ընթացքում նախապատրաստված 33.989 նյութից 16.380-ով կամ 48.2%-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 161-ը կամ 1.0%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 161 քրեական գործից 13-ը հարուցվել է ՀՀ գլխավոր դատախազի, մյուսները՝ հսկող դատախազների կամ նրանց անմիջական վերադասների կողմից:

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ 29.831 հաղորդման արձանագրման մասին օրենսդրության պահանջների կատարումը:

Վերը նշված հսկողական լիազորության իրականացման, այնպես էլ բողոքների քննարկման արդյունքում հայտնաբերվել են մի շարք դեպքեր, երբ ներկայացված պատշաճ հաղորդումների ընթացքը չի լուծվել քրեադատավարական կարգով: Նշված դեպքերով դատախազների կողմից Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քաղաքացիների կողմից ներկայացված հաղորդումներն ուղարկվել են նախաքննական մարմիններ՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու հանձնարարությամբ:

Ենթադրյալ հանցավոր դեպքերի վերաբերյալ 29.831 հաղորդումից 4327-ով քննիչների կողմից վարույթ չի նախաձեռնվել, որոնցից 3763-ի օրինականությունը հաստատվել է հսկող դատախազների կողմից, իսկ 564-ով հանձնարարվել է նախաձեռնել քրեական վարույթ և սկսել նախաքննություն:

Քրեական վարույթ չնախաձեռնելու դեմ բերվել է 61 բողոք, որոնցից 5-ը վերադաս դատախազների կողմից բավարարվել է, 56-ը՝ մերժվել:

2022 թվականի ընթացքում հանրապետության նախաքննության մարմինների կողմից քննվել է 69.091 քրեական գործ (վարույթ) (2021 թվականին՝ 44.751): Նախորդ տարվա համեմատությամբ՝ քննված քրեական գործերի թիվը աճել է 24.340-ով կամ 54.4%-ով:

Քննված քրեական վարույթների (գործերի) թվի աճը առավելապես պայմանավորված է արձանագրված հանցագործության դեպքերի աճով, ինչպես նաև 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կիրարկմամբ: 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ քրեական գործ հարուցելու (նյութերի նախապատրաստման) փուլում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն ուներ 10 օրվա ընթացքում ստուգելու քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը ու հիմքերի բավարար լինելը և նոր միայն լուծելու քրեական գործ հարուցելու հարցը: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով հաղորդումների քննարկման և լուծման տասնօրյա ժամկետ այլևս գոյություն չունի, իսկ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծվում է միայն պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է, որ պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում, քննիչի կողմից քրեական վարույթ նախաձեռնելու հարցը պետք է լուծվի անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մաս): 2022 թվականի ընթացքում ՀՀ նախաքննության մարմինների քննիչների տարեկան ծանրաբեռնվածությունը կազմել է 92.6 քրեական գործ (քրեական վարույթ)՝ նախորդ տարվա 76.1 քրեական գործի (քրեական վարույթ) դիմաց, իսկ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների տարեկան զբաղվածությունը կազմել է 170.6 քրեական գործ՝ նախորդ տարվա 122.9 քրեական գործի դիմաց:

2022 թվականին քննված 69.091 քրեական գործից (քրեական վարույթից) 10.842-ը փոխանցվել է նախորդ տարվանից (2021 թվականին՝ 8237), որը 2605-ով կամ 31.6%-ով ավելի է, քան 2021 թվականին, իսկ 58.249-ը վարույթ է ընդունվել 2022 թվականի ընթացքում (2021 թվականին՝ 36.374), որը 21.875-ով կամ 60.1%-ով ավելի է, քան 2021 թվականին:

2022 թվականին վարույթ ընդունված 58.249 քրեական գործից (վարույթից) 43.643-ը հարուցվել է (նախաձեռնվել է) հաշվետու ժամանակաշրջանում (2021 թվականին՝ 25.672), այդ թվում՝ 32.136-ը հարուցվել է (նախաձեռնվել է) նախաքննության մարմինների (2021 թվականին՝ 7092), 11.132-ը՝ հետաքննության մարմինների (2021 թվականին՝ 17.571), իսկ 375-ը՝ դատախազների կողմից (2021 թվականին՝ 1009):

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական հետապնդում է հարուցվել 2714 անձի նկատմամբ: Մերժվել է քրեական հետապնդում հարուցելու մասին քննիչների կողմից ներկայացված 150 միջնորդություն:

Քննիչների կողմից ներկայացվել է քրեական հետապնդում չհարուցելու կամ դադարեցնելու մասին 4625 միջնորդություն, որոնցից 4270-ը բավարարվել է, իսկ 355-ը՝ մերժվել:

2022 թվականին ավարտվել է 19.139 քրեական գործի վարույթ (2021 թվականին՝ 14.480), այդ թվում՝ 4472-ը՝ 5413 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան (2021 թվականին՝ 4732-ը՝ 5912 անձի վերաբերյալ), 23-ը՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ ուղարկվել է դատարան (2021 թվականին՝ 54), 14.644-ը կարճվել է (2021 թվականին՝ 9694), որոնցից 9956-ը՝ արդարացման (2021 թվականին՝ 4945), 4688-ը՝ ոչ արդարացման հիմքերով (2021 թվականին՝ 4749):

Հաշվետու ժամանակաշրջանում 5778 քրեական գործով վարույթները կասեցվել են (2021 թվականին՝ 12.683), որոնցից 4762-ը՝ քրեական գործով որպես մեղադրյալ ներգրավվելու ենթակա անձի անհայտ լինելու (2021 թվականին՝ 10.679), 992-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու (2021 թվականին՝ 1923), իսկ 24-ը՝ այլ հիմքերով (2021 թվականին՝ 81):

2022 թվականին 5460 քրեական գործ (վարույթ) միացվել է (2021 թվականին՝ 6180), քրեական գործ հարուցելու մասին 16 որոշում վերացվել է դատախազի կողմից (2021 թվականին՝ 10):

2022 թվականի վերջին անավարտ է մնացել 28.390 քրեական գործ (վարույթ) (2021 թվականի վերջին՝ 7078), ինչը 21.312-ով կամ 301.1%-ով ավել է, քան 2021 թվականին:

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից ստուգվել է (վերստուգվել է) վարույթը կարճելու մասին 23.158 որոշման օրինականություն: 2022 թվականին վերացվել է՝

- քրեական գործով վարույթը կարճելու մասին 584 որոշում կամ ստուգված որոշումների 2.5%-ը, որոնցից 94-ը կամ 16.1%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդում չիրականացնելու մասին 98 որոշում, որոնցից 4-ը կամ 4.1%-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 43 որոշում, որոնցից 5-ը կամ 11.6% -ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

2021 թվականին ստուգվել է (վերստուգվել է) վարույթը կարճելու մասին 17.668 որոշման օրինականությունը: 2021 թվականին վերացվել է՝

- քրեական գործով վարույթը կարճելու մասին 544 որոշում կամ ստուգված որոշումների 3.1%-ը, որոնցից 121-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդում չիրականացնելու մասին 76 որոշում, որոնցից 4-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից,
- քրեական հետապնդումը դադարեցնելու մասին 43 որոշում, որոնցից 2-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումների դեմ բերվել է 237 բողոք (2021 թվականին՝ 285), որոնցից բավարարվել է 10-ը (2021 թվականին՝ 34) կամ 4.2%-ը (2021 թվականին՝ 11.9%):

Նույն ժամանակահատվածում քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ բերվել է 42 բողոք (2021 թվականին՝ 55): Նշված բողոքներից բավարարվել է 1-ը (2021 թվականին՝ 3):

Քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ նույն ժամանակահատվածում բերվել է 27 բողոք (2021 թվականին՝ 25), որոնցից 5-ը բավարարվել է (2021 թվականին՝ 1):

Փաստենք, որ քրեական գործով վարույթը կարճելու, քրեական հետապնդում չիրականացնելու, ինչպես նաև քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումների դեմ բերված բողոքների թիվը 2022 թվականին նվազել է 59-ով կամ 16.2%-ով՝ կազմելով 306 բողոք՝ նախորդ տարվա 365-ի դիմաց: Բերված բողոքներից բավարարվել է 16-ը կամ 5.2%-ը (2021 թվականին՝ 38-ը կամ 10.4-ը):

2022 թվականին ստուգվել է վարույթը կարճելու մասին 5490 որոշում ավելի, քան 2021 թվականին, իսկ վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ կայացված որոշումների թիվը ավելացել է 40-ով կամ 7.3%-ով:

2022 թվականին ստուգվել է (վերստուգվել է) վարույթը կասեցնելու մասին 8178 որոշման օրինականությունը, ինչը 13.804-ով կամ 62.8%-ով պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից (2021 թվականին՝ 21.982):

Հաշվետու ժամանակահատվածում վարույթը կասեցնելու մասին որոշումների դեմ բերվել է 36 բողոք, որոնցից 5-ը բավարարվել է: Նախորդ տարի բերվել է նման 293 բողոք, որոնցից բավարարվել է 9-ը: Նախորդ տարվա համեմատ՝ բողոքների թիվը պակասել է 257-ով կամ 87.7%-ով:

2022 թվականին վարույթը կասեցնելու մասին ստուգված 8178 որոշումից 448-ը կամ 5.5%-ը վերացվել է (2021 թվականին՝ 21.982-ից վերացվել է 620-ը կամ 2.8%-ը):

2022 թվականի ընթացքում դատարանում քննված և ավարտված 264 քրեական գործով պետությանը, համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 1 մլրդ 373 մլն 377 հազար 804 դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 469 մլն 543 հազար 950 դրամը: Այդ թվում՝ պետությանը պատճառվել է 894 մլն 580 հազար 386 դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 314 մլն 383 հազար 544 դրամը, համայնքներին՝ 28 մլն 241 հազար 526 դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 18 մլն 29 հազար 900 դրամը, իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ 450 մլն 555 հազար 892 դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 137 մլն 130 հազար 506 դրամը:

2022 թվականի ընթացքում ոչ արդարացման հիմքով կարճված քրեական գործերով և նույն հիմքով մերժված նյութերով պետությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 853 մլն 598 հազար 159 դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 655 մլն 97 հազար 214 դրամը:

Նյութերի նախապատրաստման և նախաքննության ընթացքում պետությանը, համայնքներին, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 8 մլրդ 193 մլն 747 հազար 113 դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 3 մլրդ 270 մլն 260 հազար 288 դրամը:

Այդ թվում՝ պետությանը պատճառվել է 5 մլրդ 530 մլն 390 հազար 754 դրամի վնաս, որից վերականգնվել է 2 մլրդ 289 մլն 987 հազար 204 դրամը, համայնքներին պատճառվել է 878 մլն 85 հազար 400 դրամի գույքային վնաս, որից վերականգնվել է 809 մլն 938 հազար 807 դրամը, իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառվել է 1 մլրդ 785 մլն 270 հազար 959 դրամի վնաս, որից վերականգնվել է 170 մլն 334 հազար 277 դրամը:

ՀՀ նախաքննական մարմինների վարույթում 2022 թվականի ընթացքում քննված քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը պատճառված 29 մլրդ 471 մլն 143 հազար 103 դրամի վնաս:

ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված քրեական վարույթներով **2022 թվականի ընթացքում արգելանք է դրվել 11 մլրդ 874 մլն 387 հազար 992 դրամ արժողությամբ գույքի, ինչպես նաև արժեքը չորոշված 293 անշարժ և 15 շարժական գույքի, 8 բանկային հաշվի վրա:**

2022 թվականի ընթացքում քննված քրեական գործերով դատարան է ներկայացվել 6642 խուզարկության միջնորդություն (2021 թվականին՝ 5222), որոնցից բավարարվել է 6001-ը կամ 90.3%-ը (2021 թվականին՝ 4891-ը կամ 93.7%-ը), մերժվել է 641-ը կամ 9.7%-ը (2021 թվականին՝ 331-ը կամ 6.3%-ը):

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական գործերով (վարույթներով) տրվել է 5196 ցուցում (հանձնարարական)՝ նախորդ տարվա 5200 ցուցումի դիմաց. ցուցումների (հանձնարարականների) թիվը նվազել է 4-ով կամ 0.08%-ով:

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի (ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 200-րդ հոդվածի) կարգով ներկայացվել է 843 միջնորդագիր՝ նախորդ տարվա 972 միջնորդագրի դիմաց. միջնորդագրերի թիվը նվազել է 129-ով կամ 13.3%-ով:

Դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի քննարկման արդյունքում հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ ձեռնարկվել են միջոցառումներ:

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից լրացուցիչ քննության է վերադարձվել 248 քրեական գործ (վարույթ)՝ նախորդ տարվա 154-ի դիմաց, այսինքն՝ լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործերի (վարույթների) թիվն աճել է 94-ով կամ 61%-ով:

2022 թվականի ընթացքում հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձանց կողմից թույլ տրված իրավախախտումների փաստերով ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 863 միջնորդություն, որոնց քննարկման արդյունքում 90 անձ ենթարկվել է կարգապահական տույժի, 2 անձ՝ քրեական պատասխանատվության (2021 թվականին՝ 497 միջնորդություն, որոնց արդյունքում կարգապահական տույժի է ենթարկվել 94 անձ, 12 անձ՝ քրեական պատասխանատվության):

2022 թվականի ընթացքում դատախազների կողմից քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացվել է հետաքննություն և նախաքննություն իրականացնող 387 անձ՝ նախորդ տարվա 692-ի դիմաց. վարույթից հեռացված անձանց թիվը նվազել է 305-ով կամ 44.1%-ով:

2022 թվականի ընթացքում ձերբակալվել է 2693 անձ՝ նախորդ տարվա 1008-ի դիմաց. ձերբակալված անձանց թիվն ավելացել է 1685-ով կամ 167.2%-ով: Ձերբակալումից ազատվել է 1743 անձ՝ նախորդ տարվա 431-ի դիմաց:

2022 թվականին ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 1599 միջնորդություն, որոնցից բավարարվել է 1207-ը կամ 75.5%-ը, մերժվել՝ 392-ը կամ 24.5%-ը:

(2021 թվականին՝ 1277 միջնորդություն, որոնցից բավարարվել է 986-ը կամ 77.2%-ը, մերժվել՝ 291-ը կամ 22.8%-ը): 2021 թվականի համեմատ՝ **2022 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությունների քանակը աճել է 146-ով կամ 11.4%-ով:**

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունների **աճը հիմնականում պայմանավորված է օբյեկտիվ հանգամանքներով**: Մասնավորապես՝ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների թվի ավելացմամբ և, դրանով պայմանավորված, քրեական գործերով քննության պատշաճ ընթացքն ապահովելու նկատառումներով:

2022 թվականի ընթացքում հետախուզվել է 14.476 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 2151-ը կամ 14.9%-ը (2021 թվականի ընթացքում հետախուզվել է 15.581 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 3178-ը կամ 20.4%-ը): 2021 թվականի համեմատությամբ, 2022 թվականին հետախուզվողների թիվը պակասել է 1105-ով կամ 7.1%-ով: Միաժամանակ, էականորեն **նվազել են հետախուզվողների հայտնաբերման քանակական և տոկոսային ցուցանիշները:** Մասնավորապես, հայտնաբերված հետախուզվող մեղադրյալների թիվը նվազել է 1027-ով կամ 32.3%-ով:

Ընդհանուր հանցատեսակների մեջ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների գերակշիռ թիվը հաշվի առնելով՝ նույն տվյալները ներկայացվում են առանց նշված հոդվածով հետախուզվողների տվյալների: Այսպես.

- 2021 թվականին հետախուզվել է 4475 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1459-ը կամ 32.6%-ը:
- 2022 թվականին հետախուզվել է 4616 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1729-ը կամ 37.5%-ը:
- 2021 թվականի համեմատությամբ, 2022 թվականին հետախուզվողների թիվը ավելացել է 141-ով կամ 3.1%-ով:
- 2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվել է 11.106 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1719-ը կամ 15.5%-ը:
- 2022 թվականին նշված հոդվածով հետախուզվել է 9860 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 422-ը կամ 4.3%-ը:
- 2021 թվականի համեմատությամբ՝ 2022 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով հետախուզվողների թիվը նվազել է 1246-ով, հայտնաբերման քանակական ցուցանիշը նվազել է 1297-ով, իսկ տոկոսային ցուցանիշը՝ 307.3%-ով:

Տարի	Հետախուզվել են			Հայտնաբերվել են			
	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ. Տարվա ընթացքում	ՀՀ քր. օր. 327-րդ հոդ.	ՀՀ քր. օր. այլ հոդվ.	Ընդ.	Հայտն. %-ը
2018	12191	3733	15924	1251	1159	2410	15.1
2019	11711	3639	15350	1245	1109	2354	15.3
2020	11104	3850	14954	642	1127	1769	11.8
2021	11106	4475	15581	1719	1459	3178	20.4
2022	9860	4616	14476	422	1729	2151	14.9

Գլխավոր դատախազությունում ամփոփվել են 2022 թվականի ընթացքում խոշտանգումների դեմ քրեաիրավական պայքարի արդյունքները:

2022 թվականի ընթացքում խոշտանգման հատկանիշներով **քննվել է 340 քրեական գործ (վարույթ), որոնցից 90-ը կարճվել է: Մեկ քրեական գործ ուղարկվել է դատարան:**

Խոշտանգման դեպքերով դատարան ուղարկված վարույթների համեմատ կարճված վարույթների քանակական տարբերությունն առաջին հերթին պայմանավորված է նշված դեպքերով ապացուցման ենթակա փաստական հանգամանքների պարզման որոշ բարդություններով. մի շարք դեպքերում հանցագործության մասին հաղորդում տված անձի հայտնած հանգամանքներն իրենց հաստատումը չեն ստանում այլ օբյեկտիվ ապացույցներով, օրինակ, դիմողի մոտ բացակայում են մարմնական վնասվածքները, կամ դրանց առկայության պայմաններում հնարավոր չի լինում ապացույցների բավարար համակցությամբ հաստատված համարել, որ դրանք առաջացել են բռնության հետևանքով և ոչ թե այլ հանգամանքներում, օրինակ, բերման ենթարկելիս ոստիկանների օրինական պահանջներին չենթարկվելու պատճառով ֆիզիկական ուժի գործադրման արդյունքում կամ ենթադրյալ խոշտանգմանը նախորդած իրադարձությունների ժամանակ և այլ հանգամանքներում:

Ընդ որում, գործնականում հազվադեպ է տեսաձայնագրվում ձերբակալվածի կամ մեղադրյալի հարցաքննությունը, ինչպես նաև նրա մասնակցությամբ կատարվող ապացուցողական այլ գործողությունները, այդ թվում՝ առերեսումը, ճանաչման ներկայացնելը, քննումը, փորձարարությունը, փորձաքննության համար նմուշներ ստանալը, ինչը ևս ապացուցման առումով ստեղծում է դժվարություններ:

Նշված խնդիրը հաղթահարելու համար բավարար լուծումներ են նախատեսվել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում, որի 214-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ օրենսգրքի 208-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված քննչական գործողությունները (բացառությամբ փաստաթղթի զննության, տեղեկատվության պահանջի և առարկաներ կամ փաստաթղթեր վերցնելու) պարտադիր տեսաձայնագրվում են, բացառությամբ երբ դա օբյեկտիվորեն անհնար է:

Բացի ապացուցման առումով առկա խնդիրներից, շարունակվում[4] են չլուծված մնալ խոշտանգման դեպքերի նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառության և արարքների քրեաիրավական որակման հետ կապված հարցերը:

Թեև 01.07.2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգրքի 83-րդ հոդվածի 9-րդ մասում սահմանվել է, որ անկախ հանցանքի կատարման պահից, նույն օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով) և 450-րդ հոդվածով (խոշտանգում) նախատեսված հանցանք կատարած անձանց նկատմամբ վաղեմության ժամկետներ չեն կիրառվում, սակայն ներկայում շարունակում է խնդրահարույց մնալ մինչև նոր քրեական օրենսգրքի ընդունումը կատարված խոշտանգումների կամ բռնությամբ զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու դեպքերով անձանց նկատմամբ վաղեմության ժամկետների կիրառության հարցը:

4 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 483-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 214-րդ հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնելու 2023 թվականի հուլիսի 1-ից:

Նշված խնդրի լուծման կապակցությամբ միասնական պրակտիկա ձևավորելու առումով, Գրիշա Վիրաբյանի վերաբերյալ գործով ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը վճռաբեկ դատարանը ընդունել է վարույթ և, խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով, 2021 թվականի փետրվարի 1-ին դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: ՄԻԵԴ-ի կողմից 2022 թվականի ապրիլի 26-ին տրվել է խորհրդատվական կարծիք, որի եզրափակիչ մասի 2-րդ կետում, մասնավորապես, արձանագրվել է. «Խոշտանգման արգելքի *jus cogens* նորմը գերակայում է վաղեմության ժամկետների մասին ազգային դրույթների նկատմամբ: Հետևաբար, որպես արգելքի jus cogens բնույթի բացասական ազդեցության հետևանք, վաղեմության ժամկետ նախատեսող ցանկացած օրենք ի սկզբանե հակասում է միջազգային իրավունքի նորմերին և երբեք չի կարող օրինականորեն կիրառվել:

Այդպիսով, չի առաջանում Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կիրառելիության հարց, քանի որ երբեք չի եղել վաղեմության ժամկետներ նախատեսող որևէ գործող օրենք. **վաղեմության ժամկետներ չկիրառելը, ի սկզբանե, խոշտանգումների արգելքի և դրանց առնչվող ժամկետների jus cogens նորմի համաձայն եղել է օրինական և կանխատեսելի՝ որպես ազգային օրենսդրության մաս:**

Նույնիսկ եթե ազգային իրավունքի համաձայն քրեական հետապնդումը հնարավոր չի եղել վաղեմության ժամկետը լրանալու հիմքով, դա նշանակություն չունի, քանի որ այդ օրենքը երբևէ իրավական ուժ չէր կարող ունենալ[5]:

Գործնականում հաճախ չեն տարանջատվում, հետևաբար նաև՝ պատշաճ քրեաիրավական գնահատականի չեն արժանանում խոշտանգման և բռնությամբ զուգորդված իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու դեպքերը: Այս առումով ուղղորդող նշանակություն ունի Արմեն Հովհաննիսյանի վերաբերյալ 2021 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ ԵԴ/0558/01/18 գործով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, որում Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված արարքի որակման առանձնահատկություններին, ընդգծել է, որ խոշտանգման հանցակազմի պարտադիր հատկանիշներից է օրենսդրի կողմից նախատեսված հատուկ նպատակների առկայությունը, որոնք նաև համապատասխանում են ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված նպատակներին: Դրանց շարքում ներառված է նաև այն արարքի համար պատժելու նպատակը, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ նա կասկածվում կամ մեղադրվում է:

Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով դրսևորված վատ վերաբերմունքը, որպես խոշտանգում որակելու, հետևաբար նաև ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարման փաստը հաստատված համարելու համար անհրաժեշտ է, որ ի կատարումն դրանում նշված նպատակների՝ դրսևորված վերաբերմունքի արդյունքում հասցված ուժեղ ցավը կամ հոգեկան տառապանքն իր բնույթով լինի «դաժան», ինչն էլ հաստատված համարելու չափորոշիչներ են հանդիսանում՝ գործադրված բռնության տևողությունը, դրա արդյունքում հասցված ֆիզիկական կամ հոգեկան հետևանքները, ազատությունից զրկված կամ ոստիկանությունում կամ համանման մարմնում հանցավորի վերահսկողության ներքո լինելը, իսկ որոշ դեպքերում՝ տուժողի տարիքային, առողջական վիճակի և այլ առանձնահատկությունները:

5 Հիշյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից դեռևս որոշում կայացված չէ:

Գլխավոր դատախազությունում ամփոփվել են նաև 2022 թվականի ընթացքում ընտանիքում բռնության դեպքերով քրեաիրավական պայքարի արդյունքները:

2022 թվականին ընտանիքում բռնության **դեպքերը նվազել են 143-ով կամ 29%-ով**. եթե 2021 թվականին արձանագրվել էր նման 500 դեպք, ապա 2022 թվականին դրանք կազմել են 357: 2022 թվականին արձանագրված հիշյալ 357 դեպքից 231-ը կամ 65%-ը, իսկ 2021 թվականին արձանագրված 500-ից 328-ը կամ 66%-ը կատարվել են ամուսնու կողմից կնոջ նկատմամբ:

2022 թվականին, ինչպես նախորդ տարի, արձանագրվել է ընտանիքում սպանության 4 դեպք, ընդ որում՝ 2022 թվականին արձանագրված 4 դեպքն էլ կատարվել է ամուսնու (այդ թվում՝ նախկին) կողմից կնոջ նկատմամբ:

Հաշվետու տարում ընտանիքում առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպք չի արձանագրվել, նախորդ տարի արձանագրվել էր 1 դեպք:

Ընտանիքում բռնության դեպքերի գերաշիռ մասը, որպես կանոն, ծեծի կամ բռնի այլ գործողությունների դեպքեր են: Բացառություն չի կազմել նաև 2022 թվականը. արձանագրվել է նման 249 դեպք՝նախորդ տարվա 393-ի դիմաց. այդ դեպքերը նվազել են 144-ով կամ 37%-ով:

Ընտանիքում բռնության վերաբերյալ 2022 թվականի տվյալները, այդ թվում՝ սուբյեկտային կազմը, ներկայացվում են ստորև.

Տեղեկություններ 2021-2022 թվականների ընթացքում ընտանիքում բռնության դեպքերով քննված հանցագործությունների վերաբերյալ

2003թ. ՀՀ քր. օր. հոդված ը	2003թ. ՀՀ քր.օր. հոդված ը	Քանակը		Որից											
				ԿԵՆԱԿԻՑԸ		ԱՄՈՒՍԻՆԸ /նաև՝ նախկին/ ԿՆՈՋԸ		ԿԻՆԸ ԱՄՈՒՍՆՈՒՆ		ԾՆՈՂԸ ԶԱՎԱԿԻՆ		ԶԱՎԱԿԸ ԾՆՈՂԻՆ		ԱՅԼ	
		2021	2022	2021	2022	2021	2022	2021	2022	2021	2022	2021	2022	2021	2022
104	155	4	4			1	4					3			
113	167	12	10			8	8			1	1			3	2
112	166	1				1									
117	171	53	22	1		34	17	2		2	1	9		6	5
118	195	393	249			259	186	8	3	45	12	41	25	50	25
119	196		4		1		2				1				
120	172	1	1				1			1					
121	173	3				2						1			
137	194	18	22			13	17			1	1	4	2		3
137.1		8	40			8	30		1		1		1		7
185	264	1	4				4					1			
353.1	508	6	1			2	1							4	
		500	357	1	1	328	231	10	4	50	17	59	28	63	42

Ընտանիքում բռնության դեպքերի կազմը՝ ստորև.



2022թ. ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ



2021թ. ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

Նշենք, որ **2022 թվականի ընթացքում, անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց, ընտանիքում բռնության մասնավոր մեղադրանքի 22 դեպքով դատախազի կողմից հարուցվել է քրեական գործ, երբ անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարողացել պաշտպանել իր իրավաչափ շահերը՝** համաձայն Հայաստանի Հանրապետության 1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի (2021 թվականին դատախազի կողմից հարուցվել էր նման 51 քրեական գործ): 2022 թվականին նշված ցուցանիշի նվազումը պայմանավորված է քրեադատավարական կարգավորումների փոփոխություններով, ըստ որոնց՝ քրեական վարույթ նախաձեռնել-չնախաձեռնելու հարցը լուծում է քննիչը:

2022 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում ուսումնասիրվել է 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության և զինված ուժերի կողմից սանձազերծված ագրեսիվ պատերազմի աղետալի հետևանքներին այս կամ այն չափով հանգեցնելուն վերաբերող, ինչպես նաև հետպատերազմյան շրջանում ՀՀ և ԱրՀ պաշտպանունակության դեմ պետական դավաճանության դեպքերով իրականացվող քննության ընթացիկ վիճակը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2022 թվականի ընթացքում դավաճանության դեպքերի վերաբերյալ քննվել է 17 քրեական վարույթ (գործ), որոնցից 10-ը 17 անձի վերաբերյալ, որոնք գտնվել են կալանքի տակ, ուղարկվել է դատարան: Հաշվետու ժամանակահատվածում անավարտ է մնացել 7 քրեական վարույթ, որով մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունի 34 անձ, նրանցից 5-ը գտնվում են կալանքի տակ:

Ներկայացված վիճակագրական տվյալները վկայում են, որ հաշվետու ժամանակահատվածում **շեշտակի աճել է պետական դավաճանության վերաբերյալ հանցագործությունների բացահայտման ցուցանիշը:** Այն առավելապես պայմանավորված է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետությամբ:

Հատկանշական է, որ պետական դավաճանության վերաբերյալ քննված քրեական վարույթների ուսումնասիրությամբ պարզվել է, որ **բոլոր դեպքերում ՀՀ քաղաքացիները հայտնվել են ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցների ուշադրության կենտրոնում, նյութական օգուտների դիմաց ընդունել են հատուկ ծառայությունների աշխատակիցների առաջարկը՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության ու արտաքին անվտանգության,** հանցավոր գործունեություն իրականացնելու, զինված ուժերի, սպառազինությունների մասին պետական գաղտնիք կազմող և այլ բնույթի տեղեկություններ ձեռք բերելու կամ արդեն իսկ իրեն հասանելի դարձած տեղեկությունը փոխանցելու վերաբերյալ:

Եթե 2021 թվականի ընթացքում քննված քրեական վարույթների նախաքննությամբ պարզվել էր, որ բոլոր դեպքերում ՀՀ քաղաքացիներն ադրբեջանական հատուկ ծառայությունների տեսադաշտում հայտնվել և հավաքագրվել են Թուրքիայի Հանրապետությունում գտնվելու ընթացքում, ապա հաշվետու ժամանակահատվածում քննված քրեական վարույթների նախաքննությամբ ի հայտ են եկել նաև հավաքագրման այլ եղանակներ:

Մասնավորապես, ըստ ստացված փաստական տվյալների, ՀՀ քաղաքացիներն օտարերկրյա հատուկ ծառայությունների աշխատակիցների տեսադաշտում հայտնվել, ապա նրանց կողմից հավաքագրվել են առավելապես սոցիալական տարբեր հարթակների՝ Facebook-ի, Odnoklassniki-ի, TikTok-ի միջոցով: Ընդ որում, հատուկ ծառայությունների աշխատակիցները նշված սոցիալական ցանցերում գրանցվել են հայուհիների անվանական տվյալներով, ապա թիրախավորել են այն օգտատերերին, որոնք օգտահաշիվներում տեղադրել են զինվորական համազգեստով լուսանկարներ, տեսագրություններ կամ զինվորական ծառայության հետ կապն այլ կերպ հաստատող տեղեկություններ են հրապարակել: Որպես կանոն, ծանոթությունը և նամակագրությունը սկզբնական շրջանում իրականացվել է նշված սոցիալական ցանցերի միջոցով, ապա հատուկ ծառայության աշխատակիցների առաջարկությամբ տեղափոխվել է WhatsApp հավելված:

Քրեական վարույթների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ քաղաքացիների հավաքագրումն իրականացվել է սկզբնական շրջանում քողարկված եղանակով, որին հաջորդել է նաև համագործակցության վերաբերյալ ուղիղ առաջարկ կատարելը:

Ըստ ստացված տվյալների՝ ՀՀ քաղաքացիներին հիմնականում հավաքագրել են վարձատրության խոստմամբ և տրամադրված տեղեկության դիմաց փոխանցել են տարբեր չափերի գումարներ: Սակայն վարույթների քննությամբ հաստատվել են նաև դեպքեր, երբ ՀՀ քաղաքացիների հավաքագրումը և համագործակցությունն իրականացվել է ձևավորված «սիրային կապը» պահպանելու, սեռական ցանկությունները բավարարելու մղումներից ելնելով:

2022 թվականի ընթացքում ամփոփվել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմի ընթացքում և դրան հաջորդող ժամանակահատվածում ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումների զինծառայողների կողմից պետական դավաճանություն կատարելու առերևույթ դեպքերը, դրանց կատարման մեխանիզմները, զինծառայողների հավաքագրման եղանակները, պետական, ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հավաքման, փոխանցման եղանակները, ինչպես նաև նշված հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքները: Դրանց շարքին կարելի է դասել զինվորական ծառայության ընթացքում տեսանկարահանում իրականացնող և համացանցային հասանելիություն ունեցող բջջային հեռախոսների կիրառման սահմանափակումը՝ հատկապես մարտական հերթապահություն իրականացնող բոլոր զինծառայողների կողմից, զինված ուժերին վերաբերող և պետական կամ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պաշտպանությանն ուղղված առավել գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությունը և այլն:

Ուսումնասիրությամբ վեր հանված խնդիրներն ամփոփվել են և ՀՀ գլխավոր դատախազի կողմից միջնորդագիր է ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարին:

2022 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում ամփոփվել ենթմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության դեմ տարվող պայքարի արդյունքները:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ **2021 թվականի ընթացքում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության վերաբերյալ հարուցված 408 քրեական գործից 320-ը հարուցվել է փոստային առաքման միջոցով կատարված մաքսանենգության դեպքերի առթիվ:** Նշված գործերից 75-ով մաքսանենգության առարկա են հանդիսացել թմրամիջոցները, 245-ով՝ թմրամիջոց կամ հոգեմետ նյութեր պարունակող դեղերը:

ՀՀ ոստիկանությունից և ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2022 թվականի ընթացքում արձանագրված մաքսանենգության դեպքերի գերակշիռ մեծ մասը ևս կատարվել է փոստային կամ սուրհանդակային առաքման միջոցով:

Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, դրանց համարժեք նյութերի (անալոգի) և դրանց ածանցյալների մաքսանենգության դեպքերի բացահայտման առումով մեծ կարևորություն ունի կիբեռհանցագործությունների դեմ պայքարի համար իրականացվող օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական համալիր միջոցառումների կիրառումը, որոնք պետք է միտված լինեն սոցիալական կայքի, հեռահաղորդակցման համացանցային հավելվածի, առաքման համար օգտագործված օգտահաշիվների՝ օգտատիրոջ անձնական տվյալների, գրանցման ընթացքում մուտքագրված անհատական տվյալների, շահագործված հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի հասցեների, համացանցի հասանելիության IP հասցեների, թմրամիջոցի դիմաց վճարման եղանակների, կրիպտոարժույթի և բանկային հաշիվների, էլեկտրոնային դրամապանակների օգտագործման դեպքում՝ դրանց բացման և օգտագործման հանգամանքների, ֆինանսական գործարքների շղթայի վերաբերյալ ամբողջական տեղեկություն ձեռք բերելուն:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունից ստացված տվյալների համաձայն՝ 2022 թվականի ընթացքում արձանագրվել է ԱՄՆ-ից թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ներմուծման 116 դեպք, ԻԻՀ-ից՝ 86 դեպք, Ֆրանսիայից՝ 60 դեպք, Գերմանիայից և Իսպանիայից՝ 15-ական դեպք, Մեծ Բրիտանիայից՝ 14 դեպք (նշված են այն երկրները, որտեղից ներմուծման դեպքերը գերազանցում են մեկ տասնյակը): 2021 թվականի ընթացքում նշված երկրներից թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ներմուծման դեպքերի թիվը հիմնականում համադրելի է 2022 թվականի տվյալների հետ:

2022 թվականին աճել է ՀՀ տարածքում ապօրինի շրջանառությունից հանված առավել բարձր վտանգավորություն ներկայացնող սինթետիկ այնպիսի թմրամիջոցների քանակը, ինչպիսիք են՝ «մեթամֆետամին», «α-PVP», «ՄԴՄԱ», «ԼՍԴ», «մեֆեդրոն» տեսակի թմրամիջոցները, թմրամիջոցներ կրող զանգվածներն ու այլ կրիչները («սպայս»):

Ուշադրության է արժանի այն, որ աճել է նաև թմրամիջոցների մաքսանենգության դեպքերով հայտնաբերված՝ նշված տեսակի թմրամիջոցների քանակը: Մասնավորապես՝ 2022 թվականի ընթացքում կատարված մաքսանենգության դեպքերի բացահայտման արդյունքում հայտնաբերվել է 7.3 կգ «մեթամֆետամին» տեսակի թմրամիջոց (2021թ. ՝ 1.38 կգ), 4.4 կգ «α-PVP» տեսակի թմրամիջոց (2021թ. ՝ 0.99 կգ), 0.9 կգ «ՄԴՄԱ» տեսակի թմրամիջոց (2021թ. ՝ 20,069գ), 58,056գ «մեֆեդրոն» տեսակի թմրամիջոց (2021թ. ՝ 39,3գ):

Նախաքննության մարմինների կողմից 2021-2022 թվականների ընթացքում քննված վարույթներով ձեռք բերված տվյալներն առավելապես վկայում են, որ **սինթետիկ թմրամիջոցները ՀՀ տարածք են ներմուծվում արտերկրից**: Առանձին վարույթներով ձեռք են բերվել որոշակի տվյալներ՝ սինթետիկ թմրամիջոցներ հեղուկ վիճակում, այլ նյութերի հետ միախառնված ՀՀ ներմուծելու և ՀՀ տարածքում վերամշակման արդյունքում նյութի ֆիզիկական վիճակը փոխելու մասին: Չնայած այն հանգամանքին, որ «մարիխուանա» տեսակի թմրամիջոցի հումք հանդիսացող «կանեփ» տեսակի բույսերն աճեցվում են նաև ՀՀ տարածքում, այդ թվում՝ դրանից ստացված թմրամիջոցն իրացնելու նպատակով՝ ավելացել է նաև նշված թմրամիջոցի մաքսանենգության արդյունքում ներմուծված թմրամիջոցի քանակը: Մասնավորապես՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունից ստացված տվյալների համաձայն՝ եթե 2021 թվականի ընթացքում հայտնաբերվել է մաքսանենգության առարկա հանդիսացող 0,86 կգ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց, ապա 2022 թվականին հայտնաբերված նույն տեսակի թմրամիջոցի քաշը կազմել է 10,9 կգ:

Չբացառելով Հայաստանի Հանրապետության տարածքում նաև սինթետիկ ծագման թմրամիջոցների արտադրության հնարավորությունը՝ հարկ է արձանագրել, որ նշված նյութերի մաքսանենգության դեմ պայքարը մնում է նշված թմրամիջոցների առաջարկի կրճատման կարևորագույն միջոց:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ստորաբաժանումները վճռորոշ դերակատարություն ունեն մաքսանենգության դեմ պայքարի գործում: Մաքսային մարմիններին է վերապահված մաքսային գործի ղեկավարումը, կազմակերպումն ու վերահսկողության իրականացումը, մաքսանենգության խափանման և բացահայտման նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու լիազորությունը:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության հանրային վտանգավորության խիստ բարձր աստիճանը, նշված նյութերի մաքսանենգության և ապօրինի շրջանառության միջև անխզելի կապը վկայում են նշված հանցատեսակի դեմ պայքարին նաև ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների առավել ակտիվ ներգրավման անհրաժեշտության մասին:

Մաքսային հսկողության իրականացման միջոցների և մեթոդների շարունակական կատարելագործմանը զուգահեռ, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի, այդ թվում՝ սինթետիկ թմրամիջոցների մաքսանենգության դեմ պայքարի առումով մեծ կարևորություն ունի նաև սահմանային հսկողության ուժեղացումը, քանի որ բազմաթիվ քրեական վարույթներով փաստական տվյալներ են ձեռք բերվել սահմանային անցման կետերի շրջանցմամբ կատարված ապօրինի սահմանահատման և, դրա հետ զուգորդված, մաքսանենգության դեպքերի վերաբերյալ:

2022 թվականի ընթացքում Գլխավոր դատախազությունում ամփոփվել են նաև կողոպուտի դեպքերով քրեաիրավական պայքարի արդյունքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողոպուտը՝ բացահայտ հափշտակություն է, երբ հանցավորը գիտակցում է, որ արարքը կատարում է բացահայտ: Որոշակի կրկնաբանություն պարունակող սույն ձևակերպման նպատակն այն է, որ օրենսդրական մակարդակում անհրաժեշտ էր լուծել տեսության մեջ վաղուց քննարկված և, ընդհանուր առմամբ, ընդունելի այն հարցը, որ կողոպուտի պարագայում կարևոր է հանցավորի սուբյեկտիվ ընկալումը՝ կատարված հափշտակության բացահայտ լինելու կապակցությամբ: Թեև այլ անձինք կարող են կարծել, որ իրականում հափշտակություն տեղի չի ունենում, անձը օրինակ, վերցրել է իր գույքը կամ խանութից կատարել է առևտուր, սակայն կարևորն այն է, թե ինչպես է իրավիճակն ընկալվում հանցանք կատարած անձի կողմից: Եթե վերջինս գիտակցում է կատարված հափշտակության բացահայտ լինելը, ապա այն պետք է որակվի որպես կողոպուտ, անկախ նրանից՝ իրականում կատարվածը գաղտնի է եղել, թե՝ բացահայտ: Այս համատեքստում՝ գործնականում խնդրահարույց է այն հարցը, թե ինչպես պետք է որակել այն իրավիճակները, երբ անձը որևէ վայրից կատարում է հափշտակություն, որտեղ առկա են տեսանկարահանող սարքավորումներ: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ եթե հանցավորը գիտակցում է, որ գործում է բացահայտ և իր արարքը տվյալ պահին ֆիքսվում է և կարող է գիտակցվել այլ անձանց կողմից, ապա արարքը պետք է որակվի որպես կողոպուտ, իսկ եթե վերջինս համոզված է, որ հափշտակությունը կատարելու պահին իրեն չեն նկատում (օրինակ՝ իրազեկված է, որ նշված տեխնիկական համակարգերն անսարք են), ապա արարքը պետք է որակել որպես գողություն: Եթե հանցավորը գիտակցում է, որ թեև հափշտակությունը կատարելու պահին իր արարքը բացահայտ չէ, սակայն հետագայում՝ տեսաձայնագրությունները դիտելու արդյունքում կարող է պարզվել հափշտակություն կատարած անձի ինքնությունը, ապա արարքը պետք է որակել որպես 254-րդ հոդվածով՝ գողություն, քանի որ հանցանքը կատարելու պահին անձը գործել է գաղտնի, հափշտակությունն ավարտվել է, իսկ հետագայում բացահայտվելու վտանգը չի կարող գնահատվել որպես բացահայտ հափշտակություն: Քննարկվող հանցագործության որակման հետ կապված առկա է ևս մեկ խնդիր, կապված այն իրավիճակների հետ, երբ հանցանք կատարած անձը հափշտակությունը կատարում է իր մտերիմների (ամուսնու, ընկերների և այլն) ներկայությամբ, որոնք թեև հանցակիցներ չեն, սակայն ընդհանուր առմամբ չեն խոչընդոտում կամ դիմադրում հափշտակության կատարմանը, համախոհներ են: Այս դեպքում, արարքը պետք է որակել որպես գողություն, քանի որ հանցավորը համոզված է, որ գործում է գաղտնի և իր կատարած հափշտակությունը չի բացահայտվի: Այլ է իրավիճակը, երբ նշված անձինք (մտերիմները) դիմադրում են կամ պարսավանք են հայտնում կատարվածի կապակցությամբ, փորձում են խոչընդոտել հանցանքի կատարմանը: Այս պարագայում՝ անկախ միջանձնային հարաբերությունների բնույթից՝ արարքը պետք է որակել որպես կողոպուտ, քանզի հանցավորը գիտակցում է, որ կատարում է բացահայտ հափշտակություն:

Ինչ վերաբերում է խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքին հանցավորի կողմից բացահայտ տիրանալու և այն հափշտակելու հանգամանքին, ապա արարքը խարդախություն կամ կողոպուտ որակելու համար էական նշանակություն ունեն նշված հանցակազմերի օբյեկտիվ կողմի առանձնահատկությունները, մասնավորապես.

Խարդախության օբյեկտիվ կողմի առանձնահատկությունը դրսևորվում է նրանում, որ խաբեության և վստահությունը չարաշահելու միջոցով հանցավորը ներգործում է գույքին տիրապետողի կամքի ու գիտակցության վրա, ինչի արդյունքում վերջինս, մոլորության մեջ ընկնելով, անձամբ գույքը հանձնում է հանցավորին: Այսինքն՝ տուժողը գույքն ինքնակամ առանձնացնում է իր գույքային ֆոնդից և միացնում հանցավորի գույքային ֆոնդին, որի արդյունքում հանցավորը ստանում է գույքն օգտագործելու, տիրապետելու և տնօրինելու՝ սեփականատիրոջ լիազորություններից փաստացի օգտվելու հնարավորություն, իսկ սեփականատերը զրկվում է այդ լիազորություններն իրականացնելու հնարավորությունից:

Կողոպուտի օբյեկտիվ կողմի հիմնական առանձնահատկությունը բացահայտ լինելն է: Յուրաքանչյուր դեպքում կատարվածը կողոպուտ որակելիս՝ պետք է պարզել՝ արդյոք հանցավորն ուրիշի գույքը հափշտակել է սեփականատիրոջ կամ այլ անձանց ներկայությամբ, որոնք ըստ նրա, գիտակցել են գույքի հափշտակման փաստը, իսկ հանցավորն անտեսելով դա, կատարել է արարքը:

Բացի այդ, ի տարբերություն խարդախության՝ կողոպուտի դեպքում տուժողը գույքը չի առանձնացնում իր գույքային ֆոնդից, չի միացնում հանցավորի գույքային ֆոնդին և հանցավորին չի տալիս սեփականատիրոջ լիազորություններից փաստացի օգտվելու հնարավորություն, սակայն հանցավորը, խաբեության և վստահությունը չարաշահելու եղանակով ստանալով գույքին տիրապետելու հնարավորություն՝ բացահայտ հափշտակում է այն:

Ինչ վերաբերում է գույքի բացահայտ հափշտակության դեպքերին, ապա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ **որպես կողոպուտի կատարման առավել տարածված ձև շարունակում է մնալ բջջային հեռախոսների, ոսկյա զարդերի և պայուսակների բացահայտ հափշտակությունը:** ՀՀ դատախազության ստորաբաժանումներին հանձնարարվել է կողոպուտի վերաբերյալ քրեական վարույթների օրինականությունն ստուգելիս՝ հետաքննության մարմնից գրավոր պահանջել քրեական վարույթի ընթացքում իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների վերաբերյալ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով դատախազին տրամադրման ենթակա փաստաթղթերը կամ դրանք ստուգել դրանց գտնվելու վայրում, ինչպես նաև իրավասու մարմինների կողմից նախականխող, կանխող լիազորությունները:

2022 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազությունում կատարված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ արարքները ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով որակելիս՝ խնդիրներ են առաջացել՝ կապված «իշխանության ներկայացուցիչ» հասկացության հետ:

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսել իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքում իշխանության ներկայացուցիչ է համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում ծառայող այն անձը, ով ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված է կարգադրիչ լիազորություններով: Օրենսդրական այս ձևակերպումից բխում էր, որ իշխանության ներկայացուցչի պարտադիր տարր է հանդիսանում, ի թիվս այլնի, կարգադրիչ լիազորություններով օժտված լինելու հանգամանքը: Հաշվետու ժամանակահատվածում հանդիպել են դեպքեր, երբ հանրային ծառայության համակարգում բարձր կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն է գործադրվել կամ բռնություն գործադրելու սպառնալիք է եղել, մինչդեռ, հնարավոր չի եղել արարքը որակել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով, քանի որ վերը նշված կարգադրիչ լիազորությունը բացակայել է:

Նման իրավիճակները բացառելու և անձանց արարքին պատշաճ, հանրային վտանգավորությանը համարժեք քրեաիրավական գնահատական տալու համար անհրաժեշտություն էր առաջացել կատարել համապատասխան փոփոխություն ՀՀ քրեական օրենսգրքում, որի արդյունքում որպես տուժող պետք է հանդես գար ոչ միայն իշխանության ներկայացուցիչը կամ նրա մերձավոր ազգականը, այլև՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք:

Հիշյալ կարգավորումներով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, քրեական պատասխանատվություն նախատեսված չի եղել (որոշակի բացառություն է կազմել ՀՀ քրեական օրենսգրքի 347-րդ հոդվածը), ինչը հաճախ արարքի որակման առումով խնդիրներ է ստեղծել և հանգեցրել ոչ արդարացի քրեաիրավական գնահատականի:

Նման պարագայում **պետության պոզիտիվ պարտականությունն է՝ իրավական մեխանիզմներով պաշտպանել հանրային ծառայության մեջ գտնվող անձանց՝ ի ցույց դնելով պետության պատրաստակամությունը՝ օրինական և թույլատրելի միջոցներով ապահովել վերջիններիս կողմից իրենց ծառայողական լիազորությունների բնականոն, անշեղ և արդյունավետ իրականացումը:**

Վերը նշված խնդրի կարգավորման նպատակով ՀՀ գլխավոր դատախազությունում մշակվել է նախագիծ, որով առաջարկվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասը փոփոխել և շարադրել նոր խմբագրությամբ՝ նախատեսելով, որ հոդվածում իշխանության ներկայացուցիչ է համարվում նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով պետական կամ համայնքային քաղաքական, վարչական կամ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը:

Ըստ էության, սույն խնդիրն արդեն իսկ իր լուծումը ստացել է նոր՝ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով, որի 452-րդ հոդվածով սահմանվել է.

Պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքը(..):

Պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի գույքը ոչնչացնելը կամ վնասելը(..):

Պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելը»(..):

Պաշտոնատար անձի հասկացությունն էլ, իր հերթին, տրված է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում, որի «ա» ենթակետի համաձայն՝ պաշտոնատար անձ է համարվում նաև հանրային ծառայողը, հանրային պաշտոն զբաղեցնող անձը, պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձը:

Ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ նախորդ կետում մատնանշված խնդիրների լուծման հետ համատեղ՝ գործող օրենսգրքում կատարվել է այլ փոփոխություն ևս, ինչը որոշակի խնդիրներ է առաջացրել՝ արարքը ճիշտ որակելու առումով:

Մասնավորապես, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվել իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի համար՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ: Որպես նույն օրենսգրքի՝ մի շարք հոդվածներով նախատեսված հանցագործությունները որակյալ դարձնող հատկանիշ՝ նախատեսված է եղել արարքն անձի կամ նրա մերձավորի նկատմամբ կատարելը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ (օրինակ՝ 113-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ):

Նշված իրավակարգավորումների առկայության պայմաններում մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը քննված քրեական վարույթներով հիշյալ խնդրի հետ բախվելիս (որակել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով, թե 113-րդ հոդվածով) անձի արարքի որակումը տրվում էր՝ պայմանավորված տուժողի անձով. այն դեպքերում, երբ տուժողն օժտված էր լինում պաշտոնատար անձի հատկանիշներով, սակայն օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով իշխանության ներկայացուցիչ չէր համարվում, ապա արարքը չէր որակվում ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով: Այլ կերպ՝ արարքը որակվում էր օրենսգրքի 316-րդ հոդվածով միայն այն դեպքում, երբ իշխանության ներկայացուցչի առողջությանն էր դիտավորությամբ պատճառվում միջին ծանրության վնաս:

Գործող ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 3-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի նկատմամբ բռնություն գործադրելու համար:

Նույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու համար, որը կատարվել է անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի նկատմամբ՝ կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ:

Ըստ տեսության՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի իմաստով օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը կարող է դրսևորվել պաշտոնատար անձին որևէ արարք կատարելուն, որոշում կայացնելուն հարկադրելու ձևով, ինչպես նաև արդեն կատարածի համար վրեժ լուծելով: Եթե նույն արարքները կատարվում են ի պատասխան պաշտոնատար անձի անօրինական գործողությունների, ապա արարքը պետք է որակվի ոչ թե նշված հոդվածով, այլ՝ որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն:

Կարծում ենք՝ հիշյալ դիրքորոշումը ոչ միայն հստակ չի տարանջատում նշված հասկացությունների բովանդակությունը, այլև՝ պարունակում է գործնականում խնդիրներ առաջացնելու ռիսկեր:

Մասնավորապես, դիրքորոշումը, թե օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակը կարող է դրսևորվել պաշտոնատար անձի կողմից արդեն իսկ կատարված գործողության համար վրեժ լուծելով, չի բխում մատնանշված նպատակի բառացի մեկնաբանությունից: Միջամտելու նպատակը ենթադրում է ընթացքի մեջ գտնվող ու դեռևս չավարտված գործողության կատարմանը մասնակցելու, իր հայեցողությամբ այդ գործողությանը ներգործելու, հանցավորին ոչ վերաբերելի և պաշտոնատար անձին վերապահված գործողությունների կատարումից չեզոք չմնալու կամ ավարտված, սակայն գործողության հետևանքները փոփոխելու հնարավորությամբ օժտված միջամտության նպատակ: Այսինքն, միջամտելու նպատակն առկա է այն պարագայում, երբ հանցավոր արարքի կատարման արդյունքում հանցավորը նախատեսում է որևէ կերպ խոչընդոտել պաշտոնատար անձի կողմից իր լիազորություններից բխող որևէ գործողության կատարմանը կամ ներազդել, որպեսզի իր համար ցանկալի գործողություններ կատարվեն:

Ինչ վերաբերվում է «կապված այդ անձի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական, մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ» ձևակերպմանը, ապա ակնհայտ է, որ նշված հասկացությունն իր բնույթով ավելի լայն է, այն իր մեջ ներառում է նաև պաշտոնատար անձի «օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով» ձևակերպումը: Հետևաբար, այն դեպքերում, երբ քրեական վարույթի շրջանակներում կհիմնավորվի, որ պաշտոնատար անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածով սահմանված գործողությունները կատարվել են՝ առանց պաշտոնատար անձի կողմից իրականացվող գործունեության ընթացքը փոփոխելու կամ որևէ այլ՝ «միջամտության նպատակ» հասկացության ներքո չներառվող նպատակով, այդ թվում՝ միայն վրեժի շարժառիթով, ապա արարքը պետք է որակվի ոչ թե նշված հոդվածով, այլ՝ որպես մարդու դեմ ուղղված հանցագործություն (գործող ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 195-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ և այլն):

Հարկ է արձանագրել նաև հետևյալը.

Գործող ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար (պատժվում է տուգանքով՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով): Նույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է նախատեսում ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար, որը խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել: Հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը պատասխանատվություն է նախատեսում նույն արարքի համար, որը կատարվել է՝ կապված անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կողմից իր պետական, քաղաքական, ծառայողական մասնագիտական կամ հասարակական գործունեության կամ պարտքի կատարման հետ, իսկ 6-րդ կետը՝ նույն արարքի համար, որն առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս է պատճառել (պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով): Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով սահմանվում է, որ հափշտակված գույքի, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի մանր չափ է համարվում 500 հազար դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը): Մեջբերված իրավակարգավորումների վերլուծությամբ պարզ է դառնում, որ արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով որակելու համար հանցագործության արդյունքում պատճառված վնասի չափը՝ որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ, չի սահմանվել: Այսինքն, պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար, անկախ պատճառված վնասի չափից, անձը ենթակա է քրեական պատասխանատվության ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով:

Հիշյալ հանցանքի կատարման արդյունքում մանր չափի գույքային վնաս պատճառելու դեպքերում (մինչև 500 հազար դրամ) որակման առումով խնդիրներ չեն առաջանում՝ արարքը որակվում է միայն ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով:

Որակման առումով բարդություններ կարող են առաջանալ այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքը կատարելու արդյունքում պատճառվի խոշոր (500 հազար դրամից մինչև 5 միլիոն դրամի չափով գույքային վնաս) կամ առանձնապես խոշոր չափերով գույքային վնաս (5 միլիոն դրամը գերազանցող գումարը): Մասնավորապես, նման դեպքերում արդյոք արարքը պետք է որակվի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով, թե հանցագործությունների համակցությամբ՝ նաև օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխան կետ(եր)ով:

Այս առումով հարկ է մեջբերել ՀՀ քրեական օրենսգրքի 52-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, որոնցով սահմանվում է.

«5. Եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են սույն օրենսգրքի Հատուկ մասի ընդհանուր և հատուկ նորմեր, ապա արարքը որակվում է միայն հատուկ նորմով:

6.Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար սույն օրենսգրքով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը»:

Առաջին հայացքից ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասը նույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 6-րդ կետով նախատեսված հանցանքի հատուկ դրսևորում է, սակայն նշված հոդվածներով նախատեսված հանցագործությունների հանցակազմերի բովանդակային վերլուծությունը վկայում է այն մասին, որ գործ ունենք տարբեր՝ հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներով (վնասի չափով) միմյանցից տարբերվող հանցագործությունների հետ: Ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության մասին խոսք կարող էր գնալ միայն այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հանցակազմի պարտադիր հատկանիշ հանդիսանար արարքի կատարման արդյունքում խոշոր չափի վնաս պատճառելը: Այլ կերպ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունն իր հատկանիշներով չի համընկնում նույն օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 6-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներին, այն չի կարող համարվել նշված հանցանքից առանձնացված՝ դրա մասնավոր և հատուկ հանցակազմ և հակառակը՝ օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կամ 6-րդ կետը սույն դեպքում չի կարող համարվել ընդհանուր նորմ, քանի որ այն պատասխանատվություն չի նախատեսում գույքը վնասելու բոլոր դեպքերի համար (այդ թվում՝ մինչև 500.000 ՀՀ դրամի չափով):

Հիշյալ վերլուծություններն էլ ավելի են ամրապնդվում, երբ համեմատական ենք անցկացնում նշված հանցանքների կատարման համար նախատեսված պատժի չափերի միջև. ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանցանքի կատարման համար որպես պատիժ նախատեսված է տուգանքը՝ տասնապատիկից երեսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքները՝ հարյուրից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ կարճաժամկետ ազատազրկումը՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկումը՝ մեկից երեք տարի ժամկետով, իսկ օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման համար՝ բացառապես ազատազրկումը՝ երեքից վեց տարի ժամկետով:

Նշված նորմերն ընդհանուր և հատուկ համարելու դեպքում՝ մի կողմից կստացվի իրավիճակ, երբ օրինակ՝ պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելու նպատակով պաշտոնատար անձի կամ նրա մերձավոր ազգականի կամ մերձավորի կամ նշված անձանց դաստիարակության, խնամքի կամ հսկողության տակ գտնվողի՝ պայմանականորեն 4 միլիոն դրամ արժողությամբ գույքը ոչնչացնելու կամ վնասելու համար անձը կարող է դատապարտվել նաև տուգանքի (քանի որ արարքը կորակվի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով), իսկ այլ անձի՝ նույն արժողությամբ գույքը ոչնչացնելու համար՝ բացառապես ազատազրկման, ինչը չի բխի օրենքի տրամաբանությունից:

Նշված վերլուծությունների համատեքստում կարծում ենք, որ այն դեպքերում, երբ ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման արդյունքում պատճառված վնասի չափը գերազանցում է 500 հազար դրամը, այսինքն, այդ հանցանքի բաղկացուցիչ մասն է կազմում նաև օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (կամ 6-րդ կետով) նախատեսված հանցանքը, ապա անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության նաև նշված հոդվածով նախատեսված հանցանքը կատարելու համար, քանի որ այդ հանցագործության համար օրենսգրքով ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը:

7

ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

2022 թվականին ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 4414 գործ՝ 5214 անձի վերաբերյալ (2021 թվականին՝ 4451 գործ՝ 5573 անձի վերաբերյալ), որոնցից 4388-ը 5188 անձի վերաբերյալ՝ մեղադրական եզրակացությամբ, իսկ 26-ը՝ 26 անձի վերաբերյալ՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար: Նշվածից հետևում է, որ 2022 թվականին դատարան ուղարկված գործերի թիվը գրեթե նույնական է նախորդ տարվա ցուցանիշին (պակաս է 37-ով կամ 0.8%-ով):

Դատարաններում քննվել և ավարտվել է 3208 քրեական գործ՝ 3690 անձի վերաբերյալ (2021 թվականին՝ 2921 գործ՝ 3375 անձի վերաբերյալ, 2020 թվականին՝ 2121 քրեական գործ՝ 2427 անձի վերաբերյալ):

Նշված քրեական գործերից 2387-ով դատապարտվել է 2721 անձ (2021 թվականին՝ 2365 գործով՝ 2701 անձ, 2020 թվականին՝ 1808 գործով՝ 2038 անձ): 28 քրեական գործով 29 անձի նկատմամբ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոց (2021 թվականին՝ 37 քրեական գործով՝ 38 անձի նկատմամբ, 2020 թվականին՝ 35 քրեական գործով՝ 35 անձի նկատմամբ):

2022 թվականին դատարաններում քննված և ավարտված՝ 3690 անձի վերաբերյալ 3208 քրեական գործից 2017-ը կամ 62.9%-ը եղել է ոչ մեծ ծանրության՝ 2147 անձի նկատմամբ (58.2%), 778-ը՝ միջին ծանրության (24.2%)՝ 967 անձի նկատմամբ (26.2%), 352-ը՝ ծանր (11.0%)՝ 471 անձի նկատմամբ (12.8%) և 61-ը՝ առանձնապես ծանր (1.9%)՝ 105 անձի նկատմամբ (2.8%):

2022 թվականին ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 21.2%-ով, միջին ծանրության հանցագործությունների համար դատապարտվածների թիվը՝ 5%-ով, ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվը նվազել է 18.6%-ով, առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց թիվն աճել է 5%-ով:

Դատապարտված անձանցից 36-ը եղել է անչափահաս (2021 թվականին՝ 35 անձ, 2020 թվականին՝ 43 անձ), 109-ը՝ կին (2021 թվականին՝ 120 կին, 2020 թվականին՝ 142 կին), 169-ը՝ նախկինում դատված (2021 թվականին՝ 255 անձ, 2020 թվականին՝ 217 անձ), 44-ը՝ օտարերկրացի (2021 թվականին՝ 37 անձ, 2020 թվականին՝ 28 անձ):

2 գործով 2 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2021 թվականին՝ 7 գործ՝ 8 անչափահաս, 2020 թվականին՝ 5 գործ՝ 6 անչափահաս):

2022 թվականին դատապարտված անչափահասների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 2.85%-ով, դատապարտված կանանց թիվը նվազել է 9.2%-ով, իսկ նախկինում դատված անձանց թիվը՝ 33.7%-ով:

2022 թվականի ընթացքում 102 գործով ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից արդարացվել է 132 անձ (2021 թվականին՝ 107 գործով՝ 134 անձ), իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ 1 գործով 1 անձ (2021 թվականին՝ 1 գործով՝ 1 անձ):

2022 թվականին ՀՀ դատարանների կողմից մասնակի արդարացվել է 3 անձ (2021 թվականին՝ 6 անձ), իսկ մեկ կամ մի քանի դրվագով՝ 4 անձ (2021 թվականին՝ 4 անձ):

Արդարացված անձանց մեղսագրված հանցագործությունների մեջ առավել շատ տարածված են ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններով առաջադրված մեղադրանքների դեպքերը: Մասնավորապես՝ ոչ մեծ ծանրության հանցագործության մեղադրանքով արդարացվել է 59 անձ (44.7%), միջին ծանրության հանցագործության մեղադրանքով՝ 34 անձ (25.8%), ծանր հանցագործության մեղադրանքով՝ 30 անձ (22.7%), իսկ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով՝ 9 անձ (6.8%):

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից արդարացված անձանց մեղսագրված հանցագործություններ		
մարդու դեմ ուղղված հանցագործություններ	19 գործ	արդարացվել է 28 անձ
սեփականության դեմ ուղղված հանցագործություններ	12 գործ	արդարացվել է 15 անձ
տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ	10 գործ	արդարացվել է 10 անձ
հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ	45 գործ	արդարացվել է 50 անձ
բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ	6 գործ	արդարացվել է 7 անձ
կոռուպցիոն հանցագործություններ	7 գործ	արդարացվել է 18 անձ
պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ	3 գործ	արդարացվել է 4 անձ

Վերաքննիչ քրեական դատարանի կողմից արդարացված անձանց մեղսագրված հանցագործություններն ունեն հետևյալ պատկերը.

- մարդու դեմ ուղղված հանցագործություններով՝ 1 գործով արդարացվել է 1 անձ և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններով՝ 1 գործով արդարացվել է 1 անձ:

Կայացված արդարացման դատավճիռները պայմանավորված են արարքի ապաքրեականացման հիմքով դատարանում մեղադրողների կողմից մեղադրանքից հրաժարվելու հանգամանքով (01.07.2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքով ապաքրեականացվել են 18.04.2003 թվականին ընդունված Քրեական 137.1-ին հոդվածով սահմանված՝ ծանր վիրավորանքը, 213-րդ հոդվածով սահմանված՝ վաշխառությունը, 243.1-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված՝ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելը նույն արարքի համար վարչական տույժ նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ինչպես նաև փոփոխվել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 205-րդ (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 290-րդ) հոդվածով սահմանված՝ հարկերը, տուրքերը կամ այլ պարտադիր վճարները չվճարելու նվազագույն շեմը), ինչպես նաև հանցակազմի բացակայության հիմքով:

2022 թվականի ընթացքում արդարացման դատավճիռների դեմ բերվել է 145 վերաքննիչ և վճռաբեկ բողոք:

2022 թվականին 689 քրեական գործ՝ 806 անձի վերաբերյալ կարճվել է (2021 թվականին՝ 405 քրեական գործ՝ 494 անձի վերաբերյալ), որոնցից 105-ը՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 9-ը՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 63-ը՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 37-րդ հոդվածով, 298-ը՝ 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 179-ը՝ ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքով սահմանված այլ հիմքով, 1-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 78-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, որոնցից 32-ը ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածով սահմանված հիմքով և 45-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված հիմքով, 73-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված այլ հիմքերով:

2022 թվականին դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 1 մլրդ 373 մլն 377 հազար 804 դրամ (2021 թվականին՝ 1 մլրդ 866 մլն 825 հազար 138 դրամ), որից 894 մլն 580 հազար 386 դրամի վնասը պատճառվել է պետությանը (2021 թվականին՝ 648.257.511 ՀՀ դրամ), 28 մլն 241 հազար 526 դրամի վնասը՝ համայնքներին (2021 թվականին՝ 51 մլն 689 հազար 603 դրամ), իսկ 450 մլն 555 հազար 892 դրամի վնասը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց (2021 թվականին՝ 1 մլրդ 166 մլն 888 հազար 24 դրամ):

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 469 մլն 543 հազար 950 դրամ (2021 թվականին՝ 1 մլրդ 328 մլն 479 հազար 932 դրամ), որից 314 մլն 383 հազար 544 դրամը՝ պետությանը (2021 թվականին՝ 72 մլն 989 հազար 160 դրամ), 18 մլն 29 հազար 900 դրամը՝ համայնքներին (2021 թվականին՝ 23 մլն 641 հազար 789 դրամ), 137 մլն 130 հազար 506 դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնասներից (2021 թվականին՝ 727.848.983 ՀՀ դրամ):

2022 թվականին դատարաններում քննված քրեական գործերից 422-ով 517 անձի նկատմամբ կիրառվել է համաձայնեցման վարույթ:

Այս առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ համաձայնեցման վարույթներով միասնական պրակտիկա ձևավորելու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից 26.12.2022 թվականին ստորագրվել է հանձնարարական այն մասին, որ համաձայնեցման վարույթ կիրառելու յուրաքանչյուր դեպք անհրաժեշտ է նախապես համաձայնեցնել ՀՀ գլխավոր դատախազության (ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության) համապատասխան ստորաբաժանման հետ: Այդ նպատակով վարույթի (գործի) փաստական հանգամանքերի վերաբերյալ ստորագրված տեղեկանքը (այսուհետ նաև՝ տեղեկանք)՝ համաձայնեցման վարույթ կիրառելու կամ չկիրառելու փաստական և իրավական հիմքերի պարտադիր նկարագրությամբ, ՀՀ դատախազության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի ուղեկցական գրությամբ հնարավոր սեղմ ժամկետում հանձնարարվել էուղարկել ՀՀ գլխավոր դատախազության (ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության) համապատասխան ստորաբաժանում:

2022 թվականին դատապարտված 2721 անձից 493-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 18.1%-ը (2021 թվականին 2701 անձից ազատազրկման է դատապարտվել 593-ը կամ 21.9%-ը):

2022 թվականին որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել (2021 թվականին՝ 3 անձ դատապարտվել է ցմահ ազատազրկման):

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի և կարճաժամկետ ազատազրկման է դատապարտվել 18 անձ (2021 թվականին՝ 23 անձ). կալանքի դատապարտված անձանց քանակը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 0.66%-ը:

Տուգանքի է դատապարտվել 1471 անձ (2021 թվականին՝ 1425 անձ). տուգանքի դատապարտված անձանց քանակը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 54.06%-ը:

704 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 25.9%-ը, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 70-րդ) հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2021 թվականին՝ 657 անձի կամ 24.3%-ի նկատմամբ): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 248-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 266-ը՝ միջին ծանրության, 180-ը՝ ծանր, 10-ը՝ առանձնապես ծանր հանցագործության համար:

2022 թվականին դատապարտված 16 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2021 թվականին՝ 16 անձի, 2020 թվականին՝ 5 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

2022 թվականին դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների է դատապարտվել նախնական կալանքի տակ գտնվող 24 անձ (2021 թվականին՝ 20), որոնք ազատ են արձակվել դատական նիստերի դահլիճից: Դատարանների կողմից նախնական կալանքի տակ չգտնվող 197 անձ դատապարտվել է ազատազրկման (2021 թվականին՝ 354):

2022 թվականի ընթացքում մեղադրողների կողմից դատարանների կայացրած դատավճիռների դեմ բերվել է 377 վերաքննիչ բողոք, իսկ հաշվետու ժամանակաշրջանի սկզբին դատարանների վարույթում մնացորդ բողոքներն եղել են 157, որոնցից 4-ով ամփոփման ժամանակահատվածում լուծված չէ վարույթ ընդունելու հարցը: Բերված բողոքներից 106-ը կամ 19.9%-ը եղել է արդարացման, 22-ը կամ 4.1%-ը՝ կարճման, 274-ը կամ 51.3%-ը՝ պատժի մեղմության, 1-ը կամ 0.2%-ը՝ պատժի խստության, 22-ը կամ 4.1%-ը՝ արարքի վերաորակման դեմ, իսկ 109-ը կամ 20.4%-ը՝ այլ հիմքով:

Մեղադրողների կողմից բերված բողոքներից 62-ը կամ 11.7%-ը բավարարվել է, 31-ը կամ 5.8%-ը բավարարվել է մասնակի, 241-ը կամ 45.5%-ը մերժվել է, 3-ով կամ 0.6%-ով կայացվել է այլ որոշում, 193-ով կամ 36.4%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

Դատավարության մյուս մասնակիցների կողմից դատավճիռների դեմ բերված և նախորդ տարվանից փոխանցված վերաքննիչ բողոքները 437-ն են, որոնցից 2-ը վարույթ չի ընդունվել: Բերված բողոքներից 1-ը կամ 0.23%-ը եղել է արդարացման, 7-ը կամ 1.6%-ը՝ կարճման, 2-ը կամ 0.46%-ը՝ պատժի մեղմության դեմ, 347-ը կամ 79.4%-ը՝ պատժի խստության դեմ, 4-ը կամ 0.9%-ը՝ արարքի վերաորակման դեմ, 76-ը կամ 17.4%-ը՝ այլ հիմքով:

Հիշյալ բողոքներից բավարարվել է 32-ը կամ 7.4%-ը, 16-ը կամ 3.7%-ը բավարարվել է մասնակի, 256-ը կամ 58.8%-ը մերժվել է, 9-ով կամ 2.1%-ով կայացվել է այլ որոշում, 122-ով կամ 28%-ով բողոքի քննարկումն ընթացքի մեջ է:

2022 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի, նրա տեղակալների կողմից դատական ակտերի դեմ բերված 131 (2021 թվականին՝ 86) վճռաբեկ բողոքից և նախորդ տարվանից փոխանցված 23 (2021 թվականին՝ 4) բողոքից 39-ով (2021 թվականին՝ 34) լուծված չէ վարույթ ընդունելու հարցը, 93-ով (2021 թվականին՝ 30) որոշում է կայացվել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին: Ներկայացված բողոքներից 22-ն ընդունվել է վարույթ (2021 թվականին՝ 26), որոնցից 6-ը բավարարվել է (2021 թվականին՝ 6), 3-ը մասնակի է բավարարվել (2021 թվականին՝ 2), 11-ի քննությունն ընթացքի մեջ է(2021 թվականին՝ 17), իսկ 2-ը մերժվել է (2021 թվականին՝ 1): Հաշվետու ժամանակահատվածում դատական ակտերի բողոքարկման սահմանադրական գործառույթի իրականացման շրջանակներում, **ՀՀ գլխավոր դատախազի և նրա տեղակալների բողոքների հիման վրա, Վճռաբեկ դատարանն ընդունել է ուղենիշային նշանակություն ունեցող մի շարք որոշումներ, որոնցում արտահայտված իրավական դիրքորոշումները միասնական, կանխատեսելի և որոշակի իրավակիրառ պրակտիկայի կայացման տեսանկյունից ունեն կենսական նշանակություն: Այսպես, քրեական գործերով մինչդատական վարույթի օրինականության շրջանակներում օրենքի միատեսակ կիրառության տեսանկյունից տես հետևյալ որոշումները՝**

Վճռաբեկ դատարանի ԵԴ/0112/11/19 որոշում, որով հստակեցվել են անձի անմեղության կանխավարկածի իրավունքի խախտման կապակցությամբ քրեադատավարական ընթացակարգով իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները, որոշակիացվել եմ անմեղության կանխավարկածի խախտումը որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելու չափանիշները:

Վճռաբեկ դատարանի ԿԴ2/0009/11/19 որոշում, որով իրավական դիրքորոշում է տրվել ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի 144-րդ հոդվածով նախատեսված՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելու հարցի կապակցությամբ, որոնք կարող են կիրառելի լինել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածով նախատեսված՝ «բացակայելու արգելք» խափանման միջոցը մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա դիտարկելու հարցի կապակցությամբ դիրքորոշում ձևավորելու համար:

Վճռաբեկ դատարանի ԵԴ/0557/11/20 որոշում, որով իրավական դիրքորոշումներ է արտահայտել քննիչի դատավարական կարգավիճակի առանձնահատկությունների վերաբերյալ:

Առանձին հանցակազմերի վերլուծության, տարբեր քրեադատավարական ինստիտուտների կիրառման գործընթացում օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու տեսանկյունից տես հետևյալ որոշումները՝ Վճռաբեկ դատարանը ԵԿԴ/0315/01/17 գործով անդրադարձել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ (ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ) հոդվածով նախատեսված՝ յուրացման (վստահված գույքը հափշտակելու) հանցակազմի քրեաիրավական բնութագրին:

Թիվ ԵԴ/0259/01/18 գործով Վճռաբեկ դատարանն արտահայտել է նախադեպային իրավական դիրքորոշումներ՝ կաշառք կամ ապօրինի վարձատրություն ստանալու հանցակազմերի մեկնաբանման կապակցությամբ:

Թիվ ԼԴ/0090/01/20 գործով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասին) մեղադրվող անձի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ստորադաս դատարանների հետևությունների իրավաչափությանը:

Թիվ ԵԴ/0060/01/19 գործով Վճռաբեկ դատարանն անդրադարձել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններով պատժի արդարացիության և անհատականացման խնդրին:

ՀՀ դատախազության բողոքի քննության արդյունքում ՀՀ Վճռաբեկ դատարանը կարևոր և ուղղորդող որոշում է կայացրել անչափահասների սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների հաշվարկման վերաբերյալ:

Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը ԱՐԴ/0115/01/15 դատական գործով եզրահանգել է, որ որոշ հանցատեսակների, այդ թվում նաև անչափահաս տուժողի նկատմամբ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված՝ ՀՀ նախկին քրեական օրենսգքրի 138-142-րդ հոդվածներով նախատեսված հանցանքներ կատարած անձի նկատմամբ վաղեմության ժամկետը սկսում է հոսել տուժողի 18 տարին լրանալու, այլ ոչ թե հանցանքն ավարտված համարելու պահից, ինչպես մյուս դեպքերում: Ըստ դատարանի՝ դա պայմանավորված է նրանով, որ անչափահաս տուժողը, տարիքային գործոնով պայմանավորված, որոշակի հանգամանքներից ելնելով, ավելի հակված է տևական ժամանակ գաղտնի պահելու իր նկատմամբ կատարված հանցագործության փաստը, և քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը պետք է բխի այս առանձնահատկությունից: Վճռաբեկ դատարանը նաև նշել է, որ գործի քննության ողջամիտ ժամկետները փոխկապակցված չեն վաղեմության ժամկետների հետ և հաշվարկվում են՝ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքներ՝ գործի բարդությունը, դատավարության մասնակիցների վարքագիծը, դատավարության մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները և այլն:

Կարևորելով անկախ և անաչառ դատարան ունենալու հրամայականը, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել քրեական օրենսդրությամբ ամրագրված խնդիրների կենսագործումը՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված հիմքով և կարգով՝ **ՀՀ դատախազությունը դիմում է իրավասու մարմիններին՝ կոնկրետ գործերով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ հաղորդումներով:**

2022 թվականի ընթացքում դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ դատախազության կողմից ՀՀ արդարադատության նախարարին է ներկայացվել 27 հաղորդում (2021 թվականին՝ 60), որոնցից 18-ի դեպքում մերժվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը, 1-ը դեռևս քննարկման փուլում է, իսկ 8 հաղորդման դեպքում ՀՀ արդարադատության նախարարությունը հարուցել է 7 կարգապահական վարույթ (ներկայացված 2 հաղորդումը վերաբերել է նույն դատավորի կողմից նույնաբնույթ առերևույթ կարգապահական խախտումներին, որոնց կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարի կողմից հարուցվել է մեկ կարգապահական վարույթ), որից 1-ի դեպքում հարուցված կարգապահական վարույթը կարճվել է, 2-ն ընթացքի մեջ են, իսկ **4-ի դեպքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ: Չորս միջնորդության քննության արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարգապահական պատասխանատվության է ենթարկել երկու դատավորի՝ նշանակելով՝ մի դեպքում՝ «նկատողություն», մյուս դեպքում՝ «նախազգուշացում» կարգապահական տույժի տեսակները:** Երկու դեպքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժել է:

Միաժամանակ, ՀՀ դատախազության կողմից նախորդ տարիներին ներկայացված՝ դատավորին կարգապահական պատասխանավության ենթարկելու վերաբերյալ հաղորդումների հիման վրա, 2022 թվականի ընթացքում, Բարձրագույն դատական խորհրդի կողմից մեկ դատավորի նկատմամբ կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժը, մեկ դատավորի նկատմամբ՝ «նախազգուշացում» կարգապահական տույժը:



8

ՊԱՏԻԺՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ընթացքում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության բնագավառում կատարվել է 3575 ստուգում և ուսումնասիրություն (2021 թվականին՝ 1189): Դրանց արդյունքում հայտնաբերվել է 147 խախտում (2021 թվականին՝ 153): Պատկան մարմիններին ուղարկվել է 10 հաղորդում (2021 թվականին՝ 16): Ներկայացվել է 54 միջնորդագիր (2021 թվականին՝ 34), որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 35 ակտ (2021 թվականին՝ 14): Դատախազների կողմից կասեցվել է օրենսդրությանը հակասող 27 ակտ (2021 թվականին՝ 21), իրականացվել է 4 ծառայողական քննություն:

Վերը նշված 3575 ստուգումներից և ուսումնասիրություններից 834-ը կատարվել է ձերբակալվածներին պահելու վայրերում (2021 թվականին՝ 989), 2713-ը՝ քրեակատարողական հիմնարկներում (2021 թվականին՝ 131), 23-ը՝ Պրոբացիայի ծառայությունում (2021 թվականին՝ 37), իսկ 5-ը՝ այլ հարցերով (2021 թվականին՝ 18). Առողջապահության նախարարության հոգեբուժական հաստատություններում ուսումնասիրություններ չեն կատարվել (2021 թվականին՝ 2):

2022 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներից ազատվել է 1311 անձ (2021 թվականին՝ 1028), որոնցից 214-ը՝ պատժի լրիվ կրումով (2021 թվականին՝ 202), 145-ը՝ պայմանական վաղաժամկետ (2021 թվականին՝ 182), 2-ը՝ ներման կարգով (2021 թվականին՝ 2), 5-ը՝ համաներումով (2021 թվականին՝ 10), 478-ը՝ խափանման միջոց կալանքը փոփոխելով (2021 թվականին՝ 385), 56-ը՝ դատարանի դահլիճից (2021 թվականին՝ 44), 8-ը՝ հիվանդության պատճառով (2021 թվականին՝ 12), 377-ը՝ կալանքի տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ (2021 թվականին՝ 180), 26-ը՝ այլ հիմքերով (2021 թվականին՝ 11):

Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր պատճառներով մահացել է 18 պահվող անձ (2021 թվականին՝ 13), որոնցից 9-ը՝ քաղաքացիական բժշկական հաստատությունում առողջական վիճակի վատթարացման հետևանքով («Արմենիա» ԲԿ-ում՝ 3, «Էրեբունի» ԲԿ-ում՝ 2, «Վաղարշապատ», «Վանաձոր», «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» և «Վ.Ա.Ֆանարջյանի անվան ուռուցքաբանական ազգային կենտրոն» ԲԿ-ներում՝ 1-ական դեպք), 8-ը՝ քրեակատարողական հիմնարկում (ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում 1 անձ գործել է ինքնասպանություն, իսկ 3 անձ հանկարծամահ է եղել, ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿՀ-ում 1 անձ գործել է ինքնասպանություն, ՀՀ ԱՆ «Արթիկ» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում արձանագրվել է 1-ական անձանց կենսաբանական մահ, իսկ ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում արձանագրվել է սպանության 1 դեպք), 1-ը՝ ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դահլիճում:

Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց մահվան դինամիկան	
2012 թվական	28 պահվող անձ
2013 թվական	19 պահվող անձ
2014 թվական	38 պահվող անձ
2015 թվական	28 պահվող անձ
2016 թվական	29 պահվող անձ
2017 թվական	17 պահվող անձ
2018 թվական	18 պահվող անձ
2019 թվական	21 պահվող անձ
2020 թվական	5 պահվող անձ
2021 թվական	13 պահվող անձ
2022 թվական	՝ 18 պահվող անձ

Հաշվետու ժամանակաշրջանում 4 դատապարտյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով (2021 թվականին՝ 4):

2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 2357 (2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 2128), որոնցից 1256-ը՝ կալանավորված անձ՝ 38-ը՝ կին, 1 անչափահաս արական սեռի ներկայացուցիչ (2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 1217 կալանավորված անձ՝ 34 կին, 8 անչափահաս արական սեռի ներկայացուցիչ), 1101 դատապարտյալ, որոնցից 23-ը՝ կին, (2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 911 դատապարտյալ, որոնցից 27-ը՝ կին):

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ պահվում է 147 օտարերկրյա քաղաքացի:

2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ է կրում ցմահ ազատազրկման դատապարտված 88 անձ (2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 86):

Վերջին 10 տարվա ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վիճակագրությունը

2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ	4532 մարդ	որոնցից 1215-ը՝ կալանավորված անձ
2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ	4756 մարդ	որոնցից 1228-ը՝ կալանավորված անձ
2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ	3923 մարդ	որոնցից 1035-ը՝ կալանավորված անձ
2015 թվականի հունվարի 1-ի դրությամբ	3880 մարդ	որոնցից 1113-ը՝ կալանավորված անձ
2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ	3873 մարդ	որոնցից 1114-ը՝ կալանավորված անձ
2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ	3833 մարդ	որոնցից 1200-ը՝ կալանավորված անձ
2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ	3536 մարդ	որոնցից 1297-ը՝ կալանավորված անձ
2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ	2266 մարդ	որոնցից 929-ը՝ կալանավորված անձ
2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ	2221 մարդ	որոնցից 1017-ը՝ կալանավորված անձ
2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ	1967 մարդ	որոնցից 914-ը՝ կալանավորված անձ
2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ	2128 մարդ	որոնցից 1217-ը՝ կալանավորված անձ
2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ	2357 մարդ	որոնցից 1256-ը՝ կալանավորված անձ

2022 թվականի ընթացքում ազատազրկման վայրերից Իրանի Իսլամական Հանրապետություն է տեղափոխվել 13 անձ (2021 թվականին՝ 19), ԱՄՆ՝ 1 անձ (2021 թվականին՝ 0), Հունաստանի Հանրապետություն՝ 1 անձ (2021 թվականին՝ 0), Բելառուսի Հանրապետություն՝ 1 անձ (2021 թվականին՝ 0), ՌԴ՝ 2 անձ (2021 թվականին՝ 2):

ՌԴ ազատազրկման վայրերից ՀՀ ազատազրկման վայրեր տեղափոխվել է 1 անձ (2021 թվականին՝ 6), Ղազախստանի Հանրապետությունից՝ 1 անձ (2021 թվականին՝ 0):

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2022 թվականի ընթացքում ստացվել է 300 անձի կողմից հացադուլ հայտարարելու 524 դիմում: Հացադուլ հայտարարելու վերաբերյալ բոլոր դեպքերով, հիմք ընդունելով Դատախազության կոլեգիայի 2019 թվականի փետրվարի 27-ի որոշման պահանջները, հացադուլ հայտարարած անձը հարցման է ենթարկվել, ընդ որում՝ մի շարք դեպքերում դատախազի կողմից տրամադրված խորհրդատվության արդյունքում, կալանավորված անձը կամ դատապարտյալը դադարեցրել է հացադուլը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում 2022 թվականի ընթացքում արձանագրվել է 180 անձի կողմից ինքնավնասման 518 դեպք, որոնց պատճառները հիմնականում կապված են եղել քրեական վարույթների ընթացքի, կիրառված խափանման միջոցի, արարքի իրավաբանական որակման, Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների, անձնական, առողջական խնդիրների հետ, մի շարք դեպքերում ինքնավնասումը կատարվել է հոգեկան անհավասարակշիռ վիճակում, որոշ դեպքերում էլ ներկայացվել են անօրինական պահանջներ:

ՔԿՀ-ում պահվող անձանց կողմից հացադուլ հայտարարելու, ինքնավնասում կատարելու պատճառները պարզելու նպատակով, ինչպես նաև տարբեր այլ պատճառներով Դատախազությունը հարցման է ենթարկվել 432 պահվող անձի: Կատարվել է ևս 63 պահվող անձի ընդունելություն, սակայն վերջինները իրենց կողմից բարձրացված հարցերի կապակցությամբ հրաժարվել են հարցման ենթարկվելուց:

2022 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում քրեական ենթամշակույթին առնչվող դեպքերով հարուցվել է 3 քրեական գործ (վարույթ):

2022 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 393-396-րդ հոդվածների տարբեր մասերով արձանագրվել է 110 դեպք:

Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում (այսուհետ՝ ՔԿՀ) կատարված ստուգումների գերակշիռ մասը վերաբերում է քրեակատարողական ծառայության մարմինների և դրանց կազմում գործող ստորաբաժանումների կայացրած որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգմանը: Իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել է 56 խախտում:

Ուսումնասիրության շրջանակներում հաղորդումներ են ուղարկվել ՔԿՀ-ների պետերին:

Հաղորդմամբ արձանագրված խախտումների կապակցությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ: Մասնավորապես՝ **վերանայվել է հիմնարկի չվարձատրվող աշխատանքներում ներգրավված դատապարտյալների ցուցակը, ՀՀ ԱՆ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համատեղ աշխատանքների արդյունքում խստացվել է կրթական ծրագրերում ներգրավված կալանավորված անձանց և դատապարտյալների՝ դասերին հաճախելու նկատմամբ հսկողությունը:**

Դատախազության կողմից ստուգվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց նկատմամբ տույժի միջոց կիրառելու մասին 1597 որոշում: Գործող օրենսդրությանը հակասելու պատճառաբանությամբ, պահվող անձանց նկատմամբ տույժի միջոց կիրառելու մասին 15 որոշում վերանայելու միջնորդագիր է ներկայացվել համապատասխան ՔԿՀ-ների պետերին, որոնցից, վերանայման արդյունքում, 2-ը թողնվել է անփոփոխ, 7-ը՝ բավարարվել է, 6-ը՝ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ գտնվել է քննարկման փուլում: Հիշյալ որոշումներից 3-ը վերաբերել է պահվող անձի նկատմամբ տույժի միջոցի խիստ տեսակի կիրառմանը, 7-ը՝ տույժի միջոցի մեղմ տեսակի կիրառմանը, 2-ը՝ դատապարտյալին պատժի կրման սահմանված կարգի չարամիտ խախտող չճանաչելուն, 1-ը՝ դատապարտյալին պատժի կրման չարամիտ խախտող անհիմն ճանաչելուն, 2-ը՝ դատապարտյալի նկատմամբ օրենքով չնախատեսված տույժի միջոց՝ «խիստ նկատողություն» կիրառելուն:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առանձին դեպքերում պահվող անձանց նկատմամբ տույժի միջոցները կիրառվել են անհամաչափ. տույժի միջոց կիրառելիս՝ հաշվի չեն առնվել կատարված խախտման պայմանները, պահվող անձը, նրա վարքը (մինչև խախտում կատարելը և ընդհանուր բնութագիրը), ինչի արդյունքում, կիրառված տույժի միջոցը կատարված խախտման ծանրությանը չհամապատասխանելու հետևանքով, պահվող անձի նկատմամբ կիրառվել է ոչ արդարացի տույժի միջոց. մի շարք դեպքերում կիրառվել են անհամաչափ մեղմ, իսկ առանձին դեպքերում՝ խիստ տույժի միջոցներ:

2022 թվականի ընթացքում դատախազության կողմից ստուգվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց նկատմամբ խրախուսանքի միջոց կիրառելու մասին 40 որոշում: Գործող օրենսդրությանը հակասելու պատճառաբանությամբ, պահվող անձանց նկատմամբ խրախուսանքի միջոց կիրառելու մասին 11 որոշում վերանայելու միջնորդագիր է ներկայացվել համապատասխան ՔԿՀ-ի պետին, որոնցից, վերանայման արդյունքում, բոլոր 11 որոշումներն անվավեր են ճանաչվել: Որոշումները կայացնելիս՝ հաշվի չեն առնվել խրախուսանքի միջոց կիրառելու մասին տվյալ պահին գործող քրեակատարողական օրենսդրության պահանջները, համաձայն որի՝ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կարող է խրախուսանքի միջոց կիրառվել վերջինիս օրինապահ վարքագծի, աշխատանքի և ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, դատապարտյալների ինքնագործ միավորումների աշխատանքներին և միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու, ինչպես նաև դրական վարքագիծ դրսևորելու համար: Մինչդեռ, նշված որոշումներով՝ դատապարտյալների նկատմամբ խրախուսանքի միջոց է կիրառվել միայն մեկ դեպքով՝ ցուցահանդես-վաճառքին աշխատանքներ նվիրաբերելու համար, որպիսի հանգամանքը չի համապատասխանում վերոհիշյալ իրավական նորմի պահանջին **(ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի պետը 2022 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ՝ դատապարտյալների նկատմամբ կիրառել էր խրախուսանքի միջոց՝ հաջորդ օրը՝ փետրվարի 9-ին կազմակերպված ցուցահանդես-վաճառքին մասնակցելու՝ իրենց ձեռքի աշխատանքները տրամադրելու համար)**:

2022 թվականի ընթացքում Դատախազության կողմից ստուգվել է նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող Տեղաբաշխման հանձնաժողովի՝ պահվող անձանց պատիժը կրելու համար համապատասխան ուղղիչ հիմնարկ տեղաբաշխելու մասին 708 որոշում: Գործող օրենսդրությանը հակասելու պատճառաբանությամբ, Դատախազության կողմից 16 որոշում վերանայելու միջնորդագիր է ներկայացվել Տեղաբաշխման հանձնաժողովին, որի արդյունքում 13 որոշում թողնվել է անփոփոխ, 2-ը՝ բավարարվել է, իսկ 1-ի վերաբերյալ 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ պատասխան չի ստացվել: Որոշումներով չի հիմնավորվել դատապարտյալների կողմից դրական վարքագիծ դրսևորելու հանգամանքը, ինչը 2004 թվականին ընդունված ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 102-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր պայման է: Վերոշարադրյալ խախտումներին զուգահեռ՝ Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների օրինականության ստուգման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է նաև, որ փաստացի դրական վարքագիծ դրսևորող դատապարտյալին մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելը անհիմն մերժվել է:

Մասնավորապես՝ որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված դատապարտյալին պատիժը կատարելու համար մեկուսացվածության առավել ցածր աստիճանի՝ բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելը, Տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ մերժվել է: Այդ կապակցությամբ դատախազի կողմից երկու անգամ որոշում է կայացվել Տեղաբաշխման հանձնաժողովի որոշումը վերանայելու միջնորդագիր ներկայացնելու մասին, սակայն վերանայման արդյունքում նախկինում կայացված որոշումները չեն փոփոխվել, և դատապարտյալը շարունակել է պատիժը կրել մեկուսացվածության առավել բարձր աստիճանի ուղղիչ հիմնարկում: Կատարված ուսումնասիրություններով հաստատվել է, որ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում մասնակցել է ՔԿՀ-ում անցկացված բոլոր վերասոցիալականացման միջոցառումներին):

Հակառակ վերոհիշյալ դեպքին՝ **դրական վարքագիծ չդրսևորող, ցմահ ազատազրկման դատապարտված անձը Տեղաբաշխման հանձնաժողովի որոշմամբ տեղափոխվել է մեկուսացվածության առավել ցածր աստիճանի՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկ: Այդ կապակցությամբ Տեղաբաշխման հանձնաժողովի կայացրած որոշումները դատախազի կողմից մի քանի անգամ կասեցվել են և վերանայման միջնորդագրեր են ներկայացվել, սակայն նախկինում կայացված որոշումները մնացել են անփոփոխ:**

Կատարված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ փաստացի պատժի կրման ընթացքում բացասական վարքագիծ դրսևորող, այլ դատապարտյալին պատկանող գույքը դիտավորությամբ վնասելու համար տուժողի բողոքի բացակայության պատճառաբանությամբ քրեական պատասխանատվությունից ազատված, քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների օրինական գործունեությանը խոչընդոտելու, նրանց նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկված ցմահ ազատազրկման դատապարտված դատապարտյալի պատժի կրման ռեժիմը փոխվել է առավել մեղմ պայմանների: Պարզվել է նաև, որ նույն դատապարտյալի կողմից ՔԿՀ-ում անցկացված վերասոցիալականացման միջոցառումներին մասնակցությունը կրել է իմիտացիոն բնույթ:

2022 թվականի ընթացքում դատախազության կողմից ստուգվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող և ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում հաշվառված շահառուների կողմից կատարված հանցանքները և նշանակված պատիժները 01.07.2022 թվականին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու մասին միջնորդություն ներկայացված լինելու հանգամանքը:

2022 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվել է 1105 դատապարտյալ, իսկ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում հաշվառված է եղել 3047 շահառու: Ազատազրկման ձևով ՀՀ ԱՆ 10 քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող 1105 դատապարտյալի անձնական գործերն ուսումնասիրելու, իսկ Պրոբացիայի ծառայության 3047 շահառուի վերաբերյալ ներկայացված և «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալների հետ համադրելու արդյունքում պարզվել է, որ դատարաններ չեն ներկայացվել 231 անձի կողմից (56-ը՝ դատապարտյալ, 175-ը՝ պրոբացիայի շահառու) կատարված հանցանքները և նշանակված պատիժները, օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու մասին միջնորդություններ: Արդյունքում՝ Դատախազության համապատասխան ստորաբաժանումների կողմից 231 անձի վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել դատարաններ՝ կատարված հանցանքները և նշանակված պատիժները ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու նպատակով:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց առողջության պահպանման իրավունքի իրացման վիճակը ստուգելու շրջանակներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների կողմից պահվող որոշ անձանց անհրաժեշտ բժշկական օգնություն տրամադրվել է ոչ պատշաճ կարգով, ինչը կարգավորվել է միայն Դատախազության կողմից համապատասխան ներգործության միջոցներ ձեռնարկելուց հետո:

Մասնավորապես՝ ՀՀ դատախազության 2019 թվականի փետրվարի 27-ի կոլեգիայի որոշման համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում պահվող հացադուլ հայտարարած անձանց հարցման ենթարկելու ընթացքում, փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ վերջիններս նշված ծայրահեղ քայլի դիմել են ՊՈԱԿ-ի ստորաբաժանումների կողմից անհրաժեշտ բժշկական օգնություն չստանալու պատճառով: Այդ կապակցությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու, պահվող անձանց ներկայացրած փաստարկների իսկությունը ստուգելու նպատակով գրություններ են հասցեագրվել ՊՈԱԿ-ի տնօրենին՝ միաժամանակ պահանջելով տրամադրել տեղեկություն հիշյալ անձանց առողջական վիճակի վերաբերյալ: Արդյունքում՝ մի շարք դեպքերում, Դատախազության կողմից իրականացված միջոցառումների շնորհիվ, առանձին պահվող անձանց բարձրացված հարցերը ստացել են լուծում: Մասնավորապես՝ ստացիոնար բուժում ստանալու վերաբերյալ ստացվել է համապատասխան թույլտվություն կամ իրականացվել են անհրաժեշտ բժշկական հետազոտություններ, նշանակվել է համապատասխան դեղորայքային բուժում և այլն:

Պահվող անձանց առողջության պահպանման իրավունքի իրացման վիճակն ստուգելու շրջանակներում ՊՈԱԿ-ի համապատասխան աշխատակիցների կողմից իրենց պարտականությունները չկատարելու կամ թերի կատարելու կապակցությամբ առանձին պահվող անձանց կողմից հանցագործության մասին դատախազներին ներկայացվել է 8 հաղորդում: Դրանք ուղարկվել են իրավասու մարմիններ՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական լիազորության իրականացման **շրջանակներում պարզվել է դատապարտյալի կողմից պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատելու գործընթացում ՀՀ ԱՆ միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից առերևույթ կեղծ եզրակացություն կազմելու և շրջանառության մեջ դնելու դեպք, որի արդյունքում խաթարվել է ծանր հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատվելու վարույթի ընթացքը: Արդյունքում՝ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար(խմբի կազմում, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, երեք անձի սպանություն) 21 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը՝ առանց բավարար իրավական և փաստական հիմքերի, դատարանի որոշմամբ ազատվել է պատժի հետագա կրումից և ներկայումս գտնվում է հետախուզման մեջ:**

Դատախազության կողմից սահմանադրական լիազորության իրականացման շրջանակներում՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում գտնվող կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրացման վիճակը պարզելու, օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար պետության հաշվին անհրաժեշտ սննդով ապահովված լինելու, Կառավարության կողմից սահմանված օրական միջին չափաբաժիններով սնունդ հատկացնելու, սննդի որակը և սննդարարության սահմանված չափաբաժինները պակասեցնելը որպես տույժի միջոց կիրառելը բացառելու, դրանցում՝ պետության գույքային շահերին առնչվող հնարավոր չարաշահումները բացահայտելու, առկայության դեպքում դրանք չեզոքացնելու նպատակով՝ իրականացվել է ոլորտի ուսումնասիրություն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է հետևյալը.

Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և «Ռեդի-Սթեդի» ՍՊ ընկերության միջև 17.11.2020 թվականին կնքված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների կարիքների համար սննդի պատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման ՔԿԾ-ԲՄԾՁԲ-21/1 պայմանագրի համաձայն՝ ՍՊ ընկերությունը պարտավորվել է 1 մլրդ 357 մլն 800 հազար դրամ արժեքով ապահովել 2020 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը ՀՀ ԱՆ 12 քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների համար թարմ ու որակյալ սննդի պատրաստումը և մատուցումը:

Պայմանագրին կից հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն՝ սնունդը հատկացվում է նախօրոք հաստատված ճաշացուցակով, ճաշացուցակները կազմվում են կատարողի, իսկ հաստատվում՝ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից: Սնունդը պետք է լինի բազմազան, որակյալ և սննդի միջին օրական էներգետիկ արժեքը պետք է ապահովի նվազագույնը՝ 2800 կկալ:

2021 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում ՀՀ ԱՆ «Սևան», «Վարդաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներում, ճաշի մատուցման ժամանակ, Դատախազության համապատասխան վարչության կողմից Սննդամթերքի անվտագության տեսչական մարմնի աշխատակիցների մասնագիտական աջակցությամբ, օրվա ճաշի համար նախատեսված բոլոր սննդատեսակներից կատարվել է նմուշառում՝ հետագա հետազոտման նպատակով:

Նույն օրը վերցված սննդամթերքի նմուշներն ուղարկվել են «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ՝ մանրէաբանական ցուցանիշների հետազոտության և կալորիականության հաշվարկի համար:

Ստացված հետազոտությունների պատասխանների համադրման արդյունքում պարզվել է, որ նմուշառված գրեթե բոլոր սննդատեսակներում հայտնաբերվել են տարբեր տեսակի մանրէներ, այդ թվում՝ խմորասնկերի և աղիքային ցուպիկի տեսքով, ինչպես նաև սննդի էներգետիկ արժեքը էականորեն, շատ դեպքերում՝ բացասական առումով 50 տոկոս և ավելի չափով, տարբերվում է կատարողի և քրեակատարողական հիմնարկի պետի կողմից հաստատված ճաշացուցակներով սահմանված սննդի էներգետիկ արժեքից:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ ՀՀ ԱՆ վերը նշված երեք քրեակատարողական հիմնարկում միևնույն մատակարար ընկերության կողմից մատակարարված միևնույն սննդի կալորիականության մասով առկա են էական տարբերություններ, ինչպես նաև առկա են սննդի որակի վրա ազդող մանրէներ: Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ **կոպտորեն խախտվել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքով սահմանված դրույթը, այն է՝ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով:**

Դատախազության կողմից ուսումնասիրվել էՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց առողջության պահպանման, այդ թվում՝ անհրաժեշտ դեղորայքի առկայությամբ պայմանավորված բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրացման վիճակը, որի արդյունքներով հայտնաբերվել են խախտումներ: Կատարված ստուգումների արդյունքներով՝ հարուցվել է թիվ 58151422 քրեական գործը. նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե:

2022 թվականի ընթացքում Դատախազության կողմից ուսումնասիրվել են ՀՀ արդարադատության նախարարությանը կից բժշկական հանձնաժողովի գործունեությանը վերաբերող իրավակարգավորումները, որոնց արդյունքներով ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2022 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ վարչապետին է ներկայացվել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի մասով օրենսդրական փոփոխություններ կատարելու առաջարկությունների վերաբերյալ տեղեկանք՝ ներկայացված առաջարկություններին սահմանված կարգով ընթացք տալու նպատակով իրավասու գերատեսչություններին համապատասխան հանձնարարական տալու համար: Դատախազության համոզմամբ, **Արդարադատության նախարարության կազմից դուրս, ՀՀ առողջապահության նախարարության կազմում գործող «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից դատապարտյալների առողջական վիճակը պարզելու նպատակով փորձաքննության իրականացումը, ինչպես նաև ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու նպատակով դատաբժշկական փորձաքննությունը ՀՀ առողջապահության նախարարության կազմում գործող «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի հանձնաժողովի կատարմանը վերապահելը առավել նպատակահարմար է:**

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման հիման վրա՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպող ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ստորաբաժանումները հանվել են ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ենթակայությունից և տեղափոխվել ՀՀ արդարադատության նախարարության ենթակայության տակ, սակայն, ըստ էության, բովանդակային առումով շարունակում են մնալ որպես նույն նախարարության ենթակա ստորաբաժանում:

Ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման և պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կրումից ազատելու, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում փորձաշրջանի մեջ գտնվող կամ պատժի կրումը հետաձգված անձանց նկատմամբ սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում 2022 թվականի ընթացքում իրականացվել է 6109 վարույթ: Դրանցից 3690-ը վերաբերել է նշանակված պատիժների կատարմանը, 2419-ը՝ իրականացվող վերահսկողություններին: Պրոբացիայի ծառայությունում հաշվետու ժամանակաշրջանում դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ նշանակված պատիժն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու մասին կազմվել է 746 զեկույց: Նույն ժամանակահատվածում կազմվել է նաև 4 զեկույց՝ անձանց դատվածությունը հանելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում նշանակված պատիժների կատարման վերաբերյալ իրականացված 3690 վարույթից 2759-ը վերաբերում է «տուգանք» պատժատեսակի կատարմանը, 514-ը՝ **որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելուն,** իսկ 417-ը՝ «հանրային աշխատանքներ» պատժատեսակին:

Սահմանված վերահսկողության իրականացման վերաբերյալ 2419 վարույթից 2039-ը վերաբերում է պատիժը պայմանականորեն չկիրառելուն, 373-ը՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելուն, 5-ը՝ հետաձգված պատիժներին, իսկ 2-ը՝ անչափահասներին դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով քրեական պատասխանատվությունից ազատելուն (վերջին 2 վարույթը հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է):

Հաշվետու ժամանակաշրջանում բռնագանձման ենթակա 885 մլն 889 հազար 395 դրամ տուգանքից փաստացի բռնագանձվել է 372 մլն 406 հազար 545 դրամը, 87 մլն 366 հազար 90 դրամի տուգանք բռնագանձելու գործընթացը դադարեցվել է դատապարտյալի մահվան, տուգանքը հանրային աշխատանքով փոխարինելու կամ այլ պատճառներով, իսկ 426 մլն 116 հազար 760 դրամի չափով տուգանք գանձելու գործընթացը կատարման փուլում է:

Դատախազության կողմից 2022 թվականի ընթացքում **ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում կատարվել է 23 ստուգում և ուսումնասիրություն (2021 թվականին՝ 37), որոնց արդյունքում հայտնաբերվել է 88 խախտում** (2021 թվականին՝ 11), պատկան մարմիններին ուղարկվել է 6 հաղորդում (2021 թվականին՝ 4), ներկայացվել է 2 միջնորդագիր (2021 թվականին՝ 2):

Դատախազության դատախազները հաշվետու ժամանակաշրջանում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 2768 դատական քննության (2021 թվականին՝ 1974):

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ գործերից 56-ով բերվել է վերաքննիչ բողոք (2021 թվականին՝ 61), որոնցից 13-ը բավարարվել է (2021 թվականին՝ 15), 26-ով բերվել է վճռաբեկ բողոք (2021 թվականին՝ 13):

Բերված 26 վճռաբեկ բողոքից 1-ը բավարարվել է:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու գործընթացում՝ համապատասխան զեկույցների կազմման օրինականության ստուգման շրջանակներում, ուսումնասիրվել են դատապարտյալների վերաբերյալ զեկույցներ, որոնց արդյունքում հայտնաբերվել են նոր հանցագործության կատարման հավանականությունը գնահատելու վերաբերյալ ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության՝ գործող օրենսդրության տվյալ իրավահարաբերությունները կարգավորող նորմերի բովանդակությունից չբխող եզրահանգումներ:

Մասնավորապես՝ առաջին անգամ միջին ծանրության հանցագործություն կատարելու համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված և ՀՀ ԱՆ «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձը պատժի կրման ընթացքում դրսևորել է դրական վարքագիծ, սակայն դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության իրավասու մարմնի կողմից գնահատվել է բարձր, ինչի արդյունքում եզրահանգում է կատարվել այն մասին, որ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելը նպատակահարմար չէ:

Հակառակ վերոնշյալին՝ ՀՀ ԱՆ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի դատապարտյալի (որը հարել է քրեական ենթամշակույթին, դրսևորել է քրեական ենթամշակույթին համապատասխան վարքագիծ, վարել է հանցավոր ապրելակերպ, նախկինում հանդիսացել է, այսպես կոչված, «զոն նայող», հանցավոր աշխարհում հայտնի է եղել կոնկրետ մականունով)՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելու հարցի կապակցությամբ, ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայության իրավասու մարմնի կողմից կազմված զեկույցի համաձայն՝ դատապարտյալը դրսևորվել է դրական վարքագիծ և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատվել է ցածր, հետևաբար վերջինիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելը համարվել է նպատակահարմար: Այս համատեքստում հարկ է արձանագրել նաև, որ վերջին դեպքում դատապարտյալը փաստացի քրեակատարողական հիմնարկում պատիժ չի կրել, որևէ վերասոցիալականացման միջոցառման չի մասնակցել, ոչ մեծ ծանրության հանցագործություններ կատարելու համար նրա նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը հետաձգվել է՝ մինչև երկվորյակ երեխաների 3 տարեկան դառնալը: Որպես նշված դատապարտյալի կողմից նոր հանցագործություն կատարելու հավանականությունը գնահատող այլ հանգամանքներ՝ նշվել են նախկինում 6 անգամ դատապարտված լինելը (այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության, սպանություն կատարելու և ծանր մարմնական վնասվածք հասցնելու, զենքի ապօրինի շրջանառության, ինչպես նաև սպանության փորձ կատարելու, դիտավորությամբ ծանր մարմնական վնասվածք հասցնելու, զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու):

Վերը նշված երկու դատապարտյալի վերաբերյալ կազմված զեկույցների ուսումնասիրությունից տեսանելի է, որ նկարագրված փաստական տվյալների առկայության պայմաններում, ՀՀ ԱՆ **պրոբացիայի ծառայության միևնույն՝ Երևանի քաղաքային մարմնի կողմից տրված երկու զեկույցում առկա են իրար հակասող եզրահանգումներ: Մասնավորապես, առաջին դեպքում՝ նախկինում դատվածություն չունեցող դատապարտյալի՝ ընդամենը նոր հանցանքի կատարման մեջ մեղսագրվելու պայմաններում՝ գնահատվել է, որ դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը բարձր է, և վերջինիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելը նպատակահարմար չէ, իսկ երկրորդ դեպքում՝ դատապարտյալի՝ նախկինում 6 անգամ դատապարտված, 1 անգամ ներում շնորհված, 2 անգամ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված լինելու, կրկին համասեռ հանցանք կատարելու պայմաններում՝ գնահատվել է, որ դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է, և վերջինիս պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման ներկայացնելը նպատակահարմար է:**

Ակնհայտ է, որ նման մոտեցումը չի բխում գործող օրենսդրության տվյալ իրավահարաբերությունները կարգավորող նորմերի բովանդակությունից:

Առկա հակասությունների կապակցությամբ, Ծառայության պետին հասցեագրված հաղորդմամբ հանձնարարվել է վերոհիշյալ հանգամանքները դարձնել քննության առարկա՝ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու, դատապարտյալներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ համապատասխան զեկույցները կազմելու գործընթացում երկակի մոտեցում դրսևորելը չեզոքացնելու, դատապարտյալի վարքագծի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված չափորոշիչներին համահունչ վերջնական եզրահանգումներ կատարելու նպատակով:

1 Պատիժը կրելիս ծանր հիվանդության պատճառով ազատելու վերաբերյալ 21 գործից 3-ով բերվել է վերաքննիչ բողոք, որոնք բավարարվել են:

2 Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ 89 գործից 5-ով բերվել է վերաքննիչ բողոք (2021 թվականին՝ 7), որոնցից 1-ը բավարարվել է, իսկ 1-ը՝ մերժվել, որով բերվել է վճռաբեկ բողոք:

3 Հարկադիր բուժումը փոփոխելու կամ այն դադարեցնելու վերաբերյալ 119 գործից 1-ով բերվել է վերաքննիչ բողոք, իսկ 2-ով՝ վճռաբեկ բողոք:

4 Տուգանքը կամ տուգանքի չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ 399 գործով բերվել է 6 վերաքննիչ բողոք (2021 թվականին՝ 9), որոնցից 1-ը բավարարվել է:

5 Հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխելու վերաբերյալ 77 գործից 7-ով բերվել է վերաքննիչ բողոք:

6 Այլ բնույթի 1199 գործից (քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից կայացված տարաբնույթ որոշումների բողոքարկում, համաներման, խրախուսանքների, տույժերի և այլնի վերաբերյալ) 54-ով բերվել է վերաքննիչ բողոք (2021 թվականին՝ 28), որոնցից 3-ը բավարարվել է (2021 թվականին՝ 2), իսկ 1-ով բերվել է վճռաբեկ բողոք:

9

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՁԳՁԳՈՒՄ («ուշացած արդարադատություն»)

ՀՀ դատախազության տարեկան հաղորդում 2022

Քրեական արդարադատության ոլորտում առանցքային խնդիրներից է շարունակում մնալ գործերի քննության ժամկետների ձգձգումները: Ընդ որում, խնդիրը վերաբերում է ինչպես նախաքննության, այնպես էլ դատական քննության ժամկետներին:

Գործերի քննության ժամկետների ձգձգումները **հանգեցնում են.**

Արդարադատության գործընթացի արդյունավետության նվազմանը:

Քննիչների, դատախազների և դատավորների մոտ գործերի կուտակմանը:

Դատավարության մասնակիցների իրավունքների խախտումներին:

Գործի ողջամիտ ժամկետում քննության իրավունքը հանդիսանում է ՀՀ սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր: Նշված իրավունքը երաշխավորված է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում: Դատական քննության ողջամիտ ժամկետների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ *«ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության»* **(Vazagashvili and Shanava v. Georgia, 18 հուլիս 2019 թվական, պարբ. 89, Lopatin and Medvedskiy v. Ukraine, 20 մայիս 2010 թվական, պարբ. 75),** քանի որ գործի քննության անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի ելքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը: Նշված իրավունքի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արձանագրվել է նաև հետևյալը. *«Դատարանը իրազեկ է այն դժվարությունների մասին, որոնք երբեմն դանդաղեցնում են .... վեճերի քննությունը, ինչը ծանոթ է ազգային դատարաններին, և որոնք բխում են տարբեր գործոններից: Մնում է միայն, որ 6–րդ հոդվածի 1–ին կետին համապատասխան՝ գործերը պետք է քննվեն ողջամիտ ժամկետում. Կոնվենցիան նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը»* (H. v. France, 24 հոկտեմբեր 1989 թվական, պարբ. 58): Արձանագրվել է նաև, որ *«Կոնվենցիայի 6–րդ հոդվածի 1–ին կետում ամրագրված՝ դատական քննության տևողության ողջամիտ բնույթը պետք է գնահատվի յուրաքանչյուր դեպքում՝ գործի հանգամանքներին համապատասխան»* (Konig v. Germany, 28 հունիս 1978, պարբ. 99; Buchholz v. Germany, 6 մայիս 1981 թվական, պարբ. 49)», *«և հաշվի առնելով դատարանի պրակտիկայում ամրագրված չափանիշները»* (Wiesinger v. Austria, 30 հոկտեմբեր 1991 թվական, պարբ. 54), *«մասնավորապես, գործի բարդությունը, հայցվորի վարքագիծը, իրավասու մարմինների վարքագիծը: Այս վերջին կետով հաշվի է առնվում նաև հայցվորի համար դատական քննության առարկայի կարևորությունը»* (Zimmermann et Steiner v. Switzerland, 13 հուլիս 1983թվական, պարբ. 24):

Քրեական գործերով ժամկետների ձգձգումները կարող են հանգեցնել նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով երաշխավորված կյանքի իրավունքի ընթացակարգային բաղադրիչը հանդիսացող մահվան դեպքերի արդյունավետ քննության տարրերից մեկի՝ անհապաղ քննության պահանջի խախտումների:

Մասնավորապես, ՀՀ-ի դեմ բերված գանգատներով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նմանատիպ խախտում է արձանագրել *Անահիտ Մկրտչանն ընդդեմ Հայաստանի* գործով 2020 թվականի մայիսի 7-ին կայացրած վճռով:

Քրեական գործերով ժամկետների ձգձգումները կարող են հանգեցնել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետների լրանալուն, որպիսի պայմաններում չի կարող իրացվել պատժի արդարացիության և սոցիալական արդարության վերականգնման հանրային ակնկալիքները:

2022 թվականի ընթացքում 244 քրեական գործեր (վարույթներ) կարճվել են վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

Միաժամանակ, դատարաններում քննվող գործերով **2022 թվականին 343 անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է** քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները լրանալու հետևանքով:

Գործերի **քննության ժամկետների ձգձգումները հանգեցնում են հանրային արդարացի դժգոհության այն առումով, որ դատավարության մասնավոր մասնակիցների, մասնավորապես, տուժողների մոտ ողջամիտ կասկածներ են առաջացնում քրեաարդարադատական գործիքակազմի արդյունավետության և դրա միջոցով իրենց խախտված իրավունքները վերականգնելու հարցում:**

2022 թվականի ընթացքում ավարտված քրեական գործերի 55.5%-ը քննվել է մինչև 2 ամիս (2021 թվականին՝ 55.1%), 20.6%-ը՝ մինչև 4 ամիս (2021 թվականին՝ 15.8%), 10.8%-ը՝ մինչև 6 ամիս (2021 թվականին՝ 9.6%), 8.6%-ը՝ մինչև 1 տարի (2021 թվականին՝ 12.8%), 4.5 %-ը՝ 1 տարուց ավելի ժամկետում (2021 թվականին՝ 6.1%):

Այլ խոսքով՝ **2022 թվականի ընթացքում քննված քրեական գործերի 13.1%-ի նախաքննությունը տևել է 6 ամսից ավելի, այդ թվում՝ 4.5%-ը մեկ տարուց ավելի:**

Քրեական գործերի քննության ժամկետների ձգձգման օբյեկտիվ պատճառներից է քրեական վարույթների քանակի աճը:

Քրեական գործերի ժամկետների ձգձգման սուբյեկտիվ պատճառներից է քննիչների, դատախազների և դատավորների ոչ բարեխիղճ վերաբերմունքն իրենց պարտականությունների նկատմամբ, նույն գործով դատավորների հաճախակի փոփոխությունը, դատական նիստերի օրերի միջև ժամանակային երկար միջակայքերը:

ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացված ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել մի շարք գործեր, որոնցով գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման հարցը խնդրահարույց է:

Այս կապակցությամբ **ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարական է հասցեագրվել ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումներին, որպեսզի բացառվի դատախազների կողմից դատական նիստերին անհարգելի բացակայությունների դեպքերը**, անհետաձգելի կամ չնախատեսված հանգամանքերով պայմանավորված դատական նիստերից բացակայության յուրաքանչյուր դեպքի մասին գրավոր տեղեկացվի ՀՀ գլխավոր դատախազի տեղակալին՝ ըստ հանձնարարված ոլորտների, ինչպես նաև ապահովվի, որ դատական նիստից հարգելի պատճառով բացակայության յուրաքանչյուր դեպքի մասին նախապես գրավոր տեղեկացվի համապատասխան դատարանի աշխատակազմը և ՀՀ գլխավոր դատախազի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալը:

ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարականում ընդգծվել է, որ անընդունելի են այն դեպքերը, երբ դատական նիստերի հետաձգումը պայմանավորված է լինում դատավարության հանրային մասնակից հանդիսացող դատախազի՝ առանց հարգելի պատճառների դատական նիստերին չներկայանալու հանգամանքով:

Հանդիսանալով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող և պետության անունից հանրային մեղադրանքը պաշտպանող սուբյեկտը՝ **դատախազը պարտավոր է դատարանում իր պարտականությունների կատարման նկատմամբ դրսևորել պատասխանատու և կարգապահ վերաբերմունք, ունենալ հանրային պատասխանատվության և հաշվետվողականության բարձր զգացում, ինչը չի կարող ապահովվել դատական նիստերից անհարգելի բացակայությունների պայմաններում**:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից նաև գրություն է հասցեագրվել ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահին՝ առաջարկելով խորհրդին վերապահված լիազորությունների շրջանակներում պարզել նշված դատական գործերով դատական քննությունների ձգձգումների պատճառները, ձեռնարկել միջոցներ՝ դատարանների վարույթներում քննվող քրեական գործերով քննության ժամկետների ողջամտությունն ապահովելու ուղղությամբ:

Ստորև ներկայացվում է նման գործերի մի քանի օրինակ.

1 **Թիվ 69104517** (թիվ ԵԿԴ/0320/01/17 դատական գործ) քրեական գործն ըստ մեղադրանքի Բառբառա Լիմոնտա Մեգռետիի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Լեյինե Գոմես Լիմոնտայի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, **2017 թվականի դեկտեմբերի 8-ին՝ ավելի քան 5 տարի առաջ,** հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Կենտրոն Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և մակագրվել է դատավոր Ա. Վ.-ին:

2 **Թիվ 69106018** (ԵԴ/0698/01/18) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Յասեռ Օռտեգայի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 2018 թվականի սեպտեմբերի 18-ին հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և մակագրվել է դատավոր Ա. Հ.-ին:

3 **Թիվ ԵԴ/0698/01/18** քրեական գործը 2018 թվականի հոկտեմբերի 18-ին միացել է դատավոր Ա. Վ.-ի վարույթում քննվող ԵԿԴ/0320/01/17 քրեական գործին:

Դատավոր Ա. Վ.-ի այլ դատարան տեղափոխվելու հիմքով 2018 թվականի հոկտեմբերի 30-ին գործը մակագրվել է դատավոր Տ. Գ.-ին, և դատաքննությունը վերսկսվել է:

Դատավոր Տ. Գ.-ի գործուղման հիմքով քրեական գործը 2019 թվականի մայիսի 30-ին փոխանցվել է դատավոր Ա. Վ.-ին, և դատաքննությունը վերսկսվել է:

Դատավոր Ա. Վ.-ի լիազորություններ դադարելու հիմքով քրեական գործը 2020 թվականի հունվարի 16-ին փոխանցվել է դատավոր Վ. Գ.-ին:

2020 թվականի սեպտեմբերի 10-ին դադարեցվել են դատավոր Վ. Գ.-ի լիազորությունները և 2020 թվականի հոկտեմբերի 7-ին քրեական գործը մակագրվել է դատավոր Ա. Մ.-ին, և դատաքննությունը վերսկսվել է:

2020 թվականի հոկտեմբերի 7-ից մինչև օրս՝ **շուրջ երկուսուկես տարվա ընթացքում**, դատավոր Ա. Մ.-ի կողմից գործը վարույթ ընդունելուց հետո, նշանակվել են **ընդամենը 11 դատական նիստեր, որոնցից 5-ը հետաձգվել են:** Դրանցից 1-ը՝ նախագահող դատավորի անաշխատունակության, 1-ը՝ պաշտպանի դիմումի, 1-ը՝ դատավորի վերապատրաստման դասընթացներին մասնակցելու, 1-ը դատավորի խորհրդակցական սենյակում գտնվելու, 1-ը ամբաստանյալների դատական նիստի չներկայանալու և 1-ը՝ դատախազի չներկայանալու պատճառաբանություններով (դատախազը նախապես ներկայացրել է դիմում՝ նույն օրը, նույն ժամին, նույն դատարանում թիվ ԵԴ/1098/01/21 կալանավորական գործով դատաքննությանը մասնակցելու անհրաժեշտության մասին):

Այլ խոսքով, հիշյալ դատական գործը ներկայումս գտնվում է արդեն 5-րդ դատավորի վարույթում, իսկ մեղադրյալների՝ գործի ողջամիտ ժամկետներում քննության իրավունքի իրացումը ակնհայտորեն խնդրահարույց է:

4 **Թիվ 69111515** (թիվ ԵԱՔԴ/0040/01/16 դատական գործ) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Վ. Մ.-ի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Հ. Վ.-ի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 178-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Ա. Հ.-ի՝ 2003 թվական ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Ա. Գ.-ի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, 34-38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Կ. Հ.-ի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, Ա. Ղ.-ի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,

Ա. Գ.-ի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Լ. Թ.-ի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 178-րդ հոդվածի 1-ին մասով, 38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, **2016 թվականի մարտի 12-ին՝ ավելի քան 7 տարի առաջ,** հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և մակագրվել է դատավոր Ռ. Մ.-ին:

Ռ. Մ.-ի այլ դատարան դեղափոխվելու հիմքով 2016 թվականի հունիսի 24-ին քրեական գործը մակագրվել է դատավոր Ա. Մ.-ին:

Նշանակված 127 դատական նիստերից **դատարանի կողմից հետաձգվել է 23-ը,** որից 10-ը՝ դատարանի՝ խորհրդակցական սենյակում գտնվելու, 5-ը՝ դատավորի՝ վատառողջ լինելու, 1-ը՝ դատարանի նստավայրը փոխելու, 2-ը՝ դատավորի արձակուրդում գտնվելու, 1-ը՝ համակարգչի խափանման, 1-ը՝ դատարանի անձնական խնդիրներ ունենալու, 1-ը՝ ՀՀ-ում համավարակ լինելու, 2-ը՝ դատարանի՝ այլ նիստով ծանրաբեռնված լինելու պատճառաբանություններով:

Կայացած **104 դատական նիստերը հիմնականում հետաձգվել են** պաշտպանների չներկայանալու, որոշ դեպքերում՝ ամբաստանյալներին չներկայացնելու, ազատության մեջգտնվող ամբաստանյալների չներկայանալու կամ մեղադրողի ծանրաբեռնվածության պատճառով չներկայանալու պատճառաբանություններով:

5 **Թիվ 48114314** (թիվ ԵԿԴ/0280/01/15 դատական գործ) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Տ. Հ.-ի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Ռ. Հ.-ի՝ 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Է. Պ.-ի՝ 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Ա. Գ.-ի՝ 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Գ. Մ.-ի՝ 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Ա. Ս.-ի՝ 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, **2015 թվականի նոյեմբերի 23-ին՝ ավելի քան 7 տարի առաջ,** մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

2016 թվականի հունվարի 22-ին դատարանի որոշմամբ թիվ ԵԿԴ/0280/01/15 դատական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2016 թվականի փետրվարի 9-ին թիվ ԵԿԴ/0280/01/15 դատական գործն ընդունվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ.Խ.-ի վարույթ:

Մինչև 2020 թվականի նոյեմբերի 2-ը նշանակված 62 նիստերից տեղի են ունեցել 56-ը:

2020 թվականի նոյեմբերի 2-ին թիվ ԵԿԴ/0280/01/15 քրեական գործը վերամակագրվել է նույն դատարանի դատավոր Վ. Ջ.-ին:

2020 թվականի նոյեմբերի 2-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է կողմերի չներկայանալու հիմքով:

2020 թվականի դեկտեմբերի 14-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է ամբաստանյալի չներկայանալու հիմքով:

2021 թվականի հոկտեմբերի 5-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է դատավորի՝ վերապատրաստման դասընթացների մասնակցելու հիմքով:

2021 թվականի հոկտեմբերի 20-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է դատավորի՝ վերապատրաստման դասընթացների մասնակցելու հիմքով:

2021 թվականի նոյեմբերի 24-ին ՀՀ վճռաբեկ դատարանը Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի՝ քրեական գործով ընդատության վերաբերյալ վեճը լուծելու նպատակով ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին որոշման հիման վրա որոշում է կայացրել քրեական գործն ուղարկել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան և մակագրվել է դատավոր Գ. Պ.-ին:

Դատավոր Գ. Պ.-ի՝ անաշխատունակության վիճակում գտնվելու պատճառով քրեական գործը 2022 թվականի հունիսի 15-ին մակագրվել է դատավոր Գ. Գ.-ին:

2022 թվականի օգոստոսի 29-ին, հոկտեմբերի 18-ին և դեկտեմբերի 5-ին նշանակված դատական նիստերը հետաձգվել են պաշտպանների չներկայանալու հիմքով:

6 **Թիվ 61202213** քրեական գործն (թիվ ԵԿԴ/0336/01/16 դատական գործ) ըստ մեղադրանքի Կարինե Սարգսյանի և Ռիմա Վարդանյանի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, **2016 թվականի դեկտեմբերի 27-ին՝ ավելի քան 6 տարի առաջ,** ստացվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան և ընդունվել դատավոր Ա.Վ.-ի վարույթ:

2018 թվականի հոկտեմբերի 27-ին նախագահող դատավորի այլ դատարան տեղափոխվելու հիմքով գործը մակագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Գ.-ին և 2018 թվականի հոկտեմբերի 30-ին ընդունվել է վարույթ:

2019 թվականի մայիսի 30-ին նախագահող դատավորի գործուղման հիմքով գործը մակագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Դ.-ին և 2019 թվականի մայիսի 31-ին ընդունվել է վարույթ:

2019 թվականի հոկտեմբերի 18-ին նախագահող դատավորի արձակուրդում գտնվելու հիմքով գործը մակագրվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ. Գ.-ին և 2019 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունվել է վարույթ:
Նշանակվել է տասնինը դատական նիստ, որոնցից 12-ի դատական նիստերը կայացել են:

2019 թվականի նոյեմբերի 27-ին, 2020 թվականի փետրվարի 25-ին և 2020 թվականի դեկտեմբերի 2-ին նշանակված դատական նիստերը չեն կայացել՝ պաշտպանության կողմի դատարան չներկայանալու պատճառով:

2020 թվականի մայիսի 14-ին նշանակված դատական նիստը չի կայացել՝ մեղադրողի կողմից այլ դատական նիստի մասնակցելու պատճառով:

2020 թվականի սեպտեմբերի 17-ին նշանակված դատական նիստը չի կայացել՝ նախագահող դատավորի այլ գործով խորհրդակցական սենյակում գտնվելու պատճառով:

2022 թվականի մայիսի 30-ին դատական նիստը չի կայացել՝ փորձագետ Վ.Ա.-ի կողմից դատական նիստին չներկայանալու պատճառով:

7 2018 թվականի փետրվարի 21-ին ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի, 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 313-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 58202418 քրեական գործը (վարույթը):

2019 թվականի մարտի 29–ին քննիչի որոշմամբ թիվ 58202418 քրեական գործից Մ. Ա.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով (երկու դրվագ), 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 5-րդ կետերով (երեք դրվագ) և 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ս. Ա.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 313-րդ հոդվածի 1-ին մասով, 34-313-րդ հոդվածի 1-ին մասով (չորս դրվագ), Շ. Ն.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Է. Մ.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Ա. Դ.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Հ. Ա.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Գ. Խ.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-34-312-րդ հոդվածի 2-րդ մասով, Ս. Գ.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և Մ. Մ.-ի նկատմամբ՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 2-րդ մասով, քրեական գործն անջատվել է, անջատված գործին շնորհվել է թիվ 62207519 համարը, որը **2019 թվականի ապրիլի 19–ին մեղադրական եզրակացությամբ** ուղարկվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2019 թվականի ապրիլի 25-ին թիվ ԵԴ/0239/01/19 դատական գործը վարույթ է ընդունվել դատավոր Ա.Դ.-ի կողմից:

Մինչև 2019 թվականի հոկտեմբերի 17-ը Ա.Դ.-ի կողմից նշանակվել է **թվով 3 դատական նիստեր, որոնք չեն կայացել** դատարանի ծանրաբեռնվածության պատճառով:

Այնուհետև, 2019 թվականի դեկտեմբերի 10-ին թիվ ԵԴ/0239/01/19 դատական գործը վարույթ է ընդունվել դատավոր Ա. Մ.-ի կողմից:

2020 թվականի հունվարի 13-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին և մինչև 2022 թվականի օգոստոսի 29-ը նշանակվել են թվով 15 դատական նիստեր, որից թվով **7-ը հետաձգվել են** տարբեր պատճառաբանություններով:

Մյուս **թվով 8 դատական նիստերը թեև կայացել են, սակայն հետաձգվել են** դատավարության մասնակիցների չներկայանալու պատճառաբանությամբ:

2022 թվականի օգոստոսի 29-ին դատավոր Ա. Մ.-ի կողմից որոշում է կայացվել թիվ ԵԴ/0239/01/19 դատական գործն ըստ ընդդատության ՀՀ հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

2022 թվականի սեպտեմբերի 13–ին թիվ ՀԿԴ/0087/01/22 դատական գործը վարույթ է ընդունվել դատավոր Վ.Դոլմազյանի կողմից:

Նկատի ունենալով, որ դատական քննության ընթացքում **անցել են** մեղադրյալներ Է. Մ.-ին, Մ. Մ.-ին, Ս. Գ.-ին, Հ. Ա.-ին, Ա. Դ.-ին, Շ. Ն.-ին **վերագրվող արարքների վաղեմության ժամկետները**, ուստի դատարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 28-ի որոշմամբ՝ Է. Մ.-ի, իսկ 2022 թվականի դեկտեմբերի 16-ի որոշումներով Մ. Մ.-ի, Ս. Գ.-ի, Հ. Ա.-ի, Ա. Դ.-ի, Շ. Ն.-ի նկատմամբ **քրեական հետապնդումները դադարեցվել են:**

8 2018 թվականի հունիսի 21-ին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Սիսիանի բաժնում ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 51154018 քրեական գործը: 2019 թվականի հունիսի 17-ին որոշում է կայացվել թիվ 51154018 քրեական գործից Սյունիքի նախկին մարզպետ Ս. Խ.-ի և մեղադրյալ Լ. Ա.-ի վերաբերյալ մասն անջատելու մասին, որին շնորհվել է 32100919 քրեական վարույթի համարը: Հիշյալ քրեական վարույթն ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն և միացվել թիվ 58214619 քրեական վարույթին:

2019 թվականի դեկտեմբերի 11-ին որոշում է կայացվել թիվ 58214619 քրեական վարույթից մեղադրյալներ Ա. Գ.-ի (ըստ մեղադրանքի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 38-314-րդ հոդվածի 1-ին մասով) և Լ. Ա.-ի (ըստ մեղադրանքի՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով) վերաբերյալ վարույթն անջատելու մասին, որին շնորհվել է թիվ 62231419 քրեական վարույթի համարը:

2019 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ 62231419 քրեական վարույթը **մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է** Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

2020 թվականի հունվարի 10-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Շ.-ն քրեական գործն ընդունել է վարույթ: Վերջինիս նախագահությամբ նշանակվել են 9 դատական նիստեր, որոնք կայացել են: 2020 թվականի օգոստոսի 26-ին դատավորի գործուղումն ավարտվել է, կազմը փոփոխվել է):

2020 թվականի օգոստոսի 27-ին Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Մեխակյանը քրեական գործն ընդունել է վարույթ: Վերջինիս նախագահությամբ նշանակվել են 2 դատական նիստեր, որոնք կայացել են: 2020 թվականի դեկտեմբերի 1-ին դատավորի գործուղումն ավարտվել է, ուստի նույն թվականի դեկտեմբերի 7-ին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գ. Գ.-ն քրեական գործն ընդունել է վարույթ:

2022 թվականի մայիսի 10-ին դատավորի գործուղումն ավարտվել է, ուստի նույն թվականի մայիսի 17-ին քրեական գործը վարույթ է ընդունվել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ. Ա.-ի կողմից:

2022 թվականի օգոստոսի 29-ին քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն դատարան և 2022 թվականի սեպտեմբերի 13-ին դատավոր Վ.Դ.-ի կողմից ընդունել է վարույթ: ՀՀ հակակոռուպցիոն դատարանը 2022 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ բավարարել է Լ. Ա.-ի պաշտպան Ա. Ք.-ի միջնորդությունը և մեղադրյալ Լ. Ա.-ի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով դադարեցրել է:

ՀՀ գլխավոր դատախազությունը շարունակում է հետևողականություն ցուցաբերել բոլոր այն դեպքերի վերհանման կապակցությամբ, որոնցով քրեական վարույթների քննության ժամկետների ձգձգումները պայմանավորված են քննիչների և դատախազների կողմից իրենց պաշտոնեական պարտականությունների ոչ պատշաճ իրականացման հանգամանքով: Մասնավորապես՝ բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործով էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ստուգման նպատակով վարույթն իրականացնող մարմնի կողմից անհրաժեշտ քննչական գործողությունները չեն կատարվել ժամանակին և

առանց անհարկի ձգձգումների, հսկող դատախազի կողմից նախաքննության օրինականության նկատմամբ դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացնելիս, նախաքննության ժամկետների անհարկի ձգձգումներ թույլ չտալու նպատակով, միջոցներ չեն ձեռնարկվել, որպեսզի անհրաժեշտ քննչական գործողությունները կատարվեն ժամանակին, ինչի արդյունքում վարույթն իրականացնող մարմնի կողմից տևական ժամանակով դրսևորվել է անգործություն, որոշակի քննչական գործողություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորող փաստական հանգամանքների ակնհայտ առկայության պայմաններում այդ գործողությունները չեն կատարվել կամ կատարվել են ոչ ժամանակին, դատախազական ներգործության միջոցների կիրառման ողջամիտ հիմքերի առկայության պայմաններում չեն կիրառվել դատախազական ներգործության որևէ միջոց, նշված դատախազների կողմից իրենց պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը քննության առարկա է դարձել ծառայողական ուսումնասիրությունների կամ կարգապահական վարույթների շրջանակներում, որի արդյունքում վերջիններիս նկատմամբ կիրառվել են կարգապահական պատասխանատվության միջոցներ, կամ դատախազների վարքագիծը քննարկվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ անցկացված օպերատիվ խորհրդակցություններում, որոնց ընթացքում տրվել են խիստ հանձնարարականներ՝ այսուհետ բացառելու նմանատիպ դեպքերը: Տվյալ գործերով քննիչների նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդություններ են ներկայացվել նաև ՀՀ քննչական կոմիտե:

Ուշացած արդարադատության հանգեցնող պատճառների վերհանման շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարական է հասցեագրվել ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումներին, որով սահմանվել են ՀՀ գլխավոր դատախազության (ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության) համապատասխան ստորաբաժանումներում, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի մոտ կայանալիք օպերատիվ խորհրդակցություններում համապատասխանաբար 6 ամսից և 8 ամսից ավելի քննվող քրեական վարույթների ձգձգման պատճառները քննարկելու կարգը և ժամկետները:

Նախատեսվել է, որ կոնկրետ վարույթների/գործերի քննարկումների արդյունքում ժամկետների ձգձգման պատճառները վեր հանելուց հետո քրեական վարույթների ընթացքը լուծելու նպատակով պետք է տրվեն կոնկրետ հանձնարարականներ՝ կատարման հստակ ժամկետներով:

10

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Հայաստանի Հանրապետության դատախազության առաջնահերթություններից է շարունակում մնալ միջազգային-իրավական կապերի, միջազգային կառույցների հետ հարաբերությունների ամրապնդումը, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարում այլ պետությունների իրավասու մարմինների հետ մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով համագործակցության խորացումը:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտում Հայաստանի Հանրապետության դատախազությունն իրականացրել է 1998 թվականի հուլիսի 12-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ և 54.1-րդ գլուխներով ու միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների՝ իրեն վերապահված գործառույթների իրականացումը՝ ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.

1. Քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության մասին հարցումներ

2022 թվականի ընթացքում ԱՊՀ մասնակից-պետությունների դատախազություններ ուղարկվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 153 միջնորդություն (2021 թվականին՝ 177), իսկ այլ օտարերկրյա պետություններ՝ 274 միջնորդություն (2021 թվականին՝ 463). ընդհանուր ուղարկվել է 427 միջնորդություն (2021 թվականին՝ 640):

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քննչական մարմիններին փոխանցվել են տարբեր օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններին ուղարկվող քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին միջնորդություններ կազմելու վերաբերյալ թարմացված ուղեցույցներ և կազմվող միջնորդությունների նախագծերը նախքան ուղարկելն աշխատանքային կարգով ուսումնասիրվել ու լրամշակվել են Գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության կողմից (այսուհետ՝ Վարչություն)՝ դրանք համապատասխանեցնելով տարբեր միջազգային պայմանագրերի և ուղեցույցների պահանջներին՝ զգալիորեն բարելավվել է դրանց որակը, ինչի արդյունքում նաև կրճատվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների կողմից դրանց կատարման ժամկետները:

Հաշվետու ժամանակահատվածում Վարչությունում քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին ԱՊՀ պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 146 միջնորդություն (2021 թվականին՝ 202), իսկ այլ օտարերկրյա պետություններից՝ 23 միջնորդություն (2021 թվականին՝ 22). ընդհանուր առմամբ, ստացվել է 169 միջնորդություն (2021 թվականին՝ 224):

2. Քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին միջնորդություններ

Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունն իրականացրել է ՀՀ իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 44 միջնորդության նախապատրաստման և ուղարկման կազմակերպումը (2021 թվականին՝ 43), որոնցից 28-ն ուղարկվել է ԱՊՀ մասնակից-պետությունների, իսկ 16-ը՝ այլ օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների քննարկմանը:

Հայաստանի իրավապահ մարմինների կողմից հետախուզվողների հայտնաբերման մասին ստացված գրությունների հիման վրա պահանջված փաստաթղթերի փաթեթներն ուսումնասիրվում են Վարչությունումպահանջվում են դրանց լրամշակված տարբերակները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ օտարերկրյա պետություններում դրանց քննարկման ընթացքում, միջազգային պայմանագրերի համաձայն, հայցվում և տրամադրվում են լրացուցիչ տեղեկություններ:

Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված 44 հանձնման միջնորդությունից 22-ը բավարարվել է, 5-ը՝ մերժվել, 4-ը թողնվել է առանց քննարկման, 1-ը վերադարձվել է, 12-ը քննարկման փուլում են. բավարարվել են նաև նախկինում ներկայացված միջնորդություններից 10-ը:

Զգալիորեն աճել է քրեական հետապնդման նպատակով անձանց հանձնման մասին ստացվող միջնորդությունների թիվը: Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 38 միջնորդությունից (2021թվականին՝ 22) բավարարվել է 10-ը, մերժվել՝ 5-ը, թողնվել է առանց քննարկման 2-ը, ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ 7-ը, իսկ 14-ը քննարկման փուլում են: Բավարարվել է նաև նախորդ հաշվետու ժամանակաշրջանից փոխանցված 3 միջնորդություն, մերժվել՝ 2-ը:

Զգալիորեն աճել է նաև ՀՀ-ում հայտնաբերված՝այլ երկրների կողմից հետախուզվողների թիվը: ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող 213 անձի վերաբերյալ հաղորդում (նախորդ տարի՝ 186, 2020 թվականին՝ 141):

Հայտնաբերված հետախուզվողների քաղաքացիության, ինչպես նաև քաղաքական ապաստան կամ փախստականի կարգավիճակ ստանալու համար լիազոր մարմնին դիմած լինելու հարցը պարզելու նպատակով՝ համապատասխան հարցումներ են կատարվել Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ու Միգրացիոն պետական ծառայություն: Միաժամանակ, անձանց հայտնաբերման մասին անմիջապես տեղեկացվել են օտարերկրյա պետությունների իրավասու մարմինները, պահանջվել են հանձնման համար անհրաժեշտ փաստաթղթեր, իսկ նրանց ՀՀ քաղաքացի հանդիսանալու պարագայում՝ առաջարկվել է ուղարկել հարուցված քրեական գործերը՝ ՀՀ-ում քրեական հետապնդում իրականացնելու նպատակով:

Գլխավոր դատախազության համապատասխան ստորաբաժանման դատախազները շարունակում են ամենօրյա (շուրջօրյա) աջակցություն ցուցաբերել Հայաստանի մարզերի ու Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազությունների դատախազներին՝ օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների կողմից հետախուզվող անձանց հայտնաբերման դեպքում՝ այդ անձանց ժամանակավոր, հանձնման համար կալանավորելու և կալանավորման ժամկետները երկարացնելու միջնորդություններ կազմելու, դատարան ներկայացնելու, անհրաժեշտության դեպքում՝ վերաքննիչ բողոք կազմելու հարցերում:

~~2018 թվականից ներդրված բոլոր տեսակի միջնորդություններն ըստ հանցատեսակի (թրաֆիքինգ,~~ կոռուպցիոն հանցագործություններ, փողերի լվացում, կիբեռհանցագործություններ, խոշտանգում, ապօրինի միգրացիա) հաշվառելու և վիճակագրություն վարելու ծրագիրը հաջողությամբ անցել է փորձարկման փուլը և ներկայում վիճակագրությունը վարվում է նշված ծրագրով:

2022 թվականին շարունակվել է 2020 թվականին ներդրված՝ Հայաստանի տարածքից դուրս հանցանք կատարած և ՀՀ տարածքում հայտնաբերված Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ձերբակալման և կալանավորման մասին դատարան միջնորդություն ներկայացնելու պրակտիկան. արդյունքում բացառվել են **անձանց անհարկի արգելանքի տակ պահելու, նրանց կալանավորելու մասին վիճահարույց միջնորդություններ դատարան ներկայացնելու դեպքերը:**

3. Քրեական գործերով վարույթների փոխանցում (ստացված և ուղարկված քրեական գործեր և նյութեր)

Վարչության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 1 քրեական գործ (2021 թվականին՝ 2):

Այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից Վարչությունում ստացվել է 22 քրեական գործ (2021 թվականին՝ 16):

4. Համագործակցություն այլ պետությունների դատախազությունների, միջազգային կազմակերպությունների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ,մասնակցություն միջազգային և տարածաշրջանային միջոցառումներին ու երկկողմ հանդիպումներին.

Գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի ու ՀՀ-ում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն Խորհրդի հետ համագործակցության ընթացքում խորհրդի քարտուղարությունից Վարչությունը ստացել է 129 փաստաթուղթ (2021 թվականին՝ 97):

Ստացված փաստաթղթերն ուսումնասիրվել են, ներկայացվել են կարծիքներ, առաջարկություններ և տեղեկանքներ, կազմվել են տեղեկատվական նամակներ, ուղարկվել Դատախազության այլ ստորաբաժանումներ:

Տարբեր միջազգային պայմանագրերի և այլ փաստաթղթերի նախագծեր են ստացվել ՀՀ կառավարության աշխատակազմից, այլ պետական մարմիններից, որոնք ուսումնասիրվել են, ներկայացվել են կարծիքներ:

2022 թվականի ընթացքում ապահովվել է Դատախազության ակտիվ ներգրավվածությունը՝ երկկողմ և միջազգային տարբեր հարթակներում անցկացվող հանդիպումներին, քննարկումներին, սեմինարներին ու նիստերին:

Մասնավորապես՝

- Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) գլխավոր դատախազի հրավերով ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը 2022 թվականի հունվարի 12-ին մասնակցել է ՌԴ դատախազության աշխատակցի օրվան նվիրված հանդիսավոր միջոցառումներին:
- 2021 թվականի հունվարի 12-ին ՌԴ գլխավոր դատախազի նախաձեռնությամբ տեղի է ունեցել նաև եռակողմ հանդիպում ՀՀ գլխավոր դատախազի, Ադրբեջանի Հանրապետության գլխավոր դատախազի, ինչպես նաև ՌԴ գլխավոր դատախազի մասնակցությամբ:

- Եգիպտոսի Արաբական Հանրապետության (ԵԱՀ) գլխավոր դատախազի հրավերով՝ 2022 թվականի մայիսի 16-20-ը ՀՀ գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակությունը մեկնել է ԵԱՀ: 2022 թվականի մայիսի 17-ին ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է ԵԱՀ գլխավոր դատախազ Համադա Էլ Սավիի հետ: Այցի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է նաև ԵԱՀ վարչական վերահսկողության ծառայության նախագահ Հասան Աբդել Շաֆի Ահմեդ Աբդել Ղանի հետ: ՀՀ գլխավոր դատախազն այցելել է նաև ԵԱՀ դատախազության քրեական հետազոտությունների և վերապատրաստման ինստիտուտ, ծանոթացել հաստատությունում ներդրված վերապատրաստման ծրագրերին ու մեթոդներին, ներկայացրել այդ բնագավառում հայկական փորձը, քննարկել հնարավոր համագործակցության ուղղությունները:
- ՌԴ գլխավոր դատախազի հրավերով՝ ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը 2022 թվականի հունիսի 15-18-ը Սանկտ Պետերբուրգում մասնակցել է Սանկտ Պետերբուրգի 25-րդ հոբելյանական միջազգային տնտեսական համաժողովին: Միջոցառման շրջանակներում կայացել է նաև ՀՀ գլխավոր դատախազի հանդիպումը ՌԴ գլխավոր դատախազի հետ, որի ընթացքում քննարկվել են անդրազգային հանցավորության դեմ պայքարի, իրավական փոխօգնության ոլորտներում գործակցությանը վերաբերող հարցեր:
- 2022 թվականի հունիսի 24-ին ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը մասնակցել է Բելառուսի Հանրապետությունում անցկացվող ԱՊՀ անդամ- պետությունների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի հերթական՝ 32-րդ նիստին: Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազը երկկողմ հանդիպում է ունեցել Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազ Անդրեյ Շվեդի հետ: Այցի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպում է ունեցել նաև Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազ Բերիկ Ասիլովի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկու երկրների դատախազությունների առաջնահերթություններից բխող՝ հարաբերությունների զարգացման հնարավոր նոր ուղղությունները:
- ՌԴ գլխավոր դատախազի հրավերով ՀՀ գլխավոր դատախազի ղեկավարած պատվիրակությունը 2022 թվականի դեկտեմբերի 7-10-ը եռօրյա աշխատանքային այցով մեկնել է Ռուսաստանի Դաշնություն: Այցի ընթացքում երկու պետությունների գլխավոր դատախազները քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, այդ թվում՝ իրավական փոխօգնության, հանձնման ոլորտներում համագործակցության հետագա ընդլայնման ուղիները: Հանդիպման ընթացքում ստորագրվել է ՀՀ և ՌԴ դատախազությունների միջև 2023-2024 թվականների համագործակցության ծրագիրը: Այցի ընթացքում, ՌԴ գլխավոր դատախազի նախաձեռնությամբ, 2022 թվականի դեկտեմբերի 8-ին տեղի է ունեցել եռակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի գլխավոր դատախազների մասնակցությամբ: Այցի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդիպել է նաև ՌԴ դատախազության համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Նինա Շալումովայի հետ, որի ընթացքում քննարկվել են ՀՀ դատախազության և համալսարանի միջև համագործակցությունը խորացնելու հեռանկարները, դատախազների որակավորման բարձրացմանն ուղղված համատեղ ծրագրերի իրականացման ու կոռուպցիայի դեմ պայքարում թիրախային կրթության կազմակերպման անհրաժեշտությունը:

Ստանձնած միջազգային պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մասով կատարման ընթացքը ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և գլխավոր դատախազի տեղակալները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավասու կառույցների ներկայացուցիչների, դեսպանների, ինչպես նաև ՀՀ ժամանած այլ պաշտոնատար անձանց հետ, մասնավորապես.

- 2022 թվականի մարտի 4-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է տարածաշրջանային այցի շրջանակում ՀՀ ժամանած ՌԴ գլխավոր դատախազի տեղակալ, գլխավոր զինվորական դատախազ Վալերի Պետրովի գլխավորած պատվիրակությանը: Պատվիրակության կազմում է եղել նաև ՌԴ հարավային ռազմական շրջանի զինվորական դատախազ Վլադիսլավ Պրիխոդկոն, որի ենթակայությամբ են գործում ռուսական խաղաղապահ ուժերի շրջանակում Արցախում տեղակայված ՌԴ դատախազության ներկայացուցիչները:
- 2022 թվականի ապրիլի 19-ին ՀՀ գլխավոր դատախազի հրավերով՝ Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն աշխատանքային այցով ժամանել է Հայաստան: Այցի ընթացքում կայացել է երկու երկրների դատախազների հանդիպումը:
- 2022 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է ՌԴ գլխավոր դատախազության դաշնային օրենսդրության կիրառման նկատմամբ վերահսկողության գլխավոր վարչության պետի տեղակալ, անչափահասների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ապահովման նկատմամբ վերահսկողության վարչության պետ Իրինա Ռեբրինայի գլխավորած պատվիրակությանը:
- 2022 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Ղազախստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Բուլատ Դեմբաևի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել երկու երկրների իրավապահ կառույցների միջև համագործակցության հետագա զարգացմանն ու միջազգային իրավական փոխօգնության շրջանակում փոխգործակցության խորացմանը:

Ստանձնած միջազգային պարտավորությունների՝ ՀՀ գլխավոր դատախազության մասով կատարման ընթացքը ներկայացնելու, ինչպես նաև երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազը և գլխավոր դատախազի տեղակալները հանդիպումներ են ունեցել նաև միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող իրավասու կառույցների ներկայացուցիչների, դեսպանների, ինչպես նաև ՀՀ ժամանած այլ պաշտոնատար անձանց հետ, մասնավորապես՝

- 2022 թվականի փետրվարի 10-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Լին Թրեյսիին: **Հանդիպման ընթացքում կարևորվել է Հայաստանում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի ներդրման ու կայացման, ապօրինի հարստացման, կիբեռհանցագործությունների դեմ պայքարի և այլ ուղղություններով ՀՀ դատախազների վերապատրաստումների բնագավառում ցուցաբերված խորհրդատվական ու տեխնիկական օժանդակությունը:**
- 2022 թվականի մարտի 3-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանում Եվրոպական Միության պատվիրության ղեկավար Անդրեա Վիկտորինին:
- 2022 թվականի մարտի 24-27-ը ՀՀ գլխավոր դատախազի հրավերով աշխատանքային այցով Հայաստան է ժամանել Եվրոպական միության (ԵՄ) քրեական արդարադատության ոլորտում համագործակցության «Եվրոջասթ» (Eurojust) գործակալության ղեկավար Լադիսլավ Համրանի գլխավորած պատվիրակությունը: Քննարկվել է ՀՀ և ԵՄ միջև «Եվրաջասթի և ՀՀ իրավասու մարմինների միջև քրեական գործերով դատական համագործակցության մասին» համաձայնագրի նախագծի համաձայնեցման աշխատանքների ընթացքը:
- 2022 թվականի ապրիլի 6-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում Նիդեռլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Սխերմերսին: Քննարկվել են երկու երկրների միջև իրավական փոխօգնության, անդրազգային հանցավորության դեմ պայքարում երկկողմ համագործակցության ամրապնդման հեռանկարներն ու հնարավորությունները:
- 2022 թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին: ՀՀ գլխավոր դատախազը խոսել է Ադրբեջանի ԶՈՒ կողմից կատարված պատերազմական հանցագործությունների՝ հայ ռազմագերիների սպանությունների, հայ զինծառայողների, այդ թվում՝ կանանց խոշտանգման և դիերի անարգման դեպքերի մասին, բարձրացրել է պատերազմական հանցագործություններ կատարած անձանց և կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության հարցը՝ նշելով, որ այս գործընթացում ակնկալվում է ՌԴ իրավասու մարմինների աջակցությունն ու ներգրավվածությունը:
- 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Լին Թրեյսիին: ՀՀ գլխավոր դատախազը խոսել է Ադրբեջանի ԶՈՒ կողմից կատարված պատերազմական հանցագործությունների՝ հայ ռազմագերիների սպանությունների, հայ զինծառայողների, այդ թվում՝ կանանց խոշտանգման և դիերի անարգման դեպքերի մասին, բարձրացրել է պատերազմական հանցագործություններ կատարած անձանց և կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտության հարցը՝ նշելով, որ այս գործընթացում ակնկալվում է ԱՄՆ իրավասու մարմինների աջակցությունը:
- 2022 թվականի նոյեմբերի 22-ին ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բաղախշան Զոհուրիի գլխավորած պատվիրակությանը: ՀՀ գլխավոր դատախազի կողմից առաջարկվել է վերսկսել 2018 թվականի նոյեմբերի 14-ին Թեհրանում ստորագրված երկու պետությունների դատախազությունների միջև 2019-2020 թվականների համագործակցության մասին ծրագրի իրագործումը:

- 2022 թվականի նոյեմբերի 15-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Միջազգային իրավական համագործակցության (IRZ) գերմանական հիմնադրամի հայաստանյան ծրագրերի համակարգող Նելլի Թումասյանին: Քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազության և IRZ գերմանական հիմնադրամի միջև համագործակցություն սկսելու և համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորություններին առնչվող հարցերը:
- 2022 թվականի նոյեմբերի 17-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (UNICEF) ներկայացուցչի տեղակալ Սիլվիա Մեստրոնիի ղեկավարած պատվիրակությանը: Քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազության և Հայաստանում UNICEF-ի միջև սերտ ու արդյունավետ համագործակցություն սկսելու և համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորություններին առնչվող հարցերը:
- 2022 թվականի նոյեմբերի 29-ին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ընդունել է Եվրոպայի խորհրդի իրավական բարեփոխումների և մարդու իրավունքների հարցերով համագործակցության ծրագրերի բաժնի փոխտնօրեն Լիլիթ Դանեղյանի ղեկավարած պատվիրակությանը: Քննարկվել են ՀՀ գլխավոր դատախազության և Եվրոպայի խորհրդի միջև սերտ ու արդյունավետ համագործակցություն սկսելու և համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորություններին առնչվող հարցերը:

Հաշվետու ժամանահատվածում միջազգային համագործակցության շրջանակներում ապահովվել է դատախազների մասնակցությունը մի շարք վերապատրաստման դասընթացների և առցանց քննարկումների:

Մասնավորապես՝

1 ԵՄ «Աջակցություն Հայաստանում դատական ոլորտի բարեփոխումների իրականացմանը. Փուլ I» ծրագրի շրջանակներում՝ հակակոռուպցիոն և դատաիրավական բարեփոխումներն իրականացնող և ծրագրի շահառու մարմինների, ինչպես նաև Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ներկայացուցիչների մասնակցությամբ ԵՄ ղեկավարների կոմիտեի (Steering Committee) անդրանիկ նիստին,

2 Եվրոպայի Խորհրդի Խտրականության դեմ պայքարի, զանազանության և ներառարության հարցերով հանձնաժողովի կոմիտեում (CDADI) կազմավորվող Ատելության հողի վրա կատարած հանցագործությունների հարցերով փորձագետների կոմիտեի (ենթակառույց) անդրանիկ նիստին,

3 Հայաստան-Եվրոպայի խորհուրդ գործողությունների ծրագիր Ղեկավար կոմիտեի նիստին, Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» տեխնիկական աջակցության ծրագրի վերաբերյալ քննարկմանը,

4 «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ԵՄ ֆինանսավորմամբ տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակներում կազմակերպվող «ԵՄ Բյուջեի աջակցության ծրագրերի մեթոդաբանությունը և պրակտիկան ՀՀ արդարադատության ոլորտում» թեմայով աշխատաժողովին,

5 Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման մոնիթորինգային խմբի և ՏՀԶԿ քարտուղարության ներկայացուցիչների հետ հեռավար հանդիպմանը,

6 ՀՀ-ԱՄՆ ռազմավարական երկխոսության չորրորդ՝ «Shared Democratic Values», առցանց նիստին, ԵԽ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ECRI) այցի շրջանակներում հանդիպմանը,

7 Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության (CEPOL) կողմից կազմակերպվող փորձի փոխանակման ծրագրին, Եվրամիության իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստման գործակալությունը (CEPOL) «TOPCOP Project» ծրագրի շրջանակում կազմակերպվող «Մարդկանց թրաֆիքինգի՝ արմատական պատճառներ և քրեականացում, փաստաթղթերի խարդախություն. Զոհերի նույնականացում, պաշտպանություն և օգնություն» թեմայով դասընթացին,

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և

8 ստրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման հինգերորդ պիլոտային փուլի շրջանակներում կազմակերպվող առցանց հանդիպմանը,

ՄԱԿ-ի հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի (CCPCJ) 2-րդ

9 նիստային թեմատիկ հանդիպմանը,

ԴՄԱ և ԵԽ կողմից համատեղ կազմակերպված՝ «Կիբեռհանցավորությունների մասին» Բուդապեշտի

10 վենցիայի 2-րդ լրացուցիչ արձանագրության վերաբերյալ քննարկումներին (առցանց),

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (ՄԱԿ-ի ԹՀԴՊԳ) Կենտրոնական

11 հայում և Հարավային Կովկասում անդրազգային կազմակերպված հանցավորությանն արձագանքելու նպատակով դատախազների և կենտրոնական մարմինների «CASC Network»-ի՝ «Փոխադարձ իրավական օգնություն և միջազգային համագործակցություն» թեմայով քննարկմանը (առցանց),

ՄԱԿ-ի ԹՀԴՊԳ «CASC Network»-ի և Եվրաջասթի հետ համատեղ կազմակերպված՝ քրեական գործերով միջազգային համագործակցության հարցերի վերաբերյալ քննարկմանը (առցանց), «Արդարադատության

12 մակարգի ամրապնդում» ծրագրի շրջանակներում արդարադատության ոլորտի իրավաբան մասնագետների վերապատրաստման, դատական դպրոցների գործունեության լավագույն փորձի ներկայացման նպատակով Ֆրանսիայի Փարիզ և Բորդո քաղաքներում կազմակերպված ճանաչողական այցին,

Տաշքենդում կայացած ՄԱԿ-ի ԹՀԴՊԳ Կենտրոնական Ասիայում և Հարավային Կովկասում անդրազգային կազմակերպված հանցավորությանն արձագանքելու նպատակով դատախազների և

13 ստրոնական մարմինների «CASC Network»-ի լիագումար նիստին,

Հունգարիայում կայացած ԵԽ «Արդարադատության մատչելիությունը կանանց համար, կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիայի վավերացման ուղին Հայաստանում» ծրագրի շրջանակներում մենթորների վերապատրաստման դասընթացին,

14 ՄԱԿ-ի ԹՀԴՊԳ կողմից կազմակերպված՝ առցանց փոխանցված ակտիվների վերադարձի հարցերով միջազգային իրավական համագործակցության վերաբերյալ հանդիպմանը (առցանց):

Վերոշարադրյալից բացի, ապահովվել է Գլխավոր դատախազության կառուցվածքային և դատախազության տարածքային ստորաբաժանումների 5 դատախազի մասնակցությունը ՌԴ դատախազության ակադեմիայում կազմակերպված երկշաբաթյա (2022 թվականի դեկտեմբերի 14-27-ը) վերապատրաստման դասընթացին:

2022 թվականի ընթացքում, իրավական ապահովման ոլորտի շրջանակում, Դատախազության կողմից մշակվել է քրեական դատավարության ոլորտին վերաբերող և ՀՀ դատախազության գործունեությանն առնչվող նորմատիվ-իրավական ակտերի նախագծեր՝ միտված ուժեղացնելու առանձին հանցատեսակների դեմ քրեաիրավական պայքարի գործիքակազմը, հաղթահարելու տարբեր հանցագործությունների քննության ժամանակ երևան եկած օրենսդրական բացերը, ինչպես նաև ապահովելու ՀՀ դատախազության բնականոն գործունեությունն ու դատախազների սոցիալական պաշտպանվածության երաշխիքները:

Մասնավորապես՝

Մշակվել և ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Դատախազության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Նախագծերով առաջարկվող կարգավորումների բնույթը հետևյալն է.

ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Դատախազությունն օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան:

Ընդ որում, համեմատած 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 103-րդ հոդվածում ամրագրված դատախազական լիազորությունների հետ, 176-րդ հոդվածում հստակեցվել է, որ **Դատախազության կողմից պետական շահերի պաշտպանության համար հայց հարուցելու լիազորությունը գործում է միայն օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում:** Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ առաջնային լիազորությունն այս հարցում պատկանում է այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, որի իրավասությունների ոլորտում է պետությանը պատճառվել գույքային վնաս:

Այսինքն, **«համայնքային շահ» հասկացությունը ներառվում է «պետական շահ» հասկացության մեջ, ինչը հաստատվում է ինչպես ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով,** այնպես էլ ներպետական օրենսդրությամբ տրված սահմանումներով: Այսպես.

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածում սահմանվում է, որ ««Տեղական ինքնակառավարում» հասկացություն նշանակում է տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և իրական կարողությունը՝ կանոնակարգելու պետական գործերի զգալի մասը և կառավարելու այն, գործելով օրենքի շրջանակներում, սեփական պատասխանատվությամբ և տեղի բնակչության շահերից ելնելով»:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 186-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ օրենսդրությամբ պատվիրակվում են պետական մարմիններին վերապահված լիազորությունները (մոտ մեկ տասնյակ ոլորտներում 20-ից ավելի լիազորություն): Ընդ որում, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ պետության պատվիրակած լիազորությունները ենթակա են պետական բյուջեից պարտադիր ֆինանսավորման՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին:

Բացի այդ, **առանց դատախազների համայնքային շահերի պաշտպանության հայց ներկայացնելու իրավասության, համայնքների նկատմամբ իրականացվող վերահսկողության պայմաններում առաջանում են համայնքային միջոցների անարդյունավետ տնօրինման էական ռիսկեր՝** հետևյալ պատճառաբանությամբ.

«Տեղական ինքնակառավարման մասին», «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողությունը սահմանափակ է, ինչի հետևանքով կարող են առաջանալ հետևյալ իրավիճակները.

Ա. Համայնքի ղեկավարի կողմից իրավախախտ գործողություններով համայնքին պատճառված վնասի դեպքում, երբ տվյալ պաշտոնատար անձի արարքը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով չի դիտարկվում որպես հանցագործություն (անցած են լինում քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները, վնասի չափը չի բավարարում քրեական պատասխանատվության ենթարկելու համար, կիրառվում է համաներման ակտ և այլն), **ստացվում է մի իրավիճակ, որ համայնքի ղեկավարը պետք է համայնքի անունից հայց ներկայացնի իր դեմ (շահերի բախում) վնասի հատուցման պահանջով, իսկ նշված հայցը չներկայացնելու դեպքում չկա որևէ մարմին, որն իրավասու լինի օպերատիվ միջոցներ ձեռնարկելու հայցի հարուցումն ապահովելու համար:**

Բ. Նմանատիպ բազմաթիվ իրավիճակներ կարող են ի հայտ գալ նաև համայնքի քաղաքացիական իրավահարաբերություններում, երբ համայնքին պայմանագրային կամ արտապայմանագրային հարաբերություններով պատճառվի գույքային վնաս, իսկ համայնքի ղեկավարը համապատասխան միջոցներ չձեռնարկի կամ հայց չներկայացնի դատարան: Ընդ որում, պարտադիր չէ, որ համայնքի ղեկավարի կողմից հայց չներկայացնելու հանգամանքը պայմանավորված լինի դիտավորությամբ, քանի որ համայնքներում իրավաբանական բարձրագույն կրթությամբ մասնագետների բացակայության պայմաններում, համայնքի ղեկավարները շատ հաճախ կարող են տեղյակ չլինել օրենսդրական կարգավորումներից, հայցային վաղեմության ժամկետներից, պայմանագրային կետանցների դեպքում տույժ ու տուգանքներ գանձելու իրավունքներից և այլն: Օրինակ՝ համայնքներում գույքահարկի հաշվառման, գանձման գործընթացում պետական շահերի պաշտպանության վիճակի ուսումնասիրության շրջանակներում պարզվել է, որ բազմաթիվ համայնքներում առկա են փոխադրամիջոցների գույքահարկի գծով մեծ չափերի հասնող պարտքեր:

Գ. Համայնքի ղեկավարներն օժտված են նաև վարչական պատասխանատվության ենթարկելու իրավասությամբ: Սակայն, տվյալ դեպքում ևս, վարչական պատասխանատվության ենթարկված անձանցից գումարների գանձման գործընթացում համայնքի կողմից թերացումներ լինելու դեպքում, դատախազությունից բացի չկա որևէ հսկող մարմին, որն իրավասություն ունենա ապահովելու վարչական պատասխանատվության ենթարկված անձանցից գումարների գանձումը: Ընդ որում, հարկ է նշել, որ տվյալ դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված են շատ սեղմ ժամկետներ վարչական պատասխանատվություն սահմանող որոշումների կատարման համար: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Դ. **Խնդրահարույց է նաև համայնքների կողմից համայնքների ոչ գույքային շահերի վերաբերյալ հայց ներկայացնելու գործընթացը,** երբ համայնքի ղեկավարը տեղեկացված չլինելու, շահագրգռվածության կամ այլ պատճառներով հայց չի ներկայացնում դատարան, օրինակ՝ ինքնակամ շինարարությունը դադարեցնելու, դրա հետևանքները վերացնելու, համայնքի սեփականության ապօրինի տիրապետումը դադարեցնելու, ժառանգությունն ընդունելու հետ կապված պահանջներով (ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1124-րդ հոդված), խնամակալության ու հոգաբարձության մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված, և այլ հայցերի ներկայացումը:

Այդ իսկ պատճառով դատախազության՝ պետական շահերի պաշտպանության գործառույթները տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական առումով, ուղղակի անհրաժեշտություն են, որպիսի գործառույթների բացակայությունը ՀՀ բյուջետային միջոցների ծախսման գործընթացի նկատմամբ կարող է ունենալ զգալի բացասական ֆինանսական հետևանքներ, ինչպես նաև հասարակության շրջանում հանգեցնել պետական կառույցների նկատմամբ վստահության նվազման:

Հիշյալ համատեքստում կարևոր է նաև նկատի ունենալ, որ Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանվում են դատախազության լիազորությունները, որոնցից յուրաքանչյուրի իրականացման հիմքերն ու կարգը մանրամասնվում են մի շարք նյութական և դատավարական իրավունքի նորմերով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով: Սահմանադրության նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ դատախազության կողմից օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու սահմանադրական լիազորությունը խիստ հատվածական և թերի սահմանված է ընդամենը «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածով: Մասնավորապես՝ դրա 2-րդ մասով սահմանվում են պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու բացառիկ դեպքերը, սակայն դրանց առկայությունը կամ բացակայությունը պարզելու որևէ գործիքակազմ նախատեսված չէ, բացառությամբ՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի:

Ակնհայտ է, որ Սահմանադրությունը չի կարող դատախազությանը վերապահել բացառիկ դեպքերում և կարգով պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորություն՝ առանց նշված բացառիկ դեպքերը պարզելու՝ օրենքով սահմանված համապատասխան կառուցակարգերի, որոնք կարող են իրացվել բացառապես սահմանադրական համապատասխան շրջանակներում և նպատակներով:

- Նախագծով առաջարկվել է հստակեցնել դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձին ներկայացվող պահանջները, քանի որ գործնականում հաճախ հանդիպում են այնպիսի իրավիճակներ, որոնք Օրենքի առկա կարգավորումների տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Մասնավորապես, հնարավոր են իրավիճակներ, երբ դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացնում որևէ անձ, որի 22 տարին, դիցուք, լրանալու է 2 ամսից: Տվյալ իրավիճակում Օրենքը չի պարունակում հստակ կարգավորումներ, թե արդյոք տվյալ անձը կարո՞ղ է մասնակցել մրցույթին, թե՞ ոչ, քանի որ 22 տարին լրացած լինելը վերաբերում է դատախազ նշանակվելու ընդհանուր պահանջներին, այլ ոչ թե դատախազների թեկնածուների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող մրցույթին մասնակցելու հնարավորությանը:
- Դատախազության պաշտոնների դասակարգման՝ նախագծով առաջարկվող տարբերակը պայմանավորված է ՀՀ դատախազության ստորաբաժանումների (ինչպես կառուցվածքային, այնպես էլ տարածքային) ավագ դատախազների և դատախազների՝ միևնույն պաշտոնների խմբում չընդգրկելու անհրաժեշտությամբ՝ հաշվի առնելով ինչպես աշխատավարձերի տարբերությունը, այնպես էլ պաշտոնեական պարտականությունների շրջանակը: Բացի այդ, Օրենքի գործող կարգավորումների պարագայում կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետի պաշտոնը՝ որպես զինվորական կենտրոնական դատախազության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի, ընդգրկված է Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում, իսկ կայազորի զինվորական դատախազի պաշտոնը՝ նույն մասի 4-րդ կետում: Այսինքն, կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնի պետն ընդգրկված է ավելի ցածր պաշտոնների ենթախմբում, քան կայազորի զինվորական դատախազը, որի ենթակայության ներքո գտնվող ստորաբաժանման աշխատանքները վերջինս ի պաշտոնե կոչված է վերահսկելու, ինչն անտրամաբանական է:
- Օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող կարգավորումները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում առաջարկվող լրացումները միտված են կարգավորելու դատախազների խմբի ստեղծման, դատախազների խմբի ղեկավարի դատավարական լիազորությունների հստակեցման հետ կապված իրավահարաբերությունները: Մասնավորապես, առաջարկվում է օրենսդրորեն սահմանել, որ դատախազների խմբի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս խմբի ղեկավարը վերադաս է դատախազական խմբի մեջ մտնող այլ դատախազների նկատմամբ, ինչպես նաև հստակեցնել դատախազական խմբի ղեկավարի դատավարական լիազորությունները:

Օրենքի հիշյալ հոդվածում առաջարկվել է նաև սահմանել ստորադաս դատախազի վարույթից գործը մեկ այլ դատախազի կամ իր վարույթ տեղափոխելու՝ անմիջական վերադաս դատախազի լիազորության իրականացումը, գործնականում շատ հաճախ հանդիպող այն դեպքերի համար, երբ դատախազը իր աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով օբյեկտիվորեն չի կարողանում պատշաճ կերպով իրականացնել իր լիազորությունները կամ տեղափոխվում է ՀՀ դատախազության համակարգի այլ ստորաբաժանում:

- Նախագծով առաջարկվել է սահմանել ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման և էթիկայի հանձնաժողովների անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման ու դադարման կարգը՝ հաշվի առնելով որոշակի օբյեկտիվ պայմաններ:

Հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ նաև ՀՀ դատախազության կողմից նախաձեռնված այն օրենսդրական փոփոխություններին, որոնք միտված են բարելավելու դատախազների սոցիալական պաշտպանվածությանը վերաբերող իրավակարգավորումները, ինչպես նաև ապահովելու դատախազների՝ որպես առանձնակի ռիսկային ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց համարժեք վարձատրությունը:

Այսպես, հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հետագայում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է դատախազներին՝ որպես առանձնակի ռիսկային պաշտոն զբաղեցնող անձանց, վճարել ամսական հավելում՝ պաշտոնային դրույքաչափի ինսուներկու տոկոսի չափով:

Դատախազների վարձատրությունն ավելացնելու նման մոտեցումն առաջ է քաշվել՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ դատախազների վարձատրության չափի փոփոխության այլ մեխանիզմները, օրինակ՝ վարձատրության չափի գործակիցների փոփոխությունը, համակարգային անհամաչափություն կարող են առաջացնել պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության համակարգում: Իսկ առաջարկվող լուծումը բխում է և՛ դատախազի աշխատանքի առանձնակի ռիսկային բնույթից և՛ բացառում է համակարգային իրավակարգավորումներում անհամաչափությունները:

Դատախազներին վճարվող **հավելումների չափը որոշելիս հիմք է ընդունվել առանձնակի ռիսկային, բարդություններով պայմանավորված և մասնագիտացում պահանջող պաշտոններ զբաղեցնող անձանց տրամադրվող հավելումների միասնական, չտարբերակված մոտեցում սահմանելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք 2023թ. հունվարի 1-ից ստանում են հավելում պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով՝ նախկին 100 տոկոսի փոխարեն:**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է նաև «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով սահմանվել են դատախազների համար պետական կենսաթոշակ ստանալու առավել բարենպաստ պայմաններ:

Քրեական գործերով պետությանը կամ համայնքին պատճառված վնասի վերականգնված գումարի հաշվառման և տնօրինման միասնական համակարգի ներդրման ոլորտում ՀՀ դատախազության համակարգմամբ մի շարքա շխատանքներ են կատարվել:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ «Աշխատանքային խումբ ստեղծելու, դրա անհատական կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» 2021 թվականի հունվարի 19-ի N 40-Ա որոշման 3-րդ կետի համաձայն, մշակվել և ՀՀ վարչապետի աշխատակազմ է ներկայացվել քրեական գործերով պետությանը կամ համայնքին պատճառված վնասի վերականգնված գումարի հաշվառման, դրա տնօրինման ոլորտում ծագած խնդիրների կանոնակարգման նպատակով իրավական կարգավորումների վերանայման և դրանց գործնական կիրառման լուծումներով համակարգի վերաբերյալ աշխատանքային խմբի եզրակացությունը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը և «Քրեական վարույթներով պետությանը, համայնքին, ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման և հաշվառման, ինչպես նաև որպես գրավ պահատվության հանձնված դրամական միջոցների և արգելադրված դրամական միջոցների հաշվառման կարգը սահմանելու մասին» կառավարության որոշման նախագիծը: Մասնավորապես՝ պետությանը և համայնքներին պատճառված վնասի վերականգնման միասնական մոտեցումներ սահմանելու նպատակով առաջարկվել է հիմք ընդունել հետևյալ հայեցակարգային մոտեցումները.

- **Առաջարկվել է** պետությանը և համայնքներին պատճառված վնասների վերականգնման նպատակով Հայաստանի Հանրապետության դատախազության, նախկին հատուկ քննչական ծառայության, քննչական կոմիտեի դեպոզիտային հաշվիվներին վճարված գումարները, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հաշվեհամարում առկա գումարները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ի պահ հանձնված գումարները և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննված (քննվող) գործերով (վարույթներով) վերականգնված և փաստացի Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում գտնվող գումարները, ինչպես նաև այն գումարները, որոնց ծագման աղբյուրը օբյեկտիվորեն հնարավոր չէ պարզել, փոխանցել **պետությանը պատճառված վնասի վերականգման մեկ միասնական գանձապետական հաշվեհամարին**:

- **Առաջարկվել է նախաքննական մարմինների դեպոզիտ հաշիվներին առկա՝ գույքի արգելադրման կամ որպես գրավ փոխանցված գումարները փոխանցել Դատախազության դեպոզիտ հաշվին:**
- **Առաջարկվել է քրեական վարույթի բոլոր փուլերում պետությանը և համայնքներին, ինչպես նաև պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին պատճառված վնասը վերականգնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից վարվող մեկ միասնական գանձապետական հաշվեհամարին:**

Բացառություն են կազմելու Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 285-րդ, 286-րդ, 288-րդ կամ 290-րդ հոդվածներով նախատեսված հանցանքները, որոնց հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասը վերականգնվելու է կա'մ հարկ վճարողի միասնական հաշվին կա'մ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից վարվող մեկ միասնական գանձապետական հաշվեհամարին: Նշված բացառությունը պայմանավորված է հարկ վճարող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ վնասը փաստացի վերականգնելու դեպքում հնարավոր տույժ-տուգանքներից խուսափելու նկատառումներով:

- **Առաջարկվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերականգնման նպատակով գումարները վերականգնել, որպես գույք արգելադրված Հայաստանի Հանրապետության դրամը մուծել, իսկ որպես գրավ՝ դրամական միջոցները պահատվության հանձնել Հայաստանի Հանրապետության դատախազության դեպոզիտ հաշվին:** Դատական վարույթի փուլում առաջարկվում է որպես գույք արգելադրված Հայաստանի Հանրապետության դրամը մուծել, իսկ որպես գրավ՝ դրամական միջոցները պահատվության հանձնել այն դատարանի դեպոզիտ, որի վարույթում գտնվում է գործը:
- Առաջարկվել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հնարավորություն ընձեռել տնօրինելու մեկ միասնական գանձապետական հաշվեհամարին առկա գումարները, իսկ դրանք վերականգնած անձի ռեաբիլիտացիայի կամ օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ վերականգնված գումարները վճարել պետական բյուջեի միջոցների հաշվին:
- Առաջարկվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից **սահմանել** մեկ միասնական գանձապետական հաշվեհամարին կամ դատախազության կողմից վարվող դեպոզիտային հաշվին վճարումներ ընդունելու վճարման անդորրագրի օրինակելի ձև և շրջաբերականով ուղարկել բոլոր առևտրային բանկերին: Նշված անդորրագիրը պարտադիր պետք է ներառի նախաքննական մարմնի անվանումը, վարույթի համարը, մեղադրյալի տվյալները (առկայության դեպքում), վճարման նպատակը:
- **Առաջարկվել է սահմանել նաև հաշվետվողականության և հրապարակայնության կառուցակարգ**: Մասնավորապես, առաջարկվել է սահմանել, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը, մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը, տեղեկություն է հրապարակում հաշվետու կիսամյակի ընթացքում մեկ միասնական գանձապետական հաշվեհամարին պետությանը և համայնքներին պատճառված վնասների վերականգնման նպատակով փոխանցված գումարների վերաբերյալ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դատախազության դեպոզիտ հաշվին մուծված՝ որպես գույք արգելադրված՝ Հայաստանի Հանրապետության դրամի, ինչպես նաև որպես գրավ՝ պահատվության հանձնված գումարների մասին՝ ըստ նախաքննական մարմինների տարբերակման:

Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտը, մինչև յուրաքանչյուր կիսամյակին հաջորդող ամսվա 20-ը, տեղեկություն է հրապարակելու հաշվետու կիսամյակի ընթացքում դատարանների դեպոզիտներ մուծված՝ արգելադրված կամ որպես գրավ պահատվության հանձնված դրամական միջոցների վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում **շարունակվել են ակտիվ աշխատանքները ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի պրակտիկ կիրառման արդյունքում վեր հանված խնդիրների ուսումնասիրության, համակարգման և անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունների նախագծեր մշակելու ուղղությամբ:** Նշված նախագծերը միտված են ապահովելու քրեական վարույթների պատշաճ ընթացքը, լուծելու օրենսգրքերի պրակտիկ կիրառման արդյունքում ի հայտ եկած որոշակի տարընթերցումներ և անհստակություններ, հստակեցնելու քննչական ենթակայության կանոնները, երաշխավորելու հանրային և մասնավոր շահերի արդարացի հավասարակշռությունը առանձին քրեական և քրեադատավարական ինստիտուտների կիրառման գործընթացում:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է ակտիվ համագործակցությունը տարբեր միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող միջազգային պայմանագրային մարմինների (International treaty bodies) հետ: Համագործակցությունն իրականացվել է նշված մարմինների կողմից ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը վերաբերող հարցաշարերի վերաբերյալ ՀՀ դատախազությանն առնչվող մասով համապարփակ տեղեկատվություն տրամադրելով, ինչպես նաև ներպետական օրենսդրական կարգավորումների և միջազգային չափանիշների մոտարկմանը վերաբերող հետազոտությունների իրականացմամբ: Մասնավորապես, ի թիվս այլնի, ներկայացվել է տեղեկություն.

- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի հինգերորդ պիլոտային զեկույցի նախագծի նախապատրաստման նպատակով ներկայացված հարցադրումների վերաբերյալ,
- Ճգնաժամերի և արտակարգ իրավիճակների ընթացքում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի (UNODC) հարցաշարի վերաբերյալ,
- Եվրոպայի խորհրդի ՁԼՄ-ի և տեղեկատվական հասարակության ղեկավար կոմիտեից (CDMSI) ստացված՝ Համացանցային միջնորդների դերի և պարտականությունների մասին հարցաշարի վերաբերյալ
- Արևելյան գործընկերության տարածաշրջանում միջազգային դատական և ոստիկանական համագործակցության վերաբերյալ հարցաշարի վերաբերյալ,
- Փողերի լվացման, ապօրինի հարստացման գործերով ապացուցման պարտականության և այդ գործերով բռնագանձման հարցերով համեմատական վերլուծություն իրականացնելու նպատակով Դատախազների միջազգային ասոցիացիայի միջոցով ստացված՝ Սիրակուզայի Քրեական Արդարադատության և Մարդու Իրավունքների Միջազգային Ինստիտուտի (Siracusa International Institute) և ԵՄ ՓԼԱՖ ծրագրի (EU Global Facility on AML/CFT) կողմից համատեղ մշակված հարցաշարի վերաբերյալ,

- ԱՄՆ պետդեպարտամենտի 2021 թվականի մարդու իրավունքների և կրոնական ազատությունների մասին ամենամյա զեկույցի պատրաստման վերաբերյալ,
- ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակի փորձագետների կողմից կազմված՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող՝ 2020-2022թթ. գործողությունների ծրագրի կատարման արդյունքների վերաբերյալ
- Մարդու իրավունքների բարձր հանձնակատարի գրասենյակից ստացված՝ Խոշտանգումների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի՝ «Խոշտանգումների հանցագործությունները հետաքննելու պարտավորությունն ազգային օրենսդրությունում և պրակտիկայում» հարցաշարի վերաբերյալ,
- Բռնի կամ ոչ կամավոր անհետացման հարցերով ՄԱԿ-ի աշխատանքային խմբի կողմից ուղարկված՝ բռնի անհետացման և նոր տեխնոլոգիաների վերաբերյալ ուսումնասիրության հարցաշարի վերաբերյալ,
- ՄԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների կիրարկման վերաբերյալ,
- «Կիբեռհանցավորության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակից ստացված՝ կիբեռհանցավորության մասին ՀՀ օրենսդրության և կիբեռհանցագործությունների քննությամբ զբաղվող՝ ՀՀ քրեական արդարադատության համակարգի կարողությունների հարցաշարերի վերաբերյալ,
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ատելության հողի վրա կատարված հանցագործությունների վերաբերյալ հարցաշարի վերաբերյալ,
- Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության ռազմավարության 2018-2023 թթ. նպատակների իրականացմանը նպաստող ազգային մակարդակում գործողությունների և միջոցառումների վերաբերյալ հարցաշարի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում **շարունակվել է ակտիվ համագործակցությունը նաև Միջազգային-իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակի հետ:** Նշված համագործակցության շրջանակներում ՀՀ դատախազությունը տրամադրել է դիրքորոշում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ՀՀ կառավարությանը կոմունիկացված 27 գանգատների վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկություն՝ ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանում ՀՀ մասնակցությամբ ընթացող միջպետական գանգատների քննարկման գործընթացում ՀՀ կառավարության դիրքորոշումը նախապատրաստելու ուղղությամբ, ապահովել է մասնակցությունը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի առանձին հոդվածների և ներպետական օրենսդրության մոտարկման վերաբերյալ քննարկումներին:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության ընդհանուր համակարգմամբ շարունակվել են ակտիվ աշխատանքները քրեական գործերով մինչդատական վարույթի էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման բնագավառում:

2022 թվականին ապահովվել է՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող՝ 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «Փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2022-2024 թվականների ազգային ռազմավարության», «ՀՀ ոստիկանության զարգացման 2020-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումներից բխող՝ ՀՀ դատախազության մասնակցությունը ներառող գործողությունների ժամանակին և պատշաճ կատարումը: Մասնավորապես, ի թիվս այլնի, իրավասու պետական մարմիններ են ներկայացվել հիշյալ ռազմավարությունների և գործողությունների ծրագրի կիսամյակային և տարեկան հաշվետվությունները :

Դատախազությունն ակտիվորեն ներգրավվել է «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող՝ 2023-2025թթ. գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերի կազմմանը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **77 ծառայողական քննություն՝ 86 դատախազի նկատմամբ (2021 թվականին՝ 71 ծառայողական քննություն՝ 79 դատախազի նկատմամբ):**

Ծառայողական քննություն իրականացնելու հիմք են հանդիսացել նյութերի նախապատրաստման և քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ընթացքում առերևույթ թերությունները, ինչպես նաև նյութական ու դատավարական նորմերի, դատախազի վարքագծի կանոնների պահանջների առերևույթ խախտումներ թույլ տալը և այլն:

Վերոհիշյալ ծառայողական քննություններն իրականացնելու համար առիթ են հանդիսացել քաղաքացիների դիմում-բողոքները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին ներկայացված զեկուցագրերը:

Իրականացված ծառայողական քննության արդյունքներով 6 դեպքով՝ 6 դատախազի վարքագծի կանոնների պահանջների և աշխատանքային պարտականությունների խախտումները քննարկվել են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների մոտ տեղի ունեցած օպերատիվ խորհրդակցություններում, 49 դեպքով՝ 50 դատախազի նկատմամբ ծառայողական քննության արդյունքներով ծառայողական պարտականությունների կատարման, օրենքի պահանջների կամ վարքագծի կանոնների խախտումներ չեն հայտնաբերվել:

Հաշվետու ժամանակահատվածում **իրականացվել է 22 կարգապահական վարույթ՝ 30 դատախազի նկատմամբ (1 կարգապահական վարույթ իրականացվել է 6 դատախազի նկատմամբ, 3 կարգապահական վարույթ՝ 6 դատախազի նկատմամբ) (2021 թվականին՝ 7 կարգապահական վարույթ՝ 11 դատախազի նկատմամբ):**

Կարգապահական վարույթ հարուցելու հիմք են հանդիսացել քրեական գործով նախաքննության նկատմամբ թերի և մակերեսային դատավարական ղեկավարում իրականացնելը, վերադաս դատախազի կողմից ոչ պատշաճ վերահսկողությունը, դատավարական ժամկետները չպահպանելը, դատախազի վարքագծի կանոնները խախտելը:

Իրականացված կարգապահական վարույթների արդյունքներով 5 դատախազի նկատմամբ **5** կարգապահական վարույթները ՀՀ գլխավոր դատախազի կողմից չեն ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողով՝ հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի՝ 2018 թվականի հունիսի 5-ի N 49 հրամանի 26-րդ կետը (կարգապահական վարույթի ավարտի վերաբերյալ զեկուցագիրը և նյութերը ստանալուց հետո, գլխավոր դատախազը կոնկրետ հանձնարարությամբ այն հանձնում է հանձնախմբին կամ յոթնօրյա ժամկետում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, որը կարող է լինել նաև «պաշտոնից ազատում» կարգապահական տույժ նշանակելու միջնորդություն, ներկայացնում է էթիկայի հանձնաժողովի քննարկմանը: Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը 7-օրյա ժամկետում էթիկայի հանձնաժողովի քննարկմանը չներկայացվելու դեպքում կարգապահական վարույթը դադարում է):

12 դատախազի նկատմամբ նշանակվել է «նկատողություն», 3 դատախազի նկատմամբ՝ «խիստ նկատողություն», 1 դատախազի նկատմամբ՝ «պաշտոնի իջեցում մեկ աստիճանով», այնուհետև նույն դատախազի նկատմամբ հարուցված առանձին կարգապահական վարույթի արդյունքներով՝ վերջինիս նկատմամբ նշանակվել է «պաշտոնից ազատում» կարգապահական տույժը:

Բացի այդ, 5 դատախազի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման արդյունքում ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հաստատված է համարել կարգապահական խախտման փաստի առկայությունը, սակայն հաստատված չի համարել վերջիններիս մեղավորությունը, 2 դատախազի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման արդյունքում ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հաստատված չի համարել կարգապահական խախտման փաստի առկայությունը, 1 դատախազի կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկման արդյունքում ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովը հաստատված է համարել կարգապահական խախտման փաստի առկայությունը և դատախազի մեղավորությունը, սակայն ՀՀ գլխավոր դատախազի կողմից վերջինիս նկատմամբ կարգապահական տույժ չի նշանակվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարգապահական խախտումը թույլ է տրվել առաջին անգամ, դատախազը զղջացել է դրա համար:

11

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ, ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐ

Հայաստանի Հանրապետության դատախազությունում 2022 թվականին քաղաքացիներից ստացվել է 11305 դիմում-բողոք (ներառված չէ Զինվորական դատախազությանն ուղղված դիմումների թիվը)՝ նախորդ տարվա 10918-ի համեմատ: Ստացված դիմումների թիվն ավելացել է 387-ով կամ 3.5%-ով:
Դիմումներից 2300-ը եղել է կրկնակի: Դիմումներից 1117-ը բավարարվել է (2021 թվականին՝ 966), 3187-ին տրվել է պարզաբանում (2021 թվականին՝ 2862), 1682-ը մերժվել է (2021 թվականին՝ 2204), 101-ը թողնվել է անհետևանք (2021 թվականին՝ 172), 4-ը վերադարձվել է դիմումատուին (2021 թվականին՝ 3), 20 դիմումատուի հետ թղթակցությունը դադարեցվել է (2021 թվականին՝ 19), 71 դիմումի քննարկում մնացել է անավարտ (2021 թվականին՝ 78), 4827 դիմում ուղարկվել է այլ մարմին (2021 թվականին՝ 4473), 296 դիմումի քննարկման արդյունքում նախաձեռնվել է քրեական վարույթ (2021 թվականին՝ 346):

2022 թվականին ստացված դիմում-բողոքներից 2745-ը վերաբերել է սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, 1840-ը՝ մարդու դեմ ուղղված հանցագործություններին (այդ թվում՝ 51-ը ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործություններին) 2378-ը՝ ընդհանուր բնույթի հանցագործություններին, 1684-ը՝ կոռուպցիոն բնույթի հանցագործություններին և այլն:

2022 թվականին դատախազությունում կազմակերպվել է 2551 ընդունելություն՝ նախորդ տարվա 1820-ի համեմատ: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից քաղաքացիների ընդունելության դեպքերը, 2021 թվականի համեմատ, ավելացել են 731-ով կամ 40.2%-ով:
Գլխավոր դատախազի մոտ կազմակերպվել է 4 ընդունելություն, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազների և դատախազների մոտ՝ 19, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականների մոտ՝ 21, ՀՀ զինվորական դատախազությունում՝ 269, ՀՀ գլխավոր դատախազության վարչություններում ՝ 553, Երևանի ու վարչական շրջանների դատախազություններում՝ 684, մարզերի դատախազություններում՝ 947, ՀՀ գլխավոր դատախազության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման բաժնում՝ 54 ընդունելություն:

Դատախազության հանրային կապերի բաժինը 2022 թվականի ընթացքում շարունակել է իրականացնել Դատախազության միջոցառումների լուսաբանման՝ տեսանկարահանման և լուսանկարահանման, Դատախազության պաշտոնական կայքի սպասարկման աշխատանքները, մշտադիտարկել է հանրապետությունում գործող 15 տպագիր մամուլի, 159 էլեկտրոնային մամուլի և 15 հեռուստա-ռադիոընկերությունների հրապարակումները, ինչպես նաև պարզաբանումներ է ներկայացրել զանգվածային լրատվության միջոցներին՝ իրավական ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ:
2022 թվականի հոկտեմբերից Դատախազության գործունեությունը հասանելի է դարձել նաև Facebook և Telegram սոցիալական հարթակներում:

ՀՀ դատախազության պաշտոնական էլեկտրոնային փոստին 2022 թվականին ստացվել է **2732** դիմում-գրություն: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում՝ զանգվածային լրատվամիջոցներից ստացված **266** հարցման տրվել է պատասխան:
Մշտադիտարկման արդյունքներով՝ 2022 թվականին Դատախազությունում ընթացք է տրվել մամուլի **102** հրապարակման, ՀՀ դատախազության պաշտոնական կայքէջով հանրությանը հասանելի է դարձել **298** հաղորդագրություն:

Հանրային կապերի բաժնի կողմից, ինչպես նաև՝ ռադիո և հեռուստատեսային, համացանցային հաղորդումներում դատախազների մասնակցությամբ պատրաստվել է 136 տեսանյութ, որոնք հիմնականում վերաբերել են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացին, կոռուպցիայի դեմ պայքարին, պետական շահերի պաշտպանության ոլորտում Դատախազության կողմից իրականացված աշխատանքներին և այլն:

Հաղորդում՝
Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին